



Վերականգնման հիմքերը

Ուսուցչի ձեռնարկ
Կրոն 225

Հիմնական դասընթաց

Վերականգնման հիմքերը ուսուցչի ձեռնարկ

Կրոն 225

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սուրբ Լեյք Սիթի, Յուտա

Շապիկի նկարը. *Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնումը*, Ուոլթեր Ռեյն
Այս ձեռնարկի վերաբերյալ ձեր դիտողություններն ու ուղղումները ողջունելի են: Խնդրում ենք
ուղարկել դրանք՝ այդ թվում նաև սխալները, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 E. North Temple St., Floor 8
Salt Lake City, Utah 84150-0008
USA

Email: ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր լրիվ անունը, հասցեն, ծուխը և ցիցը:

Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Այնուհետև նշեք ձեր դիտողությունները:

© 2015, 2016 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են:

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Տարբերակ 3, 5/16

Անգլերենի հաստատումը. 8/14

Թարգմանության հաստատումը. 8/14

Foundations of the Restoration Teacher Manual-ի թարգմանությունը

Armenian

12556 201

Բովանդակություն

Վերականգնման հիմքերը ուսուցչի ձեռնարկի նախաբան (Կրոն 225)	V
1 Զարմանալիք և զարմանք	1
2 Առաջին Տեսիլքը	7
3 Մորմոնի Գրքի ստեղծումը	13
4 Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը	19
5 Քահանայության վերականգնումը	25
6 Եկեղեցու կազմավորումը	31
7 Հայտարարեք հավիտենական ավետարանը	37
8 Վերջին Օրերի Իսրայելի ժողովումը	44
9 Հետևեք ապրող Մարգարեին	50
10 Փնտրեք ճշմարտությունը	56
11 Տիրոջ ձայնը Վարդապետություն և Ուխտերում	63
12 Լրացուցիչ սուրբ գրություններ մեր օրերում	68
13 «Տեսիլքը»	74
14 Կիրթլենդի տաճարը և Քահանայության բանալիները	81
15 Ուժեղ մնալ հալածանքի մեջ	87
16 Մահացածների փրկությունը	93
17 Ավետարանի ուսմունքները Նավու քաղաքում	99
18 Սփոփող Միությունը և Եկեղեցին	105
19 Հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը	112
20 Բազմակնություն	119
21 Զոզեֆ Միթի մարգարեական առաքելությունը	128
22 Մարգարե Զոզեֆ Միթի նահատակությունը	134
23 Հաջորդականությունը Նախագահությունում	140
24 Նավուից հեռանալը և գաղթը դեպի արևմուտք	148
25 Յուսայի պատերազմը և Մաունթ Մեդոուսի ջարդերը	157
26 Հայտնություն քահանայության վերաբերյալ	165
27 Նախապատրաստել աշխարհը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին	171
28 Արագացնել փրկության աշխատանքը	176
Handouts	183

Վերականգնման հիմքերը ուսուցչի ձեռնարկի նախաբան (Կրոն 225)

Ի՞նչ է ակնկալվում կրոնի ուսուցչից:

Ուսուցմանը պատրաստվելիս կարևոր է հասկանալ Մեմինարիայի և Կրոնի ինստիտուտի նպատակը.

«Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը, ապավինել դրանց, արժանի լինել տաճարային օրհնություններին, պատրաստվել և պատրաստել իրենց ընտանիքները և մյուսներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին» (*Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion* [2012], x):

Դուք կարող եք այս նպատակին հասնել ջանասիրաբար ավետարանով ապրելով, ձեր ուսանողներին ավետարանն արդյունավետ ուսուցանելով և պատշաճ կերպով մատուցելով դասը կամ ծրագիրը: Երբ դուք պատրաստվեք և ուսուցանեք ավետարանը, դուք կարժանանաք Սուրբ Հոգու ներգործությանը (տես ՎեՄ 42.14):

Դուք հնարավորություն կունենաք օգնելու ուսանողներին սովորել Հոգով, որպեսզի նրանք կարողանան ամրացնել իրենց հավատքն ու խորացնել իրենց դարձը: Կարող եք օգնել ուսանողներին ձեռք բերել այդ ամենը՝ օգնելով նրանց բացահայտել, հասկանալ, զգալ ճշմարտությունը և դրա կարևորությունը, և կիրառել Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր վարդապետություններն ու սկզբունքները:

Ավետարանի ուսուցում և ուսանում ձեռնարկը կարևոր աղբյուր է ուսուցման գործընթացը հասկանալու և հաջողությամբ դասավանդելու համար: Հաճախակի անդրադարձեք այս դասագրքին:

Որո՞նք են այս դասընթացի նպատակները:

Այս դասընթացը՝ Վերականգնման հիմքերը (Կրոն 225), ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել հիմնական հայտնությունները, վարդապետությունը, պատմական իրադարձությունները և մարդկանց, ովքեր առնչություն ունեն Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնման հետ, ինչպես շարադրված է կանոնիկ աշխատությունների, վերջին օրերի մարգարեների ուսմունքների և Եկեղեցու պատմության մեջ: Դասընթացը ուսանողներին կներկայացնի վարդապետական հիմքը և պատմական համատեքստը, որն անրհամեշտ է Եկեղեցու վարդապետությունը և պատմությունը ճիշտ հասկանալու համար: Ուսանողները կմեծացնեն ճշմարտությունը փնտրելու, նյութերի աղբյուրների հիմնավորվածությունը և

հուսալիությունը գնահատելու և ճիշտը սխալից տարբերելու ունակությունները: Ուսանողները կուսումնասիրեն սուրբ գրությունները, Եկեղեցու վարդապետությունը և Եկեղեցու պատմությունը՝ զուգահեռներ անցկացնելով իրենց կյանքի և իրավիճակների հետ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) վկայել է Վերականգնման իրականության մասին:



«Սա Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին է: Մենք՝ որպես ժողովուրդ, Վերջին Օրերի Սրբեր ենք: Մենք վկայում ենք, որ երկինքները բացվել են, որ վարագույրը ճեղքվել է, որ Աստված խոսել է և Հիսուս Քրիստոսը հայտնել է Իրեն: ...»

«Եկեք շնորհակալություն հայտնենք Աստծուն Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու վերաբերյալ այս հրաշալի վկայության, իշխանության և վարդապետության համար, որով նա օժտել է մեզ:

Դա պետք է լինի մեր մեծ ու եզակի ուղերձը աշխարհին: Մենք այն առաջարկելիս չենք պարծենում: Մենք վկայում ենք խոնարհությամբ, սակայն կարևորելով և բացարձակ անկեղծությամբ» ("The Marvelous Foundation of Our Faith," *Ensign*, Nov. 2002, 81):

Երբ ուսանողները ձեռք բերեն ավելի մեծ հավատք առ Հիսուս Քրիստոսը և ավելի զորեղ վկայություններ վերականգնված ավետարանի վերաբերյալ, սուրբ ուխտեր կապելու և պահելու նրանց պարտավորվածությունն ավելի կմեծանա և ավելի լավ պատրաստված կլինեն կիսելու Վերականգնման ուղերձը:

Ի՞նչ է ակնկալվում ուսանողներից:

Ինստիտուտի ավարտական վկայական ստանալու համար ուսանողները պետք է կարդան յուրաքանչյուր դասի սուրբ գրությունների հատվածները, գերագույն համաժողովի ելույթները և Ուսանողի ընթերցարան բաժնում տրված այլ նյութերը: Ուսանողները պետք է նաև բավարարեն հաճախելիության պահանջները և բանիմացություն ցուցաբերեն ուսումնական նյութի վերաբերյալ:

Ինչպե՞ս են դասերը կառուցված այս ձեռնարկում:

Այս դասընթացը նախատեսված է մեկ կիսամյակի համար և բաղկացած է 28 դասից՝ գրված 50-րոպեանոց դասաժամի համար: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը երկու անգամ, յուրաքանչյուր դասաժամին ուսուցանեք մեկ դաս: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը մեկ անգամ 90-100 րոպեով, յուրաքանչյուր դասաժամի համար միացրեք և ուսուցանեք երկու դաս: Յուրաքանչյուր դասը բաղկացած է չորս բաժնից.

- Նախաբան
- Ընթերցանության օժանդակ նյութեր
- Ուսուցման առաջարկներ
- Ուսանողի ընթերցարան

Նախաբան

Այս բաժինը հակիրճ ներկայացնում է դասի թեման և նպատակը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

Այս բաժինը առաջարկում է օժանդակ նյութեր, օրինակ՝ մեր օրերի մարգարեների ուղերձները, որոնք կօգնեն ձեզ ավելի խորը հասկանալ դասի ծրագրում ընդգրկված վարդապետությունները, սկզբունքները և ավետարանի ճշմարտությունները:

Ուսուցման առաջարկներ

Ուսուցման առաջարկներ բաժնում տրված են նյութեր, որոնք կօգնեն ձեզ իմանալ՝ *ինչ* ուսուցանել և *ինչպես* ուսուցանել (տես նաև բաժիններ՝ 4.3.3 և 4.3.4, *Ավետարանի ուսուցում և ուսանում* ձեռնարկում): Առաջարկվող ուսումնական վարժությունները նախատեսված են օգնելու ուսանողներին բացահայտել, հասկանալ և կիրառել սրբազան ճշմարտությունները: Կարող եք օգտագործել մի քանի կամ բոլոր առաջարկությունները՝ դրանք համապատասխանեցնելով ուսուցման ձեր անհատական ոճին և բավարարելով ձեր ուսանողների կարիքներն ու պայմանները: Ուսումնական նյութերը հարմարեցնելու համար հետևեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խորհրդին:



«Նախագահ Փաքերը հաճախ է իմ ներկայությամբ ուսուցանել, որ նախ մենք ընդունում ենք, ապա հարմարեցնում: Եթե մենք խորապես ուսումնասիրում ենք տվյալ դասը, որը պետք է մատուցենք, ուրեմն կարող ենք հետևել Հոգու ալիս հարմարեցնելու համար: Երբ մենք խոսում ենք այս ճկունության մասին, երբեմն գայթակղվում ենք սկսել հարմարեցնելուց և ոչ թե ընդունելուց: Սա հավասարակշռություն է: Սա մշտական խնդիր է: Սակայն նախ ընդունելու և ապա հարմարեցնելու մոտեցումը լավ եղանակ է ամուր հիմքի վրա կանգնելու համար» («A Panel Discussion with Elder Dallin H. Oaks» [Seminaries and Institutes of Religion satellite broadcast, Aug. 7, 2012], lds.org/broadcasts):

Այս դասընթացը ներառում է Եկեղեցու ղեկավարների ելույթներ, որոնք հավանաբար մատչելի են բազմաթիվ լեզուներով: Ուսուցմանը պատրաստվելիս դուք կարող եք հարմարեցնել դասերը, օգտագործելով Եկեղեցու ղեկավարների այլ մատչելի ելույթներ, որոնք համապատասխանում են դասի թեմային:

Ուսուցման առաջարկներ մասը պարունակում է թավ տառերով տպված առնվազն մեկ վարդապետություն կամ սկզբունք: Երբ ուսանողները բացահայտում են վարդապետություններն ու սկզբունքները և կիսվում իրենց սովորածով, նրանց խոսքը միգուցե տարբերվի ձեռնարկում տրված ձևակերպումից: Նման դեպքերում ուշադիր եղեք, որ նրանց պատասխանները սխալ չհամարեք: Սակայն, եթե արտահայտված միտքը կարող էր ավելի ճշգրիտ լինել, զգուշորեն օգնեք պարզաբանել այն:

Այս ուսումնական ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ավետարանն ուսուցանելու և ուսանելու հիմունքները ներառել թեմատիկ դասընթացի մեջ (տես *Gospel Teaching and Learning*, 10, 23–31, 38–41):

Առաջիկա ամիսներին Մեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները կիրառարկեն մի փաստաթուղթ, որը կոչվում է «Ուսուցանել և ուսանել սուրբ գրությունները կրոնի ինստիտուտներում», որտեղ բացատրություններ կտրվեն այն մասին, թե ինչպես ներառել ավետարանն ուսուցանելու և ուսանելու հիմունքները թեմատիկ դասընթացի մեջ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկարագրել է ավետարանը թեմաներով ուսումնասիրելու առավելություններից մի քանիսը.

«Մինչ սուրբ գրությունները սկզբից մինչև վերջ կարդալը տալիս է հիմնական ընդհանուր գիտելիքներ, թեմատիկ ուսումնասիրությունը մեծացնում է մեր գիտելիքների խորությունը: Հայտնությունների մեջ կապեր, օրինաչափություններ և թեմաներ փնտրելը կառուցում և ավելացնում է մեր հոգևոր գիտելիքը ..., այն մեծացնում է մեր հեռանկարը և փրկության ծրագրի մեր հասկացողությունը:

Իմ կարծիքով կապեր, օրինաչափություններ և թեմաներ գտնելու համար ջանասիրաբար ուսումնասիրելը մի մասն է այն գործընթացի, որն անվանում ենք «սնվել» Քրիստոսի խոսքերով: Այս մոտեցումը կարող է բացել հոգևոր օրհնության մեծ դռներ մեզ համար, լուսավորել մեր հասկացողությունը Նրա հոգու միջոցով և խորը երախտագիտություն առաջ բերել մեզ մոտ սուրբ գրությունների հանդեպ և հոգևոր պարտավորվածության այնպիսի աստիճան զարգացնել, որ հնարավոր չէ ձեռք բերել մեկ այլ միջոցով: Նման որոնումը մեզ հնարավորություն է տալիս կառուցել մեր Քավիչի վեմի վրա և դիմակայել ամբարշտության քամիներին այս վերջին օրերում» (“A Reservoir of Living Water” [Brigham Young University fireside, Feb. 4, 2007], 3, speeches.byu.edu):

Այս ձեռնարկի որոշ նյութերի համար հիմք են հանդիսացել *Վարդապետություն և Ուխտերի և Եկեղեցու Պատմության սեմինարիայի ձեռնարկի* նյութերը:

Ուսանողի ընթերցարան

Այս մասում թվարկվում են սուրբ գրությունների հատվածներ, Եկեղեցու գերագույն իշխանավորների ելույթներ և այլ նյութեր, որոնք կխորացնեն տվյալ դասի թեմայի վերաբերյալ ուսանողի հասկացողությունը: Հանձնարարեք և խրախուսեք ուսանողներին նախքան դասին ներկայանալը ընթերցել այդ նյութերը: Այդ ոգեշնչված նյութերն ուսումնասիրելով նրանք ոչ միայն ավելի լավ կնախապատրաստվեն դասարանային քննարկումներին, այլև առավել խորը պատկերացում կկազմեն ուսումնական թեմաների վերաբերյալ: Կիսամյակի սկզբում ուսանողներին տվեք Ուսանողի ընթերցարանի ողջ ցուցակը:

Ինչպե՞ս կարող եմ նախապատրաստվել ուսուցմանը:

Տերը կօգնի ձեզ՝ մինչև կնախապատրաստվեք ուսուցմանը: Պատրաստվելիս կօգնի, եթե ինքներդ ձեզ տաք հետևյալ հարցերը.

- Աղոթե՞լ եմ Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու համար:

- Արդյոք ուսումնասիրե՞լ եմ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և ընթերցանության օժանդակ նյութերը:
- Կարդացե՞լ եմ ծրագիրը և գտել, թե արդյոք կան բաներ, որոնք պետք է հարմարեցնեմ կամ համապատասխանեցնեմ իմ ուսանողների կարիքներին:
- Ինչպե՞ս կարող եմ հետևել ուսանողների ընթերցումներին՝ հավաստիանալով, որ ուսանողներն առավելագույնն են քաղում դրանից:
- Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ուսանողներից յուրաքանչյուրին լիարժեք մասնակցություն ունենալ դասին:

Հետևյալ առաջարկները նույնպես կարող են օգտակար լինել.

- Խրախուսեք ուսանողներին յուրաքանչյուր դասից առաջ կարդալ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և հոդվածները:
- Ակնկալվում է, որ ուսանողները կկատարեն իրենց դերը որպես սովորողներ:
- Ուսանողներին հաճախակի հնարավորություն տվեք իրենց խոսքերով բացատրել վարդապետությունները և սկզբունքները, կիսվել համապատասխան փորձով և վկայել այն մասին, ինչ գիտեն և զգում են:
- Փոփոխեք ուսումնական վարժությունները և մոտեցումները յուրաքանչյուր դասի համար, ինչպես նաև մնացած օրերի համար:
- Ստեղծեք ուսանելու մթնոլորտ, որը կհրավիրի Հոգին և որտեղ ուսանողները միմյանց սովորեցնելու և իրարից սովորելու հնարավորություն և պատասխանատվություն կունենան (տես ՎևՈւ 88.78, 122):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է.



«Հավաստիացեք, որ կա բավարար մասնակցություն, որովհետև ուսանողի կողմից կիրառվող ազատ կամքը թույլ է տալիս, որ Սուրբ Հոգին ուսուցանի: ... Երբ ուսանողները կիսվում են ճշմարտություններով, այդ ճշմարտությունները հաստատվում են նրանց հոգում և ամրապնդում նրանց վկայությունը» ("To Understand and Live Truth" [evening with Elder Richard G. Scott, Feb. 4, 2005], 3; si.lds.org):

Ինչպե՞ս կարող եմ հարմարեցնել դասերը հաշմանդամ ուսանողների համար:

Ուսուցմանը պատրաստվելիս հաշվի առեք հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Հարմարեցրեք վարժությունները և արդյունքները, օգնելով նրանց հաջողության հասնել:

Լրացուցիչ մտքերի և աղբյուրների համար օգտվեք disabilities.lds.org կայքի Հաշմանդամության ռեսուրսներ էջից և Մեմֆիսի հանգրվանի և Կրոնի

Ինստիտուտների քաղաքականության ձեռնարկի «Հարմարեցված դասեր
և ծրագրեր հաշմանդամ ուսանողների համար» բաժնից:

Զարմանալիք և զարմանք

Նախաբան

Պատմության ընթացքում երկնային Հայրը վերջ է դրել ուրացության ժամանակաշրջաններին՝ կանչելով մարգարեների, ովքեր աստվածային իշխանություն են ստանում վերականգնելու ավետարանի ամբողջականությունը և հաստատելու Հիսուս Քրիստոսի Եկեղեցին: Ջոզեֆ Սմիթը մեր օրերի այդ մարգարեներ էր: Թե ինչպես է Աստված առաջնորդում Իր ժողովրդին և

հաստատում Իր Եկեղեցին մարգարեների միջոցով, ուսանողներին կօգնի ավելի խորը գնահատել Վերականգնման անհրաժեշտությունը և զարգացնել ավելի մեծ ունակություն՝ ուրիշներին Վերականգնման մասին ուսուցանելու համար:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Մ. Ռասսել Բալլարդ «Մուրբ Աստվածաշնչի հրաշքը», *Ensign* կամ *Լիսինգ*, մայիս 2007, 80–82:
- Gordon B. Hinckley, “At the Summit of the Ages,” *Ensign*, Nov. 1999, 72–74.
- Neal A. Maxwell, “From the Beginning,” *Ensign*, Nov. 1993, 18–20.
- *Քարոզիկ իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 31–36:

Ուսուցման առաջարկներ

Ամուսն Ը.11–12, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.5–10

Մեծ Ուրացությունը և Վերականգնման անհրաժեշտությունը

Սկսեք դասը՝ գրատախտակին գրելով հետևյալը .

Մով=

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ամուսն 8.11-12 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել՝ փնտրելով, թե ինչպես է *սով* բառն օգտագործվում որպես խորհրդանիշ:

- Ի՞նչ սովի մասին էր մարգարեանում Ամուսնը, որ պիտի զար: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին՝ «Մով=» բառի կողքին :)
- Ի՞նչ գուշակեց Ամուսնը, որ մարդիկ կանեին այս սովի պատճառով:
- Ի՞նչ ապացույցներ եք դուք տեսել աշխարհում, որոնք վկայում են «Տիրոջ խօսքը լսելու» ծարավի մասին: (Ամուսն Ը.11):

Բացատրեք, որ չնայած Ամուսն Ը.11-12 հատվածներում տրված մարգարեությունը մարդկության պատմության ընթացքում հավանաբար իրականացել է մի քանի անգամ, կարևորագույն իրականացումներից

մեկը հայտնի է որպես Մեծ Ուրացություն: Կարող եք ուսանողներին առաջարկել Ամովս Ը.11-12 հատվածների մոտ սուրբ գրությունների լուսանցքում գրել *Ուրացություն, ներստյալ Մեծ Ուրացությունը*:

Ցուցադրեք հետևյալ բնորոշումը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Հանձնարարեք ուսանողներին գտնել որոշ փաստեր, որոնք վերաբերում են Մեծ Ուրացությանը:

«Հիսուս Քրիստոսի մահից հետո ամբարիշտ մարդիկ հալածեցին Առաքյալներին ու Եկեղեցու անդամներին և սպանեցին նրանցից շատերին: Առաքյալների մահվան հետ քահանայության բանալիները և նախագահող քահանայության իշխանությունը վերցվեցին երկրի վրայից: Առաքյալները ավետարանի վարդապետությունները պահել էին մաքուր և պահպանել էին Եկեղեցու անդամների արժանավորության կարգն ու չափանիշները: Առանց Առաքյալների ժամանակի ընթացքում վարդապետությունները աղավաղվեցին և անթույլատրելի փոփոխություններ կատարվեցին Եկեղեցու կազմակերպության և քահանայության արարողությունների մեջ, ինչպես օրինակ՝ մկրտությունը և Սուրբ Հոգու պարզ շնորհելը:

Առանց հայտնության և քահանայության իշխանության սուրբ գրքերը և Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներն ու արարողությունները մեկնաբանելիս մարդիկ ապավինում էին մարդկային իմաստությամբ: Կեղծ գաղափարները ուսուցանվում էին որպես ճշմարտություն: Հայր Աստծո, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հատկանիշների և էության վերաբերյալ գիտելիքների մեծ մասը կորավ: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարզի վերաբերյալ վարդապետությունները աղավաղվեցին կամ մոռացվեցին: Քրիստոսի Առաքյալներին տրված քահանայության իշխանությունը այլևս գոյություն չունեւ երկրի վրա» (*Քարոզիչ իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց* [2004], 37):

- Համաձայն այս հատվածի, որո՞նք էին այն փաստերը, որ վերաբերում էին Մեծ Ուրացությանը:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Մեծ Ուրացությունը փաստորեն տեղի է ունեցել: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն հետևեք, որ նրանք առանձնացնեն հետևյալ սկզբունքը.
Իմանալ, որ տեղի է ունեցել Մեծ Ուրացություն, կարող է օգնել մեզ գիտակցել ավետարանի Վերականգնման անհրաժեշտությունը:)

Բացատրեք, որ ուրացության ընթացքում Երկնային Հայրը շարունակել է ազդեցություն գործել աշխարհի վրա Քրիստոսի Լույսի միջոցով, որը «տրվում է ամեն մարդու» (Մորոնի 7.16) և Սուրբ Հոգու գործության միջոցով, որը վկայում է, որ ավետարանը ճշմարիտ է (տես *Guide to the Scriptures, "Holy Ghost," scriptures.lds.org*): Նա ոգեշնչել է տարբեր մշակույթների պատկանող տղամարդկանց ու կանանց, ովքեր այդ ընթացքում փնտրել են Նրա օգնությունը: Քրիստոնյա բարեփոխիչները, ինչպես օրինակ Մարտին Լյութերը և Վիլյամ Թեմդալը, աշխատել են օգնել քրիստոնյաներին մոտ ապրել այն գաղափարներին, որոնք գտել են Աստվածաշնչում: Բարեփոխիչների, փիլիսոփաների և նույնիսկ Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի հարգված քաղաքական գործիչների ջանքերը մեծ ազդեցություն են գործել մարդկային արժանապատվության և կրոնի ազատության վրա աշխարհի շատ մասերում: Չնայած այս կարևոր փոփոխություններին, Աստված դեռևս

ամբողջապես չէր վերականգնել Իր Եկեղեցին: (Տես *Քարոզիր իմ ավետարանը*, 45–46:)

Յուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Դարեր շարունակ երկինքները փակված են եղել: Լավ տղամարդիկ և կանայք, ովքեր քիչ չեն եղել, իսկապես մեծ ու հրաշալի մարդիկ, փորձել են ուղղել, ամրացնել և բարելավել իրենց երկրպագության կարգերը և իրենց հիմնական վարդապետությունը: Ես իմ հարգանքի տուրքն եմ մատուցում նրանց: Որքան ավելի լավ է դարձել աշխարհը նրանց խիզախ արարքների շնորհիվ: Չնայած ես հավատում եմ, որ նրանց աշխատանքը ոգեշնչված է եղել, այն չի աջակցվել երկինքների բացվելով՝ Աստվածության հայտնվելով» (“The Marvelous Foundation of Our Faith,” *Ensign*, Nov. 2002, 80):

Հիշեցրեք ուսանողներին, որ 1820 թվականին պատանի Ջոզեֆ Սմիթը փնտրում էր ճշմարիտ Եկեղեցի, սակայն չէր կարողանում գտնել: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.5–10, գտնելով արտահայտություններ, որոնք նկարագրում են Մեծ Ուրացության պատճառած խնդիրները:

- Ի՞նչ արտահայտություններ է օգտագործել Ջոզեֆ Սմիթը՝ անդրադառնալով իր օրերի հոգևոր խնդիրներին:
- Ինչպե՞ս էր Ջոզեֆը նկարագրում իր զգացումները, որոնք առաջացել էին իրեն շրջապատող կրոնական հուզումների արդյունքում:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ջոզեֆ Սմիթի կողմից ճշմարտության որոնումները հանգեցրին Առաջին Տեսիլքին և նա կանչվեց որպես մարգարե: (Այս թեման կքննարկվի հաջորդ դասին:) Նշեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթին կանչելը և ավետարանի Վերականգնումը հետևում էր Աստծո հաստատած օրինաչափությանը, որը կրկնվել է պատմության ընթացքում: Օրինակ, Ենոքսը (տես Մովսես 6.26–32) և Նոյը (տես Մովսես 8.17–20) կանչվել են այս օրինաչափությամբ: Յուցադրեք այս օրինաչափության հետևյալ բացատրությունը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Աստվածաշնչյան պատմությունը արձանագրել է բազմաթիվ դեպքեր, որտեղ Աստված խոսում է մարգարեների հետ, և այն բերում է նաև ուրացության բազմաթիվ օրինակներ: Ընդհանուր ուրացության յուրաքանչյուր շրջանին վերջ դնելու համար Աստված ցույց է տվել Իր սերը Իր զավակների հանդեպ՝ կանչելով մեկ այլ մարգարեի և տալով նրան քահանայության իշխանություն Հիսուս Քրիստոսի ավետարանը կրկին վերականգնելու և ուսուցանելու համար: Ըստ էության մարգարեն գործում է որպես խնամակալ՝ այստեղ՝ երկրի վրա վերահսկելու Աստծո ընտանիքը: Մարգարեների պատասխանատվությամբ դեկավարվող այդպիսի ժամանակահատվածները կոչվում են տնտեսություններ» (*Քարոզիր իմ ավետարանը*, 35, տես նաև Bible Dictionary, “Dispensations”):

- Ինչպե՞ս է Ջոզեֆ Սմիթի միջոցով ավետարանի Վերականգնումը նման այն օրինաչափությանը, որը տեսնում ենք ավելի վաղ

տնտեսություններում: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն հետևեք, որ նրանք ներկայացնեն հետևյալ վարդապետությունը: **Ընդհանուր ուրացությունների ժամանակաշրջաններից հետո Աստված կանչում է մարգարեներ և նրանց տալիս իշխանություն, որպեսզի կրկին վերականգնեն և ուսուցանեն ավետարանը:** Ուսանողները պետք է նաև հասկանան այս վարդապետությունը: **Ջոզեֆ Սմիթը կանչվել է Աստծո կողմից՝ վերականգնելու ավետարանը մեր տնտեսության համար:**)

- Ինչպե՞ս կարող է այս օրինաչափության հասկանալն օգնել ձեզ՝ բացատրել ավետարանի Վերականգնումը որևէ մեկին, ով այլ հավատքից է:

Նշեք, որ Առաջին Տեսիլքի ժամանակ Ջոզեֆ Սմիթն իմացավ, որ երկրի վրա գոյություն չունի ճշմարիտ Եկեղեցի և Քրիստոսի ավետարանի ամբողջականությունը պետք է վերականգնվի: Չնայած Աստվածաշունչը Մեծ Ուրացության մասին մարգարեություններ է պարունակում, ամենակարևոր ապացույցը, որ այդ ուրացությունը տեղի է ունեցել, այն փաստն է, որ Ջոզեֆ Սմիթը կանչվեց լինելու մարգարե և վերականգնվեց ավետարանի ամբողջականությունը:

2 Նեփի 27.25–26, Վարդապետություն և Ուխտեր 1.12–30

Ավետարանի Վերականգնումը «գարմանալիք և գարմանք» է

Բացատրեք, որ սուրբ գրություններում տրված են վերջին օրերում երկրի վրա Իր ավետարանը վերականգնելու Տիրոջ որոշ նպատակները:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վերականգնման վերաբերյալ Եսայիայի մարգարեությունը, որը տրված է 2 Նեփի 27.25–26, փնտրելով Տիրոջ նկարագրությունը Վերականգնման ժամանակ աշխարհի հոգևոր իրավիճակի մասին: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընդգծեն բառերը կամ արտահայտությունները, որոնք նկարագրում են այս հոգևոր իրավիճակները: (*Նշում.* Ուսանողների համար սուրբ գրություններից սովորածը հասկանալու և հիշելու ամենաօգտակար եղանակներից մեկը կարևոր բառերը և արտահայտությունները նշելն է:) Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով:

- Ձեր կարծիքով, ավետարանի Վերականգնումն ինչո՞ւ են անվանում «գարմանալիք և գարմանք»:
- Ի՞նչն էք համարում Վերականգնման «գարմանալիք» և «գարմանք»: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ ավետարանի վերականգնումը որպես «գարմանալիք և գարմանք» Վարդապետություն և Ուխտերում կրկնվող թեմայի ևս մեկ օրինակ է: «Թեմաներն ընդգրկում են, կրկնվող և միավորում են արժեքներ կամ գաղափարներ» [David A. Bednar, “A Reservoir of Living Water” (Brigham Young University fireside, Feb. 4, 2007), 6, speeches.byu.edu.])

Դասարանի կեսին հրավիրեք ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 1.12–17, գտնելով պատճառները, որոնք նշում է Աստված՝ ավետարանի Վերականգնումն առաջ բերելու համար: Դասարանի մյուս

կեսին հրավիրեք ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 1.18-30 հատվածները, գտնելով ուղիները, որոնցով ավետարանի Վերականգնումը կօրհնի Աստծո գավակներին: (Նշում. Վարդապետություն և Ուխտեր 1.30 հատվածը ավելի մանրամասն կուսումնասիրվի դաս 6-ում:)

Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Ավետարանի Վերականգնումն օգնում է նրանց, ովքեր հավատում են Քրիստոսին, գորացնել իրենց հավատքը և հաղթահարել վերջին օրերի արհավիրքները:**


Բարձրաձայն կարդացեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի (1805–1844) հետևյալ խոսքերը.



«[Մարգարեները] ուրախ ակնկալիքով անհամբեր սպասել են այն օրվան, որում մենք ապրում ենք, և ոգեշնչված երկնային և ուրախության ակնկալիքներով, նրանք երգել են, գրել և մարգարեացել մեր այս օրվա համար» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 197):

- Ինչո՞ւ են մարգարեները դարեր շարունակ անհամբեր սպասել մեր օրերին: (Գաղափարներից մեկը, որը հավանական է ուսանողները նշեն, այն է, որ **Վերականգնումը կտարածվի ողջ երկրագնդով մեկ և կնախապատրաստի աշխարհին Հիսուս Քրիստոսի երկրորդ Գալուստին**):

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ հայտարարությունը և խնդրեք մի քանի ուսանողի հերթով բարձրաձայն կարդալ այն.



«Իմ եղբայրներ և քույրեր, արդյո՞ք դուք գիտակցում եք, թե ինչ ունենք մենք: Դուք գիտակցո՞ւմ եք մեր տեղը մարդկության պատմության մեծ թատերաբեմում: Սա կիզակենտն է այն ամենի, ինչ տեղի է ունեցել անցյալում: ...

... Ամենագործի վերջին օրերի գործը, որի մասին խոսել են հնում, որի մասին մարգարեացել են մարգարեները և առաքյալները, սկսվել է: Այն տեղի է ունենում հիմա: Մեզ անհայտ որոշ պատճառներով, սակայն Աստծո իմաստությամբ, մեզ արտոնվել է աշխարհ գալ այս փառահեղ դարաշրջանում: ...

Ստանալով այն, ինչ մենք ունենք և գիտենք, պիտի լինենք ավելի լավ մարդ, քան կանք: Մենք պիտի լինենք ավելի Քրիստոսաման, ավելի ներող, ավելի օգնող և ուշադիր՝ մեր շուրջը գտնվողների հանդեպ:

Մենք կանգնած ենք դարերի սահմանագլխին, որի հանդեպ պատմությունը միշտ մեծ և խորին ակնածանք է ունեցել: Սա վերջին տնտեսությունն է, որի վրա կենտրոնացած է եղել ամեն բան անցյալում: Ես վկայում եմ այս բաների իրական և ճշմարիտ լինելու մասին» ("At the Summit of the Ages," *Ensign*, Nov. 1999, 74):

- Ի՞նչ մտքեր և զգացումներ է արթնացնում ձեր մեջ «մենք կանգնած ենք դարերի սահմանագլխին» արտահայտությունը:
- Եթե խիստ անձնական չէ, կիսվե՞ք ձեր կյանքի մի փորձառությամբ, որն ամրացրել է ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վերաբերյալ:
- Ի՞նչ կարող ենք անել մենք, որպեսզի ցույց տանք մեր երախտագիտությունը ավետարանի Վերականգնման համար:

Ուսանողի ընթերցարան

- Եսայիա ԻԹ.13–14, Ամովս Ը.11–12, 2 Նեփի 27.1–5, 25–26, Վարդապետություն և Ուխտեր 1.12–30, Զոզեֆ Սմիթ - Պատմություն 1.5–10:
- Gordon B. Hinckley, “At the Summit of the Ages,” *Ensign*, Nov. 1999, 72–74.

Առաջին Տեսիլքը

Նախաբան

Թանկագին Մարգարիտում գտնվող Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի պատմությունը գրվել է, որպեսզի ուղղի Եկեղեցու վերաբերյալ սխալ տեղեկությունները: Իր կյանքի ընթացքում Մարգարե Ջոզեֆ Սմիթը մի քանի անգամ պատմել է Առաջին Տեսիլքի մասին: Այս պատմությունները կարող են օգնել մեզ ավելի լավ

հասկանալ այդ փորձառությունը և ամրացնել մեր հավատքը Վերականգնման վերաբերյալ: Այս դասը նախատեսված է ուսանողներին օգնելու համար, որպեսզի հասկանան այս առանձնահատուկ նշանակություն ունեցող իրադարձության վերաբերյալ վկայություն ունենալու կարևորությունը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Gordon B. Hinckley, “The Marvelous Foundation of Our Faith,” *Ensign*, Nov. 2002, 78–81.
- “First Vision Accounts,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).

Ուսուցման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.1-2

Մարգարեն գրել է Առաջին Տեսիլքի մասին՝ սխալ զեկույցներն ուղղելու համար

Բացատրեք, որ 1838 թվականին Ջոզեֆ Սմիթը սկսեց աշխատել իր պաշտոնական պատմության վրա: Թանկագին Մարգարիտում հայտնի որպես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն բաժինը շատ ավելի երկար պատմությունից մի քաղվածք է:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.1–2 հատվածները: Դասարանին հորդորեք հետևել և ուշադրություն դարձնել այն պատճառներին, որոնց համար Ջոզեֆ Սմիթը գրել է իր պատմությունը:

- Համաձայն հատված 1-ի, ի՞նչ էր տարածվում մարդկանց մեջ Եկեղեցու վաղ շրջանում:
- Ի՞նչ նպատակ էին հետապնդում նրանք, ովքեր Եկեղեցու դեմ ուղղված տեղեկություններ էին տարածում:
- Նմանօրինակ ի՞նչ դեպքեր կան մեր օրերում:

Բացատրեք, որ այսօր ևս կան անհատներ կամ խմբեր, ովքեր կեղծ կամ սպակողմնորոշիչ տեղեկություններ են տարածում Եկեղեցու վերաբերյալ՝ հավատքը քայքայելու մտադրությունից ելնելով:

- Ի՞նչ պատճառ բերեց Ջոզեֆին իր պատմությունը գրելու համար: («Որպեսզի մոլորությունից հանեմ հասարակական կարծիքը և բոլոր ճշմարտություն փնտրողներին տեղեկացնեմ փաստերին, ինչպես որ դրանք տեղի են ունեցել» [Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.1]:)
- Ինչո՞ւ է կարևոր, որ Վերականգնման մասին «ճշմարտություն փնտրողները» կարդան Ջոզեֆ Սմիթի կողմից գրված պատմությունը:

(Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ պարզորոշ արտահայտվում է այն միտքը, որ **Մարգարեի պատմության վրա հիմնվելով՝ անհատները կխուսափեն մոլորվելուց կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններով:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը և հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այն.



«Միշտ կլինեն մի քանիսը, ովքեր կփորձեն հեղինակազրկել Եկեղեցին և ոչնչացնել հավատքը: Այսօր նրանք օգտագործում են համացանցը:

Եկեղեցու մասին որոշ տեղեկություններ, անկախ նրանց համոզիչ լինելուց, պարզապես ճշմարիտ չեն» («Ձեր հավատքի փորձությունը» *Ensign* կամ *Լիառնա*, նոյ. 2012, 41):

- Ի՞նչ աղբյուրներ պետք է մենք փնտրենք և վստահենք դրանց Առաջին Տեսիլքի, ավետարանի Վերականգնման և Եկեղեցու պատմության այլ իրադարձությունների վերաբերյալ մեր անձնական որոնումներում: Ինչո՞ւ: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններից խուսափելու համար նրանք, ովքեր փնտրում են ճշմարտությունը, պետք է փնտրեն վստահելի տեղեկությունների աղբյուրներ Եկեղեցու և նրա պատմության վերաբերյալ, այլ ոչ թե պարզապես ընդունեն իրենց լսած կամ կարդացած ցանկացած տեղեկություն, այդ թվում այն, ինչ երևում է համացանցի որոնման արդյունքում:**)

Բացատրեք, որ Եկեղեցու քննադատները առարկում են Առաջին Տեսիլքի իրականության դեմ, ասելով, որ Ջոզեֆ Սմիթը արձանագրել է տեսիլքի իր փորձառությանը դրանից շատ տարիներ անց: Բացատրեք, որ 14 ամյա Ջոզեֆ Սմիթը դժվարանում էր խոսել իր տեսիլքի մասին այն արձագանքների պատճառով, որ ստացել էր նրանց կողմից, ում նախապես ասել էր (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.21–26): Նա գրի առավ փորձառությունն այն ժամանակ, երբ զգաց, որ եկել էր այդ անելու ճիշտ պահը: Փրկիչը հրահանգեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին չխոսել Այլակերպության Սարի փորձառության մասին՝ մինչև Նրա Հարությունը (տես Մատթեոս ԺԷ.9), պարզաբանելով, որ որոշ սրբազան փորձառություններով կարելի է կիսվել միայն Հոգու ոգեշնչումով:

Զեկույցներ Առաջին Տեսիլքի վերաբերյալ

Նշում. Դասի այս մասն ուսուցանելիս բավարար ժամանակ թողեք դասի վերջին մասն ուսուցանելու համար, որն ընդգրկում է Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.8–20 հատվածները:

Բացատրեք ուսանողներին, որ Ջոզեֆ Սմիթն անձամբ կամ դպիրների օգնությամբ գրել է Առաջին Տեսիլքի առնվազն չորս առանձին զեկույցներ: Բացի դրանից, այս տեսիլքի մի շարք զեկույցներ են գրվել Ջոզեֆ Սմիթի ժամանակակիցների կողմից: Զեկույցներից յուրաքանչյուրը շեշտում է Ջոզեֆի փորձառության տարբեր կողմերը, սակայն դրանք բոլորն էլ պատմում են Ջոզեֆի տեսածի և լսածի կարևոր տարրերի մասին:

Որպեսզի օգնեք հասկանալ, թե ինչու են զեկույցները տարբերվում իրարից, խնդրեք ուսանողներին խորհել հետևյալի շուրջ.

- Մտածեք մի կարևոր կամ իմաստալից փորձառության մասին, որն ունեցել եք ձեր կյանքում: Ինչպե՞ս կարող է փոփոխվել այդ փորձառության ձեր զեկույցը՝ ելնելով այն հանգամանքից, թե ով է ձեր ունկնդիրը: Ինչպե՞ս կարող է այն փոխվել՝ ելնելով այն հանգամանքից, թե երբ և ինչու եք դուք պատմում այդ փորձառության մասին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ հետևյալ հայտարարությունը և խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչ են ակնկալում պատմաբանները, երբ փորձառությունը վերապատմվում է մի քանի անգամ:

«Առաջին Տեսիլքի մի շարք զեկույցներ պատմում են նման պատմություններ, չնայած իրականում դրանք տարբերվում են շեշտադրումներով և մանրամասներով: Պատմաբաններն ակնկալում են, որ երբ անհատը վերապատմում է մի փորձառություն բազմաթիվ միջավայրերում տարբեր ունկնդիրների համար շատ տարիների ընթացքում, յուրաքանչյուր զեկույց պետք է շեշտադրի փորձառության տարբեր կողմերը և պարունակի առանձնահատուկ մանրամասներ: Իսկապես, այնպիսի տարբերություններ, ինչպիսին առկա են Առաջին Տեսիլքում, գոյություն ունեն բազմաթիվ սուրբ գրքի պատմություններում, ինչպես օրինակ Դամասկոսի ճանապարհի Պողոսի տեսիլքում և Այլակերպության Սարի Առաքյալների փորձառության մեջ [Գոր. Թ. 3–9, ԻԲ. 6–21, ԻԶ. 12–18, Մատթեոս 17.1–13, Մարկոս Թ. 2–13, Դուկաս Թ. 28–36]: Չնայած տարբերություններին՝ Առաջին Տեսիլքի բոլոր զեկույցներում պահպանվում է հիմնական հետևողականությունը: Ոմանք սխալ կարծիք կազմելով՝ վիճաբանում են, թե պատմությունը վերապատմելիս ցանկացած տարբերություն փաստում է կեղծիքի մասին: Սակայն հակառակը, հարուստ պատմական զեկույցները մեզ թույլ են տալիս ավելի սովորել այս նշանակալից իրադարձության մասին, քան մենք կկարողանայինք, եթե այն ավելի քիչ փաստագրված լիներ» (“First Vision Accounts,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics)):

Որպեսզի զեկույցների տարբերության օրինակ դուք կարող եք ասել ուսանողներին, որ «մինչ 1832 թվականի զեկույցը շեշտում է Ջոզեֆ Սմիթի ավելի անձնական պատմությունը, և պատմանին ներում է փնտրում, 1838 թվականի զեկույցը կենտրոնացնում է տեսիլքի վրա որպես «Եկեղեցու երևան գալու և աճի» սկիզբ» (“First Vision Accounts,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics)): Հիշեցրեք ուսանողներին, որ իրենց հանձնարարված ընթերցանությունը ներառում է Ավետարանական Թեմաների «Առաջին Տեսիլքի զեկույցները» հոդվածը, որը տալիս է Առաջին Տեսիլքի տարբեր զեկույցներից յուրաքանչյուրի ավելի մանրամասն վերլուծությունը: Հրավիրեք ուսանողներին դասից հետո ուսումնասիրել հոդվածը, որպեսզի ավելի լավ հասկանան, թե ինչպես է յուրաքանչյուր զեկույց նպաստում Առաջին Տեսիլքի վերաբերյալ մեր գիտելիքներին: (Նշում. Հիշեցրեք ուսանողներին «Ուսանողի ընթերցարանի» հանձնարարությունները նախքան դասը կարդալու կարևորության մասին: Դա կարող է օգնել նրանց մասնակցել դասարանային քննարկումներին:

- Ինչպե՞ս կարող են Առաջին Տեսիլքի մասին բազմաթիվ զեկույցները վկայել դրա ճշմարտացիության մասին և օգնել ավելի լավ հասկանալ այս սուրբ իրադարձությունը: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի բազմաթիվ զեկույցները մեզ թույլ են տալիս ավելի խորությամբ հասնել իրադարձության մասին, քան մենք կկարողանայինք, եթե այն ավելի քիչ փաստագրված լիներ։)

Յուզադդեր Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910-2008) հետևյալ խոսքերը և հանձնարարք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ես մտածեցի չեմ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը տվել է Առաջին Տեսիլքի մի շարք տարբերակներ, այլ մտածեցի չեմ, որ Նոր Կտակարանն ունի չորս տարբեր հեղինակներ՝ յուրաքանչյուրն իր սեփական ընկալումով, յուրաքանչյուրը հերթով պատմելով իրադարձությունները իր իսկ նպատակների համար» (“God Hath Not Given Us the Spirit of Fear,” *Ensign*, Oct. 1984, 5):

Բերեք ձեր վկայությունը Առաջին Տեսիլքի իրականության և Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով ավետարանի Վերականգնման մասին:

Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.8-20

Եկեղեցու ճշմարտացիությունը կախված է Առաջին Տեսիլքի ճշմարիտ լինելուց

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.8-15:

- Ի՞նչ արեց Ջոզեֆ Սմիթը իր հարցերի պատասխանները գտնելու համար:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր սատանան փորձում խանգարել Ջոզեֆ Սմիթին աղոթել:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.16-19:

- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ ենք մենք սովորում 16-17 հատվածներից: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ **հավերժական ճշմարտությունները վերականգնվեցին երկրի վրա, երբ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին։)**

Յուզադդեր և բարձրաձայն կարդացեք Երեց Թեդ Ռ. Քալիսթերի հետևյալ խոսքերը, ով ծառայում է Յոթանասունի Նախագահությունում: Մինչ դուք կարդաք այս ելույթը, դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները իրենց սուրբ գրություններում նշեն ճշմարտությունները, որոնք շեշտում է Եղբայր Քալիսթերը: Կարող եք նաև առաջարկել, որ նրանք գրեն *ճշմարտությունները, որոնք Ջոզեֆ Սմիթը խմացավ, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.16-19-ի կողքի լուսանցքում: (Նշում. Սուրբ գրություններում նշումներ կատարել սովորելը սուրբ գրությունների ուսումնասիրության կարևոր հմտություն է, որն ուսանողները կարող են զարգացնել ձեր օգնությամբ [տես Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion (2012), 21]:)*



«Ջոզեֆ Սմիթը Տիրոջ օծյալն էր, ով պետք է վերականգնեք Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա: Երբ նա դուրս եկավ պուրակից, սովորել էր չորս հիմնարար ճշմարտություն, որոնք չէին ուսուցանվում այդ ժամանակ քրիստոնեական աշխարհում:

Առաջին. նա սովորեց, որ Հայր Աստված և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, երկու առանձին Եակներ են: ...


Երկրորդ մեծագույն ճշմարտությունը, որը հայտնագործեց Ջոզեֆ Սմիթը, այն էր, որ Հայրը և Որդին ունեին ոսկորից և մսից փառավորված մարմիններ: ...

Երրորդ ճշմարտությունը, որը սովորեց Ջոզեֆ Սմիթը, այն էր, որ Աստված դեռ խոսում է մարդու հետ, որ երկինքը փակ չէ: ...

Ջոզեֆ Սմիթի սովորած չորրորդ ճշմարտությունն այն էր, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին իր ամբողջությամբ և լրիվությամբ այդ ժամանակ երկրի վրա չէր» («Ջոզեֆ Սմիթ՝ Վերականգնման Մարգարե», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 35-36):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Եական իմանալ և հասկանալ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին այդ ճշմարտությունները:
- Ինչպե՞ս կարող է այդ ճշմարտությունների անհրաժեշտությունն օգնել բացատրելու, թե ինչու էր սատանան փորձում խանգարել պատանի Ջոզեֆ Սմիթին աղոթել:

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի կարևորությունը շեշտելու համար ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մեր ողջ ուժը հիմնվում է [Առաջին Տեսիլքի] ճշմարտացիության վրա: Դա կամ տեղի է ունեցել կամ տեղի չի ունեցել: Եթե այն տեղի չի ունեցել, ապա այս աշխատանքը խաբեբայություն է: Իսկ եթե տեղի է ունեցել, ապա այն ամենակարևոր և ամենահրաշալի աշխատանքն է ողջ երկնքի տակ: ...

... 1820 թվականին տեղի ունեցավ այդ փառահեղ հայտնությունը՝ ի պատասխան մի տղայի աղոթքի, ով իր ընտանեկան Աստվածաշնչում կարդացել էր Հակոբոսի խոսքերը. «Բայց եթե մեկը ձեզանից իմաստութեան պակասություն ունի թող խնդրե Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կտրուի նորան» (Հակոբոս Ա.5):

Եկեղեցու ճշմարիտ լինելու հիմքում գտնվում է այդ բացառիկ և հրաշալի փորձառությունը» ("The Marvelous Foundation of Our Faith," *Ensign*, Nov. 2002, 80):

- Ինչպե՞ս է Եկեղեցու ճշմարիտ լինելը կապված Առաջին Տեսիլքի հետ:
- Ինչո՞ւ է կարևոր ունենալ վկայություն այն մասին, որ Ջոզեֆ Սմիթը տեսել է Հայր Աստծուն և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին: (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ, սակայն հետևեք, որ հետևյալ սկզբունքը հստակ լինի. **Երբ մենք վկայություն ենք ստանում, որ Ջոզեֆ Սմիթը տեսել է Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք նաև իմանալ Ավետարանի Վերականգնման ճշմարտացիության մասին:**)

Դասի վերջում շեշտեք Առաջին Տեսիլքի ճշմարտության վերաբերյալ անձնական վկայություն ունենալու կարևորությունը: Այս անձնական վկայությունը՝ հիմնված հայտնության վեմի վրա, օգնում է մեզ ամուր մնալ մեր հավատքում, երբ մենք հանդիպում ենք Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Եկեղեցու վերաբերյալ կեղծ տեղեկությունների: Վկայեք, որ մենք նույնպես կարող ենք իմանալ ճշմարտությունն այն ուղիով, որով իմացավ Ջոզեֆ Սմիթը: Մենք կարող ենք փնտրել ճշմարտությունը, կարդալ սուրբ գրությունները, խորհել և ի վերջո հարցնել Աստծուն, և Նա կպատասխանի (տես Հակոբոս Ա.5): Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես են նրանք վկայություն ստացել, որ Հայրը և Որդին հայտնվել են Ջոզեֆ Սմիթին: Ժամանակ տրամադրեք մեկ կամ երկու ուսանողների, որպեսզի կիսվեն, թե ինչպես են վկայություն ձեռք բերել Առաջին Տեսիլքի վերաբերյալ:

Ուսանողի ընթերցարան

- Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.1-26:
- Gordon B. Hinckley, "The Marvelous Foundation of Our Faith," *Ensign*, Nov. 2002, 78–81.

Մորմոնի Գրքի ստեղծումը

Նախաբան

Տերն ուղարկեց Մորմոնի հրեշտակին՝ նախապատրաստելու Ջոզեֆ Սմիթին ստանալ և թարգմանել Մորմոնի Գիրքը: Քիչ բան է հայտնի թարգմանության իրական գործընթացի մասին: Ջոզեֆ Սմիթն ասել է, որ Մորմոնի Գիրքը թարգմանվել է «Աստծո պարզևո՛րդ ու գործողամբ» (Մորմոնի Գրքի նախաբան, 1830 թվականի հրատարակություն): Համաձայն վկաների

հետ կապված օրենքի (տես Բ Կորնթացիս ԺԳ.1), Տերը թույլ տվեց որոշ մարդկանց լինելու այս հնադարյան հիշատակարանի վկաները: Նրանց վկայությունը ամրացնում է Մորմոնի Գրքի հանդեպ վստահությունը ողջ աշխարհի համար:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Neal A. Maxwell, “By the Gift and Power of God,” *Ensign*, Jan. 1997, 36–41.
- “Book of Mormon Translation,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- «Մորմոնի Գրքի ստեղծումը և Քահանայության վերականգնումը», գլուխ 5-ը *Եկեղեցու Պատմությունը ժամանակների լրության ընթացքում Ուսանողների ձեռնարկում*, 2-րդ մաս (Եկեղեցու Կրթական Համակարգի ձեռնարկ, 2003), 52–66:

Ուսուցման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.30-35, 42-54

Թարգմանվել է Աստծո պարզևո՛րդ ու գործողամբ

Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների դասարանի համար ամփոփել, թե ինչ են իրենք հիշում 1823 թվականի սեպտեմբերի 21-ի երեկոյան պատանի Ջոզեֆ Սմիթին՝ Մորմոնի հրեշտակի կատարած այցելության մասին: Անհրաժեշտության դեպքում ուսանողների հետ կիսվեք հետևյալ տեղեկություններով.

«1823թ. սեպտեմբերի 21-ի երեկոյան Նյու Յորքի Պալմիրայի իր ընտանեկան փայտե տանը Ջոզեֆը մտավ վերնահարկի իր ննջասենյակը, արթուն մնաց՝ մինչ մյուսները սենյակում կքնեին և սկսեց ջանասիրաբար աղոթել, որպեսզի ավելի շատ իմանա իր համար ունեցած Աստծո նպատակների մասին: ...

Ի պատասխան իր աղոթքի՝ Ջոզեֆը նկատեց իր սենյակը թափանցող մի լույս, որը շարունակում էր պայծառանալ, մինչև որ սենյակը դարձավ «կեսօրից էլ լուսավոր»: Նրա մահճակալի մոտ հայտնվեց երկնային մի սուրհանդակ, օդի մեջ կանգնած, «շլացուցիչ ճերմակության» մի պարեգոտ հագին: (Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.30-31:) Այդ սուրհանդակը Մորմոնին եր՝ վերջին Նեփիացի մարգարեն, որը դարեր առաջ թաղել էր թիթեղները, որոնց վրա գրված էր Մորմոնի Գիրքը, և որն այժմ կրում էր այդ սրբազան հիշատակարանի բանալիները (տես ՎնՈւ 27.5): Նա ուղարկվել էր Ջոզեֆին ասելու, որ Աստված ներել էր նրա մեղքերը և նրա համար մեծ աշխատանք ուներ անելու: Որպես այդ աշխատանքի մաս՝ Ջոզեֆը պետք է գնար մոտակա բլուրը, որտեղ պահ էր տրված ոսկե թիթեղների վրա գրված սրբազան հիշատակարանը: ... Ջոզեֆը պետք է թարգմաներ հիշատակարանը և այն լույս աշխարհի բերեր:

Հաջորդ օրը Ջոզեֆը գնաց բլուրը, որտեղ թաղված էին Մորմոնի Գրքի թիթեղները: Այնտեղ նա հանդիպեց Մորմոնիին և տեսավ թիթեղները, սակայն նրան ասվեց, որ նա չի կարող ստանալ դրանք չորս տարի: ...

... 1827թ. սեպտեմբերի 22-ին [Ջոզեֆի կինը՝ Էմման,] նրա հետ գնաց բլուր և սպասեց, մինչև Մորմոնի Մարգարեի ձեռքը հանձնեց թիթեղները» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 63-64):

Հրավիրեք ուսանողներին բացել Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը և աչքի անցկացնել առաջին պարբերությունը, փնտրելով տեղեկություն այն մասին, թե ինչպես պետք է այս հնադարյան հիշատակարանը հայտնվեր և թարգմանվեր: Երբ ուսանողները կարդան, խնդրեք նրանց կիսվել իրենց գտած նյութով: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքը թարգմանվել է Աստծո պարգևով և գործությամբ:**)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.34-35 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել և փնտրել ուղիներից մեկը, որով Տերն օգնել է Ջոզեֆ Սմիթին թարգմանել Մորմոնի Գիրքը:

- Համաձայն այս հատվածների, ո՞րն է այն ուղիներից մեկը, որով Տերն աջակցել է Ջոզեֆ Սմիթին հնադարյան հիշատակարանը թարգմանելիս: (Տերը թարգմանելու համար պատրաստել էր Ուրիմն ու Թումիմը:)

Բացատրեք, որ մեկ այլ գործիք, որը Ջոզեֆ Սմիթն օգտագործեց Մորմոնի Գիրքը թարգմանելիս, փոքրիկ օվալաձև քարն էր, որը երբեմն կոչում են «տեսանողի քար», որը նա գտել էր ոսկե թիթեղները ձեռք բերելուց տարիներ առաջ (տես «Book of Mormon Translation,” Gospel Topics, lds.org/topics): Պատմական աղբյուրներում ակնարկվում է, որ Մարգարեն թարգմանելու համար երբեմն օգտագործել է Ուրիմն ու Թումիմը, իսկ երբեմն էլ՝ տեսանողի քարը:

Բարձրաձայն կարդացեք հետևյալ հայտարարությունը, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ Տերը Ուրիմի ու Թումիմի և տեսանողի քարի միջոցով մարգարեին ցույց էր տալիս Մորմոնի Գրքի անգլերեն թարգմանությունը.

«Երբ թարգմանության գործընթացի հետ կապված հարցեր են ուղղվել Ջոզեֆին, նա տարբեր առիթներով կրկնել է, որ դա կատարվել է «Աստծո պարգևով և գործությամբ» և մի անգամ ավելացրել է. «Նախատեսված չէ աշխարհին պատմել Մորմոնի գրքի ստեղծման վերաբերյալ բոլոր մանրամասները»:

Այնուամենայնիվ, դպիրները և այլոք, ովքեր տեսել են թարգմանության գործընթացը, բազմաթիվ զեկույցներ են թողել, որոնք որոշակի գաղափար են տալիս գործընթացի վերաբերյալ: Որոշ զեկույցներում նշվում է, որ Ջոզեֆը սովորում էր թիթեղների տառերը: Ջեկույցների մեծ մասում խոսվում է այն մասին, որ Ջոզեֆն օգտագործում էր Ուրիմն ու Թումիմը (կամ մեկնիչները, կամ տեսանողի քարը) և շատ զեկույցներում ասվում է, որ նա օգտագործում էր միայն քարը: Համաձայն այս զեկույցների, Ջոզեֆը դնում էր կամ

մեկնիչները, կամ տեսանողի քարը գլխարկի մեջ, իր դեմքը մտցնում էր գլխարկի մեջ, որպեսզի լույսը ներս չթափանցեր և բարձրաձայն կարդում էր անգլերեն բառերը, որոնք հայտնվում էին գործիքի վրա: Նկարագրված գործընթացը հիշեցնում է Մորմոնի Գրքի մի հատված, որտեղ խոսվում է այն մասին, որ Աստված պատրաստում է «մի քար, որը պիտի դուրս շողա մթությանից ի լույս» [Ամա 37.23-24] (“Book of Mormon Translation,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics)):

Բացատրեք, որ Տիրոջ օգնության մասին է վկայում նաև այն կարճ ժամանակահատվածը, որի ընթացքում Ջոզեֆ Մֆիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մտածեք կարճ ժամանակահատվածի մասին, որը պահանջվեց Ջոզեֆից Մորմոնի Գիրքը թարգմանելու համար: Աշխատելով 1828 թվականի ապրիլից մինչև հունիսը՝ Ջոզեֆը թարգմանեց 116 էջերը, որոնք ավելի ուշ Մարտին Հարրիսը կորցրեց: Ջոզեֆը կրկին սկսեց թարգմանել 1829 թվականի ապրիլի 7-ին, երեքշաբթի օրը՝ Օլիվեր Զառուդերիին ունենալով որպես դպիր: Ձեռագիրն ավարտին հասցվեց ութսունհինգ օր անց՝ այդ տարվա հունիսի 30-ին: Իհարկե, ոչ ամբողջ ժամանակն էր ծախսվել թարգմանության վրա աշխատելով: ... Մոտավոր հաշվարկով մնում է վաթսունհինգ կամ ավելի քիչ աշխատանքային օր, որոնց ընթացքում մարգարեն և նրա դպիրները թարգմանեցին այս գիրքը, որի ներկայիս հրատարակությունը պարունակում է 531 էջ: (Տես John W. Welch, *Ensign*, Jan. 1988, pp. 46–47:) Ըստ այդ հաշվարկի մոտավորապես կազմում է օրական ութ էջ: Խորհե՛ք այս մասին, երբ դուք գիրք թարգմանեք, կամ երբ նախատեսեք Մորմոնի Գրքի ձեր ընթերցանությունը» (“A Treasured Testament,” *Ensign*, July 1993, 61–62):

- Որո՞նք են այն փաստերը, որ Մորմոնի Գիրքն ի հայտ է եկել «Աստծո պարգևով և գործությամբ»:
- Եթե մենք չգիտենք Մորմոնի Գրքի ստեղծման վերաբերյալ բոլոր մանրամասները, ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, որ այս գիրքը ճշմարիտ է: (Մենք կարող ենք հոգևոր վկայություն ստանալ Մորմոնի Գրքի վերաբերյալ՝ առանց դրա թարգմանության բոլոր մանրամասներն իմանալու:)
- Ի՞նչն է ձեզ օգնել վկայություն ձեռք բերել Մորմոնի Գրքի մասին:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ հայտարարությունը.



«Առաջինը եկավ Մորմոնի թիթեղներով, որոնցից թարգմանվեց Մորմոնի Գիրքը: Ինչպիսի՞ եզակի և ուշագրավ բան էր դա: Ոսկե թիթեղների մասին Ջոզեֆի պատմությունը արտառոց է: Դրան դժվար էր հավատալը և հեշտ էր մարտահրավեր նետելը: Կարո՞ղ էր նա ինքնուրույն գրել այն: Ահա այն, իմ եղբայրներ և քույրեր, յուրաքանչյուր կարող է տեսնել, ձեռք տալ և կարդալ: Դրա ծագումը բացատրելու յուրաքանչյուր փորձ, բացի այն, որ ինքն է ներկայացնում, կորցրել է իր կշիռը: Նա հիմնականում կրթություն չէր ստացել և սակայն

շատ կարճ ժամանակահատվածում թարգմանեց այն, ինչը տպագրված տեսքով բաղկացած է 500 էջից: ...

Այս բոլոր տարիների ընթացքում քննադատները փորձել են բացատրել այն: Նրանք խոսել են ընդդեմ այս գրքի: Նրանք ծաղրել են այն: Սակայն այս գիրքը նրանցից ավելի երկար է ապրել, և դրա ազդեցությունն այսօր ավելի մեծ է, քան իր պատմության մեջ որևէ ժամանակում» («Սարից մի քար կտրվեց», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2007,85):

- Ի՞նչ կարող եք դուք ասել, որպեսզի օգնեք մեկին, ով դժվարանում է հավատալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Վկայեք, որ Մորմոնի Գիրքն առաջացել է Աստծո պարզևոյվ և զորությամբ:

Վարդապետություն և Ուխտեր 17

Երեք վկաների և ութ վկաների վկայությունները

Բացատրեք, որ երբ Զոգեֆ Սմիթը թարգմանում էր Մորմոնի Գիրքը, նա իմացավ, որ Տերը կնշանակեր ուրիշներին՝ լինելու հնադարյան հիշատակարանի վկաները (տես 2 Նեփի 27.12-13, Եթեր 5.2-5): Այդ ժամանակ Օլիվեր Զառդերին, Դեյվիդ Ուիթմերը և Մարտին Հարրիսը ցանկություն արտահայտեցին լինելու այս հատուկ վկաները: Վարդապետություն և Ուխտեր 17 բաժինը պարունակում է այս մարդկանց ուղղված Փրկչի հրահանգները:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 17.1-6: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով, թե ինչ հրահանգեց Տերը վկաներին անել այն բանից հետո, երբ նրանք տեսան թիթեղները: Երբ ուսանողները կհավեն իրենց գտած նյութով, հարցրեք.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ այդ տղամարդիկ պետք է հավատք ցուցաբերեին՝ ինչպես մարգարեները հնում, որպեսզի Տերը թույլ տար նրանց տեսնել թիթեղները:
- Համաձայն հատված 3-5-ի, ի՞նչ պարտականություն կունենային այս վկաները թիթեղները տեսնելուց հետո:
- Ի՞նչ պարտականություն ունենք մենք, երբ Տերը հայտնի է դարձնում մեզ Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելը: (Ուսանողները պետք է առանձնացնեն նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք վկայություն ենք ձեռք բերում ճշմարտության մասին, մենք պատասխանատվություն ենք կրում դրա մասին վկայելու:** [Տես նաև ՎնՈւ 88.81:]) Դուք կարող եք շեշտել, որ այս սկզբունքը նաև օրինաչափության օրինակ է, որ կարող ենք գտնել սուրբ գրություններում: «Օրինաչափությունը ծրագիր է, օրինակ կամ չափանիշ, որը կարող է օգտագործվել որպես ուղեցույց ինչ-որ կրկնվող բան անելիս» [David A. Bednar, “A Reservoir of Living Water” (Brigham Young University fireside, Feb. 4, 2007), 5, speeches.byu.edu]:)
- Ինչպե՞ս է ճշմարտության մասին վկայելը դրսևորում մեր հավատքը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Երեք Վկաների հետ կապված Զոգեֆ Սմիթի փորձառության մասին:

«Մարտին Հարրիսը, Դեյվիդ Ուիթմերը, Օլիվեր Քաուդերին և ես որոշեցինք առանձնաձև աշխատել և ջանքեր անել ինչպես և խոսքերով փորձել հասնել խոստումների իրականացմանը: ... Մեր երկրորդ ձախողումից [հետո] Մարտին Հարրիսն առաջարկեց, որ դուրս գա մեր շրջանից, համոզված լինելով, որ իր ներկայությունն է մեր ուզած պատասխանը չստանալու պատճառը: Այսպիսով նա հեռացավ մեզանից, և մենք կրկին ծնկի իջանք և մեր աղոթելուց մի քանի րոպե չանցած, ... ահա [Մորոնի] հրեշտակը կանգնեց մեր առաջ: Թիթեղները նրա ձեռքին էին: ... Նա շրջեց թերթերը մեկ առ մեկ, որպեսզի մենք կարողանայինք տեսնել դրանք և հստակ տարբերել փորագրությունները: ... Մենք ձայն լսեցինք մեր գլխավերևում պայծառ լույսի միջից, որն ասաց. «Այս թիթեղները հայտնությամբ տրվել են Աստծո զորությամբ և դրանք թարգմանվել են Աստծո զորությամբ: Դրանց թարգմանությունը, որը դուք տեսնել եք, ճիշտ է, և ես պատվիրում եմ ձեզ գրանցել այն, ինչ դուք այժմ տեսնում և լսում եք»:

Այդ ժամանակ ես թողեցի Դեյվիդին և Օլիվերին ու գնացի գտնելու Մարտին Հարրիսին, որը բավական հեռու եղանդուն աղոթում էր: Նա շուտով ինձ ասաց, որ ինքը դեռ չէր արժանացել Տիրոջ հետ հաղորդակցման և շատ խնդրեց ինձ միանալ իր աղոթքին, որպեսզի նույնպես կարողանար ճանաչել այն օրհնությունները, որոնք մենք նոր էինք ստացալ: Մենք հետևաբար միասին աղոթեցինք և, ի վերջո, հասանք մեր ցանկություններին, քանզի դեռ չէինք ավարտել, երբ նույն տեսիլքը բացվեց մեր առաջ, համենայն դեպս այն կրկին բացվեց իմ առաջ, և ես մեկ անգամ ևս տեսա և լսեցի նույն բաները, երբ հանկարծ Մարտին Հարրիսը հրճվանքով բացականչեց. «Բավական է, բավական է, իմ աչքերը տեսան, իմ աչքերը տեսան» (*History of the Church*, 1:54–55):

Ջոզեֆը վերադարձավ Ուիթմերի տուն և իր ծնողներին ասաց. «Տիրոջ հրամանով թիթեղները ցույց տրվեցին բացի ինձանից ևս երեք հոգու, ովքեր մի հրեշտակ տեսան և պետք է վկայեն իմ ասածների ճշմարտության մասին, քանզի այժմ նրանք գիտեն, որ ես չեմ խաբում մարդկանց, և ես զգում եմ, ինչպես ազատվեցի մի բեռից, որը շատ ծանր էր և գրեթե անհնար, որ ես տանեի, ... և իմ հոգին հրճվում է, որ ես այլևս լրիվ մենակ չեմ աշխարհում» (*Lucy Mack Smith, History, 1844–1845, book 8, page 11, josephsmithpapers.org/paperSummary/lucy-mack-smith-history-1844-1845*):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր Ջոզեֆ Սմիթը հրճվում այս փորձառությունից հետո: (Նա այլևս մենակ չէր՝ որպես թիթեղների և երկնային սուրհանդակի վկա:)

Բացատրեք, որ ևս ութ վկաներ հնարավորություն ստացան տեսնելու թիթեղները:

Հրավիրեք դասարանի կեսին կարդալ «Երեք վկաների վկայությունը» և մյուս կեսին կարդալ «Ութ վկաների վկայությունը», որոնք կարելի է գտնել Մորմոնի Գրքի առաջին էջերում: Հանձնարարեք ուսանողներին փնտրել վկաների փորձառությունների նշանակալից տարրերը: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտածով:

- Ինչո՞ւ վ է Երեք վկաների փորձառությունը տարբերվում Ութ վկաների փորձառությունից: (Երեք վկաները լսեցին Աստծո ձայնը և հրեշտակ տեսան, սակայն ձեռք չտվեցին թիթեղներին: Ութ վկաներին թիթեղները ցույց տվեց Ջոզեֆ Սմիթը, և նրանք կարողացան ձեռք տալ դրանց: Ութ վկաները ավելի շատ ֆիզիկական վկայություն ստացան թիթեղների իրական լինելու մասին, մինչդեռ Երեք վկաներն ունեցան ավելի շատ հոգևոր փորձառություն:)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր բազմաթիվ վկաներ ունենալը շատ կարևոր Մորմոնի Գրքի երևան գալու համար:

Որոշ ուսանողներ միգուցե տեղյակ չեն, որ Երեք վկաներից յուրաքանչյուրը և Ութ վկաներից ումանք ի վերջո հեռացել են Եկեղեցուց: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Դավիթ Հ. Օուքսի հետևյալ միտքը.



«Դիմակայելով բոլոր ... հնարավոր առարկություններին, Մորմոնի Գրքի Երեք վկաների վկայությունը իրենից մեծ ուժ է ներկայացնում: ... Ինչպես քաջ հայտնի է, անհամաձայնությունների կամ նախանձի պատճառով, որոնք կապված էին Եկեղեցու այլ ղեկավարների հետ, այս երեք վկաներից յուրաքանչյուրը վտարվեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց՝ նրանց վկայությունների հրատարակումից մոտավորապես ութ տարի անց: ... Այնուամենայնիվ, մինչև իրենց կյանքի վերջը ... այս վկաներից ոչ մեկը չհրաժարվեց իրենց հրատարակված վկայությունից կամ չասաց որևէ բան, որը որոշակի ստվեր կզցեր դրանց ճշմարտացիության վրա:

Դեռ ավելին՝ նրանց վկայությունը անհերքելիորեն կանգնում է ցանկացած այլ վկաների կողքին: Մեկը կարող է չընդունել այն, սակայն ինչպե՞ս կարելի է բացատրել այն փաստը, որ բարի համբավ ունեցող երեք տղամարդիկ միանում և շարունակ հաստատում են իրենց հրատարակված վկայությունը մինչև իրենց կյանքի վերջը՝ պայքարելով մեծ ծաղրի և այլ անձնական անբարենպաստ պայմանների դեմ: Ինչպես Մորմոնի Գրքի ղեկավար, չկա ավելի լավ բացատրություն, քան այն, որ տրված է հենց վկայության մեջ, լրջամիտ հայտարարությունը այն լավ ու ազնիվ մարդկանց, ովքեր ասել են, թե ինչ են տեսել» («The Witness: Martin Harris,” *Ensign*, May 1999, 36):

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է Երեք վկաների վկայությունն ամրանում այն փաստից, որ նրանք երբեք չենք հրաժարվել իրենց վկայությունից, նույնիսկ Եկեղեցուց վտարվելուց հետո: (Բացատրեք, որ Օլիվեր Քաուտերին և Մարտին Հարրիսը ավելի ուշ նորից մկրտվել են:)

Ուսանողների ուշադրությունը կրկին հրավիրեք Վարդապետություն և Ուխտեր 17.6 հատվածի վրա և շեշտեք, որ այս հատվածը պարունակում է հնարավոր ամենամեծ վկայությունը Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին: Այս հատվածը պարունակում է հենց Աստծո վկայությունը՝ երդումով հաստատված, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Ուսանողներին խնդրեք պատկերացնել, թե իրենց անձնական վկայությունը Մորմոնի Գրքի մասին կարող է ավելացվել Մորմոնի Գրքի յուրաքանչյուր օրինակին: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են ներառելու իրենց վկայության մեջ:

Ուսանողներին հրավիրեք որևէ մեկի հետ կիսվել Մորմոնի Գրքի մասին իրենց վկայությամբ մինչև հաջորդ դասը:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 17, Զոգեֆ Սմիթ—Պատմություն 1.29-54:
- Neal A. Maxwell, “By the Gift and Power of God,” *Ensign*, Jan. 1997, 36–41.

ԴԱՍ 4

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

Նախաբան

Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է և ապացույցը, որ Աստված վերականգնել է Հիսուս Քրիստոսի ավետարանը երկրի վրա մեր օրերում: Նախագահ Էզրա Թափտ Բենսոնը (1899–1994) ուսուցանել է, որ Մորմոնի Գիրքը «Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն վկայության պորտաքարն է» («The Book of

Mormon—Keystone of Our Religion,” *Ensign*, Nov. 1986, 5): Երբ ուսանողները խորացնում են իրենց վկայությունը Մորմոնի Գրքի մասին, նրանք կարող են անսասան կանգնել նրանց առաջ, ովքեր փորձում են ժխտել դրա իսկությունը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ezra Taft Benson, “The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign*, Nov. 1986, 4–7.
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Լիահունա*, նոյ. 2009, 88–90:
- “Book of Mormon and DNA Studies,” Gospel Topics, lds.org/topics.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 17.6, 19.26, 20.5–12

Մորմոնի Գիրքը ապացույց է հանդիսանում, որ Աստված վերականգնել է ճշմարտությունը մեր օրերում

Դասից առաջ հետևյալ տարեթվերը և իրադարձությունները գրեք գրատախտակին:

1820 թ. Ստացվել է Առաջին Տեսիլքը

1823 թ. Սկսվում են Մորմոնի այցելությունները

1829 թ. Վերականգնվում է քահանայությունը

1829 թ. հունիս Ավարտվում է Մորմոնի Գրքի թարգմանությունը

1830 թ. ապրիլի 6 Կազմավորվում է Եկեղեցին

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել այս իրադարձությունների հաջորդականությունից ավետարանի Վերականգնման համար Մորմոնի Գրքի դերի մասին: (Մորմոնի Գրքի թարգմանությունը պետք է ավարտին հասցվեր, որպեսզի Եկեղեցու վերականգնումը

հնարավոր լինել: Այն կարևոր դեր էր խաղալու ավետարանի տարածման հարցում:)

Բացատրեք, որ երբ Եկեղեցին կազմակերպվեց 1830 թվականի ապրիլին, Մորմոնի Գիրքը նոր էր տպվել և գրեթե երկու շաբաթ վաճառքի էր հանվել: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.8–12 հատվածները, փնտրելով, թե ինչ է պարունակում Մորմոնի Գիրքը և ինչ է ապացուցում Մորմոնի Գիրքը: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են: (Նշում. Այս դասընթացի ընթացքում կարող եք խրախուսել ուսանողներին նշել կարևոր ճշմարտությունները, որ գտնում են իրենց սուրբ գրություններում:) Մինչ ուսանողները կարդում են, գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը.

Մորմոնի Գիրքն ապացուցում է աշխարհին, որ ...

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Հիմնվելով ձեր կարդացածի վրա՝ ինչպե՞ս կավարտեք գրատախտակի նախադասությունը: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն հետևեք, որ նրանք ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքն ապացուցում է աշխարհին, որ սուրբ գրությունները ճշմարիտ են, որ Աստված ոգեշնչում և կանչում է մարդկանց՝ անելու Իր աշխատանքը մեր օրերում, և որ Աստված անփոփոխ է:)**
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն ապացուցում, որ Աստված ոգեշնչում և կանչում է մարդկանց կատարելու Իր աշխատանքը մեր օրերում:
- Երբ մարդը սկսում է գիտակցել, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ի՞նչ գիտելիք է նա ձեռք բերում Մարգարե Զոգեֆ Մփիթի մասին:

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 17.6 և 19.26 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչ ընդհանուր բան կա այս երկու հատվածներում:


- Ի՞նչ ընդհանուր բաներ կան այս երկու հատվածներում: (Տիրոջ հայտարարությունը Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելու մասին:)
- Ի՞նչ արժեք ունի ձեզ համար իմանալ, որ Տերը հայտնի է դարձնում մեզ Իր վկայությունը Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելու մասին:

Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է

Գրատախտակի վրա գրեք հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է:**

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը:

Յուզադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է հանդիսանում երեք առումներով: Այն Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն վկայության պորտաքարն է» ("The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 5):



Դասարանը բաժանեք փոքր խմբերի: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին քննարկել հետևյալ թեմաներից մեկը. ինչպես է Մորմոնի Գիրքը հանդիսանում «Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարը», ինչպես է այն հանդիսանում «մեր վարդապետության պորտաքարը» կամ ինչպես է այն հանդիսանում «վկայության պորտաքար»: (Դուք կարող եք թեմաներից յուրաքանչյուրը հանձնարարել մեկից ավելի խմբերի:) Յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ տեղեկություն պարունակող թերթիկի մի օրինակ և խնդրեք նրանց իրենց քննարկումներում օգտագործել արտահայտությունը, որը համապատասխանում է իրենց թեմային:

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

«Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարը»



«Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է, իսկ Նա այն ամենի պորտաքարն է, ինչ մենք անում ենք: Այն բերում է վկայություն Նրա իրական լինելու մասին: ... Վարդապետի վերաբերյալ գրքի վկայությունը «մաքուր է, չխեղաթյուրված և լի գործությամբ: ... Քրիստոնյա աշխարհի մեծ մասն այսօր հերքում է Փրկչի աստվածայնությունը: Նրանք հարցականի տակ են դնում Նրա զարմանահրաշ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառահեղ հարության իսկությունը: Մորմոնի Գիրքը պարզ և անսխալ ձևով է ուսուցանում այդ ամենի մասին: Այն նաև ներկայացնում է Քավության վարդապետության ամենալիարժեք բացատրությունը» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 5):

«Մեր վարդապետության պորտաքարը»



«Մորմոնի Գիրքում կարող ենք գտնել այն վարդապետությունների ամբողջականությունը, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են պարզ և հասարակ ձևով, որպեսզի անգամ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ուղիները: Մորմոնի Գիրքն այնքան շատ բան է առաջարկում, որ մենացնում է փրկության վարդապետությունների վերաբերյալ մեր հասկացողությունը: Առանց Մորմոնի Գրքի՝ այլ սուրբ գրություններում ուսուցանվածի

մեծ մասը չի լինի այդքան պարզ ու արժեքավոր» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 6):

«Վկայության պորտաքարը»



«Մորմոնի Գիրքը վկայության պորտաքարն է: Ճիշտ այնպես, ինչպես կամարը փլվում է, եթե պորտաքարը հեռացվում է, այդպես էլ ամբողջ Եկեղեցին կանգուն է մնում կամ կործանվում է՝ ելնելով Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից: ... Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է ... ապա մարդը պետք է ընդունի Վերականգնման և դրա հետ կապված բոլոր պահանջները» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 6):

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք խմբերին դասարանի հետ կիսվել իրենց գտած նյութով:

Ավարտեք դասի այս մասը, խնդրելով ուսանողներին կիսվել, թե ինչպես են վերաբերվում Մորմոնի Գրքին և կիսվել, թե ինչպես է այն պորտաքար դարձել իրենց իսկ վկայությունների համար:

Թշնամիները փորձում են ժխտել Մորմոնի Գիրքը

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ միտքը.



«[Ավելի քան 180] տարի այս գիրքը քննության և հարձակման է ենթարկվել, մերժվել և քննադատվել, որպես թիրախ ընտրվել և ծվատվել, ինչպես ոչ մի գիրք ժամանակակից կրոնի պատմության մեջ, գուցե ոչ մի այլ գիրք *ցանկացած* կրոնի պատմության մեջ: Եվ դեռևս այն կանգուն է: Այս գրքի ծագման վերաբերյալ սևանկ տեսություններ են ծնվել, կրկնվել և մահացել, սկսած Էթան Սմիթից մինչև Սողոմոն Սփոլդինգը՝ մտազարից մինչև խորամանկ հանճարը: Այս գրքի դեմ առաջ քաշած ոչ մի սրտաճմլիկ մեղադրանք երբեք քննությանը չի դիմացել, որովհետև *չկա այլ պատասխան*, բացի Ջոզեֆի տված պատասխանից՝ որպես դրա երիտասարդ անուսում թարգմանչի: Սրանում ես համաձայն եմ իմ նախապապի հետ, որը պարզապես ասել է. «Ոչ մի չար մարդ չի կարող գրել այսպիսի գիրք, և ոչ մի բարի մարդ չի կարող գրել այն, եթե այն ճշմարիտ չէ, և եթե գրողին չի պատվիրել Աստված» («Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 89):

- Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ Եկեղեցու մեր օրերի թշնամիները հաճախ փորձում են ժխտել Մորմոնի Գիրքը:
- Ինչպե՞ս են Երեց Հոլլանդի նախապապի խոսքերը աջակցում Մորմոնի Գրքի ճշմարտացիությանը:

Որպես օրինակ դուք կարող եք բացատրել, որ ուղիներից մեկը, որով Եկեղեցու թղթամիները փորձում են մեր օրերում ժխտել Սորմոնի Գիրքը, ԴՆԹ-ի փաստն օգտագործում են՝ փորձելով ժխտել ցանկացած կապ Սորմոնի Գրքի մարդկանց և բնիկ ամերիկացիների միջև: Եթե ուսանողները հարցեր ունեն կապված այս խնդրի հետ, խրախուսեք նրանց կարդալ Ավետարանի թեմաներից «Սորմոնի Գիրքը և ԴՆԹ-ի ուսումնասիրությունները» հոդվածը, որը կարելի է գտնել [lds.org/topics](https://www.lds.org/topics) կայքում:

Ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից

Ուսանողներին խնդրեք պատկերացնել, թե ընկերներից մեկն ասել է, որ նա լսել է մի բան, ինչը կարծես ժխտում է Սորմոնի Գրքի ճշմարտացիությունը:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք ձեր ընկերոջը:
- Ինչպե՞ս կարող է ձեր վկայությունը, որ Սորմոնի Գիրքը ճշմարիտ է, օգնել ձեզ, երբ դուք բախվում եք Սորմոնի Գրքի մասին քննադատությունների:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ միտքը.



«Կասկածի կամ մտահոգիչ ժամանակներում կանգնեք այն հիմքի վրա, որն արդեն ունեք, նույնիսկ, եթե այդ հիմքը սահմանափակ է: ... Երբ այդ պահերը գան ու խնդիրներ ջրի երես ելնեն, որոնց լուծումն անմիջապես չի ստացվում, *ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, միևնույն և որ լրացուցիչ գիտելիքներ կգան*» («Հաւատում եմ, Տեր», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2013, 93-94):

- Ինչպե՞ս կարող եք կիրառել Երեց Հոլլանդի խոսքերը, երբ հանդիպում եք Սորմոնի Գրքի հավաստիությանը վերաբերող հարցերի: (Ուսանողները կարող են առաջարկել տարբեր պատասխաններ, սակայն դուք պետք է շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հանդիպում ենք ավետարանի վերաբերյալ հարցերի կամ կասկածների, մենք պետք է ամուր բռնվենք արդեն ունեցած գիտելիքից, որ այն ճշմարիտ է և վստահենք, որ մենք կարող ենք պատասխան գտնել հետագա ուսումնասիրությունների միջոցով կամ Աստված կպատասխանի հետագայում:**)
- Ի՞նչ ճշմարտություններ դուք արդեն գիտեք Սորմոնի Գրքի և դրա պարունակած սկզբունքների մասին: Ինչպե՞ս եք ձեռք բերել այդ գիտելիքը:

Ավարտեք դասը, ցուցադրելով Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Վերջին Օրերի բոլոր Սրբերը պետք է այս գրքի ուսումնասիրությունը դարձնեն կյանքի գործ: Այլապես, նա իր հոգին դնում է վտանգի տակ և անտեսում է այն, ինչը կարող էր նրա ողջ կյանքին տալ հոգևոր և բանական միասնություն: Կա տարբերություն այն նորադարձի միջև, ով հիմքը դրել է Քրիստոսի վեմի վրա՝ Մորմոնի Գրքի միջոցով և մնում է երկաթյա ձողից բռնած և այն մեկի, ով բռնած չի մնում» ("The Book of Mormon Is the Word of

God," *Ensign*, Jan. 1988, 5):

- Ինչպե՞ս է Մորմոնի Գրքի կանոնավոր ուսումնասիրությունը պաշտպանել ձեզ նրանցից, ովքեր ցանկանում են կործանել ձեր հավատքը:

Վկայեք Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելու մասին: Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ ազդեցություն է թողնում Մորմոնի Գիրքը իրենց կյանքի վրա: Խնդրեք նրանց մտածել, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի մեծ առաջնահերթություն տան Մորմոնի Գրքի ուսումնասիրությանը: Հիշեցրեք ուսանողներին Մորմոնի խոստումի մասին, որը գտնվում է Մորմոնի 10.3-5, որ նրանք, ովքեր ցանկանում են ամրացնել իրենց վկայությունը Մորմոնի Գրքի վերաբերյալ, կարող են անել այդ գիրքն ուսումնասիրելով և դրա ճշմարտացիության մասին աղոթելով:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 17.6, 19.26, 20.5–12:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 88-90:

ԴԱՍ 5

Քահանայության վերականգնումը

Նախաբան

Հովհաննես Մկրտիչը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերին 1829 թվականի մայիսի 15-ին և վերականգնեց Ահարոնյան Քահանայությունը: Դրանից կարճ ժամանակ անց, հին օրերի Առաքյալներ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը հայտնվեցին Ջոզեֆին և Օլիվերին և վերականգնեցին Մելքիսեդեկյան Քահանայությունը: Մելքիսեդեկյան Քահանայությունը

իշխանություն ունի Եկեղեցու բոլոր պաշտոնների վրա և սպասավորում է բոլոր հոգևոր գործերը: Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, թե ինչպես է Եկեղեցին գործում Մելքիսեդեկյան Քահանայության ղեկավարման ներքո:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Թոմաս Ս. Մոնսոն, «Քահանայություն՝ սրբազան պարզ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2007, 57-60:
- Դավիթ Հ. Օուքս, «Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 49-52:
- Larry C. Porter, “The Restoration of the Aaronic and Melchizedek Priesthoods,” *Ensign*, Dec. 1996, 30–47.

Ուսուցման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.68-71, Վարդապետություն և Ուխտեր 13.1


Հովհաննես Մկրտիչը վերականգնում է Սհարոնյան Քահանայությունը

Ցուցադրեք մկրտության մի նկար (տես Պատմություն մկրտությունը [Ավետարանի նկարների գիրք (2009), հ. 103, տես նաև LDS.org]) և հաղորդության սպասավորումը ցուցադրող նկար (տես Հաղորդության օրհնումը [Ավետարանի նկարների գիրք, հ. 107, տես նաև LDS.org]): Խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ կփոխվեր իրենց կյանքում, եթե նրանք կատարած չլինեին այս սուրբ արարողությունները: Հիշեցրեք ուսանողներին, որ այս արարողությունները ներկայացնում են որոշ օրհնություններ, որոնք մենք ստանում ենք Սհարոնյան Քահանայության վերականգնման շնորհիվ:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.68 հատվածը: Դասարանին հանձնարարեք հետևել և ներկայացնել, թե ինչ էին անում Ջոզեֆն ու Օլիվերը, որը ուղղորդեց նրանց հարցնելու Տիրոջը մկրտության մասին: Հանձնարարեք նրանց կիսվել իրենց գտած նյութով:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.69 հատվածը: Նշեք, որ սուրհանդակ Հովհաննես Մկրտիչի բառերը նաև տրված են Վարդապետություն և Ուխտեր 13-ում: Հարցրեք դասարանին.

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քատլերին ստանային քահանայությունը երկնային սուրհանդակից: (Այդ ժամանակ երկրի վրա չկար մեկը, ով կրում էր քահանայության բանալիները [տես Հավատո Հանգանակ 1.5]:)



Հանձնարարեք ուսանողներին կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.70-71 հատվածները: Բացատրեք, որ այս հատվածները պարզաբանում են, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ամաչին էր, որ կիրառեց քահանայությունն այս տնտեսությունում: Որոշ մարդիկ մտորում են, թե ինչու Հովհաննես Մկրտիչը չմկրտեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին և ինչու այս երկու մարդկանց պատվիրվեց վերահաստատել միմյանց քահանայությունում: Դուք կարող եք բացատրել, որ մինչ անհրաժեշտ էր, որ համապատասխան իշխանություն ունեցող երկնային սուրհանդակը վերականգնեք քահանայության իշխանությունը երկրի վրա նոր տնտեսության համար, այդ իշխանության վերականգնումից հետո երկրի վրա կատարվող բոլոր արարողությունները, ինչպիսին են մկրտությունը և կարգումը, պետք է իրականացվեին մահկանացուների կողմից: Բացի դրանից, Հովհաննես Մկրտիչի հրահանգը, որ Ջոզեֆը և Օլիվերը վերահաստատեին քահանայությունը միմյանց համար, կարգման և մկրտության ճիշտ կարգ հաստատեց» (Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ, *Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954-56], 3:91):

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

Ինչպե՞ս է Սհարոնյան Քահանայությունն օգնում մեզ ստանալ Հիսուս Քրիստոսի Քալության օրհնությունները:

Խրախուսեք ուսանողներին խորհել այս հարցի շուրջ, մինչ դուք բարձրաձայն կկարդաք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ միտքը.



«Ի՞նչ է նշանակում, որ Սհարոնյան Քահանայությունը կրում է «իրեշտակների սպասավորության բանալին» և «ապաշխարության, մկրտության և մեղքերի թողության ավետարանը»: Նշանակությունը գտնվում է մկրտության արարողության և հաղորդության մեջ: Մկրտությունը մեղքերի թողության համար է և հաղորդությունը մկրտության ուխտերի և օրհնությունների վերանորոգումն է: Երկուսին էլ պետք է նախորդի ապաշխարությունը: ...

ապաշխարությունը: ...

[Մեզանից] ոչ մեկը չի ապրել առանց մեղքի [մեր] մկրտությունից հետո: Մեր մկրտությունից հետո հետագա մաքրման համար առանց որոշակի նախապատրաստության մեզանից յուրաքանչյուրը կորած կլինի հոգևոր բաների համար: ...

Մեզ պատվիրված է ապաշխարել մեր մեղքերը և գալ դեպի Տերը կոտրված սրտով և փշրված հոգով և ճաշակել հաղորդությունը համապատասխան դրա ուխտերի: Երբ մենք այս եղանակով վերանորոգում ենք մեր մկրտության ուխտերը, Տերը վերանորոգում է մեր մկրտության մաքրագործող ազդեցությունը: ...

Մենք չենք կարող սրանում չափազանցել Սհարոնյան Քահանայության կարևորությունը: Մեղքերի թողությանը վերաբերող այս բոլոր կարևոր քայլերը կատարվում են մկրտության փրկող արարողության և հաղորդության վերանորոգող արարողության միջոցով» (*"The Aaronic Priesthood and the Sacrament," Ensign, Nov. 1998, 37-38*):

Հրավիրեք ուսանողներին կիսվել գրատախտակին գրված հարցի վերաբերյալ իրենց պատասխաններով: Վկայեք, որ **Ահարոնյան Քահանայության արարողությունները հնարավոր են դարձնում Հիսուս Քրիստոսի Քավության շատ օրհնությունները՝ ներառյալ մեղքերի թողության համար մկրտվելը:**

Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.72, Վարդապետություն և Ուխտեր 84.19-22, 107.8, 18–19

Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը վերականգնում են Մելքիսեդեկյան Քահանայությունը

Հրավիրեք դասարանին հետևել, մինչ մի ուսանող բարձրաձայն կկարդա Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.72 հատվածը: Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս հատվածի ենթատեքստը, բացատրեք, որ Հովհաննես Մկրտիչի այցելությունից կարճ ժամանակ անց Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուտերին ստացան Մելքիսեդեկյան Քահանայությունը Պետրոսից, Հակոբոսից և Հովհաննեսից: Սա տեղի է ունեցել 1829 թվականի մայիսին Սուսքվեհաննա գետի մոտակայքում (տես Larry C. Porter, “The Restoration of the Aaronic and Melchizedek Priesthoods,” *Ensign*, Dec. 1996, 30–47): Եկեղեցու կազմավորումից հետո Մարգարեն այլ հայտնություններ ստացավ քահանայության վարդապետության և նպատակի մասին: Քահանայության թեմային հաճախ ենք հանդիպում Վարդապետություն և Ուխտերում:

Ուսանողներին հրավիրեք ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 84.19 և 107.8, 18–19 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչպես են այս հատվածները նկարագրում Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությունը: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները հղումներ կատարեն այս հատվածներին: (*Նշում*. Հղումների կատարումը սուրբ գրություններն ուսումնասիրելու գործիք է, որը կարող է ապահովել լրացուցիչ տեղեկություններ և հասկացողություն ուսումնասիրած նյութի վերաբերյալ:) Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ սովորեցին նրանք Մելքիսեդեկյան Քահանայության մասին: Երբ նրանք պատասխանեն, հետևյալ արտահայտությունները գրեք գրատախտակին.

Սպասավորում է ավետարանը

Կրում է արքայության խորհուրդների բանալիները

Կրում է Աստծո գիտության բանալին

Կրում է Եկեղեցու հոգևոր օրհնությունների բանալիները

Կրում է հայտնություն ստանալու բանալիները

Կրում է երկնային սուրհանդակների հետ հաղորդակցվելու, Հոր և Որդու հետ սպրեկու բանալիները

Դուք կարող եք ամփոփել գրատախտակին գրված պատասխանները՝ շեշտելով հետևյալ ճշմարտությունը. **Մելքիսեդեկյան Քահանայությունը կրում է Եկեղեցու բոլոր արարողությունների և հոգևոր օրհնությունների բանալիները:** Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ գրատախտակին գրված արտահայտությունները, քննարկեք այս բոլոր հարցերը կամ դրանցից մի քանիսը.

- Ի՞նչ ճանապարհներով է Մելքիսեդեկյան Քահանայությունը «սպասավորում ավետարանը»: (ՎևՈւ 84.19): (Պատասխանները կարող են ներառել որոշակի արարողությունների սպասավորումը և Եկեղեցում նախագահելն ու այն առաջնորդելը:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այն, որ Մելքիսեդեկյան Քահանայությունը «կրում է արքայության խորհուրդների բանալիները»: (ՎևՈւ 84.19): (Դուք կարող եք բացատրել, որ «Աստծո խորհուրդները հոգևոր ճշմարտություններ են, որոնք տրվում են միայն հայտնությամբ» [Սուրբ գրքերի ուղեցույց, «Աստծո խորհուրդները», scriptures.lds.org]: Այլ խորհուրդների շարքում այս հատվածը վերաբերում է տաճարային արարողություններին, որոնք շուտով հայտնի էին դարձվելու Ջոզեֆ Սմիթին և այն փաստին, որ դրանք պետք է սպասավորվեն Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ: Տաճարում Եկեղեցու արժանավոր անդամները կարող են սովորել «Աստծո խորհուրդներից» մի քանիսի մասին, մինչ նրանք կմասնակցեն արարողություններին, որոնք տեղի են ունենում այնտեղ և կպահեն դրանց հետ կապված ուխտերը:)
- Ինչպե՞ս է Մելքիսեդեկյան Քահանայությունն օգնում մեզ ձեռք բերել «Աստծո գիտությունը»: (ՎևՈւ 84.19): (Մենք ձեռք ենք բերում Աստծո գիտությունը, երբ մասնակցում ենք արարողություններին, որոնք կատարվում են Մելքիսեդեկյան Քահանայության միջոցով:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ «Աստծո գիտություն» արտահայտությունը, դուք կարող եք կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի (1920–2007) հետևյալ խոսքերը.



«Ո՞րն է Աստծո գիտության բանալին, և արդյո՞ք ամեն ոք կարող է ձեռք բերել այն: Առանց քահանայության չի կարող լինել Աստծո գիտության ամբողջություն: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ «Մելքիսեդեկյան Քահանայությունը ... անցուղին է, որի միջոցով ողջ գիտելիքը, վարդապետությունը, փրկության ծրագիրը և ամեն կարևոր հարց հայտնվում է երկնքից» [Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (2007), 115]: ("The Key of the Knowledge of God," *Ensign*, Nov. 2004, 52):

Ուսանողներից մեկին հրավիրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 84.20–22 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, ուշադրություն դարձնելով, թե ինչպես կարող է Եկեղեցու յուրաքանչյուր անդամը վայելել Մելքիսեդեկյան Քահանայության միջոցով մատչելի դարձած հոգևոր օրհնությունները: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ո՞ր արարողություններն են սպասավորվում միայն Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ: (Հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության շնորհումը, տաճարային արարողությունները, երեխաների օրհնումը, հիվանդների սպասավորումը, հայրապետական օրհնությունները, կոչման համար ձեռնադրումը:)
- Ինչպե՞ս կարող են քահանայության արարողություններն օգնել մարդուն բացահայտել «աստվածայնության գործությունը», նկատի ունենալով Աստծուն նմանվելու գործությունը:
- Ինչպե՞ս կարող են Մելքիսեդեկյան Քահանայության արարողությունները նախապատրաստել մեզ տեսնելու Աստծուն:
- Ինչպե՞ս են քահանայության արարողություններն օգնել ձեզ ավելի շատ նմանվել Աստծուն:
- Ի՞նչ այլ փորձառություններ եք ունեցել, որոնք նպաստել են, որպեսզի դուք երախտապարտ լինեք քահանայության և դրա վերաբերյալ վկայության համար:

Խորհեք քահանայության օրհնությունների վերաբերյալ ձեր իսկ վկայությամբ կիսվելու մասին: Քաջալերեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ կարող են անել, որպեսզի գտնվեն այն ուղու վրա, որը մատնանշում են իրենց քահանայության ղեկավարները:

Ուսանողի ընթերցարան

- Զոգեֆ Սմիթ-Պատմություն 1.68-72, Վարդապետություն և Ուխտեր 13.1, 84.18-22, 107.1-19:
- Թոմաս Ս. Մոնսոն, «Քահանայություն՝ սրբազան պարզև», *Ensign* կամ *Լիսինս*, մայիս 2007, 57-60:

Եկեղեցու կազմավորումը

Նախաբան

Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված հայտնության մեջ Տերը պատվիրեց, որ Իր Եկեղեցին կազմավորվի 1830 թվականի ապրիլի 6-ին (տես Վևու 20 բաժնի նախաբանը, Վևու 20.1): Այս հայտնությունը նաև ավելի մեծ հասկացողություն տվեց անդամների Փրկչի առաքելության և ուսմունքների մասին:

Վարդապետություն և Ուխտեր 1.30 հատվածում տրված հայտնության մեջ վերականգնված Եկեղեցին Տերը ներկայացնում է որպես «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին ողջ երկրի երեսի վրա», որը շեշտում է կարևոր դերը, որ Եկեղեցին կատարում է վերջին օրերում և մեր կյանքում:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Հենրի Բ. Այրինգ, «Ճշմարիտ և կենդանի Եկեղեցի», *Ensign* կամ *Լիսինսա*, մայիս 2008, 20-24:
- “Organization of the Church of Jesus Christ,” chapter 6 in *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2003), 67–68.
- Boyd K. Packer, “The Only True Church,” *Ensign*, Nov. 1985, 80–83.
- Jeffrey G. Cannon, “‘Build Up My Church’: D&C 18, 20, 21, 22,” *Revelations in Context* series, Jan. 3, 2013, history.lds.org.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 20.1-3

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնումը

Դասը սկսեք, խնդրելով ուսանողներին նկարագրել, թե ինչ գիտեն իրենք Նոր Կտակարանի ժամանակաշրջանում Հիսուս Քրիստոսի հիմնած Եկեղեցու մասին: Այնուհետև հարցրեք.

- Մեր կարծիքով, ի՞նչ պատահեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցու հետ Առաքյալների մահից հետո:
- Ինչպե՞ս է սա բացատրում Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերականգնման անհրաժեշտությունը:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ հայտարարությունը, մինչ դասարանը լսում է, թե ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմավորումը վերականգնել Եկեղեցու կարևոր առանձնահատկությունները, որոնք հաստատվել են Հիսուս Քրիստոսի կողմից Նոր Կտակարանի ժամանակներում:

«1830թ. ապրիլի 6-ին, Մորմոնի Գրքի վաճառքի ազդարարումից տասնմեկ օր անց, մոտ 60 մարդ հավաքվել էր Պիտեր Ուիթմեր ավագի փայտե տանը, Նյու Յորք նահանգի Ֆայեթ գյուղում: Այնտեղ Ջոզեֆ Սմիթը պաշտոնապես կազմավորեց Եկեղեցին, որը հետագայում

հայտնության մեջ սահմանվեց որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի (տես ՎնՈւ 115.4): Դա չոգու մեծ դրսևորման ուրախալի իրադարձություն էր: Հաղորդությունը սպասավորվեց, հավատացյալները մկրտվեցին ու ստացան Սուրբ Չոգու պարգևը, տղամարդկանց շնորհվեց քահանայությունը: Այդ հավաքի ժամանակ ստացված հայտնության մեջ Տերը Ջոզեֆ Սմիթին նշանակեց որպես Եկեղեցու ղեկավար. «տեսանող, թարգմանիչ, մարգարե, Հիսուս Քրիստոսի առաքյալ, Եկեղեցու երեց՝ Հայր Աստծո կամքով և քո Տեր՝ Հիսուս Քրիստոսի շնորհով» (ՎնՈւ 21.1): Հիսուս Քրիստոսի Եկեղեցին մեկ անգամ ևս հաստատվեց երկրի վրա» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 8-9):

Հրավիրեք ուսանողներին նկարագրել Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու որոշ առանձնահատկություններ, որոնցով այն նմանվում է Նոր Կտակարանի Եկեղեցուն:

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտերը կարդալիս, օգտակար կլինի նաև բաժինների նախաբանները կարդալը: Մա օգնում է հաստատել հայտնությունների պատմական ենթատեքստը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20 բաժնի նախաբանը: (Դուք կարող եք նշել, որ Վարդապետություն և Ուխտերի 2013 թվականի հրատարակության մեջ բաժինների նախաբաններում ավելացված են որոշ պատմական տեղեկություններ, որոնք ներառված չէին 1981 թվականի հրատարակությունում:) Մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.1-3 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով ավետարանի Վերականգնմանը վերաբերող մտքեր: Հարցրեք.

- Ավետարանի Վերականգնման վերաբերյալ ի՞նչ ճշմարտություններ են ուսուցանվում այս հատվածներում: (Վարդապետություններից մեկը, որն ուսանողները կարող են գտնել, այն է, որ **Ջոզեֆ Սմիթը կանչվեց Աստծո կողմից և նրան պատվիրվեց կազմակերպել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին**։)

Բարձրաձայն կարդացեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը.



«Ջոզեֆ Սմիթը և նրա համախոհները հանդիպեցին Նյու Յորք նահանգի Ֆայեթ փողոցի գյուղի Պիտեր Ուիթմերի ագարակում գտնվող հասարակ փայտե տանը և կազմավորեցին Քրիստոսի Եկեղեցին: ...

Նախնական վեց անդամներից երկրպագողների մեծ ընտանիք է ձևավորվել: ... Այդ փողոցի գյուղից սկսվեց մի շարժում, որը տարածվեց աշխարհի մոտ 160 ազգերի մեջ: ... Սա նշանակալի առաջընթաց է: Եկեղեցու ավելի շատ անդամներ են ապրում այս երկրից դուրս, քան դրա ներսում: Դա նույնպես նշանակալի բան է: Ամերիկայից դուրս եկած ոչ մի Եկեղեցի այդքան արագ չի աճել և այդքան լայնորեն չի տարածվել: ... Սա եզակի երևույթ է՝ առանց նախադեպի» ("The Church Goes Forward," *Ensign*, May 2002, 4):

- Ձեզ համար ի՞նչն է նշանակալից վերջին օրերում Եկեղեցու արագ աճի տեմպերի մեջ:

- Ինչպե՞ս կարող ենք մենք որպես անհատներ օգնել, որ Տիրոջ Եկեղեցին շարունակի աճել մեր օրերում:

Վարդապետություն և Ուխտեր 20.17-37, 68-69

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վարդապետությունը և մկրտված անդամների պարտականությունները

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտերի 20-րդ բաժինը Եկեղեցու վաղ շրջանի անդամներին հայտնի է եղել որպես Եկեղեցու Հանգանակներ և Ուխտեր: Այս բաժինը պարունակում է Տիրոջ բազմաթիվ հրահանգները Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վարդապետության վերաբերյալ և անդամների պարտականությունները: Այս հայտնությունը բարձրաձայն կարդացվել է վաղ շրջանի Եկեղեցու որոշ համաժողովների ժամանակ:

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք 1830 թվականի Եկեղեցու նոր անդամներն են և ցանկանում են իմանալ, թե ինչին պետք է հավատան՝ որպես Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ: Դասարանի կեսին հրավիրեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.17-28 հատվածները, իսկ մյուս մասին հրավիրեք կարդալ 29-36 հատվածները, փնտրելով վարդապետություն, որի իմացությունը կարևոր է Տիրոջ վերականգնված Եկեղեցու յուրաքանչյուր անդամի համար: Կարող եք առաջարկել, որ նրանք նշեն իրենց գտածը:

Բավարար ժամանակից հետո հրավիրեք ուսանողներին կիսվել ճշմարտություններով, որոնք իրենք գտել են և բացատրել, թե ինչու է յուրաքանչյուր ճշմարտություն կարևոր իրենց համար: Խորհեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին գրելու մասին. **Հայտնության միջոցով Տերը պարգաբանել է վարդապետությունը և սկզբունքները, որոնց վրա հիմնված է Իր ավետարանը:**

Դասարանի կեսին հրավիրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.37 հատվածը, ուշադրություն դարձնելով պահանջներին նրանց համար, ովքեր ցանկանում են մկրտվել: Դասարանի մյուս կեսին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.68-69 հատվածները, փնտրելով, թե ինչ է Տերն ակնկալում մեզանից մեր մկրտությունից հետո: Շեշտեք, որ այս հատվածներում տրված հրահանգները կազմում են պարզ օրինաչափություն, որին պետք է հետևեն Եկեղեցու անդամները:

Դասարանի հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ պետք է ցուցաբերի անձը մկրտվելուց առաջ: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալը. **Մկրտվելուց առաջ մարդիկ պետք է լինեն խոնարհ, ապաշխարող, պատրաստակամ իրենց վրա վերցնելու Հիսուս Քրիստոսի անունը և վճռական ծառայելու Նրան մինչև վերջ:**)
- Ի՞նչ է Տերն ակնկալում մեզանից մեր մկրտվելուց հետո: (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ, սակայն նրանք պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Մկրտությունից հետո մենք Տիրոջը ցույց ենք տալիս մեր արժանավորությունը մեր աստվածային քայլերով և հաղորդակցությամբ:**)

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ցուցաբերել «աստվածային քայլեր և հաղորդակցություն»: (ՎեՈւ 20.69):
- Ինչո՞ւ են օրհնություններ տրվում Եկեղեցու այն անդամներին, ովքեր առաջ են գնում՝ «սրբության քայլերով Տիրոջ առաջ»: (ՎեՈւ 20.69):

Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք ցույց տալ ուսանողներին, որ Վարդապետություն և Ուխտեր 20 բաժնում տրված վարդապետությունները և Եկեղեցու կողմից դրանց կիրառությունները նկարագրված են նաև Մորմոնի Գրքում, օգնելով մեզ հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին բոլոր տնտեսություններում նույն հիմքերն է ունեցել: Օրինակ, Վարդապետություն և Ուխտեր 20.17-36 հատվածներում նկարագրված վարդապետությունները նկարագրված են նաև Մորմոնի Գրքում: Նմանապես, Վարդապետություն և Ուխտեր 20.73-80 հատվածներում տրված արարողությունները և կիրառությունները տրված են նաև Մորմոնի Գրքում:

Վարդապետություն և Ուխտեր 1.30

«Միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին»

Բացատրեք, որ շատերը մեր օրերում հավատում են, որ բոլոր եկեղեցիները ճիշտ են և հավասարապես արդար Աստծո աչքում: Այնուամենայնիվ, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմավորումից մոտավորապես մեկ ու կես տարի անց, Տերը կարևոր նկարագրություն տվեց Եկեղեցու վերաբերյալ: Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.30 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս Տերը նկարագրեց վերականգնված Եկեղեցին: (Ուսանողները պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի վրա:**)
- Ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար այն, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է» երկրի վրա: (Նախքան ուսանողների պատասխանելը դուք կարող եք հիշեցնել նրանց, որ այս վարդապետությունը չի նշանակում, որ մենք պետք է մեզ վեր դասենք ուրիշներից:)

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք. Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով, թե ինչու է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին համարվում «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին»:

Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես կարող են անհատներն անձամբ իմանալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճշմարիտ է:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 1.30, 20.1–3, 17–37, 68–69:
- Հենրի Բ. Այրինգ, «Ճշմարիտ և կենդանի Եկեղեցի», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2008, 20-24:

Հայտարարեք հավիտենական ավետարանը

Նախաբան

Վարդապետություն և Ուխտերը պարունակում է Տիրոջ հայտնությունները, վստահեցնելով Եկեղեցու անդամներին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, պատվիրելով անդամներին հայտարարելու ապաշխարություն և հավաքելու Իր ընտրյալներին: Եկեղեցին արագ աճեց, երբ միսիոներներ կանչվեցին

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից և գործիքներ դարձան Տիրոջ ձեռքում: Եկեղեցու անդամներն այսօր օրհնություններ են ստանում միսիոներական աշխատանքի միջոցով, երբ նրանք տեսնում և կատարում են իրենց պարտականությունը, որպեսզի աջակցեն ավետարանով կիսվելու գործում:

Ընթերցանության օժանդակ նյութեր


- Նիլ Լ. Անդերսեն, «Սա հրաշք է», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 77-80:
- Լ. Թոմ Փերի, «Հոգիներ բերեք դեպի ինձ», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2009, 109-12:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 29.4–7, 33.2–7

Տերը կանչում է ծառաներ, որպեսզի օգնեն հավաքել Իր զավակներին

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Միսիոներական աշխատանքը Եկեղեցու ավիշն է: Դա հիմնական միջոցն է, որով այն աճում է: Այս ծառայության շնորհիվ է, որ Եկեղեցին հասել է իր ներկայիս չափին» (*"Missionary Service," First Worldwide Leadership Training Meeting, Jan. 11, 2003, 17*):

- Ձեր կարծիքով, ինչպես կարող է միսիոներական աշխատանքը համարվել «Եկեղեցու ավիշը»:

Բացատրեք, որ Վերականգնման վաղ շրջանում մարդիկ հաճախ խնդրում էին Մարգարեին հայտնություններ փնտրել իրենց համար, օգնելու իրենց իմանալ, թե ինչպես կարող էին իրենց ներդրումն ունենալ Տիրոջ աշխատանքում: Երբեմն այս հայտնությունները տրվում էին անհատի համար և երբեմն մի շարք մարդկանց համար: Բացատրեք, որ

Վարդապետություն և Ուխտեր 33 բաժինը մի հայտնության օրինակ է՝ տրված երկու մարդկանց համար՝ Էզրա Թայերի (կամ Թայրի) և Նորթոնի Սվիթի համար:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 33.2-7 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով բառեր, արտահայտություններ կամ խորհրդանիշներ, որոնք օգտագործել է Տերը, և որոնք վերաբերում են միսիոներական աշխատանքում մեր դերին և շեշտում են վերջին օրերում ավետարանը քարոզելու կարևորությունը:

- Ի՞նչ խորհրդանիշներ է օգտագործել Տերը: (Մինչ ուսանողները պատասխանում են, դուք կարող եք նրանց պատասխանները գրել գրատախտակին:)
- Ինչպե՞ս են այդ խորհրդանիշները լուսաբանում մեր դերը միսիոներական աշխատանքում և շեշտում ավետարանը քարոզելու կարևորությունը:

Հրավիրեք ուսանողներին ուշադիր ուսումնասիրել հատված 6-ը և ներկայացնել, թե ինչ է իրականացնում, երբ մենք քարոզում ենք ավետարանն ուրիշներին: Այնուհետև խնդրեք ուսանողներին իրենց իսկ բառերով հաղորդել իրենց գտածի մասին: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն նրանք պետք է նշեն հետևյալ սկզբունքը: **Երբ մենք ուրիշներին քարոզում ենք Հիսուս Զրիստոսի ավետարանը, մենք օգնում ենք հավաքել Տիրոջ ընտրյալներին:** Դուք կարող եք պատմել, որ այս հայտնությունից հետո Էզրա Թայերը «լցրեց իր շտեմարանը» մարդկանցով, որ լսեին Ջոզեֆ Սմիթին և այլոց ավետարանը քարոզելիս [Documents, Volume 1: July 1828–June 1831, vol. 1 of the Documents series of *The Joseph Smith Papers* (2013), 206]):

Ուսանողների հետ կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) Իսրայելը հավաքելու հետևյալ սահմանումով.



«Իսրայելի հավաքումը բաղկացած է հավատալուց և ընդունելուց և ներդաշնակության մեջ ապրելուց այն ամենի հետ, որ Տերը մի անգամ առաջարկել է իր ընտրյալ ժողովրդին վաղ ժամանակներում: ... Այն բաղկացած է ավետարանի հավատալուց, Եկեղեցուն միանալուց և դեպի թագավորություն գալուց» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 515):

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ զեկույցը առաջին միսիոներների մասին, ովքեր կանչվել էին Եկեղեցու կազմավորումից հետո: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել, թե ինչպես են այս վաղ շրջանի միսիոներները հաջողության հասել Տիրոջ ընտրյալներից մի քանիսին հավաքելու գործում:

«[1830 թվականի աշնանը] Տերը Ջոզեֆ Սմիթին հայտնեց, որ Օլիվեր Զառուդերին, Պիտեր Ուիթմեր Կրտսերը, Փարլի Փ. Պրատը և Զիբա Պիտերսոնը պետք է գնան «Լամանացիների մոտ և քարոզեն նրանց իմ ավետարանը» (ՎնՈւ 28.8, 30.5–6, 32.1–3): Այդ միսիոներները ճամփորդեցին մոտ 2400 կիլոմետր՝ կարճ ժամանակ քարոզելով հնդկացիների տարբեր ցեղերի մեջ: ... Սակայն միսիոներներին լավագույն հաջողությունը ժպտաց, երբ նրանք կանգ առան Օհայոյի Կիրթլենդի տարածքում: Այնտեղ նրանք մկրտեցին մոտ 130 նորադարձի, որոնց հիմնական մասը Սիդնի Ռիզդոնի Բարեփոխված Մկրտականների համայնքն էր՝ այդպիսով հիմք դնելով այն տեղին, որը հաջորդ տարի հավաքման վայր պիտի դառնար Եկեղեցու հարյուրավոր անդամների համար: Միսիոներները որոշ նորադարձների գտան Միսսուրիի Ջեկսոն գավառի նորաբնակների մեջ, որտեղ ավելի ուշ պիտի հաստատվեր Սիոն քաղաքը» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 160, տես նաև Richard Dilworth Rust, "A Mission to the Lamanites: D&C 28, 30, 32," Revelations in Context series, Feb. 22, 2013, history.lds.org):

Բացատրեք, որ այդ ժամանակ Օհայո նահանգի հյուսիսի նորադարձների շնորհիվ Եկեղեցու անդամների թիվն անցավ կրկնապատիկից:

Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 29.4-7 հատվածները՝ փնտրելով «Տիրոջ ընտրյալների» նկարագրությունը:

- Ինչպե՞ս Փրկիչը նկարագրեց Իր ընտրյալներին:

Բացատրեք ուսանողներին, որ Հյուսիսային Ամերիկայում ծառայող առաջին միսիոներների աշխատանքը ներառում է տպավորիչ օրինակ, թե ինչպես է Տերն օգտագործում Իր ծառաներին, որ հավաքի Իր ընտրյալներին: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ ամփոփումը. Դասարանին խնդրեք հետևել և լսել Մարգարե Ջոզեֆ Սմիթի խորհուրդը Երեց Հեբեր 2. Քիմբալին (1801–1868):

«Հեբեր 2. Քիմբալը, Տասներկուսի Զվորումի անդամ, հիշում է. «Մոտավորապես 1837 թվականի հունիսի առաջին օրը Մարգարե Ջոզեֆը եկավ ինձ մոտ, մինչ ես նստած էի.... Կիրթլենդի Տաճարում և շշուկով ասաց ինձ. «Եղբայր Հեբեր, Տիրոջ Հոգին շշնջաց ինձ, «Թող իմ ծառա Հեբերը գնա Անգլիա և հրապարակի իմ ավետարանը և փրկության դուռ բացի այդ ազգի համար»: Երեց Քիմբալը ցնցված էր այդպիսի ձեռնարկման մտքից. «Ես ինձ զգում էի Աստծո ծառաներից ամենաթույլը: Ես հարցրեցի Ջոզեֆին, թե ինչ պիտի ասեի, երբ այնտեղ հասնեի: Նա ասաց ինձ, որ դիմեմ Տիրոջը և Նա կառաջնորդի ինձ և կխոսի իմ միջոցով այն նույն հոգով, որ [ուղղություն էր տալիս] իրեն:

Մարգարեն կանչեց նաև Օրսոն Հայդին, Կիլլարդ Ռիչարդսին և Ջոզեֆ Ֆիլդինգին՝ ծառայելու Կիրթլենդում և Իսահակ Ռասսելին, Ջոն Սնայդերին և Ջոն Գուդսոնին՝ Տորոնտոյում՝ Կանադա: Այս եղբայրները պետք է միանային Երեց Քիմբալին դեպի Անգլիա նրա միսիայի ժամանակ: Հավաքվելով Նյու Յորք քաղաքում՝ 1837 թվականի հուլիսի 1-ին, նրանք Garrick նավով նավարկեցին դեպի Մեծ Բրիտանիա: Հյուսիսային Ամերիկայից դուրս այս առաջին միսիան մոտ 2000 նորադարձներ բերեց Եկեղեցի Անգլիայում միսիոներների ծառայության առաջին տարում: Երեց Քիմբալն ուրախությամբ գրեց Մարգարեին. «Փառք Աստծո, Ջոզեֆ, Տերը մեզ հետ է ազգերի մեջ»:

Առաքյալների մի երկրորդ միսիա դեպի Բրիտանիա, ներառյալ Տասներկուսի անդամների մեծ մասը՝ Բրիգամ Յանգի առաջնորդությամբ, ղեկավարվում էին Մարգարեի կողմից՝ Նավուից: Մեկնելով 1839 թվականի աշնանը, Տասներկուսը Անգլիա ժամանեց 1840

թվականին: Այնտեղ նրանք սկսեցին մի աշխատանք, որը մինչև 1841 թվականը եկեղեցի կբերեր ավելի քան 6,000 նորադարձներ» (*Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ*, 349, 351):

- Ի՞նչ խորհուրդ ստացավ Հեբեր Չ. Քիմբալը Մարգարե Ջոզեֆ Սմիթից:
- Նկարագրեք մի ժամանակաշրջան, երբ դուք զգացել եք, որ Տերն օգնել է ձեզ՝ ավետարանը կիսելու ձեր ջանքերում:

Վարդապետություն և Ուխտեր 4.1–7, 18.10–16, 31.1–12, 34.5–6, 39.20–23, 88.81

Նրանք, ովքեր նախազգուշացվել են, պետք է նախազգուշացնեն իրենց մերձավորներին

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտերը բազմիցս հիշեցնում է Եկեղեցու անդամներին միասնության և աշխատանքի մասնակցելու պարտականության և օրհնությունների մասին: Ուրիշների հետ ավետարանով կիսվելու մեր պարտականությունը կրկնվող օրհնաչափություն և թեմա է Վարդապետություն և Ուխտերում տրված հայտնություններում: Օրհնաչափությունները և թեմաները նկատել սովորելը կարդացողներին հնարավորություն է տալիս ավելի լավ սնվել Քրիստոսի խոսքերով (տես David A. Bednar, “A Reservoir of Living Water” [Brigham Young University fireside, Feb. 4, 2007], speeches.byu.edu):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.81 հատվածը և ապա իրենց իսկ բառերով ամփոփել, թե ինչպես է այն վերաբերում Եկեղեցու ներկայիս անդամներին: (Պատասխաններից մեկը, որ ուսանողները կարող են տալ, այն է, որ **նրանք, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսի ավետարանը, պարտականություն ունեն կիսելու այն ուրիշների հետ:**)

Ցուցադրեք հետևյալ աղյուսակը կամ արտագրեք այն գրատախտակին: Դասարանը բաժանեք երեք խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք սուրբ գրությունների հատվածներից մեկը: Ուսանողներին խնդրեք կարդալ իրենց հանձնարարված հատվածները և գտնել ավետարանով կիսվելու պարտականությունները և օրհնությունները:

	Պարտականություններ	Օրհնություններ
Վարդապետություն և Ուխտեր 4.1-7		

	Պարտականություններ	Օրհնություններ
Վարդապետություն և Ուխտեր 18.10-16		
Վարդապետություն և Ուխտեր 31.1-12		

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել իրենց գտած նյութով:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն. Խնդրեք դասարանին լսել ավետարանով կիսվելու մեր անձնական պարտավորության մասին Երեց Բեդնարի նկարագրությունը:



«Հիսուս Քրիստոսի նվիրված աշակերտները միշտ եղել են և կլինեն քաջարի միսիոներներ: Միսիոները Քրիստոսի հետևորդ է, ով վկայում է Նրա մասին որպես Թավիչի և հռչակում Նրա ավետարանի ճշմարտությունները:

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին միշտ եղել է և միշտ կլինի միսիոներական եկեղեցի: Փրկչի Եկեղեցու անդամներն անհատապես ընդունել են լուրջ պարտավորություն՝ օգնելու կատարել աստվածային հանձնարարությունը, որը տրվել է Տիրոջ կողմից Իր Առաքյալներին և արձանագրված է Նոր Կտակարանում:

«Ուրեմն գնացե՛ք բոլոր ազգերը աշակերտեցե՛ք, նորանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը:

Նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն. եւ ահա եւ ձեզ հետ եմ ամեն օր մինչեւ աշխարհի վերջը: Ամեն» (Մատթեոս ԻԸ.19–20):

Վերջին Օրերի Սրբերը լրջորեն են ստանձնում Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին բոլոր ազգերի բոլոր մարդկանց ուսուցանելու այս պարտավորությունը: •

Մենք իսկապես լուրջ պատասխանատվություն ենք զգում տանելու այս ուղերձը ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի («Եկեք և տեսե՛ք», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 107):

- Ինչո՞ւ պետք է Փրկչի Եկեղեցու անդամները դիտեն միսիոներական աշխատանքը որպես լուրջ պարտավորություն:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերիի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն. Դասարանին խնդրեք հետևել և փնտրել, թե ինչու նրանք պետք է խորհեն ավետարանով կիսվելիս ավելի ջերմեամոտ լինելու մասին:



«Ավետարանը կենտրոնացած է մեր Տիրոջ և Փրկչի Քավության վրա: Քավությունն ապահովում է գործություն՝ լվանալու մեղքերը, բժշկելու և շնորհելու հավերժական կյանք: Քահանայության բոլոր աներևակայելի օրհնությունները տրվում են նրանց, ովքեր ապրում են սկզբունքներով և ստանում են ավետարանի արարողությունները: Դրանք են հավատքն առ Հիսուս Քրիստոս, ապաշխարությունը, մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևը և մինչև վերջ համբերելը: Մեր միսիոներական մեծ ուղերձն է աշխարհին, որ ողջ մարդկությունը հրավիրվում է փրկվելու և մտնելու Բարի Հովվի, այսինքն Հիսուս Քրիստոսի փարախը:

Մեր միսիոներական ուղերձը գործնում է Վերականգնման գիտելիքով: Մենք գիտենք, որ Աստված այսօր խոսում է Իր մարգարեների հետ, ճիշտ, ինչպես հին դարերում էր խոսում: Մենք գիտենք նաև, որ Նրա ավետարանը սպասավորվում է վերականգնված քահանայության գործությամբ և իշխանությամբ: Ոչ մի այլ ուղերձ այսօր երկրի վրա բոլոր ապրողների համար չունի այդպիսի հավերժական նշանակություն» («Հոգիներ բերեք դեպի ինձ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2009, 110–11):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մեզանից յուրաքանչյուրը պետք է ավելի ջանասեր դառնա ավետարանով կիսվելու գործում: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալը. **Երբ մենք ուրիշների հետ կիսվում ենք ավետարանով, մենք առաջարկում ենք նրանց ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները:**)

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 34.5–6, 39.20–23 հատվածները, փնտրելով մեկ այլ կարևոր պատճառ, թե ինչու է Տերը պատվիրել մեզ ուրիշների հետ կիսվել ավետարանի ուղերձով: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն նրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք ուրիշների հետ կիսվում ենք ավետարանի ուղերձով, մենք օգնում ենք նրանց նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին:**)

- Ինչպե՞ս է ավետարանի հավերժական նշանակության հասկանալը օգնում ոգևորել ձեզ՝ կիսվել դրանով նրանց հետ, ովքեր մեր հավատքից չեն:
- Նկարագրեք ձեր ունեցած փորձառությունը ուրիշների հետ ավետարանի ճշմարտություններով կիսվելու մասին:

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որպեսզի խորհեն և գրի առնեն, թե ինչ կարող են անել, որպեսզի իրենց մասնակցությունն ունենան ավետարանով կիսվելու գործում: Օրինակ, նրանք կարող են գրել իրենց ծանոթներից մեկի անունը, ով այժմ Եկեղեցու անդամ չէ և պարտավորվեն կիսվել ավետարանով այդ անձնավորության հետ: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են ծրագրում անել: Խրախուսեք ուսանողներին գործել իրենց ստացած յուրանչյուր ոգեշնչման ժամանակ և ամեն օր աղոթել ուրիշների հետ ավետարանով կիսվելու հնարավորության համար:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 4.1–7, 18.10–16, 29.4–7, 31.1–12, 33.2–7, 34.5–6, 39.20–23, 88.81:
- Նիլ Լ. Անդերսեն, «Սա հրաշք է», *Ensign* կամ *L'humanisme*, նոյ. 2013, 77–80:

Վերջին Օրերի Իսրայելի Ժողովուրդ

Նախաբան

Եկեղեցու կազմավորումից մեկ տարի անց Տերը Սրբերին պատվիրեց հավաքվել Օհայոյում (տես Վևու 37.3): Այդ ժամանակից սկսած Վերջին Օրերի Սրբերը սկսեցին հավաքվել տարբեր վայրերից, քան որ նրանք ձգտում էին հետևել ապրող մարգարեին և հիմնել ապրելու համար

ապահով մի վայր: Այս դասի ժամանակ ուսանողները կտվորեն, որ Տերը հավաքում է իր ժողովրդին, որպեսզի ուժեղացնի նրանց և նախապատրաստի ավելի մեծ օրհնություններ, ներառյալ տաճարային օրհնությունները ստանալուն (տես Վևու 84.4):

Ընթերցանության օժանդակ նյութեր


- Russell M. Nelson, “The Gathering of Scattered Israel,” *Ensign or Liahona*, Nov. 2006, 79–82.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 38.31-33, 39.15, 95.8, 110.9

Օհայոյում հավաքվելու կոչ

Ցուցադրեք «ԱՄՆ-ի Նյու Յորք, Պենսիլվանիա և Օհայո տարածքների» քարտեզը (Եկեղեցու պատմության քարտեզներ, հ. 3), որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերի վերջում, կամ այս տարածքի այլ քարտեզ:



Հրավիրեք ուսանողներին գտնել Վերականգնման հետևյալ կարևոր իրադարձությունների ընդհանուր տարածքները. Առաջին Տեսիլքը (Մանչեստր, Նյու Յորք), քահանայության վերականգնումը (Հարմոնի, Պենսիլվանիա) և Եկեղեցու կազմավորումը (Ֆայեթ, Նյու Յորք):

Ապա խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ հետևյալ հայտարարությունը.

«Սիդնի Ռիզոնը՝ նախկին քահանա և նորադարձ անդամը Կիրթլենդի տարածքից, և նրա ոչ անդամ ընկերը՝ Էդվարդ Պատրիջը, շատ էին ցանկանում հանդիպել Մարգարեին և ավելին սովորել Եկեղեցու ուսմունքների մասին: 1830 թվականի դեկտեմբերին Ջոզեֆ Սմիթին այցելելու նպատակով նրանք ճամփորդեցին ավելի քան 250 մղոն՝ գալով Ֆայենթ՝ Նյու Յորք: Նրանք խնդրեցին նրան հարցնել Տիրոջ կամքը իրենց և Կիրթլենդի Սրբերի համար: Ի պատասխան, Տերը հայտնեց, որ Նյու Յորքի Սրբերը պետք է «միասին հավաքվեն Օհայոյում» (ՎնՈւ 37.3): Նյու Յորքում Եկեղեցու երրորդ և վերջին համաժողովի ժամանակ, որը տեղի ունեցավ Վիթմեր ագարակում 1831 թվականի հունվարի 2-ին, Տերը կրկնեց Իր հրահանգը, [որ Եկեղեցու անդամները տեղափոխվեն Օհայո]: ... Դա այս ժամանակահատվածում Սրբերին միասին հավաքելու առաջին կոչն էր: ...

... 1831 թվականի ապրիլի կեսերին Քոլսվիլից մոտ 68 անդամներ ճանապարհ ընկան դեպի Օհայո: Տիրոջ պատվիրակին հնազանդ էին նաև 80 Սրբեր Ֆայենթի ճյուղից և 50 անդամներ Մանչեստրի ճյուղից, որոնք թողեցին իրենց տները 1831 թվականի մայիսի սկզբներին: ... Մայիսի կեսերին Նյու Յորքից Եկեղեցու բոլոր ճյուղերը կարողացան նավով ճամփորդել Էրի լճով դեպի Օհայոյի Ֆեյրպորտ նավահանգիստ, որտեղ նրանց դիմավորեցին տեղի Սրբերը և տեղավորեցին Կիրթլենդ և Թոմսոն ավաններում: Վերջին օրերի Իսրայելի մեծ ժողովումը սկսվեց» (*Մեր ժառանգությունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հակիրճ պատմությունը* (1996), 19–21):

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 38.31-33 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել և բացահայտել, թե ինչ եղանակներով կօրհնվեին Սրբերը, եթե նրանք հնազանդվեին Օհայոյում հավաքվելու պատվիրանին: Ուսանողները պետք է նշեն չորս օրհնություններ. (1) նրանք «խույս [կտան] թշնամու իշխանությունից», (2) նրանք «[հավաքվեն Աստծո] մոտ՝ մի արդարակյաց ժողովուրդ», (3) նրանք կստանան Աստծո օրենքը և (4) նրանք «գործությամբ կօժտվեն ի վերուստ»: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ չորս օրհնությունները իրենց սուրբ գրություններում: (*Նշում*. Սուրբ գրություններում զուգահեռներ անցկացնելը կարող է օգնել ուսանողներին նկատել կարևոր գաղափարները, որ Տերը կամ մարգարեն շեշտում են:)

Գրատախտակին գրեք հետևյալը. **Տերը հավաքում է Իր ժողովրդին, որպեսզի պաշտպանի նրանց և հոգեպես ամրացնի:** Դուք կարող եք շեշտել, որ սուրբ գրություններում ժողովելու վարդապետությունը հաճախ կապվում է պաշտպանության հետ: «Կապը հարաբերություն կամ օղակ է գաղափարների, մարդկանց, երևույթների կամ իրադարձությունների միջև, և սուրբ գրությունները լի են կապերով» (David A. Bednar, “A Reservoir of Living Water” (Brigham Young University fireside, Feb. 4, 2007), 4, speeches.byu.edu):

Բացատրեք, որ ճիշտ ինչպես Տերը հին օրերում Իսրայելին տարավ Միհայ լեռը և տվեց նրանց Իր օրենքը, այդպես էլ Նա պատվիրեց Վերջին Օրերի Սրբերին հավաքվել Օհայոյում, որպեսզի նրանք կարողանան ստանալ Իր օրենքն այս տնտեսությունում (տես ՎնՈւ 38.32): Օհայոյում Տերը սկսեց հայտնել Իր օրենքը Եկեղեցուն (տես ՎնՈւ 42 բաժնի նախաբանը): Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է ձեր համոզմունքները և չափանիշները կիսողների հետ հավաքվելն օգնում պաշտպանել ձեզ սատանայի ազդեցությունից:

- Ինչպե՞ս է Աստծո օրենքների ստանալն օգնում մեզ՝ ուժեղանալ հոգեպես:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, թե Օհայոյում Սրբերը «գործությամբ կօծովեն ի վերուստ»:

Բացատրեք, որ խոստացված օրհնությունը՝ «գործությամբ կօծովեք ի վերուստ», սկսեց իրականանալ, երբ Օհայոյում Սրբերի հավաքվելուց հինգ տարի անց ավարտին հասցվեցին Կիրթենդի Տաճարի աշխատանքները: Երկնային սուրհանդակներն այցելեցին տաճար՝ շնորհելու Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին բանալիներն ու իշխանությունը, որն անհրաժեշտ էր սուրբ արարողությունները կատարելու համար: Տաճարի նվիրագործման ժամանակ Հոգին առատորեն հեղվեց բազմաթիվ Սրբերի վրա: Սրբերի մի փոքրիկ խումբ տաճարում ստացավ տաճարային լվացումներ և օծումներ: Մի քանի տարի անց Նավու քաղաքում գործությամբ օծովելու խոստումն իրականացավ, երբ տաճարային օծման արարողությունները ներկայացվեցին Սրբերին: Յուզադրեք Նավու քաղաքում Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերը և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



«Ո՞րն էր... Աստծո ժողովրդի ժողովման նպատակն աշխարհի որևէ դարաշրջանում: «... Հիմնական նպատակն էր՝ կառուցել տուն Տիրոջ համար, որտեղ Նա կարող էր հայտնել Իր ժողովրդին Իր տան արարողությունները և Իր արքայության փառքերը և սովորեցնել ժողովրդին փրկության ճանապարհը» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 443-444):

- Ի՞նչ ուղիներ եք դուք տեսել, որոնցով Աստված օրհնում է Վերջին Օրերի Սրբերին, երբ նրանք հավաքվում և տաճար են կառուցում, ինչպես Նա է պատվիրել:

Վարդապետություն և Ուխտեր 45.62-67

Տեղը նկարագրում է Նոր Երուսաղեմը կամ Սիոնը

Բացատրեք, որ Նյու Յորքի Սրբերի Օհայոյում հավաքվելուց քիչ ժամանակ անց թերթերում շատ կեղծ հոդվածներ և բամբասանքներ թյուր կարծիք ստեղծեցին և գրպարտեցին Եկեղեցին: Այդ ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտնություն ստացավ պաշտոնական հավաքատեղիի՝ խաղաղության և ապահովության վայրի մասին:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 45.62-67 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել և ներկայացնել Տիրոջ նպատակները, երբ պատվիրեց Սրբերին հավաքվել և առաջ գնալ դեպի «արևմտյան շրջանները» (ՎևՈւ 45.64): Խորհեք հետևյալ հարցերի առաջադրման շուրջ.

- Ըստ Տիրոջ խոսքերի, ի՞նչն էր «ձեր դռան շեմին»: Ի՞նչ նշանակություն ունի «ձեր դռան շեմին» արտահայտությունը ձեզ համար:

- Ի՞նչ էր Տերը ցանկանում, որ Սրբերն անեին, երբ նրանք միասին հավաքվեցին արևմտյան շրջաններում:
- Ինչո՞ւ պետք է նրանք հավաքեին իրենց հարստությունները: (Բացատրեք, որ *ժառանգություն* բառը վերաբերում է հողին, որը նրանք պետք է գնեին, որտեղ նրանք կկարողանային ապրել և երկրպագել Տիրոջը:)
- Ինչպե՞ս պետք է կոչվեր Սրբերի ժառանգության հողը:

Բացատրեք, որ սուրբ գրություններում *Սիոն* բառը կարող է ունենալ մի քանի նշանակություն: Երբեմն այն վերաբերում է Սիոնի մարդկանց և նկարագրում է նրանց որպես «սրտով մաքուրներ» (ՎնՈւ 97.21): Որևէ այլ տեղ *Սիոնը* վերաբերում է ողջ Եկեղեցուն և դրա ցցերին (տես ՎնՈւ 82.14): *Սիոն* բառը կարող է նաև վերաբերել որոշակի աշխարհագրական տարածքների: Վարդապետություն և Ուխտեր 45.66–67 հատվածներում *Սիոնը* վերաբերում է ֆիզիկական մի քաղաքի, որը Սրբերը կհիմնեին և որտեղ կհավաքվեին, երբեմն այն կոչում են Նոր Երուսաղեմ (տես նաև 3 Նեփի 20.22, 21.23, Եթեր 13.1–8, Bible Dictionary, “Zion”). Զննարկեք հետևյալ հարցերը.


- Ինչպե՞ս Տերը նկարագրեց Նոր Երուսաղեմը կամ Սիոնը: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Նոր Երուսաղեմը կլինի խաղաղության, ապաստանի և ապահովության մի վայր, և Տիրոջ փառքը կլինի այնտեղ:**)
- Ի՞նչ եղանակներով է Եկեղեցու անդամ լինելը տվել ձեզ ապահովություն և խաղաղություն, որոնք առկա են Սիոնում:

Բացատրեք, որ Եկեղեցու չորրորդ համաժողովի վերջում, որը տեղի է ունեցել 1831 թվականի հունիսին Կիրթլենդում՝ Օհայո նահանգ, Տերը պատվիրեց Զոգեֆ Սմիթին և այլ երեցների զույգերով ճամփորդել մոտավորապես 900 մղոն դեպի Միսսուրի՝ ճանապարհին քարոզելով (տես ՎնՈւ 52, հատվածի նախաբանը): Տեղ հասնելուց հետո Մարգարեն հայտնություն ստացավ, որտեղ Միսսուրին նշվում է որպես «խոստումի երկիրը և վայրը Սիոն քաղաքի համար», իսկ Ինդիփենդենսը՝ Միսսուրի նահանգում, նշվում է որպես «կենտրոնական վայր» (ՎնՈւ 57.1–3): Հաջորդ մի քանի տարիների ընթացքում Վերջին Օրերի հարյուրավոր Սրբեր, փափագելով կառուցել Սիոն, տեղափոխվեցին Միսսուրիի տարածքի Զեկսոն գավառ: Ցավոք սրտի, Եկեղեցու անդամների և գավառի այլ քաղաքացիների միջև խնդիր առաջացավ, և իրավիճակն ի վերջո սրվեց: Սրբերը ստիպված եղան դուրս գալ Զեկսոն գավառի իրենց տներից 1833 թվականի նոյեմբերին և դեկտեմբերին:

Վարդապետություն և Ուխտեր 115.5-6

Աստծո ժողովուրդն այսօր հավաքվում է Սիոնի ցցերում

Այլ ապահով և խաղաղ վայրերում հավաքվելու Սրբերի ջանքերը լուսաբանելու համար ցուցադրեք քարտեզը՝ «Եկեղեցու շարժումը դեպի արևմուտք» (Եկեղեցու պատմության քարտեզները, հ. 6), որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերի վերջում:



Բացատրեք, որ Սրբերն ի վերջո ստիպված եղան թողնելու Կիրթլենդը՝ Օհայո նահանգ, ինչպես նաև Միսսուրիի արևմտյան տարածքները: 1839 թվականին Սրբերը սկսեցին հավաքվել Իլինոյս նահանգի Նավու քաղաքում, որտեղ նրանք մեծ քաղաք հիմնեցին: Սակայն Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից հետո կարճ ժամանակ անց Եկեղեցու անդամները կրկին ստիպված եղան թողնելու իրենց տները: Նրանք տեղափոխվեցին Ռոքի լեռները և բնակավայրեր հաստատեցին Հյուսիսային Ամերիկայի ողջ արևմտյան շրջաններում, իսկ Եկեղեցու գլխավոր վարչությունը հաստատվեց Մոլթ Լեյք Սիթիում:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 115.5-6 հատվածները: Այնուհետև հարցրեք.

- Համաձայն այս հատվածների, ի՞նչ օրհնություններ են խոստացված նրանց, ովքեր հավաքվում են Միոնի գցերում: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալ ճշմարտությունը. **Մենք հավաքվում ենք Միոնի գցերում չարից պաշտպանվելու և ապաստան գտնելու համար:**)
- Ինչպե՞ս կարող են Միոնի գցերը պաշտպանել և ապաստան տալ Եկեղեցու անդամներին իրենց իսկ հայրենիքում:
- Ե՞րբ եք դուք ուժ և պաշտպանություն զգացել, երբ դուք հավաքվել եք Սրբերի հետ ձեր իսկ ծխում կամ ճյուղում:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում այսօր Եկեղեցու անդամների համար Միոնի գցերում հավաքվելը, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Այս վերջին տնտեսության վաղ շրջանում Միոնում հավաքվելը ներգրավում էր Միացյալ Նահանգների մի շարք տարածքները՝ Կիրթլենդը, Միսսուրիին, Նավուն և դեպի լեռները: Սրանք միշտ ապագա տաճարների հավաքատեղեր էին: Երկրների մեծ մասում բազմաթիվ հավատարիմ անդամներ ունենալու, ցցերի ստեղծման և տաճարների կառուցման արդյունքում ներկայիս պատվիրանս է հավաքվել ոչ թե մեկ վայրում, այլ հավաքվել մեր իսկ հայրենիքում գտնվող գցերում: Այնտեղ հավատարիմները Տիրոջ տանը կարող են վայելել հավերժության բոլոր օրհնությունները: ... Այսպիսով, Միոնի գցերը

«պաշտպանություն և ապաստան [կլինեն] փոթորկից ու ցատումից, երբ այն անխառն կթափվի ողջ երկրի վրա» (Վևու 115.6)» ("Preparation for the Second Coming," *Ensign or Liahona*, May 2004, 8):

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895–1985) հետևյալ խոսքերը.



«Այժմ Իսրայելի ժողովումը կազմված է ճշմարիտ եկեղեցու միանալուց և ճշմարիտ Աստծուն ճանաչելուց: ... Ուստի ցանկացած մարդ, ով ընդունել է վերականգնված ավետարանը և ով այժմ ձգտում է երկրպագել Տիրոջը իր մայրենի լեզվով և Սրբերի հետ այն երկրներում, որտեղ նա ապրում է, ենթարկվել է Իսրայելի ժողովման օրենքին և ժառանգորդն է այս վերջին օրերում Սրբերին խոստացված բոլոր օրհնություններին» (*The Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 439):

- Ինչպե՞ս է փոխվում Եկեղեցու կառուցած տաճարների թիվը ձեր կյանքի ընթացքում:
- Ինչպե՞ս եք դուք օրհնվել՝ լինելով Սիոնի ցցի կամ շրջանի անդամ: Ինչպե՞ս եք դուք օրհնվել՝ սուրբ տաճարի շնորհիվ:

Վերջում խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող են անել, որ օգնեն ուրիշներին ստանալ հոգևոր պաշտպանություն և ուժ, որը գալիս է Սիոնի ցցերի հավատարիմ անդամ լինելուց և սուրբ տաճարի երկրպագությունից: Խրախուսեք ուսանողներին գործել ըստ Հոգու հուշումների, որ նրանք կարող են ստանալ:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 37.1-3, 38.31-33, 39.15, 45.62-67, 95.8, 110.9, 115.5-6:
- Russell M. Nelson, "The Gathering of Scattered Israel," *Ensign or Liahona*, Nov. 2006, 79–82.

Հետևեք ապրող Մարգարենին

Նախաբան

Եկեղեցու կազմավորման օրը Տերը հոգևոր ապահովություն խոստացավ Նրանց, ովքեր ուշադրություն կդարձնեն մարգարեի խոսքերին (տես ՎնՈւ 21.4–6): Կարճ ժամանակ անց, եկեղեցու անդամներին խաբեությունից զերծ պահելու համար, Տերը հայտնեց, որ միայն մարգարեն իշխանություն ունի

հայտնություն ստանալու ամբողջ եկեղեցու համար (տես ՎնՈւ 28.1-7): Մարգարեն նաև իշխանություն ունի պարզաբանելու սուրբ գրությունը: Այս ճշմարտությունների հասկանալը լրացուցիչ հոգևոր ապահովություն է բերում այս վերջին օրերում:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Հաստատել մարգարեներին», *Ensign* կամ *Լիսինգ*, նոյ. 2014, 74-77:
- Ezra Taft Benson, “Fourteen Fundamentals in Following the Prophet” [Brigham Young University devotional, Feb. 26, 1980], speeches.byu.edu, տես նաև *Tambuli*, June 1981, 1–8:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 21.1-6

Ուշադրություն դարձրեք մարգարեների խոսքերին

Հարցրեք ուսանողներին, թե երբեմն մենք ինչ տիտղոսներ ենք օգտագործում Եկեղեցու Նախագահին դիմելիս: Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին: Այնուհետև հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 21.1 և խնդրեք դասարանին հետևել նրան: Գրատախտակին գրեք այլ հնարավոր տիտղոսներ: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է այս հատվածի տիտղոսներից յուրաքանչյուրը նկարագրում Եկեղեցու Նախագահի աշխատանքը:

Օգնեք ուսանողներին հասկանալ Վարդապետություն և Ուխտեր 21 բաժնի համատեքստը՝ բացատրելով, որ այնտեղ գրառված հայտնությունը տրվել էր Եկեղեցու կազմավորման օրը: (Նշում. Երբ ուսանողները սովորեն հասկանալ սուրբ գրության համատեքստը, ավելի հավանական է, որ նրանք հասկանան իրենց կարդացածի իմաստն ու կարևորությունը:) Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ էր կարևոր վաղ շրջանի Եկեղեցու անդամների համար հասկանալ, որ Ջոզեֆ Սմիթի կոչումը որպես մարգարե նշանակալից կերպով տարբերվում էր այլ եկեղեցիների ղեկավարների դերերից:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 21.4-5 հատվածները և խնդրեք դասարանին հետևել նրան: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը:

- Ինչո՞ւ է երբեմն մարգարեի խոսքերին ուշադրություն դարձնելու համար պահանջվում համբերություն և հավատք:

Անհրաժեշտության դեպքում խորհեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի (1899-1973) հետևյալ խոսքերով ուսանողների հետ կիսվելու մասին:



«Մենք պետք է սովորենք ուշադրություն դարձնել խոսքերին և պատվիրաններին, որոնք Տերը կտա Իր մարգարեի միջոցով: ... Դուք գուցե չհավանեք այն, ինչ ասում է Եկեղեցու իշխանավորը: Այն կարող է հակասել ձեր քաղաքական տեսակետներին: Այն կարող է հակասել ձեր հասարակական հայացքներին: Այն կարող է խանգարել ձեր հասարակական կյանքին: Բայց եթե դուք լսեք այս բաները, կարծես թե Տիրոջ բերանից, համբերությամբ և հավատքով, խոստումն այն է, որ «դժոխքի դռները չեն հաղթի ձեզ. այո, և Տեր Աստված ձեր առջևից կցրի խավարի գործությունները և այնպես կանի, որ երկինքները կցնցվեն՝ ձեր բարիքի և իր անվան փառքի համար» (Վե՛ր 21.6)» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 84):

Երբ Հոգին ոգեշնչի, դուք կարող եք բացատրել հետևյալը:

1. Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք չենք կարծում, որ մարգարեները կատարյալ մարդիկ են: Այնուամենայնիվ, Տերը երբեք թույլ չի տա, որ նրանք մոլորեցնեն Եկեղեցին (տես Պաշտոնական Հայտարարություն 1, «Քաղվածքներ հռչակագրի վերաբերյալ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի երեք ելույթներից»):
2. Մենք հավատում և ուրախանում ենք շարունակվող հայտնությամբ: Եկեղեցու պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ մի մարգարեն պարզաբանել է նախապես տրված մարգարեական խորհուրդը կամ ներկայացրել է ուսմունքներ կամ կիրառումներ, որ մի ժամանակ լայնորեն ընդունվել են, իսկ հետագայում փոփոխության կարիք են ունեցել: Օրինակ, Եկեղեցու վաղ շրջանում անդամներին խրախուսվում էր հավաքվել մեկ կենտրոնական տարածքում, ինչպես օրինակ Կիրթլենդում՝ Օհայո, կամ Ջեկսոն գավառում՝ Միսսուրի: Այսօր Եկեղեցու անդամներին խրախուսվում է հավաքվել իրենց տեղական գյուղում կամ շրջաններում:

Ուսանողներից որևէ մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 21.6 հատվածը: Ուսանողներին խնդրեք հետևել և ներկայացնել խոստումները, որ տրվում են նրանց, ովքեր ուշադրություն են դարձնում մարգարեի խոսքերին: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են: Այնուհետև հարցրեք:

- Ինչպե՞ս կամփոփելիք այն խոստումները, որ տրվում են նրանց, ովքեր ուշադրություն են դարձնում մարգարեի խոսքերին: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքը: **Եթե մենք ուշադրություն**

դարձնենք մարգարեի խոսքերին, մենք պաշտպանված կլինենք չարից: Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք բացատրել, որ *ցնցել* նշանակում է տեղից հանել կամ արձակել ինչ-որ բան իր հենարանի վրայից կամ տարայի միջից: Այդպիսով, հատված 6-ի մեկնաբանություններից մեկը կարող է լինել այն, որ երբ երկինքները ցնցվում են «մեր բարիքի» համար, հայտնությունները և օրհնությունները «բաց են թողնվում» և թափվում մեզ վրա:)

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն.



«Մարգարեների խորհրդով ապահով ուղու փնտրելը հասկանալի է նրանց համար, ովքեր ամուր հավատք ունեն: Երբ մարգարեն խոսում է, քիչ հավատք ունեցողները կարող են մտածել, որ լսում են լոկ մի իմաստուն մարդու, ով լավ խորհուրդ է տալիս: ...

... Սակայն մարգարեական խորհուրդը չընդունելու ընտրությունը փոխում է հենց այն հողը, որի վրա մենք կանգնած ենք: Այն դառնում է ավելի վտանգավոր: Մարգարեական խորհրդին չհետևելը թուլացնում է հետագայում ոգեշնչված խորհուրդ ընդունելու զորությունը» («Finding Safety in Counsel,” *Ensign*, May 1997, 25):

- Ինչո՞ւ է «հենց այն հողը, որի վրա մենք կանգնած ենք» դառնում «ավելի վտանգավոր», երբ մենք մերժում ենք մարգարեների խորհուրդը: Ի՞նչ օրինակներ կան, որոնք ցույց են տալիս, որ դա ճիշտ է:
- Ե՞րբ եք դուք կամ որևէ մեկը, ում դուք ճանաչում եք, օրհնվել՝ ուշադրություն դարձնելով կենդանի մարգարեի խորհրդին:
- Ինչպե՞ս կարող է մարգարեական խորհրդին ուշադրություն դարձնելու սկզբունքը վերաբերել մեր օրերի կրոնական, բարոյական և հասարակական հարցերին:

Խրախուսեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ պետք է իրենք անեն, որպեսզի ստանան Վարդապետություն և Ուխտեր 21.6-ում խոստացված օրհնությունները: Հավաստիացրեք նրանց, որ եթե նրանք ջանասիրաբար ուշադրություն դարձնեն ապրող մարգարեի խոսքերին, նրանք կստանան մեծ օրհնություններ այժմ և հավերժության մեջ: Բացատրեք, որ մարգարեների խորհրդին ուշադրություն դարձնելը չի նշանակում, որ մենք կուրորեն հնազանդվում ենք նրանց խոսքերին:

Բարձրաձայն կարդացեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի հետևյալ խոսքերը.



«Որպես Վերջին Օրերի Սրբեր, բավական չէ, որ մենք հետևենք մեր ղեկավարներին և ընդունենք նրանց խորհուրդը, այլ մենք ավելի մեծ պարտավորություն ունենք՝ ձեռք բերելու անձնական անսասան վկայություն այս մարդկանց աստվածային նշանակման մասին և վկայություն, որ նրանց ասածը մեր Երկնային Հոր կամքն է» (*Teachings: Harold B. Lee*, 45):

Վարդապետություն և Ուխտեր 28.2, 6–7, 43.1–7 45.16, 6-7, 43-7

Տերը հատնություն տալիս է կանոնավոր կերպով

Բացատրեք, որ Եկեղեցու կազմավորումից հետո կարճ ժամանակ անց հակառակորդի գործադրած ջանքերի արդյունքում Եկեղեցու որոշ անդամներ մոլորվել էին՝ տալով կեղծ մարգարեական առաջնորդություն: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 28 բաժնի նախաբանը մինչ դասարանը կհետևի նրան (տես նաև Jeffrey G. Cannon, “All Things Must Be Done in Order: ՎնՈ 28, 43,” Revelations in Context series, Apr. 4, 2013, history.lds.org) Այնուհետև հարցրեք.

- Եթե Եկեղեցու անդամները շարունակեին հավատալ Հայրամ Փեյջի ենթադրյալ հայտնություններին, ի՞նչ խնդիրներ կառաջանային:

Ուսանողներին տվեք մի քանի րոպե Վարդապետություն և Ուխտեր 28.2, 6-7 հատվածներն ուսումնասիրելու համար: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է Տիրոջ տված այս ուղերձը պարզաբանում Եկեղեցու Նախագահի դերը: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ վարդապետությունը. **Եկեղեցու Նախագահը կրում է Եկեղեցու համար հայտնություն ստանալու բանալին**):

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը այս վարդապետության վերաբերյալ, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 43 բաժնի հետևյալ պատմական օժանդակ նյութը.

1831 թվականի փետրվարին տիկին Հուբլ անունով մի կին եկավ Օհայո՝ Կիրթլենդի Սրբերի մոտ: Նա հայտարարում էր, որ ինքը մարգարեուհի է, որ նա հայտնություններ է ստացել Եկեղեցու համար, որ նա գիտեր Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելու մասին և որ նա պետք է ուսուցիչ դառնար Եկեղեցում: Նա կարողացավ մոլորեցնել որոշ Սրբերի: Ջոզեֆ Սմիթը և այլոք մտահոգված էին նրա ազդեցության և Սրբերի մեջ այլ կեղծ հայտնությունների համար: Մարգարեն որոշեց հարցնել Տիրոջը, թե ինչ պետք է արվեր, և նա սատարեց հայտնություն, որն այժմ տրված է Վարդապետություն և Ուխտեր 43 բաժնում (տես *Documents, Volume 1: July 1828–June 1831*, vol. 1 of the Documents series of *The Joseph Smith Papers* [2013], 257):

Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 43.1-7 հատվածները, ուշադրություն դարձնելով վարդապետություններին, որոնք Տերը տալիս էր այդ ժամանակ: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են: Կարող եք նաև առաջարկել, որ նրանք հղում անեն այս հատվածը Վարդապետություն և Ուխտեր 28.2-ին: Նշեք, որ 28 բաժնում տրված հայտնությունն ուղղված էր Նյու Յորքի Սրբերին և 43 բաժնում տրված հայտնությունը ուղղված էր Կիրթլենդի Սրբերին: Այնուհետև հարցրեք.

- Երբ տրվեց Վարդապետություն և Ուխտեր 43 բաժնում գրառված հայտնությունը, ո՞վ էր նշանակված ստանալու պատվիրաններ և հայտնություններ ողջ Եկեղեցու համար:

- Ի՞նչ վարդապետություններ կարող ենք սովորել այս հատվածից: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն նրանք պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունները. **Ամեն ժամանակաշրջանում ընդամենը մեկ անձնավորություն է նշանակվում՝ ստանալու հայտնությունն ողջ Եկեղեցու համար: Նրանք, ովքեր ուշադրություն են դարձնում Եկեղեցու Նախագահին, չեն մոլորվում:**)

Խորհեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերիի հետևյալ ուղերձով կիսվելու մասին.



«Գոյություն ունի կարգ, որի համաձայն Տերը մարդկությանը հայտնում է Իր կամքը: Մենք բոլորս իրավունք ունենք խնդրել Տիրոջը և ոգեշնչում ստանալ Նրա Հոգու միջոցով՝ մեր լիազորության սահմաններում: Ծնողները կարող են հայտնություն ստանալ իրենց իսկ ընտանիքի համար, եպիսկոպոսը՝ իրեն հանձնարարված տարածքի համար, և Առաջին Նախագահությունը՝ ողջ Եկեղեցու համար: ... Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է.

«Աստվածային համակարգին հակառակ է այն, որ Եկեղեցու որևէ անդամ կամ ոչ անդամ հրահանգներ ստանա նրանց համար, ովքեր իրենցից բարձր իշխանություն ունեն» [Եկեղեցու Նախագահների ուսմունքները. *Ջոզեֆ Սմիթ* (2007), 210]» ("We Believe All That God Has Revealed," *Ensign or Liahona*, Nov. 2003, 85–86):

- Ինչպե՞ս է իմացությունը, որ հայտնությունն Աստծուց միշտ գալիս է պաշտոնապես ճանաչված քահանայության միջոցով, օգնում ձեզ խուսափել խաբեությունից: Ինչպե՞ս կարող է այս գիտելիքը խաղաղություն բերել ձեր կյանքում:
- Ինչպե՞ս է հայտնության Տիրոջ օրինաչափությունը կարգ ու կանոն պահպանում Եկեղեցում:

Վարդապետություն և Ուխտեր 90.1-6

Տերը կարգ ու կանոն է հաստատում Եկեղեցում

Բացատրեք, որ երբ Եկեղեցին աճեց, Տերը առաջնորդեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին կարգավորելու քահանայության և Եկեղեցու անդամության հետ կապված հարցերը:

Բարձրաձայն կարդացեք կամ ամփոփեք հետևյալ պատմությունը.

«Եկեղեցու անդամության թվի մեծացման հետ մեկտեղ Մարգարեն շարունակում էր հայտնություն ստանալ քահանայության պաշտոնների վերաբերյալ: Տիրոջ կողմից ուղղորդվելով՝ Նա կազմավորեց Առաջին Նախագահությունը, ինքը դառնալով Նախագահ, իսկ Սիդնի Ռիգդոնն ու Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը՝ խորհրդականներ: Նա նաև կազմավորեց Տասներկու Առաքյալների Քվորումը և Յոթանասուականների Առաջին Քվորումը: Նա կանչեց և ձեռնադրեց եպիսկոպոսներին և նրանց խորհրդականներին, քահանայապետներին, հայրապետներին, բարձրագույն խորհրդականներին, յոթանասուականներին և երեցներին: Նա կազմավորեց Եկեղեցու առաջին ցցերը» (*Մեր ժառանգությունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հակիրճ պատմությունը* [1996], 28-29):

Բացատրեք, որ Առաջին Նախագահությունը հատուկ տեղ է զբաղեցնում Եկեղեցում: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 90.1-6 հատվածները և ներկայացնել Առաջին Նախագահության առանձնահատուկ պարտականությունները: (Առաջին Նախագահությունը «կրում [է] արքայության բանալիները» [հատված 2] և նրանց միջոցով պետք է «պատգամները տրվեն» Եկեղեցում [հատված 4]): Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք բացատրել, որ «պատգամները» բառը վերաբերում է Աստծո կողմից Իր մարգարեներին տրված հայտնություններին:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել երկու տարբեր ուղիներին, որոնցով հաստատվում է Եկեղեցու վարդապետությունը:



«1954թ. Նախագահ Ջ. Ռուբեն Զլարկ կրտսերը, որն այդ ժամանակ Առաջին Նախագահության խորհրդական էր, բացատրեց, թե ինչպես է վարդապետությունը հրապարակվում Եկեղեցում և Եկեղեցու Նախագահի ծայրահեղ կարևոր դերի մասին: Խոսելով Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների մասին, նա նշեց. «[Մենք] պետք է մեր մտքում պահենք, որ Բարձրագույն Իշխանավորներից ոմանց հանձնարարված է հատուկ կոչում. նրանք ունեն հատուկ պարզև, նրանք հաստատվում են որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, որը նրանց տալիս է հատուկ հոգևոր օժտում, որը կապված է ժողովրդին նրանց կողմից ուսուցանելու հետ: Նրանք ունեն իրավունք, զորություն և իշխանություն՝ հայտարարելու Աստծո միտքն ու կամքը՝ ենթակա լինելով Եկեղեցու Նախագահի համընդհանուր զորությանն ու իշխանությանը»: ...

... Եկեղեցու Նախագահը կարող է հայտարարել կամ մեկնաբանել իրեն տրված հայտնության վրա հիմնված վարդապետությունները (տես օրինակ, Վևու 138): Վարդապետական մեկնաբանությունը կարող է գալ նաև Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի միավորված խորհրդի միջոցով (տես, օրինակ, Պաշտոնական Հայտարարություն 2)» («Քրիստոսի վարդապետությունը», *Ensign* կամ *Լիսինա*, մայիս 2012, 86–88):

- Ինչո՞ւ է կարևոր հիշել, թե ով իշխանություն ունի՝ աշխարհին «հայտարարելու Աստծո միտքն ու կամքը»:

Վերջում ուսանողներին խնդրեք մտածել, թե ինչ են նրանք սովորել ապրող մարգարեների և առաքյալների ուղերձներից: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով, թե ինչպես են այս ուղերձներն օրհնել իրենց:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 21.1-6, 28.2, 6-7, 43.1-7, 90.1-6, 16:
- Ռասսել Մ. Նելսոն, «Հաստատել մարգարեներին», *Ensign* կամ *Լիսինա*, նոյ. 2014, 74-77:

Փնտրեք ճշմարտությունը

Նախաբան

Աստծո զավակները խրախուսվում են «ուսում փնտրել ... ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎնՈւ 88.118): Այս օրինաչափության հետևելն օգնում է անհատներին պատրաստվել Սուրբ Հոգու օգնությանը սովորելու ընթացքում: Այսօր համացանցը և այլ աղբյուրներ ապահովում են հարուստ տեղեկատվություն՝ մի քանիսը ճիշտ, մյուսները սխալ և մնացածն էլ մոլորեցնող՝

Եկեղեցու վարդապետության, պատմության և հասարակական խնդիրների դիրքորոշման հետ կապված, մեզ համար հատկապես կարևոր դարձնելով Սուրբ Հոգուն ապավինելը՝ օգնելու մեզ՝ տարբերել ճիշտը սխալից: Տեղեկությունների պատշաճ աղբյուրների գտնելն ու օգտագործումը այս գործընթացի մի մասն է:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dieter F. Uchtdorf, “What Is Truth?” (Church Educational System devotional, Jan. 13, 2013), [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts).
- “Gospel Learning,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 88.118, 121-26

Սովորելու օրինաչափություն

Բարձրաձայն կարդացեք Մագարենների Դպրոցի նկարագրությունը, որը գտնվում էր Կիրթլենդում՝ Օհայո նահանգ.

«1833 թվականին Մարգարեն և Կիրթլենդի մի խումբ Սրբեր եզակի հնարավորություն ունեին ուսումնասիրելու ավետարանը: Այդ տարվա հունվարին՝ ըստ Տիրոջ պատվիրանի (տե՛ս ՎնՈւ 88.127–141), Մարգարեն կազմավորեց Մարգարենների դպրոցը, որպեսզի քահանայություն կրողներին ուսուցանի ծառայության իրենց գործերում և պատրաստի նրանց՝ ավետարանն ուսուցանելու: Դպրոցն անցկացվում էր Նյուել Զ. Ուիթլիի վաճառատան երկրորդ հարկում, որտեղ բնակվում էր Մարգարեն: Այցելում էին մոտ 25 եղբայրներ, ովանք ճամփորդելով հարյուրավոր մղոններ, որպեսզի ուսումնասիրեն ավետարանը մի սենյակում, որի չափերն էին 3.35-ը 4.27 մետրի վրա: Այդ տղամարդկանցից շատերը հետագայում դարձան Առաքյալներ, Յոթանասուականներ և Եկեղեցու այլ ղեկավարներ: Չնայած Մարգարեն և մյուս եղբայրները ժամանակ առ ժամանակ լեզուներ էին սովորում, նրանք անմիջականորեն կենտրոնացած էին ավետարանի վարդապետություններն ուսումնասիրելու վրա՝ ջանասիրաբար հետամուտ լինելով ուսումնասիրմանը վաղ առավոտից մինչև երեկո: Այս դպրոցը տևեց չորս ամիս, և հետագայում նմանատիպ դասեր անցկացվեցին և Կիրթլենդում, և Միսսուրիում, որտեղ այցելում էին հարյուրավոր մարդիկ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Զոգեֆ Սմիթ [2007], 279-280):

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտեր 88 բաժինը պարունակում է Տիրոջ հրահանգները նրանց համար, ովքեր հաճախելու էին Մարգարենների Դպրոցը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.118 հատվածը՝ փնտրելով Տիրոջ

հաստատած սովորելու օրինաչափությունը: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ուսում փնտրել ... ուսումնասիրելով և նաև հավատքով»:
- Ինչպե՞ս կարող է այս օրինաչափության հետևելը մեծացնել սովորելու մեր ունակությունը: (Ուսանողները կարող են տարբեր պատասխաններ տալ, սակայն հետևեք, որ հստակ լինի այն, որ, **երբ մենք ուսման գործընթացում ներառում ենք հավատք, մենք արժանանում ենք Տիրոջ օգնությանը**.)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.121-26 հատվածները, որտեղ տրված են Տիրոջ հետագա հրահանգները Մարգարեների Դպրոցի համար: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով սկզբունքներ, որոնք օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես սովորել հավատքով: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են: Խորհեք այս սկզբունքների ցանկը գրատախտակին գրելու մասին, մինչ ուսանողները կկիսվեն դրանցով: Կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները «սկզբունքներ, որոնք ուսուցանում են, թե ինչպես սովորել հավատքով» արտահայտությունը գրեն իրենց սուրբ գրությունների լուսանցքում՝ այս հատվածների կողքին: (Նշում. Սուրբ գրությունների լուսանցքում նշումների կատարումը կարող է օգնել ուսանողներին ավելի հեշտ գտնել և հիշել կարևոր սկզբունքները:) Եթե ժամանակ ունեք, դուք կարող եք խնդրել ուսանողներին Ալմա 32.28, 41-43 և Հովհաննես Է.17 հատվածներում փնտրել լրացուցիչ սկզբունքներ:

- Ինչպե՞ս կարող է այս հատվածներում ուսուցանված սկզբունքներով ապրելն օգնել մեզ ուսում փնտրել՝ սովորելով և հավատքով: (Երբ ուսանողները պատասխանեն, կարող եք նշել, որ այս սկզբունքներին հետևելը կօգնի մեզ արժանանալ Հոգու օգնությանը:)
- Երբ մենք արժանանում ենք Տիրոջ Հոգին մեր հետ ունենալուն, ինչպե՞ս է այս Հոգին ազդում ճշմարտության մեր փնտրտուքի վրա:

Վարդապետություն և Ուխտեր 91.1-6

Տարբերել ճշմարտությունը կեղծիքից

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսթորֆի հետևյալ խոսքերը և որևէ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ այն.



«Աշխարհի պատմության մեջ մենք երբեք չենք կարողացել ավելի հեշտությամբ օգտվել տեղեկատվությունից. դրա մի մասը ճշմարիտ է, մի մասը՝ կեղծ, իսկ մեծ մասը՝ մասամբ ճիշտ:

Հետևաբար աշխարհի պատմության մեջ երբեք այդքան կարևոր չի եղել իմանալ՝ ինչպես իրականում տարբերել ճիշտը սխալից» ("What Is Truth?" [Church Educational System devotional, Jan. 13, 2013], 3, lds.org/broadcasts):

- Որո՞նք են հնարավոր հետևանքները, եթե մենք չենք սովորում տարբերել ճշմարտությունը կեղծիքից:

Հետևյալ հարցը գրեք գրատախտակին.

Ինչպե՞ս կարող ենք տարբերել ճշմարտությունը կեղծիքից:

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտեր 91-ում տրված հայտնությունը Ջոզեֆ Սմիթին ուսուցանեց, թե ինչպես տարբերել, արդյոք այն, ինչ նա կարդում էր պարականոն գրքերում, ճշմարիտ էր: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 91-րդ բաժնի նախաբանը՝ մինչ դասարանը կհետևի նրան: Ապա հրավիրեք ուսանողներին խորհել գրատախտակի հարցի շուրջ, մինչ նրանք դասարանով կուսումնասիրեն Վարդապետություն և Ուխտեր 91 բաժինը:

Բացատրեք, որ պարականոն գրքերը հրեա ժողովրդի սուրբ գրքերի ժողովածու է: Դրանք ի սկզբանե ներառված չէին հրեական Աստվածաշնչի (Հին Կտակարան) մեջ, բայց ընդգրկված էին Աստվածաշնչի հունական թարգմանության մեջ՝ Քրիստոսի ժամանակներից մի փոքր առաջ: Դարեր անց, երբ վաղ շրջանի քրիստոնյաները հավաքեցին Աստվածաշնչի գրքերը, նրանք ներառեցին պարականոն գրքերը որպես հավելված: Որոշ քրիստոնեական կրոններ պարականոն գրքերն ընդունում են որպես սուրբ գրություններ, սակայն այլ կրոններ չեն հավատում, որ դրանք ոգեշնչված գրություններ են: Աստվածաշնչի օրինակը, որը Ջոզեֆ Սմիթն օգտագործում էր իր ոգեշնչված թարգմանությունը կատարելիս, պարունակում էր պարականոն գրքերը: Ջոզեֆը հարցրեց Տիրոջը, թե արդյոք Աստվածաշնչի իր թարգմանությունը պե՞տք է ներառեր այդ գրքերը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 91.1–3 հատվածները:

- Ի՞նչ իմացավ Ջոզեֆ Սմիթը պարականոն գրքերի մասին: (Դուք կարող եք բացատրել, որ *ընդմիջարկումը* նյութ է, որը զետեղվել է բնագրում, որի արդյունքում բնագիր տեքստը երբեմն աղավաղվել է:)

Հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 91.4–6 հատվածները:

- Ինչպե՞ս կարող է 4-6 հատվածների խորհուրդն օգնել մեզ՝ տարբերել ճշմարտությունը կեղծիքից և գնահատել մեր կարդացածի հավաստիությունը: (Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ նրանք ներկայացնում են հետևյալ ճշմարտությունը. **Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ իմանալ, թե արդյոք մեր կարդացածը ճշմարիտ է:**)

Բացատրեք, որ համացանցում մատչելի տեղեկատվության բազմազանությունը մեզանից յուրաքանչյուրի համար ստեղծել է աճող կարիք՝ ունենալ զանազանելու հոգևոր պարզևր (տես ՎեՌ 46.23), որպեսզի մենք իմանանք, թե ինչպես ճիշտ տարբերակենք

ճշմարտությունը կեղծիքից: (Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչու է տարբերելու պարզևր այդքան կարևոր մեր կյանքում, տես Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հոդվածը. «Արագ նկատելու», *Ensign or Liahona*, Dec. 2006, 31–36:)



Յուրաքանչյուր ուսանողի տվեք Յոթանասունի Քվորումից Երեց Սթիվեն Ի. Սնոույի հետևյալ հայտարարության մի օրինակ:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել առաջին երկու պարբերությունները, որտեղ Երեց Սնոուն խորհուրդ է տալիս տեղեկությունների գնահատման մասին, որոնք մենք կարող էինք գտնել Եկեղեցու պատմության և ուսմունքների մեջ:

Եկեղեցու պատմությունը ծանրութեթև անել



Յոթանասունից Երեց Սթիվեն Ի. Սնոուն ասել է.

«Համացանցը մեր ձեռքի տակ է դրել ամեն տեսակի տեղեկություններ՝ լավ, վատ, ճշմարիտ, կեղծ, ներառյալ Եկեղեցու պատմությանը վերաբերող տեղեկություններ: Դուք շատ բան կարող եք կարդալ մեր պատմության մասին, սակայն կարևոր է կարդալ այդ մասին և հասկանալ այն համատեքստում: Առցանց տրված որոշ տեղեկությունների հետ կապված խնդիրը կայանում է նրանում, որ այն գտնվում է համատեքստից դուրս և դուք իրականում չեք տեսնում ողջ պատկերը:

Տեղեկությունները, որոնք փորձում են անհարմար վիճակի մեջ դնել Եկեղեցին, հիմնականում շատ սուբյեկտիվ են և անարդար: Մենք պետք է որոնենք աղբյուրներ, որոնք ավելի օբյեկտիվորեն են նկարագրում մեր համոզմունքները և մեր պատմությունը: Որոշ վեբ կայքեր շատ վատ են տրամադրված և կարող են տեղեկությունները սենսացիոն կերպով ներկայացնել: Փնտրեք ճանաչված և հարգված պատմաբանների ներկայացրած աղբյուրները, անկախ այն բանից, թե արդյոք նրանք Եկեղեցու անդամներ են, թե՛ ոչ:

Որոշ երիտասարդներ անակնկալի են գալիս և ապշում, երբ համացանցում հանդիպում են հակամոլորմոնական նյութի, քանի որ նրանք պատրաստ չեն դիմակայելու այդ ամենին: Նրանք միգրցե բավականաչափ ժամանակ չեն տրամադրել հոգևոր բաներին, որպեսզի նախապատրաստվեն և ուժեղ մտան գալիք ցանկացած իրավիճակում: Երբ կյանքի փորձությունները գալիս են ծնկի բերելու նրանց, կարևոր է, որ նրանք անեն այն հիմնական բաները, որոնց մասին մենք միշտ խոսում ենք. շարունակել ուսումնասիրել սուրբ գրությունները և իմաստալից աղոթք ունենալ մեր Երկնային Հոր հետ: Այդ հիմնական բաները նախապատրաստում են մարդկանց ամեն տեսակ չարիքի դեմ, ներառյալ հակամոլորմոնական հոդվածները, որոնց կհանդիպենք առցանց» (*“Balancing Church History,” New Era*, June 2013, 21–22):

- Քանի որ մենք պետք է զգուշությամբ գնահատենք Եկեղեցու պատմության և ուսմունքների մասին տեղեկության աղբյուրների վստահելիությունը, ինչպե՞ս դուք կարող եք օգտագործել Երեց Սնոուի ուսմունքները, որ դրանք օգնեն ձեզ գնահատել վստահելիությունը որևէ բանի, որ դուք կարդում եք Եկեղեցու մասին:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Երեց Սնոուի ելույթի երրորդ պարբերությունը. Այնուհետև քննարկեք հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս կօգնի ձեզ Երեց Սնոուի խորհուրդը, երբ հանդիպեք տեղեկության, որը կասկածի տակ կամոնի ձեր համոզմունքները:

Մնալ հավատարիմ, երբ հարցեր առաջ կգան

Բացատրեք, որ Եկեղեցու անդամները կարող են երբեմն հարցեր ունենալ կամ նույնիսկ կասկածներ՝ Եկեղեցու վարդապետության, պատմության կամ հասարակական խնդիրների հետ կապված հարցերում: Ձեր ուսանողների հետ կիսվեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆի հետևյալ խոսքերով:



«Հարցեր ունենալը բնական բան է. ազնիվ հարցման կաղիսը հաճախ սերմ է դառնում և, աճելով, ըմբռնման մեծ կաղնու վերածվում: Կան Եկեղեցու անդամներ, որոնք ոչ մի անգամ ջանք չեն թափել լուրջ կամ զգայուն հարցերի պատասխաններ գտնելու համար: Եկեղեցու նպատակներից մեկը հավատքի սերմի սնուցումն ու մշակումն է, երբեմն նույնիսկ կասկածի և անորոշության ավազոտ հողում» («Եկեք, միացեք մեզ», *Ensign* կամ

Լիահոնա, նոյ. 2013, 23):



Յուրաքանչյուր ուսանողի տվեք «Տարբերել ճշմարտությունը կեղծիքից» թերթիկ, որը ներառում է Եկեղեցու ղեկավարների խորհուրդը նրանց համար, ովքեր ունեն հարցեր կամ կասկածներ: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ թերթիկների տեքստը և ներկայացնել սկզբունքները, որոնք կօգնեն մարդուն հավատարմորեն մոտենալ հարցերին կամ կասկածներին: Բավարար ժամանակից հետո հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես կարող է թերթիկում կարդացածն օգնել մարդուն, ով հարց կամ կասկած ունի Եկեղեցու վարդապետության, պատմության կամ հասարակական խնդիրների հետ կապված:

Դասի վերջում շեշտեք, որ չնայած կարող են լինել որոշ հարցեր, որոնց պատասխանները մենք չենք կարողանա գտնել մեր ողջ կյանքի ընթացքում, **մեր ամենամեծ հարցերի պատասխանները մենք կարող ենք գտնել, երբ մենք հնազանդվում ենք պատվիրաններին, ուսումնասիրում ենք տեղեկությունների պատշաճ աղբյուրներ՝ հատկապես ապրող մարգարեների խոսքերը, առաջնորդություն ենք փնտրում աղոթքի միջոցով և համբերություն ու հավատք ենք ցուցաբերում:**

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց ունեցած փորձառություններով, երբ զգացել են Տիրոջ օգնությունը, երբ առաջնորդվել են՝ գտնելու ճշմարտությունը և իրենց հարցերի պատասխանները:

Խրախուսեք ուսանողներին վերանայել թերթիկների տեքստը և հրավիրեք նրանց հետևել դասի ժամանակ ներկայացված խորհրդին՝ փնտրելու ուսում՝ ուսումնասիրելով և հավատքով:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 88.118–26, 91.1–6:
- Dieter F. Uchtdorf, “What Is Truth?” (Church Educational System devotional, Jan. 13, 2013), [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts).

Տարբերել ճշմարտությունը կեղծիքից

Ավետարանի բոլոր տնտեսություններում չար ուժերը հակադրվել են Աստծուն և Նրա աշխատանքին: Սակայն Աստծո աշխատանքը չի խափանվի: Այս վերջին օրերում սարից կտրվել է մի քար, և այն «կգլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը» (Վևու 65.2): Այնուամենայնիվ, քանի որ Եկեղեցու առանձին անդամներ կարող են մոլորվել, մեզանից յուրաքանչյուրը պետք է «արթուն կենա և միշտ աղոթի» (3 Նեփի 18.18):



«Այս լուսավորության դարաշրջանում, երբ ավետարանի ամբողջականությունը վերականգնվել է, դուք և ես կարիք չունենք ճամփորդելու անհայտ ծովերով և ճանապարհներով՝ ճշմարտության փնտրտուքներում: Սիրող երկնային Հայրը գծել է մեր ուղին և տվել հուսալի ուղեցույց, այն է՝ *հնազանդությունը*: ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք հնազանդ ենք Աստծո պատվիրաններին» (Թոմաս Ս. Մոնսոն, «Հնազանդությունը օրհնություններ է բերում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 89):



«Իմ սիրելի ընկերներ, խնդրում եմ առաջին հերթին ձեր կասկածները կասկածի տակ դրեք, հետո նոր ձեր հավատքը: Մենք երբեք չպիտի թույլ տանք, որ կասկածը մեզ գերի դարձնի և մեզ հետ պահի աստվածային սիրուց, խաղաղությունից և պարզանքից, որոնք ստանում ենք Տեր Հիսուս Քրիստոսի հավատքով» (Դիտեր Ֆ. Ուլստորֆ, «Եկեք, միացեք մեզ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2013, 23):



«Սատանան մեծ մոլորեցնողն է, «եղբայրների չարախօսը» [Հայտնություն ԺԲ.10], բոլոր ստերի հայրը [տես Հովհաննես Ը.44], ով մշտապես փորձում է խաբել, որ կարողանա մեզ տապալել [տես Վևու 50.3]: ...

Նույնիսկ նրանց համար, ովքեր արդեն ընդունել են ճշմարտությունը, սատանայի հիմնական ռազմավարությունը կայանում է կասկածի սերմեր տարածելու մեջ: Օրինակ, նա դրդել է Եկեղեցու շատ անդամների սայթաքել, երբ նրանք բացահայտել են Եկեղեցու մասին տեղեկություն, որը կարծես հակասել է նախապես իրենց սովորածին:

Երբ ձեզ մոտ նման պահեր են լինում, հիշեք, որ տեղեկատվության այս ժամանակաշրջանում շատերը կան, ովքեր կասկածներ են ստեղծում ցանկացած բանի և ամեն բանի վերաբերյալ, ցանկացած պահի և ամեն վայրում: ...

... Եվ լավ կլինի միշտ հիշել, որ լույս այն փաստը, որ եթե մի բան տպագրված է թերթում, հայտնվում է համացանցում, հաճախակի կրկնվում է կամ ունի հետևորդների մեծ խումբ, չի դառնում ճշմարիտ:

Երբեմն կեղծ պնդումները կամ տեղեկություններն այնպես են ներկայացվում, որ բավականին հավաստի են թվում: ...

... Այն, ինչ այժմ հակասական է թվում, կարող է լինիլ հասկանալի դառնալ, երբ մենք փնտրենք և ստանանք ավելի շատ վստահելի տեղեկություններ» (Dieter F.

Uchtdorf, "What Is Truth?" [Church Educational System devotional, Jan. 13, 2013], [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts)).



«Երբ մենք սկսում ենք չափել ժամանակակից սովորությունները և առաջարկներն ըստ Աստծո ծրագրի վերաբերյալ մեր գիտելիքների և Աստծո խոսքում տրված նախադրյալների և Նրա ապրող մարգարեների ուսմունքների, ... մենք գիտենք, որ սա ապահով հող է ստեղծում մեզ համար հավերժորեն» (Dallin H. Oaks, "As He Thinketh in His Heart" [evening with Elder Dallin H. Oaks, Feb. 8, 2013], [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts)):



«Վախի, կասկածի կամ մտահոգիչ ժամանակներում կանգնեք այն հիմքի վրա, որն արդեն ունեք, նույնիսկ, եթե այդ հիմքը սահմանափակ է: ... Երբ այդ պահերը գան ու խնդիրներ ջրի երես ելնեն, որոնց լուծումն անմիջապես չի ստացվում, *ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիքներ կգան*» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաւատում եմ, Տէր», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2013, 94):



«Մենք կարող ենք անկեղծ հետաքրքրվողին հիշեցնել, որ ինտերնետային տեղեկությունը չունի «ճշմարտության» ֆիլտր: Եկեղեցու մասին որևէ տեղեկություն, անկախ նրանից, թե որքան համոզիչ է, պարզապես ճշմարիտ չէ» (Նիլ Լ. Սնդերսեն, «Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2014, 29):



«Հոգևոր հարցերի պատասխանները տրվում են այն անհատներին, ովքեր չեն կարծրացնում իրենց սրտերը, ովքեր հարցնում են հավատքով, հավատալով, որ իրենք կստանան, և ովքեր ջանասիրաբար պահում են պատվիրանները» (Paul V. Johnson, "A Pattern for Learning Spiritual Things" [Church Educational System address to religious educators, Aug. 7, 2012], [si.lds.org](https://www.lds.org)):



«Եկեղեցու ուսումնասիրումը ...այն լքողների օգնությամբ նման է Հիսուսին հասկանալու համար Հուդայի հետ հարցազրույց անցկացնելուն» (Neal A. Maxwell, "All Hell Is Moved" [Brigham Young University devotional, Nov. 8, 1977], 3, [speeches.byu.edu](https://www.byu.edu/speeches)):

Տիրոջ ձայնը Վարդապետություն և Ուխտերում

Նախաբան

Վարդապետություն և Ուխտերը ապացույց են հանդիսանում, որ Աստված վերջին օրերում խոսում է մարգարեների հետ և Նա պատրաստում է աշխարհին Հիսուս Քրիստոսի երկրորդ Գալուստին: Երբ մենք կարդում ենք Վարդապետություն և Ուխտերում գտնվող հայտնությունները, մենք կարող ենք լսել Հիսուս

Քրիստոսի ձայնը: Երբ մենք սկսենք հասկանալ Վարդապետություն և Ուխտերի կարևորությունը, մենք կգնահատենք այդ ուսմունքները աշխարհի ամեն բարիքից առավել:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ezra Taft Benson, “The Book of Mormon and the Doctrine and Covenants,” *Ensign*, Jan. 2005, 24–28.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտերի նախաբանը

Տիրոջ ձայնը Վարդապետություն և Ուխտերում

Ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն և դասարանին խնդրեք հետևել նրան:



«Մորմոնի Գիրքը մարդկանց մոտեցնում է Քրիստոսին: Վարդապետություն և Ուխտերը մարդկանց մոտեցնում է Քրիստոսի թագավորությանը, նույնիսկ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն՝ «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցուն ողջ երկրի երեսին» [Վևու 1.30]: Ես գիտեմ դա:

Մորմոնի Գիրքը մեր կրոնի «պորտաքարն» է, իսկ Վարդապետություն և Ուխտերը գազաթի քարը՝ վերջին օրերի շարունակվող հայտնությամբ: Տերը դրել է Իր հավանության կնիքն ինչպես պորտաքարի, այնպես էլ գազաթի քարի վրա» (“The Book of Mormon and the Doctrine and Covenants,” *Ensign*, Jan. 2005, 26):

- Ի՞նչ եք գտել Վարդապետություն և Ուխտերում, որը ցույց է տալիս գրքի կարևորությունը Եկեղեցու և անհատ անդամների համար:

Դասարանին խնդրեք իրենց սուրբ գրություններում բացել Վարդապետություն և Ուխտերի նախաբանը, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերի սկզբում: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ առաջին և երրորդ պարբերությունները և խնդրեք դասարանին հետևել նրանց: Խնդրեք

դասարանին փնտրել, թե ինչով է Վարդապետություն և Ուխտերը տարբերվում մնացած սուրբ գրքերից և նշեք նախաբանի կարևորումը Տիրոջ ձայնը ունկնդրելիս: Այնուհետև հարցրեք:

- Ինչո՞վ է Վարդապետություն և Ուխտերը տարբերվում մյուս օրինակելի աշխատություններից:
- Ի՞նչ է ասվում նախաբանում «Տեր Հիսուս Քրիստոսի ձայնի» մասին: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **երբ մենք ուսումնասիրում ենք Վարդապետություն և Ուխտերը, մենք կարող ենք սովորել ճանաչել Տեր Հիսուս Քրիստոսի ձայնը**: Բացատրեք, որ «Տիրոջ ձայնը» արտահայտությանը կամ դրա այլ տարբերակի Վարդապետություն և Ուխտերում հանդիպում ենք ավելի քան 40 անգամ [օրինակ, տես ՎեՌ 1.2, 18.35–36, 76.30], «Այսպես է ասում Տերը» արտահայտությանը Վարդապետություն և Ուխտերում հանդիպում ենք ավելի քան 60 անգամ [օրինակ, տես ՎեՌ 36.1, 56.14]:) Տիրոջ ձայնը լսելը Վարդապետություն և Ուխտերում կարևոր թեմա է:

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի (1926–2004) հետևյալ խոսքերը: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն և դասարանին խնդրեք հետևել նրան:



«Եթե հարցնեն, թե որ սուրբ գրքում հնարավորություն ունենք ավելի հաճախ «լսել» Տիրոջ խոսքերը, շատերն առաջինը կմտածեն Նոր Կտակարանի մասին: Նոր Կտակարանը Մեսիայի գործերի և բազմաթիվ վարդապետությունների հրաշալի հավաքածու է: Սակայն Վարդապետություն և Ուխտերում մենք լսում ենք Տիրոջ ձայնը ճիշտ այնպես, ինչպես Տիրոջ խոսքերը: Մենք գրեթե կարող ենք «լսել» նրան խոսելիս» (“The Doctrine and Covenants: The Voice of the Lord,” *Ensign*, Dec. 1978, 4):

- Ինչպե՞ս կարող է Վարդապետություն և Ուխտերի ուսումնասիրության միջոցով Տիրոջ ձայնը լսել և ճանաչել սովորելը փոխել ձեր կյանքը:

Ուսանողներին տվեք մի քանի բույս, որպեսզի ուսումնասիրեն Վարդապետություն և Ուխտերի նախաբանի ութերորդ պարբերությունը: Խնդրեք նրանց ներկայացնել վարդապետություններ, որոնք տրված են Վարդապետություն և Ուխտերում: Բավականաբար ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Ի՞նչն է Վարդապետություն և Ուխտերը դարձնում «աշխարհի ողջ հարստություններից ավելի արժեքավոր Եկեղեցու համար»:

Կիսվեք, թե ինչ է ասել Յոթանասունի Քվորումից Երեց Սթիվեն Ե. Սնոուն վարդապետությունների մասին, որոնք գտնվում են Վարդապետություն և Ուխտերում:



«Այս ոգեշնչող և շենացնող հայտնությունների միջոցով Վարդապետություն և Ուխտերը ուսուցանում և կրկնում է կարևոր վարդապետություն: ... Երեց Ջոն Ա. Վիդթսոն (1872–1952) գրել է. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից ուսուցանված յուրաքանչյուր վարդապետություն կամ դրա վերաբերյալ որևէ բան կարելի է գտնել Վարդապետություն և Ուխտեր գրքում: Որքանով ես գիտեմ, չկա որևէ վարդապետություն, որն ուսուցանվում է Եկեղեցու կողմից, որն ինչ-որ կերպ տրված չլինի այս գրքում»: Նա ավելացրել է, որ Վարդապետություն և Ուխտերը շատ կարևոր է, քանի որ «մեր սուրբ գրքերից ոչ մեկը չի կարող նման կերպ պատասխանել Եկեղեցու բոլոր վարդապետությունների հարցումներին» [The Message of the Doctrine and Covenants (1969), 117]" ("Treasuring the Doctrine and Covenants," Ensign, Jan. 2009, 52):

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես է Վարդապետություն և Ուխտերի ուսումնասիրումը օրհնել իրենց կյանքը:

Վարդապետություն և Ուխտեր 1.1-17, 5.10

Պատմական տեղեկություններ Վարդապետություն և Ուխտերի վերաբերյալ

Բացատրեք ուսանողներին, որ Վարդապետություն և Ուխտեր 1 բաժնում տրված հայտնությունը ի սկզբանե տրվել էր Տիրոջ կողմից որպես Պատվիրանների Գրքի տիտղոսաթերթ, որը Ջոզեֆ Մմիթի հայտնությունների առաջին բանաքաղությունն էր: Հայտնությունների այս հավաքածուն, Մարգարեի շատ այլ հայտնությունների և Հավատքի վերաբերյալ քարոզների հետ միասին հետագայում հրատարակվեց որպես Վարդապետություն և Ուխտեր: Բաժին 1-ը անդրադառնում է մեր օրերում այս սուրբ գրքի անհրաժեշտությանը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1 բաժնի նախաբանը: Օգնեք ուսանողներին քննարկել բաժնի նախաբանը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ի՞նչ որոշման շուրջ համաձայնության եկան երեցների հատուկ համաժողովի ժամանակ: (Մինչ այդ պահը Ջոզեֆ Մմիթի ստացած հայտնությունները կիրատարակվեին գրքում: Հիշեցրեք ուսանողներին, որ չնայած այս գիրքն ի սկզբանե կոչվել էր Պատվիրանների Գիրք, այն հետագայում կոչվելու էր Վարդապետություն և Ուխտեր:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.1-5: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ո՞ւմ հետ է Հիսուս Քրիստոսը խոսում այս հատվածներում:
- Ինչպե՞ս կամփոփելիք այդ հատվածներում տրված Տիրոջ հիմնական ուղերձը:
- Համաձայն Տիրոջ խոսքերի, ինչպե՞ս Նա հայտնի կդարձնի իր նախազգուշացումները բոլոր ժողովուրդներին: (Ուսանողները պետք է արտահայտեն հետևյալ վարդապետությունը. **Տերն Իր նախազգուշացումները հայտնում է բոլոր ժողովուրդներին Իր ընտրյալ աշակերտների միջոցով:**

Ուսանողներից որևէ մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.12 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Համաձայն տողատակի ծանոթագրություն 12բ-ի, ինչ իրադարձություն է Տերն ուզում, որին աշխարհը նախապատրաստվի: (Ուսանողների պատասխաններից հետո դուք կարող եք խրախուսել նրանց մշտապես անդրադառնալ տողատակի ծանոթագրություններին, որպեսզի պարզաբանեն և ավելի խորացնեն սուրբ գրության տեքստի վերաբերյալ իրենց հասկացողությունը:)

Խնդրեք դասարանին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.14–16 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչպես է Տերը նկարագրում աշխարհը, որում մենք ապրում ենք: Երբ ուսանողները պատմեն, թե ինչ են գտել, խնդրեք նրանց կարդալ 17 հատվածը և բացատրել, թե ինչ արեց Տերը 14–16 հատվածներում նկարագրված խնդրին անդրադառնալու համար:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 5.10 հատվածը, մինչ դասարանը կհետևի նրան: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ենք սովորում այս հատվածից Ջոզեֆ Սմիթի եզակի կոչման մասին: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Տերը կանչել է Ջոզեֆ Սմիթին, որպեսզի Իր խոսքերը հայտնի աշխարհին:**)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Ի լրումն այն ամենի, ինչ նա արել է ... Ջոզեֆ [Սմիթը] բացի այդ ամենից մեզ թողեց աստվածային հայտնության վճռական նշանակություն ունեցող ժառանգություն և ոչ թե մեկ առանձին հայտնություն՝ առանց փաստերի և հետևանքների, ոչ թե «մեղմ մի ոգեշնչում, որ հոսում է դեպի բոլոր բարի մարդկանց միտքը» ամենուրեք, այլ հատուկ, փաստագրված, շարունակվող հրահանգներ Աստծուց: Ինչպես հակիրճ շարադրել է մի լավ ընկեր և հավատարիմ ՎՕՍ գիտնական, «Երբ Քրիստոնեության սկզբնական գաղափարները կատաղի հարձակման էին ենթարկվում Լուսավոր բանականության կողմից, Ջոզեֆ Սմիթը [հստակ և մեն-մենակ] վերադարձրեց ժամանակակից Քրիստոնեությունը իր սկզբնական վիճակին հայտնության միջոցով» [Richard L. Bushman, "A Joseph Smith for the Twenty-First Century," in *Believing History* (2004), 274] ("Prophets, Seers, and Revelators," *Ensign or Liahona*, Nov. 2004, 8):

- Ինչպե՞ս է այս դասը խորացրել Վարդապետություն և Ուխտերի նպատակի և կարևորության ձեր ըմբռնումը:
- Ինչպե՞ս է Վարդապետություն և Ուխտերը ամրացրել ձեր վկայությունը որպես Աստծո մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային կոչման վերաբերյալ:

Դասն ավարտեք հարցնելով, թե ուսանողներից ով կցանկանար կիսվել Վարդապետություն և Ուխտերում տրված վարդապետությունների, սկզբունքների և ճշմարտությունների վերաբերյալ իր վկայությամբ:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտերի նախաբանը, Վարդապետություն և Ուխտեր 1.1–39, 5.10:
- Ezra Taft Benson, “The Book of Mormon and the Doctrine and Covenants,” *Ensign*, Jan. 2005, 24–28.

Լրացուցիչ սուրբ գրություններ մեր օրերում

Նախաբան

Տերը շարունակում է աստվածային ուսուցում ապահովել մեզ համար՝ հայտնելով Իր խոսքը և Իր կամքն Իր ծառաներին Սուրբ Հոգու միջոցով: Քանի որ Աստված շարունակում է խոսել մեր ժամանակների մարգարեների հետ, կանոնական սուրբ գրությունը մնում է բաց: Մեր

օրերում տրվել են լրացուցիչ սուրբ գրություններ, ինչպիսիք են Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը և Աբրահամի գիրքը, որոնք հաստատում, պարզաբանում և մեծացնում են ավետարանի մեր ըմբռնումը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Իմ խոսքերը ... երբեք չեն դադարում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 91–94:
- “Translation and Historicity of the Book of Abraham,” Gospel Topics, lds.org/topics.
- Elizabeth Maki, “Joseph Smith’s Bible Translation: D&C 45, 76, 77, 86, 91,” Revelations in Context series, Mar. 20, 2013, history.lds.org.

Ուսուցման առաջարկներ

Վերջին Օրերի սուրբ գրությունները


Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ դպրոցում մի ընկեր անկեղծորեն հարցնում է. «Ինչո՞ւ մորմոնները, բացի Աստվածաշնչից, ունեն ուրիշ սուրբ գրություններ: Ես կարծում էի, որ Աստվածաշունչը պարունակում էր Աստծո բոլոր խոսքերը»: Խնդրեք ուսանողներին ձեռք բարձրացնել, եթե նրանց տրվել են նմանատիպ հարցեր: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես են պատասխանել այդ հարցին և ինչ են զգացել, երբ ուրիշներին վկայել են սուրբ գրությունների մասին:

Գրատախտակին գրեք *կանոնական գրքեր* բառը: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդի և Երեք Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը և հրավիրեք երկու ուսանողների հերթով կարդալ դրանք: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել *կանոնական գրքեր* բառի իմաստին այս ելույթների բովանդակության մեջ:



«Որոշ Քրիստոնյաներ՝ մեծ մասամբ Աստվածաշնչի հանդեպ իրենց անկեղծ սիրո պատճառով, հայտարարել են, որ Աստվածաշնչից բացի չի կարող լինել այլ վավերացված որևէ սուրբ գրություն: Այս ձևով կանոնական հայտնությունները փակված հայտարարելով, որոշ այլ հավատքի մեր ընկերները փակում են դուռը աստվածային խոսքի՝ Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի, Թանկագին Մարգարիտի և Աստծո օձյալ մարգարեների և առաքյալների կողմից ստացվող շարունակվող առաջնորդության առաջ»

(Ջեֆրի Ռ. Նոլլանդ, «Իմ խոսքերը ... երբեք չեն դադարում», *Ensign or Liahona*, մայիս 2008, 91):



«Քրիստոնյաների մեծ մասը հավատում են, որ Աստված փակել է սուրբ գրությունների կանոնական գրքերը՝ հեղինակություն ստացած սրբազան գրքերի հավաքածուն, Քրիստոսի մահից հետո կարճ ժամանակ անց, և որ այդ ժամանակներից հետո նմանատիպ հայտնություններ չեն տրվել: Ջոզեֆ Սմիթն ուսուցանել և ապացուցել է, որ սուրբ գրությունների կանոնական գրքերը բաց են [տես *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ*

(2007), 207]: ...

... Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Աստված կառաջնորդի Իր զավակներին՝ տալով Նոր հավելումներ սուրբ գրությունների կանոնական գրքերին: Սորմոնի Գիրքը նման մի հավելում է: Դրանց շարքին են պատկանում նաև Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը» (Dallin H. Oaks, "Fundamental to Our Faith," *Ensign*, Jan. 2011, 29):

- Ի՞նչ է նշանակում «սուրբ գրությունների կանոնական գրքեր» արտահայտությունը: (Դա «Վավերացված, հեղինակություն ստացած սրբազան գրքերի հավաքածու է: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում կանոնական գրքերը կոչվում են օրինակելի աշխատություններ» [Սուրբ գրքերի ուղեցույց, «Կանոնական գրքեր», scriptures.lds.org]:)
- Ի՞նչ է նշանակում, որ Վերջին Օրերի Սրբերը հավատում են կանոնական գրքերի բաց լինելուն: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Աստծո հեղինակավոր խոսքը չի պարունակվում միայն Աստվածաշնչում** [տես Հավատո Հանգանակ 1.9]:)
- Ի՞նչ փոփոխություն է բերում հավատքն առ այն, որ Տերը շարունակում է սուրբ գրություններ հայտնի դարձնել վերջին օրերի մարգարեներին:

Վարդապետություն և Ուխտեր 42.56, 45.60-62, 76.15-19, 93.53, 94.10

Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը

Հետևյալ ճշմարտությունը գրեք զրատախտակին.

Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը տվել է լրացուցիչ սուրբ գրություն, որը հաստատում, պարզաբանում և մեծացնում է ճշմարտության մասին մեր գիտելիքը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 35 բաժնի նախաբանը: Դասարանին հանձնարարեք հետևել և փնտրել, թե ինչ էին անում Ջոզեֆն ու Օլիվերը, երբ նրանք ստացան այս բաժնում տրված հայտնությունը:

- Ի՞նչ աշխատանքում էին ներգրավված Մարգարե Զոգեֆ Սմիթն ու Սիդնի Ռիզոնը, երբ նրանք ստացան այս հայտնությունը:

Որպեսզի կարողանաք բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում Աստվածաշնչի Զոգեֆ Սմիթի Թարգմանությունը, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ երկու պարբերությունները.

Մոտավորապես 1830 թվականի ամռանը Տերը պատվիրեց Մարգարե Զոգեֆ Սմիթին թարգմանել Աստվածաշունչը: Զոգեֆ Սմիթը Աստվածաշունչը չի թարգմանել մի լեզվից մյուսը, ոչ էլ ունեցել է աստվածաշնչյան բնագիր ձեռագրեր, որոնց վրա կարող էր աշխատել: Դրա փոխարեն Զոգեֆը կարդացել և ուսումնասիրել է հատվածներ Աստվածաշնչի Հակոբ Թագավորի Տարբերակից և հետո ուղղումներ ու լրացումներ է կատարել՝ ըստ Սուրբ Հոգու ոգեշնչման: Այսպիսով, թարգմանությունը ավելի շուտ ոգեշնչված վերանայում էր, քան սովորական թարգմանություն:

Զոգեֆ Սմիթի Թարգմանությունը ներգործություն է ունեցել Աստվածաշնչի Հակոբ Թագավորի Տարբերակի ավելի քան 3000 հատվածների վրա: Այս տարբերությունները ներառում են լրացումներ (իմաստը կամ համատեքստը պարզաբանելու կամ մարգարեական գրառումները վերականգնելու համար, ինչպես օրինակ Մովսեսի գիրքը), ջնջումներ, հատվածների տեղափոխություններ և որոշ գլուխների ամբողջական վերակառուցումներ: Զոգեֆ Սմիթի Թարգմանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Աստվածաշնչի բառարանում կամ Սուրբ գրությունների ուղեցույցում, տես «Զոգեֆ Սմիթի Թարգմանություն (ԶՍԹ)»:

Հետևյալ աղյուսակը արտագրեք գրատախտակին.

Վարդապետություն և Ուխտեր 45.60-62 Վարդապետություն և Ուխտեր 42.56, ծանոթագրություն ա Վարդապետություն և Ուխտեր 76.15-19 Վարդապետություն և Ուխտեր 93.53	Վարդապետություն և Ուխտեր 35, 76, 77, 86, 91 բաժինների նախաբանները Վարդապետություն և Ուխտեր 94.10, ծանոթագրություն բ
--	---

Դասարանը բաժանեք երկու խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք ուսումնասիրել սյունակներից մեկի նյութերը, փնտրելով տեղեկություն Աստվածաշնչի Զոգեֆ Սմիթի Թարգմանության մասին: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: Ապա տվեք հետևյալ հարցը.

- Ձեր կարծիքով, թարգմանության աշխատանքն ի՞նչ ազդեցություն է ունեցել Զոգեֆ Սմիթի հոգևոր կրթության և ավետարանի ճշմարտությունների վերականգնման վրա:

Որպեսզի օգնեք ուսանողներին գնահատել ազդեցությունը, որը Եկեղեցու վրա ունեցել է Աստվածաշնչի թարգմանության վրա կատարած Ջոզեֆ Սմիթի աշխատանքը, հրավիրեք ուսանողներին բացել «Բովանդակության ժամանակագրական ցանկը» (գտնվում է Վարդապետություն և Ուխտերի սկզբում) և բացատրեք, որ Մարգարեն թարգմանության վրա աշխատել է հիմնականում 1830 թվականի հունիսից մինչև 1833 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում: Այնուհետև հարցրեք.

- Վարդապետություն և Ուխտերի քանի՞ բաժին է հայտնությամբ տրվել 1830 թվականի հունիսից մինչև 1833 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում: (Մարգարեն ստացել է 74 հայտնություն, որոնք դարձել են Վարդապետություն և Ուխտերի մի մասը այս ժամանակահատվածում:)

Դուք կարող եք նաև նշել, որ Մովսեսի և Ջոզեֆ Սմիթ. Մատթեոս գրքերը, որոնք երկուսն էլ գտնվում են Թանկագին Մարգարիտում, նույնպես Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության մի մասն են և տրվել են այս ժամանակահատվածում: Մովսեսի գիրքը Ծննդոց գրքի առաջին ութը գլուխների Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունն է: Ջոզեֆ Սմիթը տեղեկացավ, թե որքան բան էր պակասել Աստվածաշնչից, երբ նա թարգմանեց Ենովքին վերաբերող հատվածները: Հակոբ Թագավորի Աստվածաշունչը Ենովքի մասին պարունակում է 109 բառ, իսկ Մովսեսի Գիրքը Ենովքի մասին պարունակում է 5240 բառ:

- Այս ժամանակահատվածում ստացված բազմաթիվ հայտնություններն ի՞նչ են հուշում այն դերի մասին, որը Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունն ունեցել է Վերականգնման համար:
- Երբ դուք նայում եք այս ժամանակահատվածում տրված Վարդապետություն և Ուխտերի բաժիններին, որո՞նք են ամենակարևոր վարդապետությունները, որ ստացվել են այդ ընթացքում: (Այդ ժամանակահատվածում տրված կարևոր վարդապետությունների օրինակներ կարելի է գտնել 29, 42, 45, 76, 88 և 93 բաժիններում:)

Ցուցադրեք հետևյալը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Աստվածաշնչի թարգմանությունը Մարգարեի կողմից նրա հոգևոր կրթության և ավետարանի ճշմարտությունների վերականգնվելու կարևոր մասն էր: Ստուգելով Հին և Նոր Կտակարանները՝ նա հաճախ հայտնություններ էր ստանում, որոնք պարզեցնում կամ տարածվում էին աստվածաշնչյան հատվածների վրա: Այս ձևով Մարգարեն շատ վարդապետություններ ստացավ Տիրոջից, այդ թվում նրանք, որոնք ընդգրկված են Վարդապետություն և Ուխտեր 74, 76, 77, 86 և 91 բաժիններում և մասնակիորեն, Վարդապետություն և Ուխտերի շատ այլ բաժիններում» (Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 221):

Վկայեք, որ Տերը հայտնեց Վարդապետություն և Ուխտերի նշանակալի մասը որպես Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության աշխատանքի անմիջական հետևանք: Դուք կարող եք նաև բացատրել, որ Ջոզեֆ Սմիթի Թարգմանության որոշ մասեր ավելացվել են Աստվածաշնչի Հակոբ

Թագավորի Տարբերակի 1979 թվականի ՎՕՍ հրատարակությանը՝ այս կարևոր հայտնությունները դարձնելով ավելի մատչելի՝ օրհնելու Եկեղեցու անդամների կյանքը:

Աբրահամի գիրքը

Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել Աբրահամի գրքի գլուխների նախաբանները: Դասարանի հետ հակիրճ կերպով քննարկեք Աբրահամի գրքի բովանդակությունը: Ապա բացատրեք, որ 1835 թվականի ամռանը Մայքլ Չանդլեր անունով մի մարդ Օհայոյի նահանգի Կիրթլենդ քաղաք բերեց եգիպտական մումիաներ և մի քանի պապիրուսե ձեռագրեր, որոնք պարունակում էին հնադարյան եգիպտական գրառումներ: Եկեղեցու անդամները գնեցին մումիաները և պապիրուսե ձեռագրերը: Չնայած թարգմանության կոնկրետ ձևն անհայտ է, Մարգարե Ջոզեֆ Սմիթը թարգմանեց որոշ գրառումներ՝ եգիպտական ձեռագրերը ձեռք բերելուց մի քանի ամիս հետո: 1842 թվականի սկզբին Աբրահամի գրքի մի մասը տպագրվեց Եկեղեցու ամսագրում, որը կոչվում էր *Times and Seasons*: Աբրահամի գիրքը ավելի ուշ հրատարակվեց Թանկագին Մարգարիտում:

Կիսվեք Աբրահամի գրքի ի հայտ գալու վերաբերյալ հետևյալ ամփոփումով: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչ գիտենք մենք թարգմանության գործընթացի մասին:

Աբրահամի գրքի հեղինակության վերաբերյալ հիմնական առարկությունն այն է, որ ձեռագրերը բավականաչափ հին չէին, որ գրված լինեին Աբրահամի կողմից, ով ապրել էր գրեթե 2000 տարի շուրջ Զոզեֆ Սմիթը երբեք չի հայտարարել, որ ձեռագրերը գրված են եղել անձամբ Աբրահամի կողմից կամ որ դրանք գրվել են Աբրահամի ժամանակներում: «Հնադարյան հիշատակարանները հաճախ փոխանցվում են որպես կրկնօրինակներ կամ որպես կրկնօրինակների կրկնօրինակներ: Աբրահամի հիշատակարանը միգուցե խմբագրված լինի ... ավելի ուշ շրջանի գրողների կողմից, ճիշտ ինչպես Մորմոնի Գրքի մարգարե պատմիչներ Մորմոնը և Մորոնիսն են վերանայել ավելի վաղ շրջանի մարդկանց գրառումները» (*"Translation and Historicity of the Book of Abraham," Gospel Topics, lds.org/topics*):

Թարգմանելիս Մարգարե Ջոզեֆ Սմիթը միգուցե աշխատում էր ձեռագրերի այնպիսի մասերի հետ, որոնք հետագայում ոչնչացվում էին: Այսպիսով, «Հավանաբար անհետն էլ կլինի գնահատել ձեռագրերը թարգմանելու Ջոզեֆի ունակությունը, երբ մենք այժմ ունենք միայն մի փոքրիկ հատված այն ձեռագրից, որը նա ուներ իր տրամադրության տակ» (*"Translation and Historicity of the Book of Abraham"*): Նաև հնարավոր է, որ Ջոզեֆ Սմիթի կողմից գրությունների ուշադիր քննությունը առիթ հանդիսացավ, որ նա ստանար «հայտնություն Աբրահամի կյանքի կարևոր իրադարձությունների և ուսմունքների մասին, ինչպես նա նախկինում հայտնություն էր ստացել Մովսեսի կյանքի վերաբերյալ, մինչ ուսումնասիրում էր Աստվածաշունչը» (*"Translation and Historicity of the Book of Abraham"*): Չնայած մենք հաստատ չգիտենք, թե ինչպես է Ջոզեֆ Սմիթը թարգմանել Աբրահամի գիրքը, բայց մենք իրոք գիտենք, որ թարգմանությունը կատարվել է Աստծո շնորհի և գործության միջոցով:

- Ի՞նչ օրինակներ գիտեք, թե ինչպես կարող են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով հնարավոր դարձած լրացուցիչ սուրբ գրությունները

նպաստել Իր զավակների համար նախատեսված Աստծո ծրագրի հասկացողությանը:

Դուք կարող եք վկայել, որ երբ ուսանողներն ուսումնասիրեն վարդապետորեն կարևոր Աբրահամի գիրքը, Սուրբ Հոգին կվկայի նրանց դրա կարևորության և հավաստիության մասին:

Վարդապետություն և Ուխտեր 1.38, 68.3–5

Շարունակվող հայտնությունը տրվում է ապրող մարգարեների միջոցով

Հրավիրեք ուսանողներին մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.38 հատվածը, իսկ մեկ այլ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 68.4 հատվածը: Հարցրեք դասարանին, թե ինչ են սովորում այս հատվածներից: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքը. **Երբ Տիրոջ ծառաները խոսում են Սուրբ Հոգու գործությամբ, նրանց խոսքերը հայտնում են Տիրոջ կամքը:**)

- Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել, որոնք օգնել են ձեզ զգալ երախտագիտություն, քանի որ Տերը շարունակում է հայտնություններ տալ այսօր:

Բացատրեք ուսանողներին, որ Եկեղեցում վերջին օրերի մարգարեների որոշակի հայտնություններ կանոնականացվել են (ընդունվել են որպես սուրբ գրություն) ընդհանուր համաձայնության օրենքով (տես ՎեՌ 26. 1-2): Եկեղեցու անդամներին խնդրել են աջակցել մարգարեին և առաքյալներին՝ սուրբ գրություններում հայտնություն ավելացնելով: Օրինակ, 1978 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովին Եկեղեցու անդամները հաստատեցին մարգարեին և առաքյալներին, ավելացնելով Պաշտոնական Հայտարարություն 2, ըստ որի քահանայություն շնորհվեց բոլոր արժանի տղամարդկանց, սուրբ գրությունների կանոնիկ գրքերում:

Հրավիրեք ուսանողներին դիմել իրենց կողքին նստած որևէ անձնավորության և հակիրճ կերպով քննարկել, թե ինչ կարող են ասել նրանք մեկին, ով կարծում է, թե սուրբ գրությունների կանոնական գրքերը փակ են, և մենք չենք կարող լրացուցիչ սուրբ գրություններ ստանալ Աստծուց:

Վերջում խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող են անել նրանք, որ ամրացնեն իրենց վկայությունները, որ երկինքները բաց են և որ Տերը շարունակում է հայտնել Իր խոսքերը մեր օրերում:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 1.38, 42.56, 45.60–62, 68.3–5, 76.15–19, 93.53, 94.10:
- Զեֆրի Ռ. Հոլլանդ, «Իմ խոսքերը ... երբեք չեն դադարում», *Ensign* կամ *Լիստոնա*, մայիս 2008, 91-94:

«Տեսիլքը»

Նախաբան

Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված տեսիլքը, որն այժմ գրված է Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում, մեզ հիմնական հասկացողություն է տալիս մահից հետո կյանքի, ինչպես նաև փառքի աստիճանների մասին:

Մենք նաև սովորում ենք, թե ինչ պետք է անենք, որպեսզի կրկին ապրենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ներկայությամբ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- L. Tom Perry, “The Plan of Salvation,” *Ensign or Liahona*, Nov. 2006, 69–72.
- Matthew McBride, “‘The Vision’: D&C 76,” *Revelations in Context series*, Mar. 11, 2013, history.lds.org.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 76

Մահից հետո կյանքի վերաբերյալ հիմնական հասկացողությունը

Բացատրեք, որ 1830-ականներին շատ քրիստոնյաներ երկնքի և դժոխքի վերաբերյալ ընդունում էին երկու հիմնական համոզմունքներից մեկը, որոնք երբեմն նկարագրվում էին որպես «ավանդական» և «համընդհանուր» տեսակետներ: Ըստ «ավանդական» տեսակետի պարզապես երկինքն արդարների համար էր և դժոխքը՝ անհնազանդների: Ըստ «համընդհանուր» տեսակետի Աստված հավերժորեն չէր պատժելու մեղավորներին, քանի որ բոլորն ի վերջո փրկվելու էին Աստծո թագավորությունում: Այդ ժամանակ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամները մյուս քրիստոնյաներից մի փոքր ավելին գիտեին երկնքի և դժոխքի մասին: 1832 թվականի փետրվարին Ջոզեֆ Սմիթը և Սիդնի Ռիգդոնը մի տեսիլք տեսան, որը նշանակալիորեն փոխեց Վերջին Օրերի Սրբերի հասկացողությունը և համոզմունքը մահից հետո կյանքի մասին: Այս տեսիլքը, որը տրված է Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում, ի հայտ բերեց Աստծո սիրո, ողորմածության և արդարադատության բարդ համակցությունը և Երկնային Հոր ծրագիրը ավելի պարզ տեսնելու հնարավորություն ընձեռեց: Երկար տարիներ վաղ շրջանի Եկեղեցու անդամները այս տեսիլքը պարզապես կոչում էին «Տեսիլքը»: (Տես Matthew McBride, “‘The Vision’: D&C 76,” *Revelations in Context series*, Mar. 11, 2013, history.lds.org.)

Խնդրեք որևէ ուսանողի հակիրճ նկարագրել, ինչ է տրված Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում: Ցուցադրեք Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի (1807-98) հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ես կարծում եմ, որ Վարդապետություն և Ուխտերը [պարունակում է] ամենաաստվածային հայտարարությունները, որոնք երբևէ տրվել են մարդկությանը: Հենց միայն [բաժին 76-ում գտնվող] «Տեսիլքը» ես համարում եմ մի հայտնություն, որն ավելի շատ լույս, ավելի շատ ճշմարտություն և ավելի շատ սկզբունքներ է տալիս, քան երբևէ մեր կարդացած ցանկացած այլ գրքում գտնվող որևէ հայտնություն: Այն մեզ համար հասկանալի է դարձնում մեր ներկա վիճակը. որտեղից ենք մենք գալիս, ինչու ենք մենք այստեղ, և ուր ենք մենք գնում: Ցանկացած մարդ այդ հայտնության միջոցով կարող է իմանալ, թե ինչպիսին է լինելու իր դերը և վիճակը» (*Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 120–21):

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնի նախաբանը: Մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.15-19 հատվածները:

- Ի՞նչ էին անում Ջոզեֆն ու Սիդնին, որի արդյունքում ստացան այս հայտնությունը:
- Ի՞նչ կարող ենք սովորել նրանց փորձառությունից՝ սուրբ գրություններն ուսումնասիրելու և դրանց շուրջ խորհելու կարևորության մասին: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են սուրբ գրությունների շուրջ խորհրդածելու և հայտնություն ստանալու միջև եղած կապը:)

Նշում. Շեշտեք, որ սուրբ գրությունների շուրջ խորհել սովորելը սուրբ գրությունների ուսումնասիրության արժեքավոր հմտություն է, որը Սուրբ Հոգուն հնարավորություն է տալիս ճշմարտություններ հայտնել մեզ:

Վարդապետություն և Ուխտեր 76.1-10

Խոստումներ հավատարիմներին

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.1-4 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել նրան, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են Հիսուս Քրիստոսին: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են: Բացատրեք, որ այս հատվածներում նկարագրված Փրկիչի հատկանիշները սուրբ գրությունների հղումների օրինակ են: Սուրբ գրությունների հղումը «միանման մտքերի, գաղափարների կամ հրահանգների շարք է: Սուրբ գրություններում զուգահեռների անցկացումը կարող է օգնել ուսուցիչներին և ուսանողներին նկատել հեղինակի շեշտադրած կարևոր գաղափարները» (*Gospel Teaching and Learning* [2012], 23): Նշեք, որ Վարդապետություն և Ուխտեր 76 բաժինը պարունակում է սուրբ գրությունների բազմաթիվ հղումներ:

- Հատվածներ 1-4-ում նշված Հիսուս Քրիստոսի ո՞ր հատկանիշներն են ամենափմաստալիցը ձեզ համար: Ինչո՞ւ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.5-10 հատվածները՝ փնտրելով հավատարիմներին տված Տիրոջ խոստումները: Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել 6-10

հատվածների խոստումների ցանկին: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները նշեն այս ցանկի կետերը, որպեսզի շեշտեն Տիրոջ խոստումները:

- Համաձայն հատված 5-ի, ի՞նչ պիտի անենք մենք, որպեսզի վայելենք Տիրոջ ողորմությունը, բարեգթությունը և հարգանքը:

Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ սկզբունքը այս հատվածի իրենց ուսումնասիրությունից. **Երբ մենք վախենում ենք Տիրոջից և ծառայում ենք Նրան արդարությամբ, Նա կպատվի մեզ և ողորմած կլինի մեր հանդեպ:** Հիշեցրեք ուսանողներին, որ այս համատեքստում Տիրոջից «վախենալ» նշանակում է պատվել նրան:

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել այս սկզբունքի իրենց հասկացողությունը, տվեք հետևյալ հարցերը.

- Հատվածներ 5-10-ից ձեր նշած խոստումներից ո՞րն առանձնապես դուք կցանկանայիք ստանալ: Ինչո՞ւ:
- Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է անեք դուք՝ այդ օրհնությունը ստանալու համար:


Ուսանողներին տվեք մի փոքր ժամանակ, որպեսզի խորհեն, թե ինչու արժե անընդհատ ձգտել այս օրհնություններին և գնահատել, թե ինչպես են նրանք պատվում Տիրոջը և ծառայում Նրան արդարությամբ և ճշմարտությամբ:

Ուսանողներին ցույց տվեք, որ սկսած 11 հատվածից, 76 բաժնի մնացած մասը պարունակում է Տիրոջ հայտնությունը «նրա արքայության խորհուրդների մասին», որոնք «ամեն հասկացողությունից վեր են» (հատված 114): Հայտնությունը մեր հասկացողության համար բացում է հավերժության խորհուրդները, սովորեցնելով մեզ գալիք կյանքի մասին և հայտնի դարձնելով այն, ինչը նախապես անհայտ էր:

Վարդապետություն և Ուխտեր 76.19-24

Հոր և Որդու տեսիլքը

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտեր 76 բաժինը պարունակում է բազմաթիվ տեսիլքներ: Որպեսզի օգնեք ուսանողներին ընդհանուր պատկերացում կազմել, թե Ջոզեֆ Սմիթը և Սիդնի Ռիգդոնը ի՞նչ տեսան այս տեսիլքներում, ցուցադրեք համապատասխան պատկերը կամ յուրաքանչյուր ուսանողի համար պատրաստեք մի օրինակ: Բացատրեք, որ գծապատկերի յուրաքանչյուր կետը վերաբերում է մի տեսիլքի:



Շեշտեք, որ այդ օրը Ջոզեֆ Սմիթին և Միդնի Ռիզոնին բացված տեսիլքներից մեկը Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի տեսիլքն էր։ Ցուցադրեք հետևյալ հարցերը կամ գրեք դրանք գրատախտակին։

Ի՞նչ ճշմարտություններ ենք մենք սովորում Հիսուս Քրիստոսի մասին այս հայտնությունից։

Այս ճշմարտություններից որի՞ մասին դուք կարող եք վկայել։ Ինչպե՞ս դուք գիտեք, որ դրանք ճշմարիտ են։

Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.19-24 հատվածները և խորհել, թե ինչպես իրենք կպատասխանեն գրատախտակի հարցերին։ Բավարար ժամանակ տրամադելուց հետո հրավիրեք ուսանողներին՝ կիսվել հարցերին տված իրենց պատասխաններով։ Ուսանողների պատասխանները կարող են տարբեր լինել, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են հետևյալ սկզբունքները։ **Հիսուս Քրիստոսը հարություն առած, փառավորված էակ է։ Հիսուս Քրիստոսը Հոր Միածինն է։ Հիսուս Քրիստոսը այս և այլ աշխարհների Արարիչն է։ Այս և այլ աշխարհների բնակիչները Աստծո սիրելի որդիներն ու դուստրերն են։**

Խորհեք Փրկչի վերաբերյալ ձեր վկայությամբ կիսվելու մասին։

Վարդապետություն և Ուխտեր 76.25-113

Փրկության ծրագիրը

Բացատրեք, որ 76 բաժնի 25-113 հատվածները ուսուցանում են հրաշալի ճշմարտություններ փրկության ծրագրի մասին։ Ուսանողներին հրավիրեք ընտրել այս հատվածներից մի խումբ, ինչպես տրված է գծապատկերում և արագ կարդացեք դրանք։ Ուսանողներին բաժանեք զույգերի և խնդրեք նրանց քննարկել, թե ինչ են սովորել կամ ինչ ոգեշնչող բան են գտել իրենց կարդացած հատվածներում։ Ապա դասարանով քննարկեք հետևյալ հարցը.

- Ի՞նչ հիմնական վարդապետություններ են մեզ օգնում սովորել Վարդապետություն և Ուխտեր 76 բաժինը կյանքի և մահվան մասին։

(Ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, սակայն համոզվեք, որ նրանք հասկանում են, որ **Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում մենք հիմնական հասկացողություն ենք ձեռք բերում մահից հետո կյանքի մասին և ինչ պետք է անենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ կրկին ապրելու համար:**)

Բացատրեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթին ու Սիդնի Ռիզդոնին տրված ամենակարևոր տեսիլքներից մեկը վերաբերում էր սելեստիալ արքայությանը: Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.50-53 հատվածները՝ փնտրելով սելեստիալ արքայություն մտնելու պահանջները: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն կամ համարակալեն այս պահանջներն իրենց սուրբ գրություններում: Երբ ուսանողներից մեկը կհավի իր գտած նյութով, տվեք նմանատիպ հարցեր.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ստանալ «Հիսուսի մասին վկայություն»: (Հավատք ունենալ առ Փրկիչի փրկագնող առաքելությունը և ապրել ըստ Նրա պատվիրանների:)
- Ի՞նչ է նշանակում «հաղթում են հավատքով»: (Հաղթահարել փորձությունները և մեղքերը՝ հավատալով Հիսուս Քրիստոսին և հավատարմորեն համբերել մինչև վերջ:)
- Ի՞նչ է նշանակում «կնքվում են խոստումի Սուրբ Հոգով»: (Սուրբ Հոգին, ով նաև Խոստումի Սուրբ Հոգին է, վկայում է Հորը, որ մենք պատշաճ ձևով ստացել ենք Իր ավետարանի փրկարար արարողությունները և հավատարմորեն պահել ենք մեր կապած ուխտերը:)

Ամփոփեք Վարդապետություն և Ուխտեր 76.54-70 հատվածները, բացատրելով, որ այս հատվածներում թվարկվում են բազմաթիվ օրհնություններ, որոնք կստանան սելեստիալ արքայության վեհացված բնակիչները: Ուսանողներին տվեք մի քանի բույս, որպեսզի կարդան այս հատվածները, փնտրելով խոստացված օրհնությունները կամ վիճակները, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն նրանց համար:

- Հավատարիմներին խոստացված n^o ր օրհնությունը յուրահատուկ նշանակություն ունի ձեզ համար: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս է հատված 69-ը մեզ օգնում հասկանալ Փրկչի դերը նրանց կյանքում, ովքեր կժառանգեն սելեստիալ արքայությունը: (Մեզանից յուրաքանչյուրը, որքան էլ ջանասիրաբար փորձի, կձախողվի անել ամեն անհրաժեշտ բան սելեստիալ արքայությունը ժառանգելու համար: Միայն Փրկիչի քավող զոհաբերության միջոցով մենք կարող ենք մաքրվել մեր մեղքերից և կատարյալ դառնալ:)
- Ինչպե՞ս կարող է փրկության ծրագրի վերաբերյալ Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում տրված ճշմարտությունների իմացությունը օգնել մեզ կյանքում կատարել ավելի լավ ընտրություններ:

Ցուցադրեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Առանց ավետարանի ծրագրի իմացության օրինազանցությունը թվում է բնական, անմեղ, ևույնիսկ արդարացված: Չկա ավելի մեծ պաշտպանություն չարից, քան երբ մենք գիտենք ճշմարտությունը, գիտենք ծրագիրը»: (*Our Father's Plan* [1994], 27).

- Ինչպե՞ս կարող է Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում գտնվող ճշմարտությունների վերաբերյալ գիտելիքն օգնել մեզ՝ պաշտպանվել սատանայի ազդեցությունից:
- Ինչպե՞ս է Երկնային Հոր ծրագրի վերաբերյալ գիտելիքը պաշտպանել և օրհնել ձեզ:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.114-117 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով խոստումը, որ տրվում է նրանց, ովքեր մաքրագործվում են: Հրավիրեք ուսանողներին նկարագրել այդ հատվածի խոստումը:

Ուսանողների պատասխանից հետո ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Մաիթի (1805–44) հետևյալ խոսքերը, որոնք վերաբերում են Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում տրված հայտնությանը:



«Ես կարող էի մեկնաբանել հարյուր անգամ ավելի, քան ես երբևէ իմացել էի արքայությունների փառքի մասին, որոնք հայտնի դարձվեցին ինձ տեսիլքում, եթե ինձ թույլ տրվեր, և եթե մարդիկ պատրաստ լինեին ստանալու դրանք» (*History of the Church*, 5:402):

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել այն, ինչ սովորել են դասարանում, ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ անավարտ արտահայտությունները.

Վարդապետություն և Ուխտեր 76 բաժինն ուսումնասիրելուց հետո.

Ես գիտեմ, որ ...

Ես կկամենայի ...

Ես կանեմ ...

Հրավիրեք ուսանողներին ավարտել այս արտահայտությունները մի թերթիկի վրա: Խրախուսեք նրանց խորհել, թե արդյոք իրենց կատարած ընտրությունները պատրաստեն իրենց սելեստիալ արքայությունը ժառանգելու համար և կօգնեն նրանց պատրաստվել մյուս օրհնությունների համար, որոնք խոստացված են Վարդապետություն և

Ուխտեր 76 բաժնում: Վկայեք այս դասի ընթացքում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 76:
- L. Tom Perry, “The Plan of Salvation,” *Ensign* or *Liahona*, Nov. 2006, 69–72.

Կիրթլենդի տաճարը և քահանայության բանալիները

Նախաբան

Գրեթե երեք տարիների պայքարից և ֆինանսական զոհաբերությունից հետո Կիրթլենդի Տաճարը նվիրագործվեց 1836 թվականի մարտի 27-ին: Նվիրագործումն ուղեկցվեց հրաշալի իրադարձություններով, և մեկ շաբաթ անց երկնային

սուրհանդակները վերականգնեցին քահանայության բանալիները Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Այս բանալիները Եկեղեցու տարբերակիչ առանձնահատկությունն է և օրհնել է միլիոնավոր մարդկանց, ովքեր հավաքվել են Եկեղեցում:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Jeffrey R. Holland, “Our Most Distinguishing Feature,” *Ensign or Liahona*, May 2005, 43–45.
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Պատվավոր անուն և դիրք ունենալ», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2009, 97–100:
- “Glorious Days in Kirtland, 1834–1836,” chapter 13 in *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2003), 153–68.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 109.1-28

Սրբերը զոհաբերություններ կատարեցին Կիրթլենդի Տաճարը կառուցելու համար

Ուսանողներին ցույց տվեք Կիրթլենդի Տաճարի նկար (տես *Ավետարանի նկարների գիրք* [2009], հ. 117, տես նաև LDS.org): Բացատրեք, որ Կիրթլենդի Տաճարը կառուցելու համար Սրբերը աշխատեցին և զոհաբերություններ կատարեցին գրեթե երեք տարի: Այդ ընթացքում նրանք եղան Տիրոջ խոստումի իրականացման վկան, որ եթե նրանք պահեին Նրա պատվիրանները, «այն կառուցելու զորություն» կունենային (ՎեՌ 95.11): Մոտավորապես 1000 մարդ էր մասնակցում տաճարի նվիրագործմանը, որը տեղի էր ունեցավ 1836 թվականի մարտի 27-ին: Նվիրագործման աղոթքը, որը Ջոզեֆ Սմիթը ստացել էր հայտնությամբ, տրված է Վարդապետություն և Ուխտեր 109 բաժնում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 109.1-5 հատվածները: Դասարանին խրախուսեք հետևել, ուշադրություն դարձնելով հատկապես այն արտահայտություններին, որոնք նկարագրում են Սրբերի կատարած

զոհաբերությունները տաճարը կառուցելու համար: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ բառեր էր օգտագործում Ջոզեֆ Սմիթը Սրբերի զոհաբերությունները նկարագրելու համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ Սրբերի կատարած զոհաբերությունները, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ ամփոփումը.

1833 թվականի հունիսից մինչև 1836 թվականի մարտ ամիսը տղամարդիկ և կանայք կողք կողքի աշխատում էին, որպեսզի կառուցեն և ավարտին հասցնեն Տիրոջ տան աշխատանքները: Ոմանք կատարում էին որմնադրի աշխատանքը, մյուսները բերում էին քարերը, մյուսները թել էին մանում և հագուստ գործում աշխատողների համար, իսկ ոմանք աշխատում էին Տիրոջ տան վարագույրների վրա: Այս ամենը նրանք անում էին, «որ Մարդու Որդին մի տեղ ունենա՝ հայտնվելու իր ժողովրդին» (Վևու 109.5): Որոշ Վերջին Օրերի Սրբեր՝ ինչպես Ջոն Թանները, տվեցին իրենց ունեցվածքի մեծ մասը տաճարի կառուցման համար: Ընդհանուր առմամբ տաճարի կառուցումը միգրացիոն պահանջել է 40000 ԱՄՆ դոլար՝ շատ մեծ գումար այդ ժամանակների համար: Անկախ գումարից և զոհաբերությունից Սրբերը հավատարիմ էին իրենց աշխատանքներում՝ հնազանդվելու Տիրոջ պատվիրաններին (տես Վևու 95.11): Կիրթլենդի Տաճարը սիրո աշխատանք էր և հնազանդության, զոհաբերության և հավատքի փորձառություն:

- Ի՞նչ զոհաբերություններ ենք մենք պարտավորվում կատարել այսօր, որպեսզի վայելենք տաճարի օրհնությունները:
- Ի՞նչ օրհնություններ են տրվում մեզ մեր կյանքում, երբ մենք զոհաբերություններ ենք կատարում Տիրոջ գործը կատարելու համար:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, ցուցադրեք Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահությունից Քույր Զերոլ Բ. Թոմասի հետևյալ խոսքերը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ միտքը:



© Busath.com

May 2001, 64):

«Ջոհաբերությունը հրաշալի սկզբունք է: Երբ մենք հոժար ենք տալու մեր ժամանակը, տաղանդները և մեր ողջ ունեցվածքը, այն դառնում է մեր երկրպագության ամենաճշմարիտ ձևերից մեկը: Այն կարող է մեր մեջ զարգացնել մեծ սեր միմյանց հանդեպ և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ջոհաբերության միջոցով մեր սրտերը կարող են փոխվել. մենք ավելի ենք մոտենում Հոգուն և աշխարհի բաների հանդեպ մեր ցանկությունները պակասում են» («Sacrifice: An Eternal Investment,” *Ensign*,

Ուսանողներին հրավիրեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 109.12-13 և 20-21 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչպես է այս աղոթքում նշվում տաճարի սուրբ էությունը: Ուսանողներին խնդրեք կիսվել, թե այս հատվածներում ինչը տպավորվեց նրանց մեջ:

Ասեք ուսանողներին, որ նվիրագործման աղոթքում Ջոզեֆ Սմիթը աղերսում էր Տիրոջից առանձնահատուկ օրհնություններ: Խնդրեք մի

քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 109.12-15, 22-28 հատվածները: Դասարանին խրախուսեք հետևել և փնտրել օրհնություններ, որոնք կտրվեն նրանց, ովքեր արժանի կերպով երկրպագում են տաճարում: Դուք կարող եք խորհուրդ տալ, որ նրանք ընդգծեն կարևոր բառերը և արտահայտությունները, որոնք մեծ տպավորություն են գործում նրանց վրա: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ձեր նշած օրհնություններից ո՞րն ունի ամենամեծ նշանակությունը ձեզ համար: Ինչո՞ւ:
- Ի՞նչ վարդապետություն կամ սկզբունք կարող ենք սովորել այս հատվածներից: (Համոզվեք, որ ուսանողները ներկայացնում են հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հավատարմորեն երկրպագում ենք տաճարում, մենք կարող ենք ստանալ ավելի մեծ պաշտպանություն և զորություն աշխարհի ամբարշտության դեմ:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Խնդրում եմ, [Վարդապետություն և Ուխտեր 109.24-28] հատվածները դիտարկեք՝ հաշվի առնելով, որ ներկայումս մոլեգնում է հակառակորդը և ... Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու պատրաստակամության և սուրբ տաճարում պատվավոր անուն և դիրք ունեցողներին խոստացված պաշտպանության օրհնության մասին: Իհարկե, ուխտի այս օրհնությունները բոլոր սերունդների և ողջ հավերժության համար է: Ես կոչ եմ անում ձեզ մշտապես ուսումնասիրել և աղոթքով խորհել, թե ինչպես են այս սուրբ գրություններն առնչվում ձեր կյանքին և ձեր ընտանիքին:

Մենք չպետք է զարմանանք, երբ սատանան ջանում է խանգարել կամ վարկաբեկել տաճարային երկրպագությունը և աշխատանքը: Դեռ արհամարհում է Տիրոջ տան մաքրությունն ու զորությունը: Տաճարային ծեսերի և ուխտերի միջոցով յուրաքանչյուրիս համար մատչելի պաշտպանությունը մեծ խոչընդոտ է հանդիսանում Լյուցիֆերի չար ծրագրերի համար» («Պատվավոր անուն և դիրք ունենալ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2009, 99):

- Ինչպե՞ս է մեծացել ձեր հոգևոր զորությունը տաճարային երկրպագության արդյունքում:

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են իրենք անել՝ ավելի շատ օրհնություններ ստանալու համար, որոնք խոստացված են նրանց, ովքեր հավատարմորեն երկրպագում են տաճարում: Հիշեցրեք ուսանողներին, որ երբ նրանք խորհեն սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի շուրջ, նրանց սրտերը և մտքերը ավելի կբացվեն Տիրոջ ոգեշնչման համար:

Վարդապետություն և Ուխտեր 110

Հիսուս Քրիստոսը, Մովսեսը, Եղիան և Եղիասը հայտնվեցին Կիրթլենդի Տաճարում

Բացատրեք, որ Կիրթլենդի Տաճարը կառուցելիս Սրբերի զոհաբերությունների համար նվիրագործման օրերին Աստված պարզևատրեց նրանց հոգևոր հայտնությունների զեղումով: Եթե ժամանակը թույլ է տալիս, հակիրճ կերպով կիսվեք գլուխ 13-ում գտնվող մի քանի պատմություններով («Փառահեղ օրեր Կիրթլենդում, 1834–36 թվականներ»), որոնք գտնվում են *Եկեղեցու պատմությունը ժամանակների լրության շրջանում ուսանողների ձեռնարկում*, 2-րդ մաս: (Եկեղեցու Կրթական Համակարգի ձեռնարկ, 2003), հատկապես «Պենտեկոստական շրջան» (էջ 164–67) վերնագրով մասում: Ասեք ուսանողներին, որ հավանաբար ամենակարևոր իրադարձությունը տեղի է ունեցել 1836 թվականի ապրիլի 3-ին՝ տաճարի նվիրագործումից մեկ շաբաթ անց:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 110 բաժնի նախաբանը և խնդրեք դասարանին հետևել նրան: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ո՞ւմ էր տրվել այս տեսիլքը: Ի՞նչ էին անում Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին նախքան այս տեսիլքի հայտնվելը:

Բացատրեք ուսանողներին, որ Վարդապետություն և Ուխտերի առաջին տասը հատվածներում նկարագրվում է փառահեղ տեսիլք, որը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերին տվեց Փրկիչը՝ հայտնվելով նրանց՝ հայտարարելու, որ ընդունում է Կիրթլենդի Տաճարը: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ այս հատվածները, ուշադրություն դարձնելով Փրկչի և տաճարի վերաբերյալ կարևոր ճշմարտություններին: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո հարցրեք.

- Այս հատվածներում ի՞նչն է նշանակալից ձեզ համար: Ինչո՞ւ:
- Համաձայն հատված 6-ի, Փրկիչը հայտարարել է. «Թող իմ ողջ ժողովրդի սիրտը ցնծա»: Ձեր կարծիքով, այդ ժամանակ Սրբերն ի՞նչ պատճառ ունեին ցնծալու:

Բացատրեք, որ Փրկչի տեսիլքի ավարտին հաջորդեցին մի շարք տեսիլքներ: Այդ տեսիլքներում Մովսեսը, Եղիասը և Եղիան հերթով հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերին:

Գրատախտակին գրեք հետևյալը.

Մովսես. Վարդապետություն և Ուխտեր 110.11

Եղիաս. Վարդապետություն և Ուխտեր 110.12

Եղիա. Վարդապետություն և Ուխտեր 110.13-15

Դասարանը բաժանեք երեք խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք գրատախտակին գրված անուններից մեկը: Հրավիրեք ուսանողներին

ուսումնասիրել սուրբ գրությունների համապատասխան հատվածները, որպեսզի սովորեն քահանայության հատուկ բանալիների մասին, որոնք վերականգնվեցին: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին հրավիրեք կիսվել իրենց գտած նյութով:

Հետևյալ բացատրությունները ուսանողներին կարող են ավելի խորը հասկացողություն տալ իրենց կարդացածի վերաբերյալ: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ յուրաքանչյուր հայտարարությունը այն բանից հետո, երբ դուք կքննարկեք սուրբ գրության համապատասխան հատվածը.

Մովսես. Իսրայելի հավաքման բանալիներն իշխանություն են տալիս՝ կազմակերպելու ավետարանի քարոզումը աշխարհի չորս անկյուններում: «Պատշաճ էր, որ Մովսեսը, ով նախ առաջնորդել էր Աստծո ժողովրդին իրենց ժառանգության հողը, լինել այն անձը, ով պետք է հանձնել Իսրայելը հավաքելու բանալիները վերականգնված Եկեղեցուն» (Russell M. Nelson, "The Gathering of Scattered Israel," *Ensign* or *Liahona*, Nov. 2006, 82, footnote 28):

Եղիաս. «Եղիաս կոչված մարդը մահկանացու կյանքում, ըստ երևույթին, ապրել է Աբրահամի օրոք, ով հանձնեց Աբրահամի օրերի ավետարանը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Կիրթլենդի (Օհայո) Տաճարում 1836 թվականի ապրիլի 3-ին» (Աստվածաշնչի բառարան, «Եղիաս»): «Եղիասը ետ բերեց «Աբրահամի ավետարանը»՝ Աբրահամի մեծ ուխտը, որով հավատարիմները ստանում են հավերժական զարգացման խոստումները, խոստումներ, որ սելենտիալ ամուսնության շնորհիվ նրանց հավերժական սերունդը կլինի ծովի ավազի կամ երկնքի աստղերի չափ» (Bruce R. McConkie, "The Keys of the Kingdom," *Ensign*, May 1983, 22):

Եղիա. «Եղիային շնորհված այս կնքման գործությունը այն գործությունն է, որը կապում է ամուսիններին և կանանց, երեխաներին և ծնողներին՝ ժամանակի և հավերժության համար: Դա կապող գործությունն է, որը գոյություն ունի Ավետարանի յուրաքանչյուր արարողության մեջ: ... Այս գործությամբ է, որ կապվում կամ կնքվում են փրկությանը վերաբերող բոլոր արարողությունները, և Եղիայի առաքելությունն էր գալ և վերականգնել այն» (Joseph Fielding Smith, *Elijah the Prophet and His Mission* [1957], 5):

Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 110.16 հատվածը և խնդրեք դասարանին հետևել: Ուսանողներին խնդրեք ներկայացնել, թե այդ ժամանակ ինչ հանձնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին («այս տնտեսության բանալիները»): Ապա հարցրեք հետևյալը.

- Համաձայն հատված 16-ի, ի՞նչ կարող ենք մենք իմանալ շնորհիվ այն բանի, որ այս բանալիները վերականգնվել են: (Երկրորդ գալուստը մոտ է:)
- Հաշվի առնելով հատված 16-ը, Մովսեսի, Եղիասի և Եղիայի վերականգնած բանալիները ինչո՞ւ պետք է վերականգնվեին նախքան «Տիրոջ մեծ և ահեղ օրը»:
- Ինչպե՞ս եք դուք օրհնվել քահանայության այս բանալիների վերականգնումով: (Ուսանողների պատասխաններից հետո ամփոփեք այս բանալիների վերականգնման կարևորությունը, նշելով այս սկզբունքը. **Միախոնարական աշխատանքի բանալիները, հավերժական ընտանիքները և տաճարային աշխատանքը օգնում են**

**մեզ և աշխարհին՝ նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ
Գալուստին:)**

Յուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ.
Հոլլանդի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն
կարդալ այն.



«Աստծո քահանայությունը իր բանալիներով, իր արարողություններով, իր
աստվածային ծագումով և այն, ինչ կապված է երկրի վրա, երկնքում
կապելու կարողությամբ, Եկեղեցու համար նույնքան *կարևոր* է, որքան և
եզակի և ... առանց դրա չէր լինի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցն» ("Our Most Distinguishing Feature," *Ensign or Liahona*, May
2005, 43):

Կիսվեք, թե ինչպես է օրհնվել ձեր կյանքը շնորհիվ այն բանի, որ այս
բանալիները վերականգնվել են: Վկայեք, որ քահանայության
բանալիները Եկեղեցու տարբերակիչ առանձնահատկությունն են. դրանք
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին առանձնացնում են
երկրի վրա գոյություն ունեցող մնացած բոլոր եկեղեցիներից:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 109.1–28, 110.1–16:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Պատվավոր անուն և դիրք ունենալ», *Ensign* կամ
Liahona, մայիս 2009, 97–100:

Ուժեղ մնալ հալածանքի մեջ

Նախաբան

1837 և 1838 թվականների ընթացքում թերություն գտնելու, հակառակության և ուրացության ոգին էր տարածվել Կիրթլենդի՝ Օհայո և Կյուսասային Միսսուրիի Եկեղեցու որոշ ղեկավարների և անդամների շրջանում: Խնդիրներն ավելի բարդացան, երբ որոշ մարդիկ

բացահայտ կերպով սկսեցին հակադրվել Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Վաղ շրջանի Սրբերի փորձառությունից մենք կարող ենք սովորել, որ երբ հանդիպում ենք հալածանքի, մենք ստանում ենք հոգևոր ուժ, երբ արդար ենք ապրում և աջակցում ենք Տիրոջ ծառաներին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- «Ջգուշացեք ուրացության դառն պտուղներից», գլուխ 27, *Եկեղեցու Նախագահների ուսմունքները*. Ջոզեֆ Սմիթ (2007), 337–48:
- Jeffrey R. Holland, “Lessons from Liberty Jail” (Church Educational System fireside, Sept. 7, 2008), [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts).
- Նիլ Լ. Անդերսեն, «Ձեր հավատքի փորձությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2012, 39–42:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 112.10-15

Ուրացությունը Կիրթլենդում՝ Օհայո

Հետևյալ բառերը գրեք գրատախտակին. *բարկացած, վիրավորված, նախանձ*: Հրավիրեք ուսանողներին մտածել այնպիսի ժամանակների մասին, երբ նրանք ունեցել են այդպիսի զգացողություններ:

Ցուցադրեք հետևյալ բնորոշումը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Խնդրեք ուսանողներին ներկայացնել իրավիճակը, որը Թոմաս Բ. Մարշին ստիպեց ունենալ այն զգացողությունները, որոնք գրված են գրատախտակին:

1835 թվականին՝ որպես Առաքյալ կանչվելուց կարճ ժամանակ անց, Թոմաս Բ. Մարշը նշանակվեց Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ: 1837 թվականի գարնանը Նախագահ Մարշն իմացավ, որ Տասներկու Առաքյալներից մեկը՝ Երեց Փարլի Պ. Պրատը, պատրաստվում էր մեկնել Անգլիա՝ ծառայելու միսիայում՝ առանց Նախագահ Մարշի հրահանգի: Նախագահ Մարշը, ով Միսսուրիում էր, գրեց Երեց Պրատին և Տասներկուսի Քվորումի մյուս անդամներին և հրավիրեց նրանց հանդիպել իր հետ 1837 թվականի հուլիսի 24-ին Կիրթլենդում՝ Օհայո, որպեսզի նրանք կարողանային միասին ծրագրեր կազմել իրենց միսիաների վերաբերյալ: Այնուամենայնիվ, այդ հանդիպումից մեկ ամիս առաջ Տասներկուսի Քվորումի երկու այլ անդամներ՝ Երեցներ Հեբեր Ս. Քիմբալը և Օրսոն Հայդը, մեկնեցին Անգլիա՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթից

միսիայի կանչ ստանալուց հետո: Նախագահ Մարշը հավանաբար զայրացած էր, որ Տասներկուսի անդամները շարունակում էին քարոզել ավետարանը Անգլիայում՝ առանց իր մասնակցության:

- Այս իրավիճակում ի՞նչ կարող էր անել Նախագահ Մարշը, որպեսզի խուսափեր գրատախտակին նշված զգացողություններից:
- Ի՞նչ վտանգներ կարող են առաջ գալ, երբ թույլ ենք տալիս, որ նման զգացողություններն իշխեն մեր մտքերի և գործողությունների վրա: (Նշեք, որ նմանատիպ զգացողություններն անարգական են Սուրբ Հոգու համար և հաճախ տանում են դեպի ավելի լուրջ մեղքի:)

Խնդրեք որևէ ուսանողի շարունակել՝ կարդալով հետևյալը.

Նախագահ Մարշը իր մտահոգություններով կիսվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ և փնտրեց նրա խորհուրդը: Ի պատասխան՝ Տերը հայտնություն տվեց, որը գրված է Վարդապետություն և Ուխտեր 112-ում:

1837 թվականի հուլիսին, երբ Տերը տվեց այս հայտնությունը, Եկեղեցում տիրում էր պառակտվածությունը, հակառակությունը և ուրացությունը: Հպարտությունը և ազահոությունը Եկեղեցու որոշ անդամների ստիպեցին բացելիքաց քննադատել Մարգարե Ջոզեֆ Սմիթին և կասկածի տակ առնել նրա իշխանությունը: Եկեղեցու որոշ անդամներ, ինչպես նաև Տասներկու Առաքյալների Քվորումի որոշ անդամներ նույնիսկ փորձեցին հեռացնել Ջոզեֆ Սմիթին Եկեղեցու Նախագահի պաշտոնից:

- Ի՞նչը ստիպեց Եկեղեցու որոշ անդամների՝ անտեսել ճշմարտության վերաբերյալ իրենց վկայությունները և բացահայտ կերպով դեմ դուրս գալ Մարգարե Ջոզեֆ Սմիթին:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 112.10-12, 15 հատվածները, փնտրելով խորհուրդը, որ Տերը տվեց Նախագահ Մարշին և Տասներկուսի Քվորումի մյուս անդամներին, որը կարող է օգնել Եկեղեցու անդամներին խուսափել իրենց ղեկավարների վերաբերյալ քննադատությունից:

Խնդրեք ուսանողներին զեկուցել իրենց գտած նյութը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարող է այս հատվածների խորհուրդն օգնել Եկեղեցու անդամներին խուսափել Եկեղեցու ղեկավարների վերաբերյալ քննադատությունից: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքները. **Եթե մենք խոնարհ ենք, Տերը կառաջնորդի մեզ և կպատասխանի մեր աղոթքներին: Տերը պահանջում է, որ մենք աջակցենք այն ղեկավարներին, ովքեր կրում են Եկեղեցում նախագահելու բանալիները:** Կարող եք առաջարկել, որ ուսանողները հատված 15-ը համեմատեն Վարդապետություն և Ուխտեր 84.35–38 հատվածների հետ: Դուք կարող եք նաև նշել, որ Տասներկուսի Քվորումի անդամներին խրատելու խորհուրդը տրվել էր Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահին և չի վերաբերում Եկեղեցու առանձին անդամներին:)



Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք թերթիկի մեկական օրինակ, որը գտնվում է այս դասի վերջում: Խորհեք դասարանը փոքր խմբերի բաժանելու և յուրաքանչյուր խմբին «Ուրացությունը Կիրթնելու» Եկեղեցու ղեկավարներին հավատարմորեն հետևելու կարիքը» վերնագրով բաժինը կարդալու հրավերի մասին: Ուսանողներին խնդրեք իրենց խմբերում քննարկել բաժնի վերջում տրված հարցերը:

Դասի այս մասը դուք կարող եք ավարտել՝ ցուցադրելով և քննարկելով Առաջին Նախագահությունից Նախագահ Հեբեր Մ. Քլիմբալի (1801–68) հետևյալ մեջբերումը.



«Ես ձեզ մի բանալի կտամ, որը Եղբայր Ջոզեֆ Սմիթն էր սովորաբար տալիս Նավու քաղաքում: Նա ասաց, որ ուրացության հենց այս քայլը սկսվում է Եկեղեցու ղեկավարների և արքայության հանդեպ վստահությունը կորցնելուց, և երբ տեսնում եք այս ոգին, դուք կարող եք իմանալ, որ այն դրա տիրոջը կտանի դեպի ուրացության ճանապարհը» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 339):

Մարգարեին և Եկեղեցու այլ ղեկավարներին հավատարմորեն հետևելու կարևորությունը շեշտելու համար կարդացեք Բրիգամ Յանգի (1801–77) կյանքի հետևյալ փորձառությունը, ով այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր.



«Կիրթնելու Նախագահ Բրիգամ Յանգը հանդիպեց մի խումբ ուրացյալների, ովքեր դավեր էին Նյուքում Մարգարե Ջոզեֆ Սմիթի դեմ հենց տաճարի պատերի ներսում: Նա հայտարարեց. «Ես կանգնեցի և պարզ ու կոպիտ ձևով ասացի նրանց, որ Ջոզեֆը Մարգարե էր, և ես գիտեի դա, և նրանք կարող էին վատաբանել ու չարախոսել նրա մասին՝ որքան ուզեին. նրանք չէին կարողանա կործանել Աստծո Մարգարեի աշխատանքը, նրանք կարող էին կործանել միայն իրենց իսկ իշխանությունը, կտրել շղթան, որը կապում էր նրանց՝ Մարգարեի և Աստծո հետ ու խորտակվել դժոխքում» (Teachings of Presidents of the Church: Brigham Young [1997], 79):

Վարդապետություն և Ուխտեր 121.1–10, 16–17, 122.1–9

Հալածանք Հյուսիսային Միսսուրիում

Խորհեք ուսանողներին փոքր խմբերով պահելու և յուրաքանչյուր խմբին թերթիկի «Հալածանք Հյուսիսային Միսսուրիում. սովորել հալածանքներին դիմանալ պատվով» վերնագրով երկրորդ բաժինը կարդալու հրավերի մասին: Բացատրեք, որ այս բաժնում նկարագրվում են որոշ գործողություններ, որոնք ստիպեցին Սրբերին հեռանալ հյուսիսային Միսսուրիից և Մարգարեն ազատագրված ենթարկվեց Լիբերթի բանտում: Ուսանողներին խնդրեք իրենց խմբերում քննարկել այս բաժնի վերջում տրված հարցերը:

Երբ ուսանողները լրացնեն թերթիկները, բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտեր 121-23 բաժինները պարունակում են

հատվածներ այն նամակից, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրել էր Սրբերին՝ Լիբերթի բանտում գտնվելու վերջին օրերին:

Ուսանողներին խնդրեք հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 121.1-6 հատվածները: Հանձնարարեք ուսանողներին գտնել հարցերը, որոնք Մարգարեն ուղղել էր Տիրոջը:

- Ի՞նչ հարցեր գտաք դուք:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 121.7-10, 16-17, 122.7-9 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել և մտածել այն մասին, թե ինչպես են Ջոզեֆ Սմիթի աղերսանքներին տրված Տիրոջ պատասխաններն ամրացրել Ջոզեֆին՝ դիմակայելու իր թշնամիների կողմից շարունակվող հալածանքներին:

Խնդրեք ուսանողներին շարադրել վարդապետություններ ու սկզբունքներ, որոնք սովորել են իրենց կարդացած հատվածներից: (Հնարավոր պատասխաններ. **Եթե մենք պատվով տանենք հալածանքը մահկանացու կյանքում, Աստված կօրհնի մեզ այժմ և հավերժության մեջ: Նրանք, ովքեր մեղադրում են Տիրոջ ծառաներին, մեղքի ծառաներ են: Մենք կարող ենք ուժեղանալ մեր փորձությունների մեջ, երբ մեր հույսը դնենք Փրկիչի Քավության վրա և հիշենք Նրա հավատարմորեն համբերելու օրինակը:)**

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ըստ սահմանման, փորձությունները փորձող կլինեն: Կլինի ցավ, շփոթություն, անքուն գիշերներ, արցունքներից թրջված բարձեր: Բայց մեր փորձությունները չպետք է հոգեպես մահացու լինեն: Դրանք չպիտի հեռացնեն մեզ մեր ուխտերից կամ Աստծո տնից: ...

Թե՛՛ կրակի պես, որը երկաթը պողպատի է վերածում, եթե հավատարիմ մնանք *մեր* հավատքի բոլորքված փորձության մեջ, մենք հոգևորապես կիզկվենք և կամրանանք» («Ձեր հավատքի փորձությունը», *Ensign* կամ *Լիսինաս*, նոյ. 2012, 41-42):

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ են իրենք արել կամ կանեն, որպեսզի հիշեն, որ Աստված կարող է ամրացնել նրանց, երբ նրանք հանդիպում են իրենց հավատքի փորձությանը կամ հալածանքի: Ուսանողներին ժամանակ տրամադրեք, որպեսզի կիսվեն իրենց փորձառություններով կամ մտքերով՝ դժվար պահերին Աստծուն ապավինելու վերաբերյալ:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 112.10-15, 121.1-10, 16-17, 122.1-9:
- Նիլ Լ. Անդերսեն, «Ձեր հավատքի փորձությունը», *Ensign* կամ *Լիսինաս*, նոյ. 2012, 39-42:

Ուժեղ մնալ հալածանքի մեջ

Ուրացությունը Կիրթլենդում. Եկեղեցու ղեկավարներին հավատարմորեն հետևելու կարիքը

1837 թվականին Օհայո նահանգի Կիրթլենդ քաղաքի Սրբերը ունեցան որոշ ֆինանսական խնդիրներ: Որպեսզի օգնեն Սրբերին ավելի ինքնուրույն լինել իրենց ֆինանսական հարցերում, Ջոզեֆ Սմիթը և Եկեղեցու այլ ղեկավարներ հիմնեցին բանկի նման մի ընկերություն և կոչեցին այն Կիրթլենդի Ապահովագրական Միություն: Այս ժամանակահատվածում լայն տարածում գտած տնտեսական ճգնաժամի հետևանքով շատ բանկեր փակվեցին ողջ Միացյալ Նահանգներով մեկ: 1837 թվականի աշնանը Կիրթլենդի Ապահովագրական Միությունը նույնպես փակվեց: Երկու հարյուր ավանդատուներ բանկում կորցրեցին գրեթե ամեն ինչ. Ջոզեֆ Սմիթը կրեց ամենամեծ վնասը: Չնայած Կիրթլենդի Ապահովագրական Միությունը չէր ֆինանսավորվում Եկեղեցու կողմից, որոշ Սրբեր այն համարում էին Եկեղեցու բանկ կամ Մարգարեի բանկ և իրենց ֆինանսական խնդիրների համար մեղադրում էին Ջոզեֆ Սմիթին: Ոմանք նույնիսկ սկսեցին կոչել նրան ընկած մարգարե: Սակայն, չնայած բանկը փակվեց, շատերը, ովքեր գումար էին կորցրել, շարունակեցին հավատալ և հավատարիմ մնալ Մարգարեին:

Ուրացության և թերությունների գտնելու ոգին սկսեց տարածվել Սրբերից շատերի մեջ: Մինչև 1838 թվականի հունիսը մոտավորապես 200 - 300 ուրացյալներ հեռացան Եկեղեցուց՝ ներառյալ չորս Առաքյալներ, Մորմոնի Գրքի Երեք Վկաները և Առաջին Նախագահության անդամներից մեկը: Այնուամենայնիվ, Սրբերի մեծամասնությունը փորձության այս պահին արձագանքեցին հավատքով՝ ճիշտ ինչպես Բրիգամ Յանգն արեց: Տերն ամրացրեց նրանց, և նրանք հավատարիմ մնացին իրենց վկայություններին: Նրանցից մի քանիսը, ովքեր հեռացել էին Եկեղեցուց ուրացության այս ժամանակահատվածում, ավելի ուշ վերադարձան և պահանջեցին, որ իրենք կրկին միանային Տիրոջ Եկեղեցուն: Նրանց մեջ էին Օլիվեր Զաուդերին, Մարտին Հարրիսը, Լյուք Ջոնսոնը և Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը:

Կիրթլենդի այս պայքարի ընթացքում մի քանի ուրացյալներ փորձեցին սպանել Ջոզեֆ Սմիթին: Նախագգուշացվելով Չոգու կողմից՝ նա և Սիդնի Ռիգդոնը հեռացան 1838 թվականի հունվարի 12-ի գիշերը: Օրեր շարունակ նրանք հետապնդվեցին իրենց թշնամիների կողմից, սակայն Տերը պաշտպանեց նրանց: Իրենց ընտանիքների հետ նրանք ժամանեցին Ֆար Վեստ՝ Միսսուրի, 1838 թվականի մարտի 14-ին:

Խմբով քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս իրադարձություններից այն մասին, թե ինչպես արձագանքել հալածանքին մեր կյանքում: Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս իրադարձություններից այն մասին, թե ինչպես արձագանքել Եկեղեցու դեմ ուղղված հալածանքին:
- Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի հավատարիմ մնանք Եկեղեցու ղեկավարներին, չնայած կարող ենք լսել, թե ինչպես են ուրիշները քննադատում նրանց:
- Ինչպե՞ս եք դուք օրինվել մարգարեին հետևելու արդյունքում:

Հալածանք Հյուսիսային Միսսուրիում. սովորել պատվով դիմանալ հալածանքներին

1837 և 1838 թվականներին Եկեղեցու որոշ դժգոհ և հեռացված անդամներ, ովքեր ապրում էին Սրբերի մեջ Ֆար Վեստում, սկսեցին դատական գործ հարուցել Եկեղեցու և դրա ղեկավարների դեմ և մեղադրել Եկեղեցուն: 1838 թվականի հունիսին Սիդնի Ռիգդոնը բորբոքված ելույթ ունեցավ, որը հայտնի դարձավ որպես «Աղի Զարոգ»: Նա վկայակոչեց Մատթեոս Ե.13 հատվածը և ասաց, որ եթե աղը կորցնում է իր համը, այն պիտանի չէ ոչ մի բանի համար և պետք է դուրս նետվի, ակնարկելով, որ նրանք, ովքեր հեռացել էին Եկեղեցուց, պետք է

վտարվելիս Սրբերի միջից: Երկու շաբաթ անց՝ հուլիսի 4-ին, Սիդնի Ռիզոնը Ելույթ ունեցավ, որի ժամանակ նա խոստացավ, որ Սրբերը կաշտպանեն իրենք իրենց, եթե նույնիսկ այն վերածվի «բնաջնջման պատերազմի»: Չնայած թվում էր, այս երկու ելույթներն էլ հակասում էին «խաղաղության կոչ» անելու Տիրոջ հրահանգին, (Վևու 105.38), երկու ելույթներն էլ տպագրվեցին և մեծ ահազանգ դարձան ոչ Վերջին Օրերի Սրբերի համար:

Այս ընթացքում Սամսոն Ավարդ անունով մի նորադարձ գաղտնի երդում տվեց նրանց, ովքեր կմիանային իրեն՝ կազմավորելու կողոպտիչների մի խումբ, որը կոչվելու էր Դանիթես: Ավարդը հրամայեց նրանց կողոպտել ու թալանել միսսուրիացիներին, ասելով, որ սա կօգնի կառուցելու Աստծո թագավորությունը: Ավարդը համոզել էր իրեն հետևողներին, որ իր հրահանգները գալիս էին Առաջին Նախագահությունից: Հետագայում ճշմարտությունը բացահայտվեց, և Ավարդը Եկեղեցուց հեռացվեց: Ավարդի գործողությունները մեծ վնաս հասցրին Եկեղեցու համբավին և նպաստեցին, որ Մարգարեին բանտարկեին Լիբերթի բանտում:

Եկեղեցու որոշ անդամների և Միսսուրիի ոստիկանության միջև 1838 թվականի հոկտեմբերին կայացած բախման արդյունքում յուրաքանչյուր կողմից եղան մի քանի զոհեր: Բախման վերաբերյալ չափազանցված զեկույցներ հասան Լիլբուրն Վ. Բոգսին՝ Միսսուրիի նահանգի նահանգապետին, ով այդ ժամանակ հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որը հայտնի դարձավ որպես բնաջնջման հրաման. «Մորմոններին պետք է վերաբերվել որպես թշնամիների, և նրանք պետք է բնաջնջվեն կամ քշվեն նահանգից, եթե դա անհրաժեշտ է հասարակության բարօրության համար» (*History of the Church*, 3.175): Շուտով Ֆար Վեստ քաղաքը շրջապատվեց ոստիկաններով, ովքեր գերակշռում էին Սրբերին՝ հինգը մեկի հարաբերությամբ: Ջոզեֆ Սմիթը և Եկեղեցու այլ ղեկավարներ փակվեցին Լիբերթի բանտում, որտեղ նրանք մնացին ողջ ձմեռ: Սրբերի մնացած մասին ստիպեցին հեռանալ նահանգից:

Խմբով քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս իրադարձություններից, որոնք կարող են օգնել մեզ ավելի լավ դիմանալ հալածանքին:
- Ինչո՞ւ է կարևոր, որ մեզանից յուրաքանչյուրը հետևի Փրկիչի օրինակին ճգնաժամի կամ հալածանքի պահերին: Ի՞նչ պատահեց հյուսիսային Միսսուրիում, երբ որոշ Սրբեր չարեցին դա:
- Ե՞րբ եք դուք տեսել, որ մեկի խոսքերը կամ գործերը ներգործեն մեկ ուրիշի վրա՝ Եկեղեցու հանդեպ դրական վերաբերմունք ձևավորելու համար:

Մահացածների փրկությունը

Նախաբան

Ժամանակների լրության տևտեսությունում՝ որպես բոլոր բաների Վերականգնման մաս, Տերը վերականգնեց մահացածների փրկության վարդապետությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Այս վարդապետությունը վերականգնվեց «տող առ տող»: Մահացածներին փրկելու աշխատանքը խիստ կարևոր է թե՛ ապրողների, և թե՛ մահացածների համար, և

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է այս աշխատանքին մասնակցելու կարևորության մասին. «Մեծագույն պատասխանատվությունն այս աշխարհում, որ Աստված դրել է մեզ վրա, մեր մահացածներին որոնելն է» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 505):

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռիչարդ Գ. Սքոթ, «Մահացածներին փրկագնելու ուրախությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2012, 93-95:
- D. Todd Christofferson, “The Redemption of the Dead and the Testimony of Jesus,” *Ensign*, Nov. 2000, 9–12.
- «Փրկիչներ դառնալով Սիոն սարի վրա», գլուխ 41, *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 497–508:
- Matthew S. McBride, “Letters on Baptism for the Dead: D&C 127, 128,” *Revelations in Context* series, May 29, 2013; history.lds.org.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 137

Մարգարե Ջոզեֆ Սմիթի տեսիլքը սելենտիալ արքայության վերաբերյալ

Ուսանողների հետ կիսվեք հետևյալ պատմական փաստերով.

«1823 թվականի նոյեմբերին Ալվին Սմիթը՝ Լյուսի Մակ Սմիթի և Ջոզեֆ Սմիթ Ավագի անդրանիկ որդին, հանկարծ լուրջ հիվանդացավ և մահամերձ պառկած էր: Ալվինը 25 տարեկան էր՝ ուժեղ և ընդունակ երիտասարդ, ում ծանր աշխատանքը մեծապես նպաստում էր ընտանիքի ֆինանսական կայունությանը: Նրա մայրը նկարագրել է նրան որպես «առանձնահատուկ բարի բնավորության» տեր երիտասարդի, ում «ազնվությունն ու առատաձեռնությունը» օրհնում էին նրա շրջապատի մարդկանց «նրա գոյության յուրաքանչյուր ժամին»: ...

Իմանալով, որ ինքը մահանում է, Ալվինը կանչեց իր եղբայրներին և քույրերին իր մոտ և խոսեց նրանցից յուրաքանչյուրի հետ: Ջոզեֆին, ով մոտ 18 տարեկան էր և դեռ չէր ստացել ոսկյա թիթեղները, Ալվինն ասաց. «Ես ուզում եմ, որ դու լավ տղա լինես և անես այն ամենը, ինչ քեզանից է կախված՝ հիշատակարանները ձեռք բերելու համար: Հավատարիմ եղի՛ր հրահանգներ ստանալիս և պահի՛ր յուրաքանչյուր պատվիրան, որ տրվում է քեզ»: ...

Երբ Ալվինը մահացավ, ընտանիքը խնդրեց Երիցական եկեղեցու մի ծառայողի Պալմիրայում՝ Նյու Յորք, նրա թաղմանը ժամերգություն կատարել: Քանի որ Ալվինն այդ սպասավորի ծխական համայնքի անդամ չէր, իր քարոզումն նա պնդեց, որ Ալվինը չէր կարող փրկվել: Վիլյամ Սմիթը՝ Ջոզեֆի փոքր եղբայրը, հիշում է. «[Ծառայողը].... ազդարարեց շատ խստորեն, որ [Ալվինը] գնացել է դժոխք, քանի որ Ալվինը եկեղեցու անդամ չէր, բայց նա լավ տղա էր և հորս դա դուր չեկավ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 429, 430):

- Քանի որ մահացածների փրկագնման վարդապետությունը վերականգնված չէր Ալվինի մահվան ժամանակ, ի՞նչ մտահոգություններ կարող էր ունենալ Սմիթների ընտանիքը Ալվինի փրկության վերաբերյալ:

Ասացեք ուսանողներին, որ այս դասը կօգնի նրանց հասկանալ, որ Տերը հայտնեց մահացածների փրկագնման վարդապետությունը աստիճանաբար, տող առ տող: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 137 բաժնի նախաբանը: Բացատրեք, որ այս հայտնությունը տրվել է Կիրթլենդի Տաճարի նվիրագործումից ընդամենը մի քանի ամիս առաջ: (Դուք կարող եք շեշտել, որ Վարդապետություն և Ուխտերի 2013 թվականի հրատարակությունում որոշ փոփոխություններ են կատարվել 137 բաժնի նախաբանում:)

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 137.1-6 հատվածները և խնդրեք դասարանին հետևել նրան: Քննարկեք հետևյալը.

- Ո՞ւմ տեսավ Ջոզեֆ Սմիթը սելեստիալ արքայությունում: (Ուսանողները կցանկանան իմանալ, որ Ջոզեֆ Սմիթի հայրը և մայրը ողջ էին, երբ նա ստացավ այս հայտնությունը. փաստորեն Ջոզեֆ Սմիթի հայրը նրա հետ միասին նույն սենյակում էր, երբ տրվեց այդ հայտնությունը:)
- Ըստ հատված 6-ի, ինչո՞ւ Ջոզեֆ Սմիթը զարմացավ, որ իր եղբայր Ալվինը սելեստիալ արքայությունում էր: (Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ այս տեսիլքը տրվել է մահացածների փրկագնման վարդապետության վերաբերյալ Ջոզեֆ Սմիթին ուսուցանելուց մի քանի տարի առաջ:)

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 137.7-9 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել և փնտրել վարդապետությունը, որ օգնեց Վերջին Օրերի Սրբերին ավելի լավ հասկանալ Իր զավակներին փրկելու Աստծո ծրագիրը:

- Աստծո ծրագրում ի՞նչ դրույթ գոյություն ունի այնպիսի մարդկանց համար, ինչպիսին էր Ալվին Սմիթը, ով մահացել էր առանց հնարավորության՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը ընդունելու կամ մկրտության արարողությունը ստանալու: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, օգնեք նրանց ներկայացնել հետևյալ վարդապետությունը. **Բոլոր մարդիկ, ովքեր մահանում են առանց**

ավետարանի իմացության, ովքեր կրնդունենին այս գիտելիքը, եթե նրանք լսեին այն, կժառանգեն սելեստիալ արքայությունը:)

- Ի՞նչ է ձեզ ուսուցանում այս վարդապետությունը Երկնային Հոր էության և Իր զավակների հանդեպ Նրա սիրո մասին:
- Դուք ե՞րբ եք մխիթարվել այս վարդապետությամբ: Ե՞րբ եք տեսել ուրիշներին, հավանաբար նրանց, ում դուք ուսուցանել եք որպես մխիթներ, մխիթարություն ստանալիս՝ այս վարդապետության վերաբերյալ իրենց հասկացողության շնորհիվ:

Վարդապետություն և Ուխտեր 124.30–34, 127.5–8, 128.1–18, 138.28–37

Փոխարինող արարողություններ մահացածների համար

Մահացածների համար մկրտության վարդապետության մասին Մարգարե Ջոզեֆ Մմիթն առաջին անգամ խոսել է Մեյմոր Բրունսոնի հուղարկավորության ժամանակ 1840 թվականի օգոստոսի 15-ին, Նավուում՝ Իլինոյս, Սրբերի հաստատվելուց հետո կարճ ժամանակ անց: Եկեղեցու անդամները զարմացան և ոգևորվեցին, երբ իմացան այս վարդապետության հայտնության մասին: Հայտարարությունից մի քանի ամիս անց Սրբերը մկրտություններ էին կատարում իրենց սիրելի մահացածների համար Միսիսիպի գետի մոտակայքում (տես *Ուսմունքներ. Ջոզեֆ Մմիթ*, 429, *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. [Church Educational System manual, 2003], 251):

- Այս քարոզն ինչպե՞ս օգնեց ավելի լավ հասկանալ Իր զավակներին փրկելու Երկնային Հոր ծրագիրը: (Մինչ ուսանողները պատասխանում են, հետևյալ ճշմարտությունը գրեք գրատախտակին. **Մկրտության փրկող արարողությունը կարող է կատարվել նրանց համար, ովքեր չեն ընդունել ավետարանը մահկանացու կյանքի ընթացքում:**)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս դուք կարձագանքեիք, եթե լսեիք Մարգարե Ջոզեֆ Մմիթին այս տնտեսությունում առաջին անգամ մահացածների համար մկրտության վարդապետության մասին խոսելիս:

Բացատրեք, որ Նավուում՝ Իլինոյս, Եկեղեցու 1841 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ընթացքում, Մարգարե Ջոզեֆ Մմիթը հայտարարեց, որ Տերը ցանկանում էր, որ Սրբերը դադարեցնեին մահացածների համար մկրտություններ կատարելը, մինչև որ մկրտությունները կարողանային կատարվել Իր տանը (տես ՎեՌ 124.29–34): 1841 թվականի նոյեմբերին Բրիգամ Յանգը, ով այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր, նվիրագործեց Նավուի անավարտ Տաճարի նկուղում գտնվող ավազանը, և Եկեղեցու անդամները սկսեցին փոխարինող մկրտություններ կատարել մահացածների համար:

Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 127-րդ բաժնի նախաբանը, որտեղ բացատրվում է, որ 127 բաժինը Ջոզեֆ Մմիթի կողմից Սրբերին ուղղված նամակ է, որտեղ նրանց հրահանգվում է պահել մահացածների համար կատարվող մկրտությունների գրառումները: Բացատրեք, որ մոտ մեկ շաբաթ անց Ջոզեֆը մեկ այլ

նամակ գրեց մահացածների համար մկրտության վերաբերյալ, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 128 բաժնում:

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. (Մի ներառեք փակագծերի նյութերը. այն նախատեսված է ձեր՝ ուսուցիչներիդ համար:)

Վարդապետություն և Ուխտեր 127.5-7, 128.8 (Երբ արարողությունը կատարվում է քահանայության իշխանությանը և պահվում է դրա պատշաճ արձանագրությունը, արարողությունը կապվում է երկրի վրա և երկնքում:)

Վարդապետություն և Ուխտեր 128.6-7 (Փոխարինող արարողությունների արձանագրությունը ներառված կլինի գրքերի մեջ, որոնք բացվել են մահացածներին դատելու համար:)

Վարդապետություն և Ուխտեր 128.15, 17-18 (Մեր մահացած նախնիների փրկությունը կարևոր է մեր փրկության համար:)

Ուսանողներին հանձնարարեք կարդալ գրատախտակին գրված յուրաքանչյուր հատվածը: Խնդրեք նրանց փնտրել վարդապետությունները, որոնք մեծացրել են Աստծո ծրագրի մեր հասկացողությունը մահացածների փրկագնման վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին ամփոփել մահացածների փրկագնման վարդապետությունը, որն ուսուցանված է սուրբ գրությունների յուրաքանչյուր հատվածում: Խնդրեք մի քանի ուսանողների գրել վարդապետությունները գրատախտակի հատվածների կողքին: Նշեք, որ Վարդապետություն և Ուխտեր 127 և 128 բաժիններում տրված հայտնությունները լուսաբանում են ավետարանի Վերականգնման ընդունված օրինաչափությունը: Տեղը հայտնի է դարձնում ճշմարտությունները տող առ տող, և ոչ թե բոլորը միանգամից:

Բացատրեք ուսանողներին, որ այս հայտնությունների տրվելուց հետո շատ տարիներ անց Տեղը հավելյալ գիտելիքներ տվեց մահացածներին փրկագնելու Իր ծրագրի մասին: 1918 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հայտնություն ստացավ մահացածների փրկագնման մասին: Հայտնությունը տրվեց, երբ նա սգում էր իր որդու՝ Հայրում Մ. Սմիթի կորուստը, ով մահացել էր այդ տարվա սկզբին և մինչ այդ ծառայում էր որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ:

Խնդրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.28-37 հատվածները, փնտրելով ճշմարտություններ, որոնք հայտնի էին դարձվել Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին՝ մահացածների փրկագնման վերաբերյալ:

- Ի՞նչ ճշմարտություններ են ուսուցանվում այս հատվածներում մահացածների փրկագնման վերաբերյալ: (Երբ ուսանողները կիսվեն իրենց գտած ճշմարտություններով, համոզվեք, որ նրանք հասկանում

են այս ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի ղեկավարությամբ արդար սուրհանդակներն ուսուցանում են ավետարանը հոգևոր բանտում։)**

- Ինչպե՞ս են այս լրացուցիչ ճշմարտություններն օգնում մեզ հասկանալ, թե ինչպես կարող է Ալվին Սմիթի նման մարդը, ով մահացել է առանց ավետարանի արարողությունները ստանալու՝ ժառանգություն ստանալ սելեստիալ արքայությունում։

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը.




«Որպես Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամներ, մենք ուխտի միջոցով պարտավորվել ենք փնտրել մեր նախնիներին և նրանց համար կատարել ավետարանի փրկարար արարողությունները։ Առանց մեզ նրանք չեն կարող կատարյալ դառնալ (Եբրայեցիս ԺԲ.40, տես նաև *Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ*, 504)։ Եվ «ոչ էլ մենք կարող ենք կատարյալ դառնալ առանց մեր մահացածների» (Վևու 128.15)» («Ջավականների սրտերը կդառնան»,

Ensign կամ *Լիսհոնա*, նոյ. 2011, 25)։

- Ինչո՞ւ պետք է մահացածներին փրկագնելու աշխատանքն առաջնահերթություն լինի մեր կյանքում։
- Ինչպե՞ս է մեր մահացած ազգականների համար փրկարար արարողություններ կատարելն օգնում մեզ և նրանց դառնալու կատարյալ։

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.



«Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը զորություն ունի օրհնելու ոչ միայն նրանց, ովքեր վարագույրի այն կողմում են, այլ նաև նրանց, ովքեր ապրում են։ Այն կատարելագործող ազդեցություն ունի նրանց վրա, ովքեր զբաղվում են դրանով։ Նրանք բառացիորեն օգնում են իրենց ընտանիքներին վեհանալ» («Սիրով կապված սերունդներ», *Ensign* կամ *Լիսհոնա*, մայիս 2010, 93)։

- Ինչպե՞ս է մահացածների փրկագնման վարդապետությունը վկայում Հիսուս Քրիստոսի Քավության անսահմանության մասին։

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ խոսքերը.



«Տերը Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնել է մկրտության սրբազան ծեսի երկնային վարդապետությունը: Այդ լույսը տրվեց, երբ քրիստոնեական մյուս եկեղեցիները ուսուցանում էին, որ մահը անվերադարձ, հավերժորեն վճռում է հոգու ճակատագիրը: Դրանք ուսուցանում էին, որ մկրտվածներին պարզևսվում է անվերջ ուրախություն, մինչ մնացածները արժանանում են հավերժական տանջանքների՝ առանց փրկագնման հույսի: ...

Այս փառավոր վարդապետությունը մեկ այլ վկայություն է Հիսուս Քրիստոսի Քավության համապարփակ եության մասին: Նա փրկությունը մատչելի է դարձրել յուրաքանչյուր ապաշխարող հոգու համար: Նրա Քավությունը հաղթել է մահը, և Նա թույլ է տալիս, որ արժանի մահացածները ստանան փրկության բոլոր ծեսերը փոխարինողների կողմից» («Մահացածներին փրկագնելու ուրախությունը» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2012, 93):

- Ի՞նչ փորձառություններ են ձեզ ուսուցանել մահացածներին փրկագնելու աշխատանքին մասնակցելու կարևորության մասին:
- Ինչպե՞ս է մեծացել ձեր վկայությունը մահացածների փրկագնման աշխատանքին մասնակցելու շնորհիվ: (Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվել իրենց վկայություններով:)

Խրախուսեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են նրանք մասնակցել մահացածներին փրկագնելու մեծ աշխատանքին՝ ընտանեկան պատմության հետազոտության կամ տաճարային արարողությունները կատարելիս՝ որպես փոխանորդ ծառայելու միջոցով: Կիսվեք ձեր վկայությամբ, որ մեր օրերի տաճարներում կատարվող աշխատանքի միջոցով Երկնային Հոր բոլոր զավակները կարող են ստանալ փրկության համար անհրաժեշտ բոլոր արարողությունները:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ովստեր 124.30–41, 127.1–9, 128.1–18, 137.1–10, 138.28–37:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Մահացածներին փրկագնելու ուրախությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2012, 93–95:

Ավետարանի ուսմունքները Նավու քաղաքում

Նախաբան

Առաջին մի քանի տարիները, որ Սրբերն անցկացրեցին Նավուում՝ Իլինոյս, աչքի ընկան նկատելի խաղաղությամբ և բարգավաճմամբ: Այդ ընթացքում Ջոզեֆ Սմիթը ստացավ հայտնություններ և ապա ուսուցանեց ու պարզաբանեց որոշ վարդապետություններ, որոնք եզակի են Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Այն

ներառում է տաճարների նպատակը, Երկնային Հորը նմանվելու մեր աստվածային ներուժը և Հավատո Հանգանակներում ուսուցանված որոշ վարդապետություններ: Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մեծությունը, ինչպես նաև մեր իսկ աստվածային ներուժը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- «Աստված՝ Երկնային Հայրը», գլուխ 2, *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 39–48:
- “Doctrinal Developments in Nauvoo,” chapter 20 in *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2003), 251–62.
- “Becoming Like God,” Gospel Topics, lds.org/topics.

Ուսուցման առաջարկներ

Հավատո Հանգանակներ

Ավետարանի վարդապետությունների կարևոր հայտարարություններ

Բացատրեք, որ Նավուում՝ Իլինոյս, Ջոզեֆ Սմիթը նամակ գրեց Ջոն Վենտվորթին՝ *Chicago Democrat* կոչվող թերթի խմբագրին, ով տեղեկություններ էր խնդրել մորմոնների մասին: Նամակում Մարգարեն նկարագրել էր Վերջին Օրերի Սրբերի պատմությունը՝ վարդապետական համոզմունքների հակիրճ ցանկի հետ միասին, որը հետագայում հայտնի դարձավ որպես Հավատո Հանգանակ: (Նամակն ամբողջությամբ տրված է *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* գրքում, [2007], 463–75:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք:



«[Հավատո Հանգանակները] Եկեղեցու վարդապետության առավել կարևոր և, անկասկած, առավել հակիրճ հայտարարությունների թվում են: Եթե դուք օգտագործեք դրանք որպես ուղեցույց՝ Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսումնասիրելիս, դուք կտեսնեք, որ պատրաստված եք հայտարարելու աշխարհին ձեր վկայությունը վերականգնված ճշմարտության մասին: Դուք ի վիճակի կլինեք պարզ, հասկանալի և խորաթափանց եղանակով հռչակել ձեր հիմնական հավատամքները, որոնք թանկ են ձեզ՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու անդամի համար» («Հավատո հանգանակներում պարունակվող վարդապետությունները և սկզբունքները», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2013, 48):

- Ինչպե՞ս դուք կամփոփեք այն, ինչ ուսուցանեց Երեց Փերին: (Երբ ուսանողները կհավեն իրենց հակիրճ պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ այս ճշմարտությունը. **Երբ մենք սովորենք Հավատո Հանգանակներում ուսուցանվող վարդապետությունները, մենք ավելի լավ պատրաստված կլինենք հայտարարելու մեր համոզմունքներն ուրիշներին:**)
- Դուք ե՞րբ եք օգտագործել Հավատո Հանգանակները, որպեսզի օգնեք ուրիշներին հասկանալու ավետարանը:

Հրավիրեք դասարանին բացել Հավատո Հանգանակները և մտքում կարդալ դրանք: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո քննարկեք հետևյալ հարցերը.

- Ո՞ր հավատո հանգանակն եք դուք հատկապես գնահատում և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս են Հավատո Հանգանակի վարդապետություններն օգնում առաջնորդել ձեզ և ամրացնել ձեր վկայությունը, որ Ջոզեֆ Սմիթը եղել է Աստծո մարգարեն:

Վարդապետություն և Ուխտեր 124.25–28, 37–42

Տաճարային արարողությունների վերականգնումը

Բացատրեք, որ երբ Սրբերը հաստատվեցին Նավու քաղաքում՝ Իլինոյս, Մարգարե Ջոզեֆ Սմիթը տաճար կառուցելու հրահանգ ստացավ: Ինչպես Կիրթլանդում՝ Օհայո, կառուցված տաճարի դեպքում, այս հանձնարարությունը ևս Վերջին Օրերի Սրբերից պահանջում էր մեծ գոհաբերություններ:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 124.25–28, 37–42: Դասարանին խնդրեք հետևել և գտնել Տիրոջ ուսմունքներն այն մասին, թե ինչու Սրբերն ունեին տաճարի կարիքը: Նախքան այս հատվածների վերլուծումը, բացատրեք, որ դրանք վերաբերում են Մովսեսի և նրա ժողովրդի կողմից կառուցված խորանին: Մովսեսի ժողովուրդը մկրտություններ չէր կատարում մահացածների համար: Մահացածների համար աշխատանք չէր կատարվում, մինչև այն ժամանակը, երբ Փրկիչն Իր մահից հետո սովորեցրեց այդ աշխատանքի մասին հոգևոր աշխարհում: Այնուհետև հարցրեք ուսանողներին.

- Համաձայն այս հատվածներում տրված Տիրոջ ուսմունքների՝ ինչո՞ւ Նավուի Սրբերն ունեին տաճարի կարիքը: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք այս վարդապետությունը. **Որոշ փրկարար արարողություններ ընդունելի են Տիրոջ համար միայն այն դեպքում, երբ դրանք կատարվում են տաճարներում:**)

Բացատրեք ուսանողներին, որ Կիրթլենդի Տաճարը «*հիմնականում* կառուցվեց իշխանության բանալիները վերականգնելու համար» (Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:242): Նավուի Տաճարում քահանայության այս բանալիներն օգտագործվեցին ողջերի համար փրկարար արարողություններ և մահացածների համար փոխարինող մկրտություններ կատարելու համար: Իր կյանքի վերջին երկու տարիների ընթացքում Ջոզեֆ Սմիթը հավատարիմ անդամների մի փոքր խմբի ներկայացրեց տաճարային օժտումը: Նա նաև ներկայացրեց ամուսնուն և կնոջը հավերժորեն միասին կնքելու արարողությունը:

- Ի՞նչ տաճարային արարողություններ են նշված Վարդապետություն և Ուխտեր 124.39 հատվածում:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ մեջբերումը. Դասարանին հրավիրեք ուշադիր լսել, թե ինչու են տաճարային արարողությունները կարևոր Երկնային Հոր ծրագրում.

«Ի պատասխան [Նավու քաղաքում տաճար կառուցելու] Տիրոջ հրամանի, Մարգարեն և Սրբերն առաջ շարժվեցին որքան հնարավոր էր արագ՝ Տիրոջ տան կառուցումը սկսելու համար: Բայց Մարգարեն հասկացավ, որ կառուցումը կխլեր տարիներ, և նա գիտեր, որ Սրբերին անհրաժեշտ էին տաճարային լրիվ օրհնությունները: Հետևաբար 1842 թվականի մայիսի 4-ին, չնայած տաճարն ավարտված չէր, Ջոզեֆ Սմիթը սպասավորեց օժտումը հավատարիմ եղբայրների մի փոքրիկ խմբի համար:

Խումբը հանդիպեց Մարգարեի կարմիր աղյուսից կառուցված վաճառատան վերևի մեծ սենյակում: ...

Մարգարեի պատմությունն արձանագրում է. «Ես անցկացրի օրը վաճառատան վերևի մասում... խորհրդակցելով գեներալ Ջեյմս Ադամսի հետ՝ Սփրինգֆիլդսից, հայրապետ Հայրում Սմիթի, եպիսկոպոսներ Նյունել Զ. Ուիթնիի և Ջորջ Միլլերի ու նախագահ Բրիգամ Յանգի ու երեցներ Հեբեր Զ. Քիմբլիի և Վիլլարդ Ռիչարդսի հետ՝ հրահանգելով նրանց սկզբունքներում և Քահանայության կարգում՝ նրանց ուշադրությունը հրավիրելով լվացումների, օծումների, օժտումների և Սիարոնյան Քահանայության բանալիների, Մեքսիկոյի Քահանայության բարձրագույն կարգի հաղորդման վրա, ներկայացնելով կարգը՝ կապված Հինավուրցի հետ և այն բոլոր ծրագրերն ու սկզբունքները, որոնց միջոցով որևէ մեկին հնարավորություն է տրվում ապահովել այդ օրհնությունների լրիվությունը, որոնք նախապատրաստվել են Անդրանիկի եկեղեցու համար և գալու ու բնակվելու են Էլդիմի ներկայության մեջ հավերժական աշխարհներում» (*Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 439-41*):

Հարցրեք ուսանողներին.

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ տաճարային արարողությունների վերականգնումը:

Երբ ուսանողները պատասխանեն, նրանց գիտելիքները խորացնելու համար կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերով.



«Տաճարի հիմնական նպատակն է ծեսեր կատարելը, որոնք անհրաժեշտ են սելեստիալ արքայությունում մեր վեհաքման համար: Տաճարի ծեսերը տանում են մեզ դեպի մեր Փրկիչը և տալիս են մեզ այն օրհնությունները, որոնք տրվում են մեզ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով» ("Blessings of the Temple," *Ensign*, Oct. 2009, 48):

- Ինչպե՞ս է ձեր կյանքն օրհնվել տաճարային արարողությունների վերականգնման միջոցով:

Հրավիրեք ուսանողներին հաջորդ շաբաթվա ընթացքում խորհել, թե ինչպես կարող են Տիրոջ տանը երկրպագելը դարձնել իրենց կյանքի կարևոր առաջնահերթությունը:

Սաղմոս 2Բ.6, Մատթեոս Ե.48, Հովհաննես Ժ.32–34, Հռովմայեցիս Ը.16–17, Բ Պետրոս Ա.3–4, Ա Հովհաննես Գ.2–3, Վարդապետություն և Ուխտեր 93.11-20, 132.20

Մեր աստվածային ներուժը

Բացատրեք, որ Աստվածաշնչում տրված են հնադարյան մարգարեների խոսքերը, ովքեր գրել են մեր աստվածային ներուժի մասին: Սուրբ գրությունների հետևյալ հղումները գրեք գրատախտակին և հրավիրեք ուսանողներին կարդալ դրանցից մի քանիսը և ուշադրություն դարձնել, թե ինչ են դրանք ուսուցանում մեր հավերժական ներուժի մասին. Սաղմոս 2Բ.6, Մատթեոս Ե.48, Հովհաննես Ժ.32–34, Հռովմայեցիս Ը.16–17, Բ Պետրոս Ա.3–4, Ա Հովհաննես Գ.2–3: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին՝ զուգահեռներ անցկացնել այս հղումների միջև, մինչ նրանք ուսումնասիրում են դրանք:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Մենք ի՞նչ կարող ենք սովորել այս սուրբ գրություններից մեր ներուժի մասին: (Տարբեր բառեր օգտագործելու հետ մեկտեղ ուսանողները պետք է հասկանան հետևյալ վարդապետությունը. **Որպես մեր Երկնային Հոր զավակներ՝ մենք ունենք Նրա նման դառնալու ներուժ:**)
- Այս հատվածների ո՞ր արտահայտություններն են նկարագրում մեր աստվածային ներուժը:

Բացատրեք, որ մեր աստվածային ներուժի մասին նաև ուսուցանվում է ժամանակակից սուրբ գրություններում: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 93.11-13, 19-20 և Վարդապետություն և Ուխտեր 132.20 հատվածները: Օգնեք ուսանողներին հասկանալ այս վարդապետությունը. **Ինչպես Փրկիչը, մենք էլ կարող ենք զարգանալ շնորհից շնորհ, մինչև որ ստանանք Հոր լիությունից:**



Բացատրեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթի ամենանշանակալից քարոզներից մեկը տրվել է 1844 թվականի ապրիլին՝ Եկեղեցու գերագույն համաժողովի ընթացքում: Այս քարոզի ժամանակ Մարգարեն հարգանքի տուրք մատուցեց Եղբայր Քինգ Ֆոլեթի հանդեպ, ով վերջերս էր մահացել: Այս ելույթը հայտնի դարձավ որպես Քինգ Ֆոլեթին նվիրված ճառ: Բոլոր ուսանողներին տրամադրեք «Հատվածներ Քինգ Ֆոլեթին նվիրված ճառից» թերթիկի մեկական օրինակ: Հրավիրեք նրանց կարդալ մեջբերումները և ընդգծել բառերը և արտահայտությունները, որոնք բացատրում են, թե ինչու մենք պետք է ձգտենք հասկանալ Աստծո բնույթը:

Հատվածներ Քինգ Ֆոլեթին նվիրված ճառից

Մարգարե Ջոզեֆ Սմիթ (1805–44) ուսուցանել է.



«Եթե մարդ չի սովորում ավելին, քան ուտելը, խմելը և քնելը և չի ըմբռնում Աստծո նպատակները, ապա գազանից չի տարբերվում: Նա նույնպես ուտում է, խմում, քնում և ոչինչ չգիտի Աստծո մասին. ուրեմն այն մեր չափ գիտելիք ունի, եթե մենք ըմբռնում ձեռք չբերենք Ամենագոր Աստծո ոգեշնչմամբ: Եթե մարդիկ չեն ըմբռնում Աստծո բնույթը, նրանք չեն հասկանա, թե ովքեր են իրենք: ...

Իմ առաջին նպատակն է հասկանալ միակ իմաստուն և ճշմարիտ Աստծո բնութագիրը, և թե ինչպիսի էակ է Նա: ...

Աստված ժամանակին եղել է այնպիսին, ինչպիսին հիմա մենք ենք, և վեհացում ձեռք բերած մարդ է, և նստած է գահին այնտեղ՝ Երկնքում: Սա է մեծ գաղտնիքը: Եթե վարագույրը պատռվեր այսօր, և փառահեղ Աստվածը, ով այս աշխարհը պահում է իր ուղեծրում, և ով իր զորությամբ պահում է բոլոր աշխարհները և բոլոր բաները, Իրեն տեսանելի դարձներ, ասում եմ ձեզ, եթե դուք տեսնեիք նրան այսօր, դուք կտեսնեիք նրան մարդու տեսքով, ինչպես որ դուք եք՝ ձեր ողջ անձով, պատկերով և տեսքով՝ որպես մարդ. քանի որ Ադամը ստեղծվեց Աստծո անմիջական տեսքով, պատկերով և նմանությամբ, և հրահանգներ ստացավ և քայլեց և խոսեց ու զրուցեց Նրա հետ, ինչպես մի մարդ հաղորդակցվում է մեկ ուրիշի հետ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 43):

«Սրանում է, ուրեմն, հավերժական կյանքը՝ ճանաչել միակ իմաստուն և ճշմարիտ Աստծուն, և դուք պետք է սովորեք, թե ինչպես ինքներդ աստվածներ դառնաք, և թագավորներ ու քահանաներ Աստծո համար.... գնալով մի փոքր աստիճանից մյուսը և մի փոքր կարողությունից դեպի ավելի բարձրը, շնորհից շնորհ՝ վեհացումից վեհացում, մինչև որ հասնեք մեռելների հարությանը և կարողանաք բնակվել հավիտենական բոցերում և նստեք փառքի մեջ, ինչպես նրանք, ովքեր նստած են գահերի վրա հավիտենական զորությամբ» (Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 235):

Օգնեք ուսանողներին վերլուծել այս ուսմունքները՝ հարցնելով.

- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք սովորենք Աստծո բնության և էության մասին և Նրա հետ մեր հարաբերությունների մասին՝ որպես մեր Երկնային Հայր:

- Ո՞րն է մեր Երկնային Հորը նմանվելու գործընթացը:

Իրենց աստվածային ներուժի վերաբերյալ ուսանողների հասկացողությունը խորացնելու համար ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ հայտարարությունը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ավետարանի ողջ նպատակն է առաջնորդել մեզ դեպի ավելի մեծ ձեռքբերումներ, նույնիսկ, ի վերջո, միևնույն աստվածություն: Այս մեծ հնարավորության մասին Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է Քինգ Ֆոլեթին նվիրված քարոզի ժամանակ [տես *History of the Church*, 6:302–17] և այն շեշտվել է Նախագահ Լորենզո Սնոուի կողմից: Սիա այդ մեծ և անզուգական հասկացությունը. *Ինչպիսին Աստվածն է այժմ, մարդն էլ կարող է դառնալ*: [Տես *The Teachings of Lorenzo Snow*, comp. Clyde J. Williams (1984), 1:]

«Մեր թշնամիները քննադատում են մեզ այս գաղափարին հավատալու համար: Մեր պատասխանը կայանում է նրանում, որ այս վեհ գաղափարը ոչ մի կերպ չի նվաստացնում Աստծուն՝ Հավերժական Հորը: Նա Ամենագորն է: Նա Արարիչն է և ողջ տիեզերքի Կառավարիչը: Նա մեծագույնն է և միշտ էլ կլինի այդպիսին: Բայց ճիշտ, ինչպես ցանկացած երկրային հայր ցանկանում է իր որդիներին ու դուստրերին ամենայն հաջողություններ կյանքում, ուստի, ես հավատում եմ, որ մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ իր զավակները հասնեն իր փառքին և կանգնեն իր կողքին՝ փառավորված աստվածային ուժով ու իմաստությամբ» (*“Don’t Drop the Ball,” Ensign*, Nov. 1994, 48):

Ամփոփելու համար ուսանողներին տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կարող է փոխվել մեր կյանքում, երբ իմանանք այս կարևոր ճշմարտությունները Երկնային Հոր և մեր աստվածային ներուժի մասին:
- Երբ դուք խորհում եք մեր այսօրվա քննարկումների շուրջ (Հավատո Հանգանակը, տաճարային արարողությունները և մեր աստվածային ներուժը), ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունների ըմբռնումն օգնել ձեզ՝ գնահատել Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունների ըմբռնումն օգնել ձեզ՝ հասկանալ Աստծո բնույթը և որպե՞ս ձեր Երկնային Հայր՝ Նրա հետ ձեր հարաբերությունները: (Ժամանակ տվեք ուսանողներին իրենց տպավորությունները գրի առնելու համար:)

Հրավիրեք ուսանողներին վկայել կամ կիսվել իրենց գրի առած մի քանի տպավորություններով, եթե դրանք խիստ անձնական չեն: Վերջում կիսվեք այս դասին ուսուցանված վարդապետությունների և որպես գորեղ հայտնող Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ ձեր վկայությամբ:

Ուսանողի ընթերցարան

- Սաղմոս 2Բ.6, Մատթեոս Ե.48, Հովհաննես Ժ.32–34, Հռովմայեցիս Ը.16–17, Բ Պետրոս Ա.3–4, Ա Հովհաննես Գ.2–3, Վարդապետություն և Ուխտեր 93.11–22, 124.25–28, 37–42, 132.20–24:
- «Աստված՝ Երկնային Հայրը», գլուխ 2, *Եկեղեցու Նախագահների ուսումնառություն. Ջոզեֆ Սմիթ* (2007), 39–48:

Սփոփող Միությունը և Եկեղեցին

Նախաբան

«Սփոփող Միությունը պատրաստում է կանանց հավերժական կյանքի օրհնություններին, օգնելով նրանց մեծացնել իրենց հավատը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքները և տները և օգնել կարիքի մեջ գտնվողներին («Սփոփող Միության նպատակը», [lds.org/callings/relief-society/purposes](https://www.lds.org/callings/relief-society/purposes)): Այս

դասը կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ Սփոփող Միության կազմավորումը և դրա նպատակները: Ուսանողները նաև կտեսնեն, որ կանայք մեծ հնարավորություններ և պարտականություններ ունեն ստանալ արքայությունը կառուցելու գործում, որոնք հատուկ են իրենց:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դավիդ Հ. Օուքս, «Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 49-52:
- M. Russell Ballard, “Men and Women and Priesthood Power,” *Ensign*, Sept. 2014, 28-33.
- Ջուլի Բ. Բեք, «Մարգարեների տեսիլքը Սփոփող Միության վերաբերյալ. հավատք, ընտանիք, սփոփանք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2012, 83-85:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 25

Էմմա Սմիթին տրված Տիրոջ հրահանգները

Ցուցադրեք Նախագահ Սպենսեր Վ. Զիմբալի (1895–1985) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք:



«Վերջին օրերում Եկեղեցում մեծ աճ տեղի կունենա հիմնականում այն պատճառով, որ աշխարհի լավ կանանցից շատերը ... կմիանան Եկեղեցուն: Սա տեղի կունենա այնքանով, որքանով Եկեղեցու կանայք արդարակեցություն և միասնություն կցուցաբերեն իրենց կյանքում և որքանով Եկեղեցու կանայք աշխարհի կանանցից կտարբերվեն իրենց դրական առանձնահատկություններով» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 222–23):

- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ խորհում եք այս խոսքերի շուրջ:
- Դուք ճանաչո՞ւմ եք կանանց, ովքեր արդարակեցության լավ օրինակ են հանդիսանում: Ինչպե՞ս են նրանք փոխել այն մարդկանց կյանքը, ովքեր ճանաչում են իրենց:

Բացատրեք, որ այս դասը կենտրոնանալու է այն ուղիների վրա, որոնցով Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում Սփոփող Սիությանն օրհնում է Երկնային Հոր դուստրերին և որդիներին:

Խնդրեք ուսանողներին բացել Վարդապետություն և Ուխտեր 25 բաժինը և աչքի անցկացնելով նախաբանը, գտնել այն անձին, ում հետ Տերը խոսում է այս հայտնության մեջ: Ապա բարձրաձայն կարդացեք հատված 3-ը: Բացատրեք ուսանողներին, որ Տիրոջ աչքում Էմմա Սմիթը «ընտրյալ տիկին» էր: Նավու քաղաքում տեղի ունեցած Կանանց Սփոփող Սիության առաջին ժողովի ժամանակ Ջոզեֆ Սմիթը բացատրեց, որ «ընտրյալ նշանակում է ընտրված լինել որոշակի գործի համար»: Նա նաև ասել է, որ Էմմա Սմիթին տրված հայտնությունն «իրականացավ, երբ Քույր Էմման ընտրվեց ծառայելու [Սփոփող] Սիության Նախագահությունում» (*History of the Church*, 4:552–53): Դասարանը կիսեք երկու մասի և հրավիրեք մի կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 25.4–9 հատվածները, իսկ մյուս կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 25.10–15-ը: Հրավիրեք ուսանողներին գտնել այն հանձնարարությունները կամ կոչումները, որոնք Տերը տվեց Էմմա Սմիթին: Նրանք կարող են կազմել այդ պարտականությունների ցանկը կամ նշել դրանք իրենց սուրբ գրություններում: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, հանձնարարեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով:

- Այս պարտականությունների կատարումը ինչպե՞ս էր նպաստելու Եկեղեցու աճին:
- Տերն ի՞նչ օրհնություններ խոստացավ Էմմա Սմիթին, եթե նա հնազանդվեր Իր պատվիրաններին:

Ուսանողներից որևէ մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 25.16 հատվածը:

- Մինչ սա Էմմա Սմիթին տրված հայտնություն էր, ապա ինչպե՞ս կարող են Էմմային ուղղված Տիրոջ խոսքերը մեզ վերաբերել: (Հնազանդության և ավետարանի այլ սկզբունքների վերաբերյալ ուսմունքները, որոնք ուսուցանված են այս հայտնության մեջ, վերաբերում են յուրաքանչյուր մարդու: [Նշում. Բացատրեք, որ սուրբ գրությունները մեր իսկ փորձառություններին նմանեցնելը սուրբ գրությունների ուսումնասիրման կարևորագույն հմտությունն է, որն օգնում է մեզ տեսնել նմանություններ մեր և սուրբ գրություններում նշված անհատների փորձառությունների միջև:])

Երբ ուսանողները կիսվեն այս հարցի շուրջ իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ հետևյալ ճշմարտությունը. **Եթե մենք հավատարմորեն պահենք պատվիրանները և կատարենք Տիրոջ կողմից մեզ տրված հանձնարարությունները, մենք կստանանք արդարության պսակը:** Դուք կարող եք վկայել այս ճշմարտության մասին:

Սփոփող Միությունը Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցու կարևորագույն մասն է:

Ասացեք ուսանողներին, որ Տերը հայտնեց Եկեղեցու կազմավորումը տող առ տող: Որպես այս գործընթացի մի մաս, Նա Էմմա Սմիթին տվեց մի շատ կարևոր կոչում: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Սփոփող Միության կազմավորման վերաբերյալ հետևյալ ամփոփումը. Հրավիրեք ուսանողներին լսել, թե ինչպես է Սփոփող Միության վերաբերյալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի տեսլականը մեծացրել կանանց նախնական տեսլականը:

Նավու քաղաքում Վերջին Օրերի Սուրբ կանայք օրհնվեցին Եկեղեցում ունենալու իրենց իսկ կազմակերպությունը: Այն սկիզբ առավ, երբ մի քանի կանայք Սառա Գրանջեր Զիմբալի ղեկավարությամբ հավաքվեցին՝ տաճարում աշխատող տղամարդկանց համար շապիկներ կարելու: Կանայք որոշեցին պաշտոնապես կազմավորել իրենց միությունը և խնդրեցին Էլիզա Ռ. Սնոուին սահմանադրություն գրել իրենց խմբի համար: Երբ նրանք խորհրդակցեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ, նա ասաց, որ նրանց սահմանադրությունը հրաշալի էր, սակայն առաջարկեց ավելի լավ ձևով կազմավորել կանանց միությունը: 1842 թվականի մարտի 17-ին Մարգարեն Երեցներ Ջոն Թեյլորի և Վիլլարդ Ռիչարդսի ընկերակցությամբ հանդիպեց 20 կանանց հետ Կարմիր աղյուսե վաճառատան վերևի հարկում, որտեղ Մարգարեն կազմավորեց Նավուի Կանանց Սփոփող Միությունը: Էմմա Սմիթն ընտրվեց որպես կազմակերպության նախագահ. այդպիսով իրականացավ հայտնությունը, որտեղ նա կոչվել էր «ընտրյալ տիկին» (ՎեՌՈՒ 25.3): Մարգարեն հետագայում նշել է, որ կազմակերպության նպատակն է «մխիթարել աղքատներին» և «փրկել հոգիներ» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 481):

1842 թվականի ապրիլի 28-ին Մարգարեն կրկին հանդիպեց քույրերի հետ: Նա ասաց քույրերին, որ նրանք հրահանգներ կստանային քահանայության հաստատած կարգի միջոցով և հետո հայտարարեց. «Այժմ ես պտտում եմ բանալին ձեզ համար՝ Աստծո անունով և այս Միությունը պիտի ցնծա, և գիտել իքն ու խելամտությունը պիտի վար հոսի այս ժամանակից ի վեր» (*Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ*, 479):

Դուք կարող եք նշել, որ ուսանողները կարող են կարդալ վաղ շրջանի Սփոփող Միության ժողովների վերաբերյալ արձանագրություններ josephsmithpapers.org/paperSummary/Nauvoo-relief-society-minute-book կայքէջում:

- Ինչպե՞ս է Սփոփող Միության հեռանկարի Մարգարեի տեսլականը ընդլայնել Սառա Զիմբալի նախնական առաջարկը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նշանակություն ունեն Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետևյալ խոսքերը. «Այժմ ես պտտում եմ բանալին ձեզ համար՝ Աստծո անունով»: (Սփոփող Միությունը կազմավորվել է քահանայության ղեկավարության ներքո՝ նրանց կողմից, ովքեր կրում են քահանայության բանալիները:)

Յուզադրեք Սփոփող Միության նախկին գերագույն նախագահներից Քույր Զինա Դ. Հ. Յանգի (1821–1901) և Քույր Զուլի Բ. Բեքի հետևյալ խոսքերը, որոնք վերաբերում են Սփոփող Միության նպատակներին և հրավիրեք երեք ուսանողի կարդալ մեջբերումները: Դասարանին խնդրեք հետևել և խորհել, թե այս մեջբերումներն ինչ են ուսուցանում Սփոփող Միության նպատակների մասին:



«Սփոփող Միությունը ... կազմավորվել է գրեթե կես դար առաջ Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից՝ Սուրբ Զառեմայության կարգով և դրա ղեկավարության ներքո՝ օրհնություններ պարգևելու աղքատների և կարիքավորներին, քաջալերելու թույլերին և հետ պահելու սխալներից, ավելի լավ զարգացման և կնոջ կարեկցանքն ու գթասրտությունը գործի դնելու համար, որպեսզի նա հնարավորություն ունենա ձեռք բերել հոգևոր ուժ և գործություն՝ մարդկության ընտանիքի փրկության աշխատանքում իրականացնելու ավելի մեծ բարիք» (Zina D. H. Young, "First General Conference of the Relief Society," *Woman's Exponent*, Apr. 15, 1889, 172):



«Մարգարե Ջոզեֆ Սմիթը սահմանել է Սփոփող Միության աշխատանքը և հաղորդել քույրերին իրենց նպատակը: ... Այսօր մենք ունենք մի կազմակերպություն, որը շարունակվում է ղեկավարվել մարգարեների, տեսանողների և հայտնողների կողմից» (Զուլի Բ. Բեք, «Սփոփող Միություն՝ սուրբ աշխատանք», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 111):

Busath.com

«Ճիշտ այնպես, ինչպես Տիրոջ մարգարեները շարունակ ուսուցանել են երեցներին և քահանայապետներին նրանց նպատակների և պարտականությունների մասին, նրանք նաև կիսվել են իրենց տեսիլքով Սփոփող Միության քույրերի մասին: Նրանց խորհրդից պարզ է դառնում, որ Սփոփող Միության նպատակներն են՝ մեծացնել հավատը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքներն ու տները և գտնել ու օգնել կարիքավորներին: *Հավատք, ընտանիք և սփոփանք*՝ այս երեք պարզ բառերը արտահայտում են մարգարեների տեսիլքը Եկեղեցու քույրերի մասին» (Զուլի Բ. Բեք, «Մարգարեների տեսիլքը Սփոփող Միության մասին՝ հավատք, ընտանիք, սփոփանք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2012, 83):

- Ինչպե՞ս են Սփոփող Միության նպատակներն օրհնում ողջ Եկեղեցին: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Սփոփող Միությունը ձգտում է մեծացնել հավատը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքներն ու տները և գտնել ու օգնել կարիքավորներին:** Ողջ Եկեղեցին օրհնվում է, երբ կանայք իրականացնում են այս նպատակները:)
- Ըստ ձեզ, ինչպե՞ս է Սփոփող Միությունն իրականացրել է իր նպատակները:

Յուզադրեք հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Եկեղեցին չէր լինի կատարելապես կազմակերպված, մինչև կանայք այսպես չկազմակերպվեին» [Ումուսքներ. Ջոզեֆ Սմիթ, 479]: ...

Ջոզեֆ Սմիթից բացի վերջին օրերի այլ մարգարեներ վկայել են, որ Սփոփող Միության կազմավորումը Վերականգնման ոգեշնչված մաս է, որի միջոցով կանայք Եկեղեցում կանչվում են հոգևոր պաշտոնների՝ ծառայելու միմյանց և օրհնելու ողջ Եկեղեցին: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ... ասել է. «Այս կազմակերպությունը ստեղծվել, լիազորվել, հաստատվել և կարգվել է Աստծո կողմից՝ ծառայելու կանանց և տղամարդկանց հոգիների փրկության համար» [Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (1998), 184]» (Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society [2011], 7):

- Ի՞նչ է ուսուցանում այս հատվածն այն մասին, թե ինչ դեր է խաղացել Սփոփող Միությունը ավետարանի Վերականգնման գործում: (Մինչ ուսանողները պատասխանում են, համոզվեք, որ նրանք հասկանում են այս ճշմարտությունը, նույնիսկ, եթե այն արտահայտվում է տարբեր բառերով. **Սփոփող Միությունը Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնման աստվածային ոգեշնչման մասն է:** Գրեք այդ ճշմարտությունը գրատախտակին:)
- Այն, որ Սփոփող Միության կազմավորումը հանդիսանում է Վերականգնման մաս, ինչպե՞ս է փոխել ձեր կյանքը:
- Ինչպե՞ս է Եկեղեցու կոչումներում կանանց մասնակցությունը օգնում Եկեղեցուն «կատարելապես կազմակերպվել»:

Կանայք և քահանայությունը

Բացատրեք ուսանողներին, որ կան մարդիկ, ովքեր կասկածի տակ են դնում այն հարցը, թե ինչո՞ւ կանայք չեն կարգվում քահանայության պաշտոններում: Շեշտեք, որ մինչ մենք չգիտենք, թե ինչու կանայք չեն կարգվում քահանայության պաշտոններում, սակայն մենք գիտենք, որ կանայք մասնակից են դառնում քահանայությանը՝ Եկեղեցու իրենց կոչումներում և իրենց տներում:



Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք: Ուսանողներին հանձնարարեք գտնել ուղիներ, որոնցով կանայք կարող են կիրառել քահանայության իշխանությունը.

Կանայք և քահանայությունը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսն ասել է.



Սփոփող Միությանն ուղղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդիկ Սմիթը, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Զվորումի Նախագահ էր, ասել է. «Չնայած որ քույրերին չի տրվել քահանայություն, այն չի շնորհվել նրանց, դա չի նշանակում, որ Տերը նրանց իշխանություն չի տվել: ...Եկեղեցու անդամին կամ քրոջը տրված է իշխանություն, որպեսզի Եկեղեցում որոշակի

ծառայություններ կատարեն, որոնք պարտադիր և բացարձակապես անհրաժեշտ են մեր փրկության համար, ինչպես օրինակ այն աշխատանքը, որը քույրերն անում են Տիրոջ Տանը: Նրանց տրված է իշխանություն անելու մեծ և հոյակապ գործեր, որոնք սուրբ են Տիրոջ համար և նույնքան պարտադիր են, որքան Քահանայություն կրող տղամարդկանց տրված օրհնությունները» [*Relief Society—An Aid to the Priesthood, Relief Society Magazine, Jan. 1959, 4*]:

Այդ նշանավոր ելույթի ժամանակ Նախագահ Սմիթը կրկին անգամ նշեց, որ կանանց տրվել է իշխանություն: Նա ասաց կանանց. «Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ավելացրեց, որ Սփոփող Միությանը «տրվել է զորություն և իշխանություն՝ շատ բաներ անելու: Այն աշխատանքը, որ նրանք կատարում են, արվում է աստվածային իշխանությամբ»: Եվ անշուշտ Եկեղեցում կանանց կամ տղամարդկանց կողմից կատարված աշխատանքը, լինի տաճարներում, թե ծխերում կամ ճյուղերում, արվում է քահանայության բանալիներ կրողների առաջնորդության ներքո: Այսպիսով, խոսելով Սփոփող Միության մասին, Նախագահ Սմիթը բացատրել է. «[Տերը] նրանց է տվել այդ հիանալի կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխերի եպիսկոպոսների ղեկավարության ներքո ... , հոգ տանելով մեր մարդկանց հոգևոր և ֆիզիկական շահերի մասին» [*Relief Society—An Aid to the Priesthood, 4–5*]: ...

Մենք սովոր չենք կանանց մասին խոսել, որպես Եկեղեցու իրենց կոչումներում քահանայության իշխանություն ունեցողների, սակայն ուրիշ ի՞նչ իշխանություն կարող է լինել: Երբ կինը՝ երիտասարդ, թե ծեր, ձեռնադրվում է քարոզելու ավետարանը՝ որպես լիաժամկետ միսիոներ, նրան տրվում է քահանայության իշխանություն՝ կատարելու քահանայության գործառնություն: Նույնը կարել է ասել, երբ կինը քահանայության բանալիներ կրողի ղեկավարման ներքո ի սպաս է դրվում ծառայելու որպես պաշտոնյա կամ ուսուցիչ Եկեղեցու որևէ կազմակերպությունում: Ցանկացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս գործադրում է քահանայության իշխանությունը» («Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 50–51):

- Ի՞նչ ճշմարտություններ եք սովորում Երեց Օուքսից Եկեղեցում կանանց դերերի և պարտականությունների մասին: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, համոզվեք, որ նրանք հասկանում են այս ճշմարտությունը. **Երբ կանայք ձեռնադրվում են Եկեղեցում ծառայելու համար, նրանք ստանում են քահանայության իշխանություն իրենց պարտականությունները կատարելու համար:**)

Դասարանում քննարկված ճշմարտությունների վերաբերյալ ուսանողների հասկացողությունը և նրանց զգացողությունները

խորացնելու համար ուսանողներին բաժանեք զույգերի և խնդրեք նրանց քննարկել հետևյալը.

- Մենք ինչպե՞ս կարող ենք ավելի լավ արտահայտվել Եկեղեցու կանանց մասին, որպեսզի արտահայտենք նրանց ներդրած ավանդի իրական մեծությունը:

Հրավիրեք ուսանողներին կիսվել Տիրոջ արքայությունում որպես աշակերտներ կանանց ազդեցության և նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ իրենց զգացումներով: Հորդորեք ուսանողներին գործել ըստ դասի ժամանակ իրենց զգացածի՝ հատկապես, կարևորելով Սփոփող Միության դերն իրենց կյանքում:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 25:
- Զուլի Բ. Բեք, «Սարգարենների տեսիլքը Սփոփող Միության վերաբերյալ. հավատք, ընտանիք, սփոփանք», *Ensign* կամ *L'Espresso*, մայիս 2012, 83-85:

Հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը

Նախաբան

Հիսուս Քրիստոսի ավետարանը շեշտում է այն վարդապետությունը, որ ամուսնությունը և ընտանիքը կարգված են Աստծո կողմից: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Հարությունից հետո ամուսնացած զույգերը կարող են շարունակել ամուսիններ մնալ: Տիրոջ կողմից տրված հայտնությունը բացատրում է, որ

«ամուսնության նոր և հավիտենական ուխտը» (Վևու 131.2) անհրաժեշտ է վեհացում ստանալու համար: Այս դասը ուսանողներին կօգնի պարզ հասկանալ, որ հավերժական ամուսնության համար զույգը պետք է կնքվի մեկի կողմից, ով կրում է քահանայության բանալիները, իսկ հետո ապրի արդար կյանքով:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Մելեատիալ ամուսնություն», *Ensign* կամ *Լիստինա*, նոյ. 2008, 92-95:
- David A. Bednar, “Marriage Is Essential to His Eternal Plan,” *Ensign*, June 2006, 82-87.
- Joshua J. Perkey, “Why Temple Marriage?” *New Era*, Aug. 2013, 30-32.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 49.15-17, 131.1-4

«Ամուսնության նոր և հավիտենական ուխտը»

Նշում. Երբ դուք ուսուցանեք այս դասը, հաշվի առեք, որ գուցե ունեք ուսանողներ, ովքեր ունեցել են բարդ ընտանեկան կյանք կամ ամուսնության և երեխաներ ունենալու հետ կապված վիշտ ու ցավ: Ձեր դասին նախապատրաստվելիս և ուսուցանելու ընթացքում հաշվի առեք այդ ուսանողների կարիքները:

Ասացեք ուսանողներին, որ 1831 թվականին Կիրթլենդում՝ Օհայո, Լեման Քոփլին միացել էր Եկեղեցուն: Նա եղել էր Քրիստոսի երկրորդ հայտնությանը հավատացողների միացյալ ընկերության անդամ, որոնց սովորաբար կոչում էին Շեյքերներ՝ նրանց երկրպագության ձևի համար, որը ներառում էր նրանց մարմինների շարժումները, մինչ նրանք երգում էին, պարում և ծափ տալիս երաժշտության տակ: Լեման Քոփլինը հավատում էր ավետարանին, նաև հավատում էր Շեյքերների որոշ ուսմունքներին: Նա այցելեց Ջոզեֆ Սմիթին և տեսիլքի միջոցով Տերը նրան 1831 թվականի մայիսի 7-ին տվեց մի հայտնություն, որն այսօր

հայտնի է որպես Վարդապետություն և Ուխտեր 49 բաժին:

(Վարդապետություն և Ուխտերի նախկին հրատարակություններում բաժնի նախաբանում այս ամսաթվի փոխարեն նշվում էր 1831 թվականի մարտը: Պատմաբանները վերջերս պարզել են, որ ավելի ստույգ ամսաթիվը 1831 թվականի մայիսի 7-ն է:)

Շեյքերները մերժում էին ամուսնությունը և ընդունում ողջ կյանքում ամուրի մնալու համոզմունքը (զերծ մնալով սեռական հարաբերություններից): Տերը հայտնության միջոցով ուղղեց այս սխալ վարդապետությունը և նաև պատվիրեց Լեման Քոփլիին և ուրիշներին՝ քարոզել ավետարանը Շեյքերներին:

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 49.15-17 հատվածները՝ փնտրելով, թե ինչ ասաց Տերը՝ ամուսնության և ընտանիքի կարևորության մասին: Հարցրեք.

- Համաձայն այս հատվածների, Տերն ի՞նչ է ուսուցանում ամուսնության վերաբերյալ: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ ամուսնությունը կարգված է Աստծո կողմից, «որպեսզի երկիրը կատարի իր ստեղծման նպատակը»: (Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալ ճշմարտությունները. **Ամուսիններին պատվիրված է երեխաներ ունենալ: Երկիրը ստեղծվեց, որպեսզի ապահովեր մի վայր, որտեղ Աստծո զավակները կարող են ապրել որպես ընտանիքներ:**)
- Այս հատվածներում ուսուցանված ճշմարտությունների ըմբռնումը ինչպե՞ս կարող է օգնել մեզ՝ բացատրել ամուսնության վերաբերյալ Եկեղեցու ուսմունքները:

Բացատրեք, որ հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետության կարևորության վերաբերյալ Սրբերի հասկացողությունը տարիներ անց մեծապես աճեց: 1843 թվականի մայիսի 16-ին Ջոզեֆ Սմիթը մեկնեց Ռեյնոս՝ Բլիմոյս: Երբ Մարգարեն հյուրընկալվեց Բենիամին և Մելիսա Ջոնսոնների տանը, ուսուցանեց նրանց հավերժական ամուսնության մասին: Ռեյնոսում տրված Մարգարեի որոշ հրահանգներ գրված են Վարդապետություն և Ուխտեր 131-ում: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 131.1-4 հատվածները, այնուհետև հարցրեք.

- Մենք ի՞նչ պետք է անենք սելեստիալ արքայության ամենաբարձր աստիճանին հասնելու համար: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Սելեստիալ արքայության ամենաբարձր աստիճանին հասնելու համար մենք պետք է մտնենք ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ:** Բացատրեք, որ *նոր* բառը այս համատեքստում նշանակում է, որ այս ուխտը նոր է վերականգնվել մեր տնտեսությունում: *Հավիտենական* եզրույթը նշանակում է, որ այս ուխտը միշտ գոյություն է ունեցել և կշարունակվի

ողջ հավերժության մեջ: Կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այդ սահմանումներն իրենց սուրբ գրությունների լուսանցքում:)

- Ինչպե՞ս են տղամարդը և կինը մեր օրերում մտնում «ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ»:

Շեշտեք, որ տղամարդիկ և կանայք կարող են մտնել ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ միայն սուրբ տաճարների ներսում: Անհատները, ովքեր ամուսնացել են տաճարից դուրս, իրենց ամուսնության երդումներում կարող են ներառել «ամուսնացած ժամանակի և հավերժության համար» եզրույթները, սակայն Աստված չի պատվի այդ ամուսնությունները հավերժության մեջ:

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք: Խրախուսեք ուսանողներին փնտրել Երեց Նելսոնի միտքն այն մասին, թե ինչու էր հավերժական ամուսնությունն այդքան կարևոր.



«Ամուսնության թեման շատ է քննարկվում աշխարհով մեկ, որտեղ գոյություն ունեն համատեղ կյանքի մի քանի տարբերակներ: Խոսելով այս թեմայի մասին՝ իմ ելույթի նպատակն է հայտարարել որպես Տիրոջ Առաքյալ, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև սուրբ է. այն կարգված է Աստծո կողմից: Ես նաև հաստատում եմ տաճարային ամուսնության առաքիլությունը: Դա ամուսնության ամենաբարձր և հարատև տարբերակն է, որը մեր Արարիչը կարող է առաջարկել իր զավակներին:


Փրկությունը անձնական հարց է, մինչդեռ վեհացումը ընտանեկան հարց է: ...

Հավերժական կյանքին արժանանալու համար մենք պետք է հավերժական և հավիտենական ուխտ կապենք մեր Երկնային Հոր հետ [տես ՎնՈւ 132:19]: Սա Նշանակում է, որ տաճարային ամուսնությունը ոչ միայն ամուսնու և կնոջ միջև է. այն ընդգրկում է նաև Աստծո հետ ընկերակցությունը [տես Մատթեոս ԺԺ.6]» («Սելենտիալ ամուսնություն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 92–93):

- Ձեր կարծիքով, ի՞նչ նշանակություն ունի այս նախադասությունը. «Փրկությունը անձնական հարց է, մինչդեռ վեհացումը ընտանեկան հարց է»:
- Ի՞նչ է նշանակում «Աստծո հետ ընկերակցություն» ձեռք բերելը: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ամուսնության մեջ Աստծո հետ ընկերակցություն ունենալը: (Միայն ամուսնության դեպքում է անհատը ուխտ կապում մեկ ուրիշի և Աստծո հետ: Ավետարանի մյուս բոլոր ուխտերը կապվում են անհատի և Աստծո միջև:)
- Ինչպե՞ս կարող է հավերժական ամուսնության և ընտանիքի վերականգնված վարդապետությունը մեծացնել սիրառատ և հարատև ամուսնություն ունենալու անհատի ցանկությունը:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Փարլի Պ. Պրատը (1807–57) բացատրել է, թե ինչ ազդեցություն է ունեցել նրա վրա այս

վերականգնված վարդապետության վերաբերյալ գիտելիքը: Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ հետևյալը.



«[Ջոզեֆ Սմիթն] էր, որ ինձ ուսուցանեց, որ իմ կիևը՝ իմ սրտակից ընկերը, կարող է լինել ինձ հետ ժամանակի և ողջ հավերժության ընթացքում: ... Նրանից էր, որ ես սովորեցի, որ մենք պետք է ձեռք բերենք այդ կապվածությունը և զարգանանք ու աճենք նույն կերպ ողջ հավերժության մեջ, մինչ մեր անվերջ միության արդյունքում կունենանք սերունդ՝ այնքան անթիվ, որքան երկնքի աստղերը կամ ծովի ավազը: ... Ես սիրել եմ նախկինում, սակայն չեմ իմացել, թե ինչու: Բայց այժմ ես սիրում եմ անկեղծորեն՝ բարձրացնող և վեհացնող խանդավառությամբ» (*Autobiography of Parley P. Pratt*, ed. Parley P. Pratt Jr. [1938], 297–98):

Նախքան դասի շարունակելը խելամիտ կլինի հակիրճ ձևով քննարկել հետևյալը.

«Չնայած Եկեղեցու որոշ անդամներ ցանկանում են ամուսնանալ, նրանք մնում են միայնակ ոչ իրենց մեղքով: Եթե դուք գտնվում եք այդ վիճակում, համոզված եղեք, որ «Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին» (Հռովմայեցիս Ը.28): Երբ դուք մնում եք արժանավոր, մի օր՝ այս կամ հաջորդ կյանքում, ձեզ կտրվեն հավերժական ընտանեկան հարաբերությունների բոլոր օրհնությունները» (*Հավատքի և Հավատարիմ* [2004], 17):

Վարդապետություն և Ուխտեր 132.1-21

Սելենտիալ ամուսնությունը Էական է վեհացման համար

Բացատրեք, որ Վարդապետություն և Ուխտեր 131-ում գրված հրահանգները տալուց գրեթե երկու ամիս անց Ջոզեֆ Սմիթը ստացավ հայտնություն, որն այժմ հայտնի է որպես Վարդապետություն և Ուխտեր 132: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132 բաժնի նախաբանը: Բացատրեք, որ բազմակնության կիրառմանը կանդիդատացման հաջորդ դասին: Հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.3-6 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել և գտնել բառեր ու արտահայտություններ, որոնք նկարագրում են ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ մտնելու կարևորությունը: Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են այս հատվածներում պարզաբանում հավերժական ամուսնության կարևորությունը:
- Որո՞նք են այդ վարդապետությունը մերժելու հետևանքները: (Դուք կարող եք բացատրել, որ *նզովված* բառը նշանակում է, որ մարդու հավերժական զարգացումը կանգ է առնում:)

Նշում. Մի քանի բույս տրամադրեք և շեշտեք գլխավոր բառերն ու արտահայտությունները նկատելու սուրբ գրությունների ուսումնասիրության կարևոր հմտությունը, որը նրանք հենց նոր օգտագործել են Վարդապետություն և Ուխտեր 132.3-6 հատվածների հետ

կապված: Սուրբ գրություններն ուսումնասիրելիս կարևոր է նկատել և հասկանալ բառերն ու արտահայտությունները: 3-6 հատվածներում կարևոր է հասկանալ հետևյալ արտահայտությունները. «ընդունես և հնազանդվես», «պետք է հնազանդվեն», «եթե դու չմնաս այդ ուխտի մեջ, ապա դու նզովված ես», «ոչ ոք չի կարող մերժել», «պարտավոր է և պետք է»: Այս արտահայտություններից մի քանիսը նաև սուրբ գրությունների գաղափարների միջև եղած կապերի օրինակներ են: Առնչությունները ցույց են տալիս հարաբերություն կամ կապ գաղափարների միջև: Օրինակ, հատված 3-ը ցույց է տալիս նախապատրաստվելու, ընդունելու և հնազանդվելու գաղափարների միջև կապը:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.7-8 հատվածները, ուշադրություն դարձնելով Տիրոջ օրենքի պայմաններին, որոնք հնարավոր են դարձնում ամուսնուն և կնոջը՝ ապրելու որպես ամուսնացած զույգ այս կյանքից հետո:

- Համաձայն այս հատվածների, ի՞նչ անհրաժեշտ պայմաններ կան, որպեսզի ամուսնությունը հավերժ լինի: (Մինչ ուսանողները պատասխանում են, հետևյալ ճշմարտությունը գրեք գրատախտակին.
Երբ ուխտը կապվում է քահանայության պատշաճ իշխանությամբ և կնքվում Խոստումի Սուրբ Հոգով, այն հավերժ կլինի:)

Կիսվեք Խոստումի Սուրբ Հոգու վերաբերյալ հետևյալ սահմանումով. «Սուրբ Հոգին Խոստումի Սուրբ Հոգին է (Գոր. Բ.33): Նա հաստատում է մարդկանց արդար գործերի, արարողությունների և ուխտերի ընդունելի լինելն Աստծո կողմից: Խոստումի Սուրբ Հոգին Հորը վկայում է, որ փրկության արարողությունները կատարվել են պատշաճ ձևով, և որ դրանց հետ կապված ուխտերը պահպանվել են» (Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Խոստումի Սուրբ Հոգի», scriptures.lds.org):

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այդ սկզբունքը, խորհեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի (1915–85) հետևյալ հայտարարությունը ցուցադրելու մասին.



«Կնքել՝ նշանակում է հաստատել, արդարացնել կամ վավերացնել: Այդպիսով, գործողությունը, որը կնքված է Խոստումի Սուրբ Հոգով, հաստատված է Սուրբ Հոգով, այն, ինչը վավերացված է Տիրոջ կողմից, և անհատը, ով իր վրա է վերցրել պարտավորությունը, արդարացված է Հոգով այն բաներում, որոնք նա արել է: Վավերացման հաստատող կնիքը դրվում է գործողության վրա միայն այն դեպքում, երբ նրանք, ովքեր պայմանագիր են կնքում, անձնական արդարակեցության արդյունքում արժանի են ստանալու աստվածային թույլտվություն» (*Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 361–62):

Տերը շարունակեց ուրվագծել հավերժական ամուսնության համար անհրաժեշտ պայմաններն ու օրհնությունները, ինչպես դրանք տրված են Վարդապետություն և Ուխտեր 132.19-21-ում: Այս հատվածն ուսումնասիրելու համար ուսանողներին հանձնարարեք աշխատել զույգերով: Զույգերին խնդրեք կազմել երկու ցանկ. (1) հավերժական ամուսնության պայմանները և (2) օրհնությունները, որոնք ստանում ենք,

երբ կատարում ենք այդ պայմանները: Երբ նրանք ավարտեն, ցանկերը կարող են ներառել հետևյալը.

Հավերժական ամուսնության պայմանները

Ամուսնությունը պետք է կատարվի համաձայն Տիրոջ օրենքի և «նոր ու հավիտենական ուխտի»:

Ամուսնությունը պետք է կնքվի Խոստումի Սուրբ Հոգով:

Ամուսնությունը պետք է կատարվի մեկի կողմից, ով կրում է քահանայության բանալիները:

Ամուսնացած զույգը պետք է մնա Աստծո ուխտի մեջ:

Ստացվող օրհնությունները

Ամուսնացած զույգը առաջ կգա Առաջին Հարության մեջ:

Ամուսնացած զույգը կժառանգի զահեր, թագավորություններ, իշխանություններ, գործություններ, տիրապետություններ և բոլոր բարձրությունները և խորությունները:

Ֆիզիկական մահից հետո ամուսնությունն ամբողջությամբ ուժի մեջ կլինի:

Ամուսնացած զույգը կանցնի հրեշտակների մոտով:

Ամուսնացած զույգը կվեհացվի և փառք կունենա բոլոր բաներում:

Ամուսնացած զույգը կունենա «սերունդների շարունակությունը հավիտյանս հավիտենից» (նրանց ընտանիքը և սերունդները կշարունակվեն ողջ հավերժության մեջ, նրանք կունենան հավերժական զարգացում):

Ամուսնացած զույգը աստվածներ կլինեն և չեն ունենա վերջ:

Ամուսնացած զույգը կլինի բոլոր բաներից վեր և կունենա ողջ գործությունը, և բոլոր բաները ենթակա կլինեն նրանց:

Քննարկեք հետևյալ հարցերը, որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ հավերժական ամուսնության անհրաժեշտ պայմանները և խոստացված օրհնությունները.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «մնալ» ամուսնական ուխտի մեջ: (Դուք կարող եք բացատրել, որ *մնալ* բառի իմաստներից մեկը շարունակելն է: Դա նաև նշանակում է ապրել համաձայն ուխտի:
- Ինչո՞ւ տաճարում կնքված լինելն ինքնին բավարար չէ հավերժական ամուսնությանը հասնելու համար:
- Ի՞նչ մտքեր և զգացողություններ եք ունենում, երբ մտածում եք այն մասին, թե ի՞նչ է ձեզ խոստանում Երկնային Հայրը:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ.

Նելսոնի հետևյալ հայտարարությունը.



«Սելեստիալ ամուսնությունը հավերժական կյանքին նախապատրաստվելու առանցքային կետն է: Այն պահանջում է, որ մարդ ամուսնանա ճիշտ մարդու հետ, ճիշտ վայրում, ճիշտ իշխանությամբ և հավատարմորեն հնազանդվի այդ սրբազան ուխտին: Այն ժամանակ մարդը կարող է համոզված լինել Աստծո արքայության մեջ վեհացում ձեռք բերելու հարցում («Սելեստիալ ամուսնություն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 94):

- Ինչպե՞ս կբացատրեք նրան, ով Եկեղեցու անդամ չէ, «ճիշտ վայրում, ճիշտ իշխանությամբ» ամուսնանալու կարևորությունը:
- Հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետության կարևորությունը իմանալուց հետո դուք ի՞նչ կարող եք անել այժմ, որպեսզի նախապատրաստվեք հավերժական ամուսնության և ամուր հարաբերություններ ստեղծելու համար:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ի՞նչ անհրաժեշտ փոփոխություն կարող են կատարել իրենց կյանքում, որպեսզի ավելի լավ պատրաստված լինեն տաճարային կնքման համար, կամ որպեսզի պահեն այդ կնքման հետ կապված ուխտերը: Կիսվեք ձեր վկայությամբ, որ հավերժական ամուսնությանը ձգտելը արժանի է մեր զոհաբերությանը և ջանքերին:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 49.15–17, 131.1–4, 132.1–24:
- Ռասսել Մ. Նելսոն, «Սելեստիալ ամուսնություն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 92–95:

Բազմակնություն

Նախաբան

Մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև ամուսնությունը Տիրոջ օրենքն է, քանի դեռ Նա չի պատվիրում մեկ այլ բան (տես Հակոբ 2.27–30): Մարգարե Ջոզեֆ Սմիթին պատվիրվեց վերականգնել բազմակնության սովորույթը, որը կիրառվեց Եկեղեցում կես դարից ավելի, մինչև Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը ոգեշնչվեց Տիրոջ կողմից՝ դադարեցնել այդ սովորույթը: Բազմակնությունը

հավատքի մեծ փորձություն էր Ջոզեֆ Սմիթի և շատերի համար, ովքեր կիրառեցին այն: Երբ ուսանողները հավատք գործադրեն, նրանք կարող են իմանալ, որ վերջին օրերում բազմակնության կիրառումը բոլոր բաների Վերականգնման մի մասն էր:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- “Plural Marriage in The Church of Jesus Christ of Latter-day Saints,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- “Plural Marriage in Kirtland and Nauvoo,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- “Plural Marriage and Families in Early Utah,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- “The Manifesto and the End of Plural Marriage,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).

Նշում. Ավետարանական թեմաների ակնարկները ավելի շատ նյութ կտան ձեզ, քան դուք կարող եք ուսուցանել ձեզ հատկացված ժամանակում: Խնդրում ենք հիշել այդ՝ դասը նախապատրաստելիս և ուսուցանելիս:

Ուսուցման առաջարկներ

Հակոբ 2.27–30, Վարդապետություն և Ուխտեր 132.1–2, 34–48, 54, 63

Տերը հայտնում է բազմակնության կիրառման մասին

Բացատրեք, որ 1831 թվականին, երբ Ջոզեֆ Սմիթն աշխատում էր Հին Կտակարանի ոգեշնչված թարգմանության վրա, որը հայտնի է որպես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, նա կարդաց, որ որոշ հնադարյան մարգարեներ կիրառել են բազմակնությունը (նաև կոչվում է բազմամուսնություն): Այդ մարգարեների թվում են եղել Աբրահամը, Հակոբը, Մովսեսը և Դավիթը: Ջոզեֆ Սմիթն ուսումնասիրում և խորհում էր սուրբ գրությունների շուրջ, որպեսզի իմանար, թե ինչպես էին այս մարգարեները արդարացվում այդ սովորույթի կիրառության դեպքում (տես ՎնՈւ 132.1–2): Նրա հարցերին Տերը պատասխանեց հայտնության միջոցով, որն այսօր հայտնի է, որպես Վարդապետություն և Ուխտեր 132 բաժին: Չնայած որպես այս հայտնության ամսաթիվ նշվում է 1843 թվականի հուլիսի 12-ը, հավանական է, որ Ջոզեֆ Սմիթը, 1831 թվականից սկսած, ժամանակ առ ժամանակ այս բաժնում տրված սկզբունքների վերաբերյալ հայտնություն էր ստանում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.34–36 հատվածները: Դասարանին

խնդրեք հետևել, փնտրելով, թե ինչու Աբրահամն ու Սարրան սկսեցին կիրառել բազմակնությունը:

- Համաձայն հատված 34-ի, ինչո՞ւ Սարրան մեկ այլ կին տվեց Աբրահամին: Սա ի՞նչ կարող է սովորեցնել մեզ բազմակնության մասին: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Բազմակնությունն ընդունելի սովորույթ է միայն այն դեպքում, երբ Տերն է պատվիրում այն:**)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 2.27, 30 հատվածները: Շեշտեք հետևյալ սկզբունքը. **Մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև ամուսնությունը Տիրոջ սահմանած չափանիշն է, քանի դեռ Նա չի պատվիրում մեկ այլ բան:** Նշեք, որ այս հատվածներում նաև տրվում է բազմակնություն կիրառելու Տիրոջ տված պատճառը՝ «սերունդ աճեցնել [Տիրոջ] համար», մեծացնելով հավատարիմներին ծնված երեխաների թիվը (տես նաև ՎնՈւ 132.63):

Բացատրեք, որ Տերը Զոգեֆ Սմիթին հայտնեց, ինչպես տրված է Վարդապետություն և Ուխտեր 132.37-43, որ երբ Իր ժողովուրդը կիրառում է բազմակնությունը, քանի որ Նա է պատվիրել նրանց անելու այդ, նրանք չեն մեղադրվում շնության մեջ: Այնուամենայնիվ, եթե մեկը կիրառում է բազմակնությունը՝ առանց Տիրոջից Իր մարգարեի միջոցով պատվիրան ստանալու, մեղադրվում է շնության մեջ: Ուսանողների ուղադրությունը գրավեք այն փաստի վրա, որ *կործանվել* բառը 41 և 54 հատվածներում նշանակում է, որ նրանք, ովքեր դրժում են իրենց սուրբ ուխտերը՝ ներառյալ իրենց ամուսնական ուխտը, կհեռացվեն Աստծուց և Նրա ուխտյալ ժողովրդից (տես նաև Գործք Առաքելոց 3.22-23, 1 Նեփի 22.20):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.40 հատվածը և գտնել բազմակնության կիրառման մեկ այլ պատճառ, որը տրվել է Տիրոջ կողմից:

- Համաձայն հատված 40-ի Տերը ի՞նչ էր պատրաստվում անել վերջին տնտեսությունում: («Վերականգնիր բոլոր բաները»):

Բացատրեք, որ «բոլոր բաները» արտահայտությունը վերաբերում է ավետարանի օրենքներին և արարողություններին, որոնք հայտնի են դարձվել նախկին տնտեսություններում: Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Վերջին օրերում բազմակնության օրենքով ապրելու պատվիրանը բոլոր բաները Վերականգնելու մի մասն էր** (տես նաև Գործք Առաքելոց 3.20-21):

Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.45, 48 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով, թե ինչը հնարավոր դարձրեց, որ Զոգեֆ Սմիթը մասնակցի բոլոր բաները Վերականգնելուն: Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Բազմակնությունը կարող է լիազորվել միայն Եկեղեցու Նախագահին տրված քահանայության բանալիների միջոցով:**



Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք թերթիկի մեկական օրինակ, որը գտնվում է այս դասի վերջում: Հրավիրեք որևէ

ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին բաժինը, որի վերնագիրն է «Բազմակնություն»:

- Իմացությունը, որ բազմակնությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրվել էր հայտնության միջոցով, ինչպես կարող է օգնել ձեզ՝ ավելի լավ հասկանալ դրա կիրառությունը Եկեղեցու վաղ շրջանում:

Բազմակնության կիրառությունը հավատքի փորձություն էր

Դասարանի կեսին հանձնարարեք մտքում կարդալ թերթիկի «Դժվար պատվիրան» վերնագրով բաժինը: Թող դասարանի մյուս մասը կարդա «Հավատքի փորձություն» վերնագրով բաժինը: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչը կարող էր պատճառ հանդիսանալ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը և այլոք վարանեին կիրառել բազմակնությունը:
- Ի՞նչ փորձառություն ունեցան Ջոզեֆ Սմիթը, Լյուսի Վոքերը և այլոք, որն ի վերջո օգնեց նրանց հաղթահարել մեծ դժվարությունները, որպեսզի նրանք կարողանային ընդունել բազմակնության օրենքը և ապրել դրանով:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ թերթիկի «Ջոզեֆ Սմիթը և բազմակնությունը» վերնագրով բաժինը:

Բացատրեք ուսանողներին, որ մենք շատ բան չգիտենք Եկեղեցու վաղ շրջանում բազմակնության կիրառման մասին: Օրինակ, *կնքում* եզրույթի մեր ներկայիս հասկացողությունը ճիշտ նույնը չէ, ինչ այդ եզրույթի հասկացողությունն էր 1840-ականներին, երբ կնքման կիրառությունը դեռ նոր էր և կիրառման որոշ ոլորտներ դեռևս լիովին չէին հասկացվում: Մենք լսում ենք *կնքում* եզրույթը և մեխանիկորեն մտածում ենք *ամուսնության* մասին, սակայն Ջոզեֆ Սմիթի և վաղ շրջանի Սրբերի համար *կնքումը* ոչ միշտ էր նշանակում *ամուսնություն* ամբողջական իմաստով՝ ի նկատի ունենալով որպես ամուսին և կին միասին ապրելը: Բազմակնության կիրառման շատ մանրամասներ գաղտնի են պահվել, և պատմական գրառումները պարզապես չեն պատասխանում մեր բոլոր հարցերին: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել դասի վերջում տրված ուսանողի ընթերցարանի նյութերը, որպեսզի նրանք լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերեն բազմակնության վերաբերյալ:

Դուք կարող եք հիշեցնել ուսանողներին, որ երբ նրանք ուսումնասիրեն բազմակնությունը, նրանք պետք է հիշեն օրինաչափությունը, որին Մարգարե Ջոզեֆ Սմիթը հետևեց ավետարանի իր ուսումնասիրության ժամանակ: Նա ուսումնասիրեց, խորհեց և աղոթեց, որպեսզի գիտնի ի՞նչ ձեռք բերի: Նրանք պետք է հիշեն նաև, որ բազմակնության վերաբերյալ բազմաթիվ ոչ հավաստի տեղեկություններ կան համացանցում ու շատ տպագիր աղբյուրներում: Որոշ հեղինակներ, ովքեր գրում են Եկեղեցու և դրա պատմության մասին, ներկայացնում են համատեքստից դուրս տեղեկություններ կամ ներառում են մասնակի ճշմարտություններ, որոնք կարող են մոլորեցնող լինել: Այս գրառումներից մի քանիսի նպատակը հավատքը կործանելն է:

Պաշտոնական Հայտարարություն 1

Տերը հայտնում է, որ Վերջին Օրերի Սրբերը պետք է դադարեցնեն բազմակնության կիրառությունը

Բացատրեք, որ բազմակնությունը լայն կիրառում գտավ Յուսայի տարածք Սրբերի ժամանելուց հետո և այնուհետև դադարեցվեց հայտնության համաձայն: Հրավիրեք մի քանի ուսանողների՝ հերթով բարձրաձայն կարդալ թերթիկի «Ընդդիմություն բազմակնությանը» և «Երկրորդ հռչակագիրը» վերնագրերով բաժինները:

- Ի՞նչ հետևանքների բախվեցին վաղ շրջանի Վերջին Օրերի Սրբերն այն պատճառով, որ հնազանդվեցին բազմակնություն կիրառելու Տիրոջ պատվիրանին:

Հրավիրեք մի քանի ուսանողների Վարդապետություն և Ուխտերից հերթով բարձրաձայն կարդալ Պաշտոնական Հայտարարություն 1-ի վերջին երկու պարբերությունները և «Քաղվածքներ հռչակագրի վերաբերյալ նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի երեք ելույթներից» տեքստի առաջին և յոթերորդ պարբերությունները, որ հետևում է Պաշտոնական Հայտարարություն 1-ին: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ էր Սրբերին ուսուցանում Նախագահ Վուդրուֆը: (Նրա ուսուցանած որոշ սկզբունքներ ներառում էին հետևյալը. **Տերը երբեք թույլ չի տա, որ Եկեղեցու Նախագահը մոլորեցնի Եկեղեցին: Տերն առաջնորդում է Իր Եկեղեցին Եկեղեցու Նախագահին տրված հայտնության միջոցով:**)

Հետևյալ տեքստը կարող է օգնել բազմակնության կիրառությունը դադարեցնելու որոշման վերաբերյալ հետագա բացատրությանը.




«Նախագահ Ջորջ Ք. Քենոնը անդրադարձել է հայտնության գործընթացին, որն առաջ բերեց հռչակագիրը. «Եկեղեցու Նախագահությունը պետք է քայլի ճիշտ այնպես, ինչպես դուք եք քայլում», ասել է նա: «Նրանք պետք է քայլ դնեն այնպես, ինչպես դուք եք քայլ դնում: Նրանք պետք է հենվեն Աստծո հայտնությունների վրա, երբ դրանք տրվում են նրանց: Նրանք չեն կարող ի սկզբանե տեսնել վերջը, ինչպես Տերն է տեսնում»: «Այն ամենը, ինչ մենք կարող ենք անել,- ասել է Քենոնը, խոսելով Առաջին Նախագահության մասին,- Աստծո միտքը և կամքը փնտրելն է, և երբ այն տրվում է մեզ, չնայած երբեմն այն բոլոր զգացումների հետ, որոնք մենք նախկինում ունեցել ենք, մենք չունենք ուրիշ ոչ մի տարբերակ, մենք պետք է կատարենք այն քայլը, որ Աստված է ցույց տալիս և վստահենք Նրան» ("The Manifesto and the End of Plural Marriage," Gospel Topics, lds.org/topics):

Դասի վերջում ուսանողներին հարցրեք.

- Հիմնվելով ձեր սովորածի վրա՝ դուք ինչպե՞ս կպատասխանեք, եթե մեկը հարցնի ձեզ, թե արդյո՞ք Վերջին Օրերի Սրբերը կիրառում են բազմակնություն:

Կիսվեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերով.



«Եթե մեր անդամներից մեկը կիրառում է բազմակնություն, նրան հեռացնում են Եկեղեցուց, որն ամենալուրջ պատիժն է, որ Եկեղեցին կարող է կիրառել: ... Ավելի քան մեկ դար առաջ Աստված հստակ հայտնեց Իր մարգարե Վիլֆորդ Վուդրուֆին, որ բազմակնության կիրառումը պետք է դադարեցվի, որը նշանակում է, որ այժմ այն դեմ է Աստծո օրենքին: Նույնիսկ այն երկրներում, որտեղ քաղաքացիական կամ կրոնական օրենքը թույլ է տալիս բազմակնություն, Եկեղեցին ուսուցանում է, որ պետք է լինի մենամուսնություն և իր անդամության մեջ չի ներառում նրանց, ովքեր կիրառում են բազմակնությունը» ("What Are People Asking about Us?" *Ensign*, Nov. 1998, 71–72).

Հետևյալ պարբերությունը կարող է օգտակար լինել, եթե դուք քննարկեք Եկեղեցու ներկայիս սովորությունները.

«Ջոզեֆ Սմիթի ուսմունքների համաձայն Եկեղեցին թույլ է տալիս տղամարդուն, ում կինը մահացել է, կնքվել մեկ այլ կնոջ հետ, երբ նա կրկին ամուսնանում է: Ավելին, անդամներին թույլ է տրվում արարողություններ կատարել մահացած տղամարդկանց և կանանց համար, ովքեր երկրի վրա ամուսնացել են մի քանի անգամ, կնքելով նրանց բոլոր ամուսինների հետ, ում հետ նրանք օրենքով ամուսնացած են եղել: Հաջորդ կյանքում այս հարաբերությունների ճշգրիտ եությունը հայտնի չէ, և բազմաթիվ ընտանեկան հարաբերություններ պարզ կդառնան գալիք կյանքում: Վերջին Օրերի Սրբերին քաջալերվում է վստահել իմաստուն Երկնային Հորը, ով սիրում է Իր զավակներին և ամեն ինչ անում նրանց աճի ու փրկության համար» ("Plural Marriage in Kirtland and Nauvoo," Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics)):

Նախքան դասի ամփոփումը ուսանողներին տեղեկացրեք, որ որոշ մարդիկ, ովքեր ուրացել են Եկեղեցին, բազմակնություն են կիրառում մեր օրերում: Նրանք համոզում են մարդկանց աղոթել և խորհել, թե արդյո՞ք ճիշտ է բազմակնության կիրառումն այսօր: Մենք չպետք է ձգտենք այնպիսի հայտնություն ստանալ, որը հակասում է Իր մարգարեների միջոցով Տիրոջ հայտնածին: Իր մարգարեի միջոցով Տերը հայտնել է, որ բազմակնության կիրառությունը դադարեցվել է Եկեղեցում: Ցանկացած մարդ, ով այսօր քաջալերում է բազմակնության կիրառումը, Տիրոջ ծառան չէ:

Կիսվեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին ձեր վկայությամբ: Դուք կարող եք վկայել, որ նա Աստծուց հայտնություն ստացավ և հնազանդվեց դրան, ճիշտ ինչպես արել էին հնադարյան մարգարեներ Աբրահամը, Իսահակը և Հակոբը (տես ՎեՌՈ 132.37):

Ուսանողի ընթերցարան

- Հակոբ 2.27–30, Վարդապետություն և Ուխտեր 132.1–3, 34–48, 54, 63, Պաշտոնական Հայտարարություն 1:
- "Plural Marriage in The Church of Jesus Christ of Latter-day Saints," Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).

Հասկանալ բազմակնությունը

Բազմակնություն

«Վերջին Օրերի Սրբերը հավատում են, որ մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև ամուսնությունը Տիրոջ մշտապես գործող օրենքն է ամուսնության վերաբերյալ: Աստվածաշնչյան ժամանակներում Տերը պատվիրել է ոմանց կիրառել բազմակնությունը՝ մեկ տղամարդու և մեկից ավելի կանանց ամուսնությունը: 1840-ականների սկզբին հայտնության միջոցով Տերը պատվիրեց Ջոզեֆ Սմիթին հաստատել բազմակնության կիրառությունը Եկեղեցու անդամների մեջ: Կես դարից ավել Եկեղեցու Նախագահի ղեկավարությամբ բազմակնությունը կիրառվեց Վերջին Օրերի որոշ Սրբերի կողմից» («Plural Marriage in The Church of Jesus Christ of Latter-day Saints,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.churchofjesuschrist.org/gospel-topics/plural-marriage)):

Դժվար պատվիրան

Էլիզա Ռ. Սնոուն (1804–87)՝ Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահը, կնքվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ: Նա գրառել է հետևյալ փորձառությունը, որի ժամանակ Մարգարե Ջոզեֆն ուսուցանել է բազմակնության սկզբունքը նրա եղբայր Լորենզո Սնոունին:

«Մարգարե Ջոզեֆն իր սիրտը բացեց [Լորենզո Սնոունի առաջ] և նկարագրեց իր՝ բազմակնությունը ներկայացնելու հետ կապված անտանելի հոգեկան ծանր ապրումները, երբ փորձել էր հաղթահարել նողկանքի զգացումը, որը կրթության ուժի և հասարակական սովորույթի բնական արդյունքն էր: Նա ճանաչում էր Աստծո ձայնը. նա գիտեր, որ Ամենակարողը պատվիրում էր նրան առաջ շարժվել, օրինակ ծառայել և հաստատել Սելենսիալ բազմակնությունը: Նա գիտեր, որ նա ոչ միայն պետք է պայքարեր և հաղթահարեր իր անձնական նախապաշարումները և կանխակալ կարծիքը, այլ ողջ քրիստոնյա աշխարհն էր իր ուշադրությունը սևեռել նրա վրա: Սակայն Աստված, ով բոլորից բարձր է, տվել էր պատվիրան և Նրան պետք էր հնազանդվել: Մինչ Մարգարեն ժամանակ առ ժամանակ վարանում էր և հետաձգում իր քայլերը, Աստծո մի հրեշտակ կանգնեց նրա կողքին՝ սուրը ձեռքին և ասաց նրան, որ եթե նա առաջ չգնար և չհաստատեր բազմակնությունը, նրա Քահանայությունը կվերցվեր նրանից և նա կկործանվեր: Այս վկայությամբ նա կիսվեց ոչ միայն իմ եղբոր հետ, այլ նաև ուրիշների հետ, վկայություն, որին չի կարելի հակառակվել [հերքել]» (*Biography and Family Record of Lorenzo Snow* [1884], 69–70):

Հավատքի փորձություն

Շատերը, ովքեր պայքարում էին բազմակնության սկզբունքի դեմ, օրինվեցին սկզբունքի ճշմարտության վերաբերյալ հաստատող հոգևոր վկայությամբ:

«Համաձայն Շելեն Մար Թիմբալի՝ Ջոզեֆ Սմիթը հայտարարել է, որ «այս սկզբունքի կիրառումը լինելու է ամենադժվար փորձությունը, որով Սրբերը երբևէ ստիպված կլինեն փորձել իրենց հավատը»: Չնայած այն եղել է իր կյանքի «ամենադժան» փորձությունը, նա վկայել է, որ այն դարձել է նաև «մեծագույն օրհնություններից մեկը»: ...

Լյուսի Վոքերը հիշում էր իր հոգու շփոթմունքը, երբ Ջոզեֆ Սմիթը առաջարկեց նրան դառնալ իր կինը: «Իմ հոգու յուրաքանչյուր զգացում ապստամբեց դրա դեմ», գրել է նա: Սակայն մի քանի անհանգիստ գիշերների ծնկաչոք աղոթքից հետո նա հանգստություն գտավ, երբ նրա սենյակը «լցվեց սուրբ ներգործությամբ», որը նման էր «արևի փայլուն շողերին»: Նա ասել է. «Իմ հոգին լցվեց հանգիստ, քաղցր խաղաղությամբ, որը ես երբեք չէի զգացել» և «իմ ողջ էությանը տիրեց գերագույն երջանկությունը» (*“Plural Marriage in Kirtland and Nauvoo,” Gospel Topics, lds.org/topics*):

Ջոզեֆ Սմիթը և բազմակնությունը

Շատ կանայք կնքվեցին Ջոզեֆ Սմիթի հետ, սակայն ճշգրիտ թիվն անհայտ է:

Բազմակնության կիրառման դարաշրջանում Վերջին Օրերի Սրբերը տարբերակում էին ժամանակի և հավերժության համար կատարվող կնքումները և միայն հավերժության համար կատարվող կնքումները: Ժամանակի և հավերժության համար կնքումները ներառում էին պարտավորություններ և հարաբերություններ այս կյանքի ընթացքում՝ հիմնականում ներառելով սեռական հարաբերությունների հնարավորությունը: Միայն հավերժության համար կնքումներում նշվում էր հարաբերությունները միայն հաջորդ կյանքում:

... Որոշ կանայք, ովքեր կնքվել էին Ջոզեֆ Սմիթի հետ, հետագայում վկայում էին, որ իրենց ամուսնությունները ժամանակի և հավերժության համար էին, միևնույն ժամանակ նշում էին, որ իրենց հարաբերությունները միայն հավերժության համար էին:

Ջոզեֆ Սմիթի հետ կնքվածների մեծ մասը նրա հետ կնքվելիս 20-40 տարեկան էին: Ամենամեծը՝ Ֆանի Յանզը 56 տարեկան էր: Ամենաերիտասարդը Շելեն Մար Քիմբալն էր, ... ով կնքվել էր Ջոզեֆի հետ իր 15 տարեկանը բոլորելուց մի քանի ամիս առաջ: Ամուսնությունն այդ տարիքում, որն անպատշաճ է ըստ մեր օրերի չափանիշների, օրինական էր այդ ժամանակ, և որոշ կանայք ամուսնանում էին իրենց դեռահասության կես տարիքում: Շելեն Մակ Քիմբալը խոսել է Ջոզեֆի հետ իր կնքման մասին որպես «միայն հավերժության համար», ակնարկելով, որ նրանց միջև բացակայում էր սեռական հարաբերությունը: ...

... Ջոզեֆ Սմիթը կնքվել է մի շարք կանանց հետ, ովքեր արդեն իսկ ամուսնացած են եղել: Ոչ այս կանայք, ոչ էլ Ջոզեֆը շատ բացատրություն չեն տվել այս կնքումների մասին, չնայած մի քանի կանայք ասել են, որ դրանք եղել են միայն հավերժության համար: Մյուս կանայք գրառումներ չեն թողել, անհայտ թողնելով այն փաստը, թե արդյոք այս կնքումները եղել են ժամանակի և հավերժության, թե միայն հավերժության համար:

Այս կիրառությունն ունի մի քանի հնարավոր բացատրություններ: Այս կնքումները միգրացիոն ուղի են պատրաստել՝ ստեղծելու հավերժական կապ Ջոզեֆի ընտանիքի և Եկեղեցու մյուս ընտանիքների միջև: Այս կապերը տարածվում էին թե ուղղահայաց՝ ծնողից զավակ, թե հորիզոնական՝ մի ընտանիքից մյուս ընտանիքին: Այսօր նման հավերժական կապեր ստեղծվում են այն անհատների տաճարային ամուսնությունների միջոցով, ովքեր նաև կնքված են իրենց իսկ ընտանիքների հետ,

որտեղ ծնվել են, այսպիսով իրար կապակցելով ընտանիքները» (*“Plural Marriage in Kirtland and Nauvoo,” Gospel Topics, lds.org/topics*):

Մարգարեի մահից հետո շատ կանայք կնքվեցին նրա հետ, ովքեր մահկանացու կյանքում հարաբերություններ չէին ունեցել նրա հետ:

Ընդդիմություն բազմակնությանը

Միացյալ Նահանգներում բազմաթիվ կրոնական և քաղաքական ղեկավարներ ընդդիմացան բազմակնության համակարգի դեմ, որը նրանք համարեցին անբարո և ոչ քաղաքակիրթ: Վերջին Օրերի Սրբերին ծաղրում էին հասարակական ելույթների ժամանակ, գրքերում, ամսագրերում և թերթերում: Միացյալ Նահանգների կոնգրեսը տարածեց օրենքներ, որոնք սահմանափակեցին Եկեղեցու անդամների ազատությունը և վստահացրին Եկեղեցուն տնտեսապես՝ սահմանափակելով սեփականության քանակը, որ Եկեղեցին կարող էր ունենալ: «Վերջին հաշվով այդ օրենքը պաշտոնատար անձանց համար հիմք էր հանդիսանում ձերբակալելու և բանտարկելու այն տղամարդկանց, ովքեր մեկից ավելի կանայք ունեին՝ զրկելով նրանց քվեարկելու իրավունքից, իրենց տների վրա սեփականության իրավունքից և այլ քաղաքացիական ազատություններից» (*Մեր ժառանգությունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հակիրճ պատմությունը* [1996], 106): Մինչև 1890 թվականը հարյուրավոր հավատարիմ Վերջին Օրերի Սրբեր բանտարկվեցին: Մյուսները թաքնվում էին, որպեսզի խուսափեն ձերբակալումներից և բանտարկությունից: Այս պայմաններում շատ ընտանիքներ տառապեցին անհանգստությունների, վշտի, աղքատության և սովի պատճառով:

Չնայած աշխարհը ծաղրում էր նրանց բազմակնություն կիրառելու համար, բազմաթիվ հավատարիմ Վերջին Օրերի Սրբեր պաշտպանեցին այդ կիրառությունը և վկայեցին, որ իրենք գիտեին, որ այն հայտնել էր Աստված՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Այդ դժվար իրավիճակները մղեցին Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆին աղոթքով փնտրել Տիրոջ առաջնորդությունը Սրբերի կողմից բազմակնության կիրառության վերաբերյալ: 1889 թվականին Նախագահ Վուդրուֆը հրահանգեց Եկեղեցու ղեկավարներին դադարեցնել բազմակնության սկզբունքի ուսուցումը: Մինչև 1890 թվականը շատ քիչ բազմամուսնություններ կատարվեցին, և սրանք կատարվեցին Նախագահ Վուդրուֆի խորհրդին հակառակ: Այնուամենայնիվ, որոշ մարդիկ հրատարակում էին հաշվետվություններ այն մասին, որ Եկեղեցին շարունակում էր նպաստել բազմակնության կիրառությանը: Այս հաշվետվությունները ընդդիմություն առաջացրին Եկեղեցու դեմ: 1890 թվականի սեպտեմբերին Նախագահ Վուդրուֆը հանդես եկավ Հռչակագրով, որն այժմ հայտնի է որպես Պաշտոնական Հայտարարություն 1 և գտնվում է Վարդապետություն և Ուխտերում:

Երկրորդ Հռչակագիրը

«[Պաշտոնական Հայտարարություն 1] Հռչակագիրը հայտարարեց Նախագահ [Վիլֆորդ] Վուդրուֆի մտադրությունը՝ ենթարկվելու Միացյալ Նահանգների օրենքներին: Այնտեղ ոչինչ չասվեց այլ երկրների օրենքների մասին: Երբ Մեքսիկայում և Կանադայում գաղութներ բացվեցին, Եկեղեցու ղեկավարները բազմակնությունը կիրառեցին այդ երկրներում և 1890 թվականի հոկտեմբերից հետո բազմակնությունը շարունակվեց աննկատ իրականացվել այդ վայրերում: ... Բացառիկ հանգամանքներում քիչ քանակությամբ նոր բազմակնություններ էին կատարվում Միացյալ Նահանգներում 1890-1904 թվականների ընթացքում, չնայած անհայտ է, թե արդյոք ամուսնությունները լիազորված էին կատարվելու Նահանգներում, թե ոչ» (*“The Manifesto and the End of Plural Marriage,” Gospel Topics, lds.org/topics*):

«1904 թվականի ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հանդես է գալիս համոզիչ հայտարարությամբ, որը հայտնի է որպես Երկրորդ Հռչակագիր,

դարձնելով նոր բազմակնությունները վտարման պատժին արժանի» ("Plural Marriage in The Church of Jesus Christ of Latter-day Saints," Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics)):

Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելությունը

Նախաբան

Ջոզեֆ Սմիթի նահատակությունից հետո Երեց Ջոն Թեյլորը, ով Ջոզեֆ Սմիթի հետ էր, երբ նա սպանվեց, իր հարգանքի տուրքն է մատուցել առ Մարգարեն (հավանաբար մեկ կամ մի քանի Սրբերի հետ միասին), արձանագրելով հետևյալը. «Ջոզեֆ Սմիթը՝ Տիրոջ Մարգարեն և Տեսանողը, ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա, բացի միայն

Հիսուսից» (ՎնՈւ 135.3): Այս դասը կօգնի ուսանողներին տեսնել, թե Մարգարեի ծառայության միջոցով ինչպես են իրականացել հնադարյան մարգարեությունները: Այս դասի ժամանակ նաև կուսումնասիրենք, թե ինչպես է Ջոզեֆ Սմիթն աջակցել Աստծո բոլոր զավակների փրկության գործին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Նիլ Լ. Անդերսեն, «Ջոզեֆ Սմիթը», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2014, 28–31:
- Թեդ Ռ. Քալիստեր, «Ջոզեֆ Սմիթ՝ Վերականգնման Մարգարե», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 35–37:
- «ՎնՈւ 135.3: Ջոզեֆ Սմիթը ավելի շատ բան արեց մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, բացի Հիսուսից», *Վարդապետություն և Ուխտեր ուսանողի ձեռնարկ* (Եկեղեցու Կրթական Համակարգի ձեռնարկ, 2001), 349–50:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 3.1-21

Ջոզեֆ Սմիթի նախասահմանված առաքելությունը

Ուսանողներին խնդրեք կիսվել, թե Ջոզեֆ Սմիթի մասին մտածելիս ո՞րն է նրանց առաջին միտքը: Հրավիրեք մի քանի ուսանողների հակիրճ կիսվել այն ժամանակի մասին, երբ նրանք երախտապարտ են եղել Մարգարե Ջոզեֆ Սմիթի համար:

Ուսանողներին ասացեք, որ Նեփի մարգարեն գրառել է մի խորհուրդ, որը Լեքին տվել էր իր որդի Հովսեփին: Այդ խորհուրդը տրված է 2 Նեփի 3-րդ գլխում և ներառում է մարգարեություն, որը Եգիպտոսի Հովսեփը տվել է Լեքիի ընտանիքի և վերջին օրերի վերաբերյալ: Լեքին հավանաբար իմացել էր այդ մարգարեությունների մասին արույրե թիթեղները կարդալու ընթացքում: 2 Նեփի 3-րդ գլխում մենք իմանում ենք, որ Եգիպտոսի Հովսեփը մարգարեացել է վերջին օրերում Ջոզեֆ Սմիթի առաքելության մասին: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 3.6-9 հատվածները: Դասարանին հորդորեք հետևել և

ուշադրություն դարձնել, թե ինչպես է Եգիպտոսի Հովսեփը նկարագրել Ջոզեֆ Սմիթին:

- Ի՞նչ բառեր և արտահայտություններ է օգտագործել Եգիպտոսի Հովսեփը Ջոզեֆ Սմիթին նկարագրելու համար: (Հնարավոր պատասխաններ. «ընտրյալ տեսանող», «բարձր կգնահատվի», «մեծ իմ աչքում» և «մեծ, ինչպես Մովսեսը»: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ եզրույթներն իրենց սուրբ գրություններում. 6–9 հատվածների լուսանցքում նրանք կարող են գրել նաև *Ջոզեֆ Սմիթ*.)
- Ինչո՞վ էր Ջոզեֆ Սմիթը նման Մովսեսին և Եգիպտոսի Հովսեփին: (Տես նաև Ջոզեֆ Սմիթ. Թարգմանություն, Ծննդոց Ծ.24-35 [Աստվածաշնչի հավելվածում]:)
- Համաձայն 7-8-րդ հատվածների, Եգիպտոսի Հովսեփին ի՞նչ մարգարեացավ Ջոզեֆ Սմիթի ծառայության մասին: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են այս ճշմարտությունը. **Ջոզեֆ Սմիթը բարձրացվելու էր Տիրոջ կողմից՝ բերելու մարդկանց Նրա ուխտերի իմացությանը և անելու Նրա աշխատանքը**.)

Հրավիրեք ուսանողներին աշխատել զույգերով և ուսումնասիրել 2 Նեփի 3.7, 11–15, 18–21 հատվածները: Յուրաքանչյուր զույգին խնդրեք կազմել ցանկ, թե ինչ են ասում սուրբ գրությունները, որ Ջոզեֆ Սմիթն անելու էր, որպեսզի օգներ իրականացնել Տիրոջ աշխատանքը: Դուք կարող եք առաջարկել, որ ուսանողներն այս ցանկը կազմելիս նշեն կարևոր արտահայտությունները, որոնք կգտնեն այս հատվածներում: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք մի քանի զույգերի՝ կիսվել իրենց գտած նյութերով: (Հնարավոր պատասխաններ. բերել մարդկանց ուխտերի իմացությանը [հատված 7], ի հայտ բերել Մորմոնի Գիրքը [13, 18–21 հատվածներ], համոզել մարդկանց, որ Աստվածաշունչը ճշմարիտ է [հատված 11], ուժեղանալ [հատված 13] և բերել մարդկանց փրկության [հատված 15]:)

Ցուցադրեք Նախագահ Բրիգամ Յանգի (1801-77) հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Դա որոշված էր հավերժության խորհրդում, երկրի հիմքերը դնելուց շատ ժամանակ առաջ, որ նա՝ Ջոզեֆ Սմիթը, պետք է լինի այս աշխարհի վերջին տնտեսության այն մարդը, ով առաջ կբերի Աստծո խոսքը մարդկանց մեջ և կստանա Աստծո Որդու Քահանայության բոլոր բանալիները և զորությունը: ... Տերը պահում էր իր աչքը Նրա և Նրա հոր վրա, և Նրա պապի վրա և Նրանց նախնիների վրա՝ նույնիսկ մինչև ... Աղամբ: Նա հսկել է այդ ընտանիքին և այդ արյունը, մինչ այն շրջապատույտ է գործել իր սկզբնաղբյուրից մինչև այդ մարդու ծնունդը: Նա նախապես կարգվել էր հավերժության մեջ, որպեսզի նախագահեր այս վերջին տնտեսության վրա» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 343):

Որպեսզի ուսանողներին օգնեք զգալ Ջոզեֆ Սմիթի նախապես կարգված առաքելության ճշմարտացիությունն ու կարևորությունը, քննարկեք հետևյալը.

- Ձեզ համար ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Ջոզեֆ Սմիթը նախաերկրային կյանքում կանգնել և նախապատրաստվել էր՝ լինելու Վերականգնման Մարգարեն:

Վարդապետություն և Ուխտեր 135.3

Ջոզեֆ Սմիթը «ավելի շատ բան արեց մարդկանց փրկության համար, քան միայն Հիսուսից»

Խնդրեք ուսանողներին կիսվել, թե ինչ կասեին կամ կվկայեին Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ, եթե նրանց տրվեր մի քանի նախադասություն ասելու հնարավորություն: Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթի մահից հետո հարգանքի տուրք մատուցվեց և գրվեց այն մեզ համար Ջոզեֆ Սմիթի մասին Վարդապետություն և Ուխտերում: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.3 հատվածի առաջին նախադասությունը: Հարցրեք.

- Ի՞նչ ճշմարտություն է այս նախադասության մեջ հայտարարված Ջոզեֆ Սմիթի մասին: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Ջոզեֆ Սմիթը ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, բացի միայն Հիսուսից:**)

Մարգարե Ջոզեֆ Սմիթի աշխատանքն ու ներդրումներն ուսումնասիրելու համար ուսանողներին բաժանեք փոքր խմբերի: Հանձնարարեք նրանց աչքի անցկացնել Վարդապետություն և Ուխտերը և խորհել այս դասընթացում մինչ այժմ քննարկված դասերի շուրջ: Խնդրեք նրանց կազմել մեր փրկությանը վերաբերող օրհնությունների և վարդապետությունների ցանկ, որոնք վերականգնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք ուսանողներին իրենց ցանկում ընտրել մի կետ և կիսվել իրենց խմբի հետ, թե ինչ ազդեցություն այն ունի իրենց կյանքում և ինչպես է առաջնորդում նրանց դեպի փրկություն:

Ուսանողների պատասխաններն ամփոփելու համար ցուցադրեք Երեց Թեդ Ռ. Քալիստերի հետևյալ խոսքերը, ով ծառայել է Յոթանասունի Նախագահությունում: Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն, մինչ մյուս ուսանողները կհետևեն.



«Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնվել են բոլոր զորությունները, բանալիները, ուսմունքները և ծեսերը, որոնք անհրաժեշտ են փրկության և վեհացման համար: Դուք չեք կարող գտնել դրանք աշխարհում որևէ այլ տեղ: Դրանք չկան որևէ այլ եկեղեցում: Դրանք չկան մարդկային փիլիսոփայության կամ գիտական որևէ վերլուծության մեջ կամ անհատական ուխտագնացության, որքան էլ խելացի դրանք թվան:

Փրկությունը կարելի է գտնել միայն մի տեղում, ինչպես սահմանվել է հենց Տիրոջ կողմից, երբ Նա ասել է, որ սա է «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին ողջ երկրի երեսի վրա» (Վևու 1.30)» («Ջոզեֆ Սմիթ՝ Վերականգնման Մարգարե», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 37):

Ուսանողներին ժամանակ տվեք խորհելու համար, թե ինչպես է Ջոզեֆ Սմիթի ծառայությունը նպաստել իրենց սեփական փրկությանը, ապա հարցրեք.

- Եթե չլիներ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մատուցած ծառայությունը, կյանքի հատկապես ո՞ր ոլորտում դուք փոփոխություն կնկատեիք:

Վարդապետություն և Ուխտեր 122.1-2, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33

Ջոզեֆի անունը «որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի մեջ»

Ասեք ուսանողներին, որ չնայած այն բոլոր լավ գործերին, որ Ջոզեֆ Սմիթը կատարեց, շատերն էին փորձում նսեմացնել նրան՝ հատկապես նրա կյանքի վերջին շրջանում: Նրա կյանքի այդ մանրամասների մասին մարգարեացել էին նաև հնադարյան մարգարեները (տես օրինակ 3 Նեփի 21.10): Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ, թե Մորոնին ինչ ասաց Ջոզեֆ Սմիթին նրանց մասին, ովքեր կմերժեին իրեն, ինչպես գրված է Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 33-ում: Մեկ այլ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 122.1-2 հատվածները: Օգնեք ուսանողներին կիսվել այս հատվածներում գտնվող ճշմարտությամբ՝ հարցնելով.

- Ինչպե՞ս կամփոփեք սուրբ գրությունների այս երկու հատվածներից սովորածը, թե ինչպես մարդիկ կարձագանքեն Ջոզեֆ Սմիթին: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ այս ճշմարտությունը. **Մինչ շատերն աշխարհում կծաղրեն Ջոզեֆ Սմիթին, արդարները օրհնություններ կփնտրեն, որոնք հնարավոր են դարձվել նրա ծառայության շնորհիվ:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ունի այդքան շատ քննադատներ և թշնամիներ, չնայած շատ տարիներ են անցել նրա մահից: (Վերականգնման վկայությունը կախված է այն փաստից, թե արդյո՞ք Ջոզեֆ Սմիթը եղել է մարգարե, ով կատարել է Աստծո գործը: Ուստի սատանան շարունակում է փորձել վարկաբեկել Ջոզեֆ Սմիթին:)

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը.



«Շատերը, ովքեր հերքում են Վերականգնման աշխատանքը, պարզապես չեն հավատում, որ երկնային էակները խոսում են մարդկանց հետ երկրի վրա: Նրանք ասում են՝ հնարավոր չէ, որ հրեշտակի կողմից ոսկե թիթեղները տրվեին և Աստծո գործությամբ թարգմանվեին: Այդ անհավատության պատճառով նրանք անմիջապես մերժում են Ջոզեֆի վկայությունը, իսկ ոմանք էլ, ցավոք, վարկաբեկում են Մարգարեի կյանքը և գրպարտում նրա բնավորությունը:

Մեզ հատկապես վշտացնում է այն փաստը, որ երբ ինչ-որ մեկը ժամանակին հարգել է Ջոզեֆին, այնուհետև հեռանալով իր համոզմունքից, սկսել է գրպարտել Մարգարեին:

Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ ասել է. «Ուսումնասիրել Եկեղեցին ... իր ուխտադրուժ մարդկանց աչքերով, նման է Հիսուսին հասկանալու համար հարցազրույց անցկացնել Հուդայի հետ: Ուխտադրուժ մարդիկ միշտ մեզ հետ խոսում են ավելի շատ իրենք իրենց,

քան Եկեղեցուց հեռանալու պատճառի մասին» [“All Hell Is Moved” (Brigham Young University devotional, Nov. 8, 1977), 3; speeches.byu.edu]: ...

Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ բացասական կարծիքները կշատանան, որքան մոտենանք Փրկչի Երկրորդ Գալուստին: Կես ճշմարտությունները և խորամանկ ստերը չեն պակասի: Կլինեն ընտանիքի անդամներ և ընկերներ, ովքեր ձեր օգնության կարիքը կունենան: Այժմ է լախապատրաստվելու՝ ժամանակը, որպեսզի օգնեք ճշմարտությունը որոնողներին» («Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 28-30):

Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է օգտակար տեղյակ լինել, որ չնայած շատ տարիներ են անցել Ջոզեֆ Սմիթի մահից, Եկեղեցու թշնամիները շարունակում են խիստ քննադատության ենթարկել նրա բարի անունը:
- Մենք ի՞նչ կարող ենք անել, որ օգնենք ճշմարտությունը փնտրողներին իմանալ, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է:

Ցուցադրեք Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը և հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



«Անկեղծ հետաքրքրվողը պետք է վերականգնված ավետարանի տարածվելը տեսնի որպես Մարգարեի միջոցով կատարված Տիրոջ աշխատանքի պտուղ: ...

Հիսուսն ասաց.

«Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը բարի պտուղ բերել: ...

... Իրանց պտուղներիցը ճանաչեցեք նորանց» [Մատթեոս Է.18, 20]:

Այս բացատրությունները համոզիչ են, սակայն իր ճշմարտության որոնումներում անկեղծ հետաքրքրվողը չպետք է բացառապես ապավինի դրանց:

Յուրաքանչյուր հավատացյալ՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության և Էության վերաբերյալ հոգևոր հաստատման կարիքն ունի: Սա ճիշտ է բոլոր սերունդների համար: Հոգևոր հարցերն արժանի են հոգևոր պատասխանների՝ Աստծո կողմից» («Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 29–30):

Ուսանողներին հնարավորություն տվեք վկայել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին՝ տալով հետևյալ հարցերը.

- Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու որ բնորոշ գծերն են փաստում Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելության մասին:
- Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել, որոնք նպաստել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ ձեր վկայությանը:

Վերջում ցուցադրեք Բաթշեբա Վ. Սմիթի՝ (1822–1910) Սփոփող Միության չորրորդ գերագույն նախագահի և Նախագահ Բրիգամ Յանգի (1801–77) հետևյալ խոսքերը. Քույր Սմիթը և Նախագահ Յանգը մահկանացու կյանքում ճանաչել են Ջոզեֆ Սմիթին: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այդ հատվածները.



«Երբ ես լսեցի Ավետարանը, ես գիտեի, որ այն ճշմարիտ էր. երբ ես առաջին անգամ կարդացի Մորմոնի Գիրքը, ես գիտեի, որ այն ոգեշնչված էր Աստծո կողմից, երբ ես առաջին անգամ տեսա Ջոզեֆ Սմիթին, ես գիտեի, որ կանգնած էի կենդանի Աստծո մարգարեին դեմ առ դեմ, և ես երբեք իմ մտքում կասկած անգամ չեմ ունեցել նրա իշխանության մասին»

(Bathsheba W. Smith, quoted in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* [2011], 34):



«Ես ուզում եմ պելլո՛ւփա բացականչել ամեն անգամ, երբ մտածում եմ, որ երբևէ ճանաչել եմ Ջոզեֆ Սմիթ Մարգարեին, որին Աստված բարձրացրեց և կարգեց և, որին տվեց բանալիներ և զորություն՝ կառուցելու Աստծո արքայությունը երկրի վրա և հաստատելու այն» (մեջբերում. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 525):

Հրավիրեք ուսանողներին խորհել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին իրենց վկայության շուրջ. ինչ կարող են նրանք անել, որ կիսեն այն ուրիշների հետ՝ անձամբ կամ սոցկայքերի միջոցով: Խրախուսեք նրանց ներկայացնել մեկին, ում հետ կցանկանային կիսվել այդ վկայությամբ և հետո հետևել իրենց ցանկությանը:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 3.1–21, Վարդապետություն և Ուխտեր 122.1–2, 135.3, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33:
- Նիլ Լ. Անդերսեն, «Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 28–31:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի Նահատակությունը

Նախաբան

Եկեղեցու այլախոհները և Եկեղեցուց դուրս գտնվող ախոյանները կազմակերպեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի և նրա եղբայր Հայրում Սմիթի նահատակությունը: Նրանց մահը գործել կնիք դրեց Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վերաբերյալ նրանց վկայությունների վրա: Մարգարե Ջոզեֆ Սմիթի կյանքն ու

նահատակությունն ուսումնասիրելը կօգնի ուսանողներին խորհել բազում օրհնությունների մասին, որոնք Տերը տվել է նրանց Մարգարե Ջոզեֆ Սմիթի ծառայության շնորհիվ, ում միջոցով Նա վերականգնեց Իր ավետարանը վերջին օրերում:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Thomas S. Monson, “The Prophet Joseph Smith: Teacher by Example,” *Ensign* or *Liahona*, Nov. 2005, 67–70.
- “The Martyrdom,” chapter 22 in *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2003), 273–85.
- «Նահատակություն. Մարգարեն իր վկայությունը կնքում է իր արյամբ», գլուխ 46, *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 561–73:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 135.4–5, 136.36–39

Թշնամիները փորձում էին սպանել Ջոզեֆ Սմիթին

Ցուցադրեք Քարթեջի բանտի նկարը: Բացատրեք ուսանողներին, որ 1844 թվականի հունիսի 27-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայր Հայրումը, ով Եկեղեցու Հայրապետն էր, նահատակվեցին այս բանտում, որը գտնվում էր Քարթեջում՝ Իլինոյս: Ջոզեֆ Սմիթը 38 տարեկան էր, երբ մահացավ, իսկ Հայրումը՝ 44:



Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 136.36–39 հատվածները, մինչ դասարանը կհետևի նրան: Խրախուսեք ուսանողներին կարդալ իս ուղադրություն դարձնել, թե ինչպես է Տերը ներկայացնում Ջոզեֆ Սմիթի կյանքը և նրա կատարած աշխատանքը: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցը.

- Տերը ինչպե՞ս է նկարագրել Մարգարե Ջոզեֆ Սմիթի կյանքը և աշխատանքը: (Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալ ճշմարտությունները. **Ջոզեֆ Սմիթը դրեց Աստծո աշխատանքի հիմքը ավետարանի այս տնտեսությունում: Մարգարե Ջոզեֆ Սմիթն անմեղ էր, երբ մահացավ և նա հավատարմորեն կատարել էր առաքելությունը, որը տրվել էր նրան Աստծո կողմից:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այն մի քանի պատճառները, որոնք Մարգարեին հասցրին մահվան, ասեք նրանց, որ Սրբերը երեք տարի Իլինոյս նահանգում ապրում էին հարաբերական խաղաղության մեջ, սակայն 1842 թվականին նրանք կրկին տարածայնություններ ունեցան: Եկեղեցու անդամների շարքերում էին նաև Իլինոյսի քաղաքացիները, ովքեր վախենում էին Սրբերի քաղաքական ազդեցությունից: Ուրիշներն էլ նախանձում էին Նավուի տնտեսական աճին և քննադատորեն էին մոտենում Նավու քաղաքի կառավարության և ոստիկանության ուժեղ ազդեցությանը: Ոմանք սխալ էին հասկանում մորմոնական որոշ առանձնահատուկ վարդապետություններն ու սկզբունքները: Եկեղեցու այլախոհները և Եկեղեցուց դուրս գտնվող անդամները միավորեցին իրենց ջանքերը՝ Մարգարեի և Եկեղեցու դեմ պայքարելու գործում:



Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք թերթիկի մեկական օրինակ, որը գտնվում է այս դասի վերջում: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Ընդդիմություն Մարգարեի և Եկեղեցու դեմ» վերնագրով հատվածը:

Բացատրեք, որ համաձայն այն օրենքների, որոնք գործում էին մարգարեի մահվան ժամանակ, ոչ մի օրենք չէր խախտվել, երբ լրագիրը փակվեց: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Դավիթ Ն. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Միացյալ Նահանգների Սահմանադրության բարեփոխումը, որը երաշխիք ապահովեց պաշտպանել լրատվամիջոցների ազատությունը քաղաքի և Նահանգի կառավարության գործողություններից, չէր գործում մինչև 1868 թվականը, և որպես կառավարական օրենք այն ուժի մեջ մտավ միայն 1931 թվականին: ... Մենք պետք է քննենք մեր նախորդների գործողությունները՝ հիմք ընդունելով նրանց ժամանակների օրենքները, պատվիրանները և իրավիճակները, այլ ոչ ոք մերը» ("Joseph, the Man and the Prophet," *Ensign*, May 1996, 72):

- Ինչո՞ւ է կարևոր հիշել Երեք Օուքսի ելույթի վերջին նախադասությունը, երբ մենք խորհում ենք վաղ շրջանի Եկեղեցու ղեկավարների արարքների մասին: (Դուք կարող եք շեշտել, որ Նավու քաղաքի խորհրդի անդամների մեծ մասը Եկեղեցու անդամներ էին, սակայն նրանք գործում էին որպես ընտրված քաղաքացիական ծառաներ՝ իրենց լիազորությունների սահմաններում, երբ նրանք պատվիրեցին, որ լրագիրը փակվի: Եկեղեցին՝ որպես կազմակերպություն, լրագրի դեմ քայլեր չձեռնարկեց, սակայն քաղաքի խորհուրդը «անախորժությունը մեղմելու» գործողություն ձեռնարկեց [in *History of the Church*, 6:432]):

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Ջոզեֆի և Հայրումի հանդեպ կեղծ մեղադրանքներ են ներկայացվում» վերնագրով հատվածը: Մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.4 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով մարգարեությունը, որը Ջոզեֆ Սմիթը տվեց Քարթեջի ճանապարհին:

- Չնայած բոլոր մահկանացուներն էլ անկատար են, ձեր կարծիքով, ի՞նչ է պահանջվում մարդուց ասելու, որ իր «խիղճը մաքուր է Աստծո առաջ և բոլոր մարդկանց առաջ»: (ՎնՈւ 135.4):

Բացատրեք, որ երբ Հայրում Սմիթը պատրաստվում էր գնալ Քարթեջի բանտ, նա կարդաց Եթեր 12.36-38 հատվածները և ծաղեց այդ էջը:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.5 հատվածը, որը Եթերի գրքի այս հատվածների ճշգրիտ մեջբերումն է, մինչ դասարանը հետևում է նրան: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե սուրբ գրության այդ հատվածը ինչո՞ւ էր կարևոր Հայրումի համար: Կարող եք խորհուրդ տալ ուսանողներին՝ նշել ցանկացած բառ կամ արտահայտություն, որն առանձնահատուկ նշանակություն ունի իրենց համար:

- Ձեր կարծիքով Եթերի գրքի այս հատվածի ո՞ր յուրահատուկ բառերը կամ արտահայտությունները կարող էին կարևոր լինել Հայրումի համար, երբ նա կանգնած էր բանտարկության և հնարավոր է նաև մահվան դիմաց:
- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Բոլոր մարդիկ կիմանան, որ իմ հանդերձներն արատավորված չեն ձեր արյունով»: (Թող ուսանողները 5-րդ հատվածը համեմատեն Հակոբ 1.19 և Մոսիա 2.27 հատվածների հետ, որպեսզի բացահայտեն այս արտահայտության իմաստը: Լրացուցիչ ըմբռնում ձեռք բերելու համար սուրբ գրություններն այլ սուրբ գրությունների հետ համեմատել սովորելը սուրբ գրությունների ուսումնասիրության կարևոր հմտություն է:)

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող էին զգալ Ջոզեֆն ու Հայրումը, երբ իմացան, որ իրենք կատարել էին Աստծուց տրված կոչումները և պարտականությունները՝ գործի դնելով իրենց լավագույն ունակությունները:

- Մենք ի՞նչ կարող ենք սովորել Ջոզեֆ և Հայրում Սմիթների օրինակներից, որը կօգնի մեզ կատարելու այն պարտականությունները, որոնք ստանում ենք Աստծուց:

Վարդապետություն և Ուխտեր 135.1-3, 6-7

Ջոզեֆ Սմիթի նահատակությունը Քարթեջի բանտում և նրան մատուցված հարգանքի տուրքը

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135 բաժնի նախաբանը: (Կարող եք նշել, որ սուրբ գրությունների 1981 և 2013 թվականների հրատարակությունների վերնագրերի տարբերությունները արտացոլում են վերջին ուսումնասիրությունները:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.1-2 հատվածները և թերթիկի «Նահատակությունը Քարթեզի բանտում» վերնագրով բաժինը: Դասարանին խնդրեք հետևել, մինչ այդ ուսանողները կկարդան:

- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում «Կնքելու համար այս գրքի և Մորմոնի Գրքի վկայությունը» արտահայտությունը:

Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, խորհեք հետևյալ սահմանումը գրատախտակին գրելու մասին. «*Կնքել՝ նշանակում է հիմնավորապես հաստատել մի բան, ինչպես օրինակ վկայությունը*: Կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այս սահմանումն իրենց սուրբ գրություններում հատված 1-ի կողքին:

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.3, 6-7 հատվածները, փնտրելով որոշ ճշմարտություններ, որոնք մենք սովորում ենք Ջոզեֆ և Հայրում Սմիթների նահատակության մասին այս հայտարարությունից:

- Ի՞նչ ճշմարտություններ եք սովորում Ջոզեֆ և Հայրում Սմիթների նահատակության մասին այս հայտարարությունից: (Ուսանողները կարող են ներկայացնել շատ ճշմարտություններ, ներառյալ հետևյալը. **Ջոզեֆ Սմիթը ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, բացի միայն Հիսուսից: Մորմոնի Գիրքը և Վարդապետություն և Ուխտերը տրվեցին աշխարհի փրկության համար:**)
- Եթե չլիներ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մատուցած ծառայությունը, ձեր կյանքում ի՞նչ առանձնահատուկ փոփոխություններ կնկատեիք:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը, որոնք գտնվում են թերթիկի «Հարգանքի տուրք Մարգարե Ջոզեֆ Սմիթին» վերնագրով բաժնում:

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Ջոզեֆ Սմիթի մտերիմները նրան համարում էին մարգարե և «պատվարժան, առաքինի մարդ»:

Վերջում խնդրեք ուսանողներին ցանկության դեպքում դասարանի հետ կիսվել Ջոզեֆ Սմիթի մասին իրենց վկայությամբ: Խրախուսեք ուսանողներին հաջորդ մի քանի օրերի ընթացքում հնարավորություններ փնտրել՝ ուրիշների հետ կիսվելու իրենց վկայությամբ Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման գործում նրա դերի մասին:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 135.1–7, 136.36–39
- Thomas S. Monson, “The Prophet Joseph Smith: Teacher by Example,” *Ensign* or *Liahona*, Nov. 2005, 67–70.

Մարգարե Ջոզեֆ Սմիթի Նահատակությունը

Ընդդիմություն Մարգարեի և Եկեղեցու դեմ

1844 թվականի հունիսին Եկեղեցու հանդեպ թշնամությունը շատ էր ուժեղացել: Իլինոյսի որոշ քաղաքացիներ քննարկում էին Սրբերին Նահանգից վտարելու հարցը, մինչև ուրիշները ծրագրում էին սպանել Մարգարեին: Մարգարեի և Եկեղեցու դեմ դավադրություն կազմակերպողներից ոմանք Եկեղեցու Նախկին անդամներ էին, ովքեր ուրացության մեջ էին ընկել: 1844 թվականի հունիսի 7-ին Վիլյամ Լոն, ով ծառայել էր որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, և մյուս ուրացողները տպագրեցին *Nauvoo Expositor* կոչվող թերթի առաջին համարը: Հասարակությանը Մարգարեի և Եկեղեցու դեմ բորբոքելու փորձ կատարելով՝ այս մարդիկ օգտագործեցին այս լրագիրը Ջոզեֆ Սմիթին և Եկեղեցու մյուս ղեկավարներին զրպարտելու համար: Ջոզեֆ Սմիթը, գործելով որպես Նավուի քաղաքագլուխ, և Նավու քաղաքի խորհրդի անդամների մեծ մասը գիտակցում էին, որ բորբոքումներ տարածող լրագիրը կհանգեցնի ամբոյսի բռնությանը քաղաքի դեմ: Նրանք հայտարարեցին, որ թերթը խախտում էր հասարակական կարգը և պատվիրեցին, որ *Nauvoo Expositor* լրագիրը փակվի:

Ջոզեֆ և Հայրում Սմիթների դեմ կեղծ մեղադրանք է առաջադրվում

«Ի հետևանք [*Nauvoo Expositor*-ի փակման] քաղաքագլխի և խորհրդի որոշման, Իլինոյսի իշխանությունները Մարգարեի, նրա Եղբայր Հայրումի և Նավու քաղաքի մյուս պաշտոնյաների դեմ խռովության անհիմն մեղադրանք հարուցեցին: Իլինոյսի Նահանգապետ Թոմաս Ֆորդը հրաման արձակեց, որ այդ տղամարդիկ դատվեն Իլինոյս Նահանգի Քարթեջ գավառի կենտրոնում, և նրանց պաշտպանություն խոստացավ: Ջոզեֆը գիտեր, որ եթե գնար Քարթեջ, իր կյանքը մեծ վտանգի տակ կդրվեր խաժամուժի կողմից, որը սպառնում էր նրան:

Հավատարմով, որ խաժամուժը միայն իրենց էր ուզում, Ջոզեֆն ու Հայրումը որոշեցին մեկնել դեպի արևմուտք՝ իրենց կյանքը պահպանելու համար: Հունիսի 23-ին նրանք անցան Միսսիսիպի գետը, բայց նույն օրը՝ ավելի ուշ, Նավուից Եղբայրները գտան Մարգարեին և ասացին նրան, որ զորքերը կներխուժեն քաղաք, եթե նրանք չհանձնվեն իշխանությունների Քարթեջում: Մարգարեն համաձայնեց անել այդ՝ հույս ունենալով խաղաղեցնել թե՛ կառավարական պաշտոնյաներին, թե՛ խաժամուժին: Հունիսի 24-ին Ջոզեֆ և Հայրում Սմիթները մնաս բարով ասացին իրենց ընտանիքներին, և Նավու քաղաքի մյուս պաշտոնյաների հետ հաջորդ օրը գնացին Քարթեջ՝ կամավոր հանձնվելով գավառի պաշտոնյաներին Քարթեջում: Եղբայրներին սկզբնական մեղադրանքի համար Երաշխավորությամբ ազատ արձակելուց հետո, նրանց դեմ կեղծ մեղադրանք հարուցվեց Իլինոյս Նահանգի դեմ դավաճանության մեջ, ապա նրանք ձերբակալվեցին և բանտարկվեցին Քարթեջի բանտում՝ լսման սպասելու համար: Երեցներ Ջոն Թեյլորը և Վիլլարդ Ռիչարդսը՝ Տասներկուսի միակ անդամները, ովքեր այդ ժամանակ միսիսիպիում չէին ծառայում, կամավոր միացան նրանց» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 561-62):

Նահատակությունը Քարթեջի բանտում

1844 թվականի հունիսի 27-ին մի այցելու Ջոզեֆին ատրճանակ էր տվել: Երբ ամբոյսը փորձեց մտնել սենյակը, որտեղ պահվում էին Մարգարեն և մյուսները, Հայրումը մահացու գնդակ ստացավ՝ փորձելով պատշպանել սենյակում գտնվողներին: Ջոզեֆը ցատկեց դեպի դուռը և հասավ դռան շրջանակին, որ փորձեր ատրճանակով կրակել դեպի Նախասենյակը: Վեց գնդակներից արձակվեցին ընդամենը երեքը՝ վիրավորելով ամբոյսի մի քակի անդամներին: Այնուհետև ամբոյսի միջից հրացաններն ուղղվեցին կիսաբաց դռան կողմը, և Ջոն Թեյլորը փորձեց ձեռնափայտով հարվածել հրացանների փողերին:

Երբ հակամարտությունը դռան մոտ մեծացավ, Ջոն Թեյլորը փորձեց դուրս գալ սենյակից պատուհանի միջով: Երբ նա փորձեց դուրս ցատկել պատուհանից, դռան մոտից կրակեցին նրա ազդրին և դրսից ևս ինչ-որ մեկը կրակեց նրա վրա: Նա ընկավ գետնին և մինչև փորձում էր

մտնել պատուհանի մոտ գտնվող մահճակալի տակ, մի քանի տեղից վիրավորվեց ևս երեք կրակոցից: Այդ ընթացքում, երբ հրացանները հայտնվեցին դռան մոտ, Վիլարդ Ռիչարդսը սկսեց հարվածել դռանց ձեռնափայտով:

Ջոզեֆ Սմիթը այդ պահին որոշեց դուրս գալ նույն պատուհանից: Մինչ Վիլարդ Ռիչարդսը շարունակում էր շեղել դռան մոտ գտնվող ամբոխին, Մարգարեն դուրս ցատկեց բաց պատուհանից: Երբ նա ցատկեց, փափուշտներ տեղացին նրա վրա բանտի ներսից և դրսից: Նա ցած ընկավ պատուհանից՝ բացականչելով «Ո՛վ Տեր իմ Աստված»: Ամբոխը, որը գտնվում էր բանտի ներսում, դուրս վազեց, որ համոզվի, արդյո՞ք Ջոզեֆը մահացել էր: Չնայած Զարթեջի բանտին մոտեցող Եկեղեցու անդամներ չկային, ինչ-որ մեկը գոռաց. «Մորմոնները գալիս են» և ողջ ամբոխը փախուստի դիմեց:

Հարգանքի տուրք Մարգարե Ջոզեֆ Սմիթին

Տասներկու Առաքյալների Թվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսն ասել է.



«Մարդիկ, ովքեր լավ էին ճանաչում Ջոզեֆին և շատ մոտ էին կանգնած նրան՝ որպես Եկեղեցու ղեկավարություն, սիրում և հաստատում էին նրան որպես մարգարե: Նրա եղբայր Հայրումն ընտրեց մահանալ նրա կողքին: Ջոն Թեյլորը, ով նույնպես նրա կողքին էր, երբ նա նահատակվեց, ասել է. «Ես վկայում եմ Աստծո, հրեշտակների և մարդկանց առաջ, որ նա բարի, պատվարժան, և առաքինի մարդ էր ... և իր բնավորությամբ՝ որպես մասնավոր և հանրային մարդ նա անբասիր էր, և որ նա ապրեց և մահացավ որպես Աստծո մարդ» (*The Gospel Kingdom* [1987], 355; see also D&C 135:3): Բրիգամ Յանզը հայտարարել է. «Չեմ կարծում, որ աշխարհում ապրում է մի մարդ, ով ավելի լավ էր ճանաչում [Ջոզեֆ Սմիթին], քան ես: Եվ ես համարձակ ասում եմ, որ բացի Հիսուս Քրիստոսից, ավելի լավ մարդ երբևէ չի ապրել կամ չի ապրում այս աշխարհում» [*Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe (1954), 459]» ("Joseph, the Man and the Prophet," *Ensign*, May 1996, 73):

Հաջորդականությունը Նախագահությունում

Նախաբան

Իր կյանքի վերջին օրերին Ջոզեֆ Սմիթը այս տնտեսության քահանայության բանալիները հաստատեց Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների վրա: Մարգարեի նահատակությունից հետո 1844 թվականի օգոստոսի 8-ին բազմաթիվ Սրբեր ստացան հոգևոր ապացույց, որը հաստատեց, որ Բրիգամ Յանգը, ով Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր,

պետք է առաջնորդեր Եկեղեցին: Երբ ուսանողները սկսեցին հասկանալ Եկեղեցու Նախագահության հաջորդականության հետ կապված սկզբունքները, նրանք վստահություն ձեռք կբերեն, որ Տերը ընտրել և նախապատրաստել է յուրաքանչյուր անհատի, ով դառնում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- “Succession in the Presidency,” chapter 3 in *Teachings of the Living Prophets Student Manual* (Church Educational System manual, 2010), 28–41.
- “The Twelve to Bear Off the Kingdom,” chapter 23 in *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2003), 286–96.
- Brent L. Top and Lawrence R. Flake, “‘The Kingdom of God Will Roll On’: Succession in the Presidency,” *Ensign*, Aug. 1996, 22–35.

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 107.33, 112.30–32

Առաքյալները կրում են այս տնտեսության բանալիները

Տվեք հետևյալ հարցը.

- Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մեր Նախագահ ընտրելու գործընթացն ինչպե՞ս է տարբերվում այլ կազմակերպություններում ղեկավարներ ընտրելու եղանակից:

Տեղեկացրեք ուսանողներին, որ այս դասի ընթացքում ուսումնասիրելու են Եկեղեցու ղեկավարության փոխանցումը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից հետո: Բացատրեք, որ իր մահից տարիներ առաջ մարգարեն հայտնություններ էր ստացել Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 107.33 և 112.30–32 հատվածները, փնտրելով Տիրոջ նկարագրությունը քահանայության իշխանության վերաբերյալ, որ կրում էին Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի անդամները:

- Ինչպե՞ս է Տերը նկարագրել Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի իշխանությունը: (Համոզվեք, որ ուսանողները

հասկանում են հետևյալ սկզբունքը. **Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները կրում են այս տնտեսության քահանայության բանալիները, և Տասներկուսը գործում են Առաջին Նախագահության ղեկավարության ներքո:**)



Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք թերթիկի մեկական օրինակ, որը գտնվում է այս դասի վերջում: Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթն իր կյանքի վերջին ամիսներին հաճախ է հանդիպել Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների հետ, որպեսզի նախապատրաստի նրանց առաջնորդելու Եկեղեցին: Թող ուսանողներից մեկը բարձրաձայն կարդա թերթիկի «Ժողով Տասներկու Առաքյալների հետ, մարտ 1844 թվական» վերնագրով հատվածը: Ասացեք ուսանողներին, որ սա Առաքյալների և Եկեղեցու այլ ղեկավարների հետ Մարգարե Ջոզեֆ Սմիթի անցկացրած ժողովի հակիրճ պատմությունն է, որը շարադրել է Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը, ով այդ ժամանակ Առաքյալ էր: Ընթերցումից հետո հարցրեք.

- Ինչպե՞ս է Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին բանալիների այս շնորհումն օգնել նախապատրաստելու նրանց այն ժամանակի համար, երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթն այլևս չէր լինելու նրանց հետ: (Նրանք ստացան նույն քահանայության բանալիները, որոնք կրում էր Մարգարե Ջոզեֆը:)
- Ինչո՞ւ էր Ջոզեֆ Սմիթը կարևորում նախքան իր մահը քահանայության այս բանալիների շնորհումը Առաքյալներին: (Այդ ժամանակ Ջոզեֆ Սմիթը միակ մարդն էր, ով կրում էր այս տնտեսության քահանայության բոլոր բանալիները: Եթե նա ուրիշներին չջնորհեր այդ բանալիները, ապա հրեշտակները պետք է կրկին այցելեին երկիր՝ դրանք վերականգնելու համար:)

Վարդապետություն և Ուխտեր 124.127-28

Բրիգամ Յանգը հաջորդեց Ջոզեֆ Սմիթին որպես Եկեղեցու Նախագահ

Բացատրեք, որ երբ 1835 թվականին առաջին անգամ կազմավորվեց Տասներկու Առաքյալների Քվորումը, ավագության կարգը որոշվում էր տարիքով: Թոմաս Բ. Մարշը, ով այդ ժամանակ ենթադրվում էր, որ ամենատարեց Առաքյալն էր, նշանակվեց որպես ավագ Առաքյալ (այդ ժամանակ իմացվեց, որ իրականում Դեյվիդ Վ. Փաթենն էր ամենատարեց Առաքյալը):

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 124.127-28 հատվածները: Բացատրեք, որ 1838 թվականի հոկտեմբերին Նախագահ Մարշը ուխտադրուժ եղավ և հեռացավ Եկեղեցուց, իսկ Դեյվիդ Վ. Փաթենը մահացավ: Բրիգամ Յանգն այդ ժամանակ դարձավ ավագ Առաքյալ, ինչպես բացատրված է այս հատվածներում: Առաքյալների սկզբնական ընտրությունից հետո մինչ այժմ Տասներկու Առաքյալների Քվորումում ավագությունը որոշվում է կարգման ամսաթվով:

Բացատրեք, որ երբ 1844 թվականի հունիսի 27-ին Ջոզեֆ և Հայրում Սմիթները նահատակվեցին, Տասներկուսը, բացառությամբ Ջոն Թեյլորից

և Վիլլարդ Ռիչարդսից, ծառայում էին միսիայում՝ Միացյալ Նահանգների արևելյան մասում: Այնուամենայնիվ, երեք շաբաթների ընթացքում բոլոր Առաքյալները լսեցին ողբեգական լուրը և շտապ վերադարձան Նավու: Երբ Առաքյալները վերադարձան, նրանք շփոթություն գտան Եկեղեցու անդամների մեջ այն հարցի շուրջ, թե ով պետք է առաջնորդեր Եկեղեցին: Եկեղեցու որոշ անդամներ կարծում էին, որ ղեկավարությունը իրավամբ անցել է Տասներկու Առաքյալների Քվորումին: Հաջորդ մի քանի ամիսները ընթացքում մի շարք մարդիկ հայտարարեցին, որ իրենք իրավունք ունենին առաջնորդելու Եկեղեցին: Խնդրեք երկու ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Միդնի Ռիգդոնի պահանջը» և «Ջեյմս Սթրենջի պահանջը» վերնագրով հատվածները: Մինչ դասարանը լսում է, հրավիրեք նրանց խորհել մտահոգությունների մասին, որ գուցե նրանք ունենային այս պահանջների վերաբերյալ, եթե իրենք այդ ժամանակ լինեին Նավու քաղաքում:

Այնուհետև ուսանողներին հարցրեք.

- Այս մարդկանց պահանջներն ինչո՞ւ արդարացի չէին: (Դուք կարող եք չեշտել, որ չնայած Միդնի Ռիգդոնը Առաջին Նախագահության անդամ էր, Ջոզեֆը նրան չէր շնորհել քահանայության բանալիները:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Օգոստոսի 7, 1844 թվական» վերնագրով հատվածը: Դասարանով քննարկեք հետևյալ հարցը.

- Ինչո՞ւ էր կարևոր Բրիգամ Յանգի վկայությունը առաքյալների բանալիների վերաբերյալ: (Ուսանողների պատասխանները լսելուց հետո գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը.
Առաքյալները կրում են քահանայության բոլոր բանալիները, որոնք անհրաժեշտ են Եկեղեցում նախագահելու համար:)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Օգոստոսի 8, 1844 թվական, 10.00» վերնագրով հատվածը:

- Ինչպե՞ս է Տերն օրհնել Սրբերին իմանալու, թե ու՞մ էր Նա նշանակել առաջնորդելու Եկեղեցին:
- Ինչպե՞ս կարող ենք մենք իմանալ, որ Եկեղեցու ղեկավարներն այսօր կանչված են Աստծո կողմից: (Ուսանողների պատասխանները լսելուց հետո գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Մուրք Հոգու միջոցով մենք կարող ենք վկայություն ստանալ, որ նրանք, ովքեր առաջնորդում են Եկեղեցին, կանչված են Աստծո կողմից:**)
- Ե՞րբ եք դուք զգացել Հոգու վկայությունը, որ Եկեղեցու Նախագահն այսօր կանչված է Աստծո կողմից:

Բացատրեք, որ օգոստոսի 8-ին ժամը 14.00-ին անցկացված ժողովի ընթացքում Բրիգամ Յանգը և մյուս Առաքյալները ելույթ ունեցան: Թող ուսանողներից մեկը բարձրաձայն կարդա թերթիկի «Օգոստոսի 8, 1844 թվական, 14.00» վերնագրով հատվածը:

Բացատրեք, որ երբ Ջոզեֆ Սմիթը մահացավ, Բրիգամ Յանգը՝ որպես ավագ Առաքյալ, անմիջապես հնարավորություն ունեցավ կիրառելու քահանայության բոլոր բանալիները: Մարգարեի նահատակությունից

հետո ավելի քան երեք տարիների ընթացքում Տասներկու Առաքյալների Քվորումը նախագահում էր Եկեղեցում Բրիգամ Յանգի ղեկավարության ներքո: Այս 1847 թվականի դեկտեմբերի 5-ին Բրիգամ Յանգը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ և վերակազմավորվեց Առաջին Նախագահությունը:

Միդլի Ռիգդոնը տեղափոխվեց Փիթսբուրգ՝ Պենսիլվանիա և կազմակերպեց Քրիստոսի Եկեղեցի՝ առաքյալներով, մարգարեներով, քահանաներով և թագավորներով: Այդ եկեղեցին անկում ապրեց 1847 թվականին: Եվ չնայած Ջեյմս Սթրենգի պահանջները նախագահության վերաբերյալ կեղծ էին, Վիլյամ Ի. Մակլելլին, Ջոն Ի. Փեյջը և Վիլյամ Սմիթը, ովքեր նախկինում Տասներկու Առաքյալներից էին, աջակցում էին նրան: Սթրենգը սպանվեց 1856 թվականին դժգոհ հետևորդների կողմից:


Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ հաջորդականության գործընթացը Եկեղեցու Նախագահությունում այսօր, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Բ. Փաքերի հետևյալ հայտարարությունն այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի մահից հետո: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Անկասկած գիտեմք, թե ինչ պետք է անել: Մենք գիտեմք, որ ավագ Առաքյալը Եկեղեցու Նախագահն է: Եվ սրբազան ժողովում թոմաս Ա. Մոնսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից, հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ: ... Այժմ, ինչպես սուրբ գրություններն են ասում, նա միակ մարդն է երկրի վրա, ով այդ բոլոր բանալիները գործադրելու իրավունքն ունի: Սակայն մենք բոլորս՝ որպես Առաքյալներ, կրում ենք դրանք: Մեր մեջ մեկն է կանչվում և կարգվում և դառնում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ» («Տասներկուսը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 83):

- Եկեղեցու Նախագահի մահից հետո ո՞վ սովորաբար կդառնա Եկեղեցու հաջորդ Նախագահը: (Ավագ Առաքյալը, ով Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն է:)

Որոշ ուսանողներ կարող են ցանկանալ իմանալ, թե երբ է Եկեղեցու Նախագահը ստանում Եկեղեցում նախագահելու համար անհրաժեշտ բանալիները: Բացատրեք, որ յուրաքանչյուր Առաքյալի տրվում են բոլոր բանալիները հենց այն ժամանակ, երբ նա կարգվում է որպես Առաքյալ: Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ հայտարարությունը.



«Սակայն այդ բանալիները գործածելու իշխանությունը տրված է Եկեղեցու Նախագահին: Երբ նա մահանում է, այդ իշխանությունը գործում է ավագ Առաքյալի միջոցով, ով այնուհետև կոչվում, ի սպաս է դրվում և կարգվում է որպես մարգարե և Նախագահ Տասներկուսի Խորհրդի իր գործընկերների կողմից» («Come and Partake», *Ensign*, May 1986, 47):

- Դուք ի՞նչ զգացողություններ ունեք, երբ հասկանում եք, որ Եկեղեցու Նախագահի մահից հետո Տիրոջ արքայությունը երկրի վրա առաջ կշարժվի մի փոքր ընդհատումից հետո:

Դասի վերջում կարող եք վկայել, որ քահանայության նույն բանալիները, որոնք Ջոզեֆ Սմիթը շնորհեց Բրիգամ Յանգին և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին, այսօր կրում են Եկեղեցու Նախագահը, Առաջին Նախագահության նրա խորհրդականները և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները: Դուք կարող եք նաև կիսվել, թե ինչպես եք ձեռք բերել ձեր վկայությունն այն մասին, որ Եկեղեցու անդամները կանչված են Աստծո կողմից: Հրավիրեք ուսանողներին աղոթքով փնտրել ձեռք բերելու կամ ամրացնելու իրենց վկայություններն այն ճշմարտությունների մասին, որոնք քննարկել են այսօր:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 107.33, 112.30–32, 124.127–28:
- Բոյդ Ք. Փաքեր, «Տասներկուսը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 83–87:

Հաջորդականությունը Եկեղեցու Նախագահությունում

Տասներկու Առաքյալների ժողով, մարտ 1844 թվական

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը (1807-98) հիշել է.



«Հիշում եմ վերջին խոսքը, որ [Ջոզեֆ Սմիթը] այդ առիթով տվեց մեզ իր մահվանից առաջ: ... Նա ոտքի էր կանգնած մոտ երեք ժամ: Սենյակը կարծես լցված էր սպառող կրակով, նրա դեմքը սաթի պես պայծառ էր և նա զինված էր Աստծո զորությամբ: Նա մեզ բացատրեց մեր պարտականությունը: Նա բացատրեց մեզ Աստծո այս մեծ աշխատանքի լրիվությունը և մեզ արված դիտողություններում նա ասաց. «Ես կնքել եմ իմ գլխին յուրաքանչյուր բանալին, յուրաքանչյուր զորությունը, կյանքի և փրկության յուրաքանչյուր սկզբունքը, որն Աստված երբևէ տվել է որևէ մարդու, ով երբևէ ապրել է երկրի երեսին: Եվ այս սկզբունքներն ու այս Քահանայությունը և զորությունը պատկանում են այս մեծ և վերջին տնտեսությանը, որին երկնքի Աստվածը մեկնել է Իր ձեռքը՝ երկրի վրա հաստատելու համար: Այժմ, - ասաց նա, դիմելով Տասներկուսին, - ես կնքել եմ ձեր գլխին յուրաքանչյուր բանալի, յուրաքանչյուր զորություն և յուրաքանչյուր սկզբունք, որոնք Տերը կնքել է իմ գլխի վրա»: ...

Մեզ այս ձևով դիմելուց հետո նա ասաց. «Ես ասում եմ ձեզ, այս արքայության բեռն այժմ ձեր ուսերին է դրված, դուք պետք է կրեք այն ողջ աշխարհում» (մեջբերում. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 564):

Սիդնի Ռիզոնի պահանջը

Սիդնի Ռիզոնը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, 1844 թվականի օգոստոսի 3-ին Փիթերբուրգից՝ Պենսիլվանիա, եկավ Նավու։ Նա առաջարկեց, որ հատուկ ժողով հրավիրվեր օգոստոսի 6-ին՝ երեքշաբթի օրը, որպեսզի Եկեղեցու անդամները կարողանային վերականգնել ընտրել Եկեղեցու համար։ Կարծես Սիդնի Ռիզոնը փորձում էր անցկացնել այս ժողովը, որպեսզի Եկեղեցու անդամները կարողանային հաստատել իր պաշտոնը որպես Եկեղեցու վերականգնող՝ Նախքան բոլոր Տասներկու Առաքյալները կվերադառնային Սիացյալ Նահանգների արևելքում կատարած իրենց միսիաններից։ Բարեբախտաբար, Երեց Վիլլարդ Ռիչարդսի և Երեց Փարլի Պ. Պրատի ջանքերի շնորհիվ ժողովը տեղափոխվեց հինգշաբթի օրը՝ 1844 թվականի օգոստոսի 8-ը։ Մինչ այդ Առաքյալների մեծ մասը վերադարձան Նավու։

Սիդնի Ռիզոնը հայտարարեց, որ քանի որ ինքը նախկինում կանչված և կարգված է եղել որպես Ջոզեֆ Սմիթի խոսնակ (տես ՎեՆՈՒ 100.9), ապա նրա պարտավորությունն էր «հսկելու, որ Եկեղեցին կառավարվեր պատշաճ կերպով» (*History of the Church*, 7:229):

Ջեյմս Սթրենջի պահանջը

Ջոզեֆ Սմիթի մահից հետո Ջեյմս Սթրենջը, ով մկրտվել էր 1844 թվականի փետրվարին, հայտարարեց, որ ինքը նամակ էր ստացել Ջոզեֆ Սմիթից, որում նշվում էր, որ Ջոզեֆը նշանակել էր Սթրենջին որպես իր հաջորդը։ Նամակը կեղծ էր, սակայն այն ներառում էր Ջոզեֆ Սմիթի ստորագրությունը և մոլորության մեջ գցեց Եկեղեցու որոշ անդամների, երբ Սթրենջն այն ցույց տվեց նրանց։ Սթրենջը նաև ասաց, որ իրեն այցելել էր մի հրեշտակ, ով տվել էր նրան բանալիներ։

7 օգոստոսի, 1844 թվական

Երեց Ջոն Թեյլորը, Վիլլարդ Ռիչարդսը, Փարլի Պ. Պրատը և Ջորջ Ա. Սմիթն արդեն Նավու քաղաքում էին, երբ Սիդնի Ռիզոնը ժամանեց։ Մնացած Առաքյալների մեծ մասը, ներառյալ Բրիգամ Յանգը, Նավու վերադարձան 1844 թվականի օգոստոսի 6-ին։ Հաջորդ օրը՝ օգոստոսի 7-ին, Առաքյալները խորհրդի հանդիպում ունեցան Ջոն Թեյլորի տանը։ Ավելու ուշ՝ այդ օրը կեսօրին, Տասներկու Առաքյալները, բարձրագույն խորհուրդը և քահանայապետները հավաքվեցին միասին։ Նախագահ Յանգը խնդրեց Սիդնի Ռիզոնին ներկայացնել իր ուղերձը Սրբերին։ Սիդնի Ռիզոնը հանդուգն կերպով հայտարարեց, որ նա տեսիլք էր տեսել և, որ ոչ մի մարդ չէր կարող հաջորդել Ջոզեֆ Սմիթին որպես Եկեղեցու Նախագահ։ Ապա նա պնդեց, որ ինքը նշանակվել էր որպես մարդկանց վերականգնող։

Երբ Սիդնի Ռիզոնն ավարտեց իր մեկնաբանությունները, Բրիգամ Յանգն (1801–77) ասաց.



«Ինձ չի մտահոգում, թե ով կառաջնորդի Եկեղեցին, ... բայց մի բան ես պետք է իմանամ, և դա այն է, թե ինչ է Աստված ասում այդ մասին։ Ես ունեմ բանալիները և միջոցները՝ իմանալու Աստծո կարծիքն այս հարցի շուրջ։ ...

Ջոզեֆը շնորհեց մեզ Առաքյալներին պատկանող բոլոր բանալիները և զորությունները, որն ինքն էլ կրում էր մինչև մահը, և ոչ մի մարդ կամ մի քանի մարդիկ չեն կարող կանգնել Ջոզեֆի և Տասներկուսի միջև այս աշխարհում կամ գալիք աշխարհում։

Որքան հաճախ է Ջոզեֆն ասել Տասներկուսին. «Ես դրել եմ հիմքը և դուք պետք է կառուցեք դրա վրա, քանի որ ձեր ուսերին է դրված արքայությունը» (*History of the Church*, 7:230):

8 օգոստոսի, 1844 թվական, 10.00

1844 թվականի օգոստոսի 8-ին Սրբերը Նավու քաղաքում հավաքվեցին առավոտյան ժամը 10.00-ին՝ լսելու Սիդնի Ռիզդոնի պահանջները որպես Եկեղեցու վերակացու: Նա մեկ ժամ ու կես խոսեց հավաքված հազարավոր Սրբերի հետ, բացատրելով, թե ինչու ինքը պիտի լիներ Եկեղեցու վերակացու: Մի շարք մարդիկ նկարագրեցին նրա ելույթը որպես չոգեչնչող:

Նախագահ Բրիգամ Յանզը հակիրճ խոսեց և ասաց, որ նա կնախընտրեր վերադառնալ Նավու՝ սգալու Մարգարեի համար, և դրանից հետո նշանակվեց Նոր ղեկավար: Նա հայտարարեց, որ ղեկավարների և անդամների հանդիպում տեղի կունենա այդ օրը մի փոքր ուշ՝ ժամը 14.00-ին: Եկեղեցու մի շարք անդամներ հետագայում վկայեցին, որ Երբ Բրիգամ Յանզը խոսում էր, նրանք ականատես եղան նրա կերպարանքի փոփոխությանը և լսեցին նրա ձայնի փոփոխությունը, և նա ստացավ Մարգարե Ջոզեֆ Սմիթի կերպարանքը և ձայնը:

Էմիլի Սմիթ Շոյթը հիշել է. «Դատողություններ անելու եղանակը, դեմքի արտահայտությունը, ձայնի ելևէջը հուզեց ինձ մինչև հոգուս խորքը: ... Ես գիտեի, որ Ջոզեֆը մահացել էր: Սակայն ես հաճախ ցնցվում էի և ակամայից նայում հարթակին, որպեսզի տեսնեի, թե արդյո՞ք դա Ջոզեֆը չէր: Ոչ, դա նա չէր, դա Բրիգամ Յանզն էր» (quoted in Lynne Watkins Jorgensen, "The Mantle of the Prophet Joseph Passes to Brother Brigham: A Collective Spiritual Witness," *BYU Studies*, vol. 36, no. 4 [1996–97], 142):

Վիլֆորդ Վուդրուֆը գրել է. «Եթե ես նրան իմ սեփական աչքերով չտեսնեի, չկա մեկը, ով կկարողանար համոզել ինձ, որ դա Ջոզեֆ Սմիթը չէր, և ցանկացած մարդ կարող է վկայել այդ մասին, ով ճանաչում էր այս երկու մարդկանց» (*History of the Church*, 7:236):

8 օգոստոսի, 1844 թվական, 14.00

Ժամը 14.00-ին հազարավոր Սրբեր հավաքվեցին մասնակցելու մի ժողովի, որը գիտեին, որ շատ կարևոր էր լինելու: Բրիգամ Յանզն անկեղծորեն խոսեց Սիդնի Ռիզդոնի առաջարկած վերակացության և վերջին երկու տարիների ընթացքում Ջոզեֆ Սմիթից նրա հեռանալու մասին և ապա ասաց.

«Եթե մարդիկ ուզում են Նախագահ Ռիզդոնն առաջնորդի իրենց, նրանք կարող են ընդունել նրան, սակայն ես ասում եմ ձեզ, որ Տասներկուսի Քվորումն ունի Աստծո արքայության բանալիները ողջ երկրի վրա:

Տասներկուսը նշանակվել են Աստծո ձեռքով: Սիա Բրիգամը, տեսնել էք, որ նրա ծնկները երբևէ երեքան: Նրա շուրթերը երբևէ դողացել են: Սիա շեքեր [Ս. Քիմբալը] և մնացած Տասներկուսը, առանձին էակներ, ովքեր ունեն քահանայության բանալիները՝ Աստծո թագավորության բանալիները, որ հանձնեն ողջ աշխարհին. սա ճշմարիտ է, ուստի օգնիր ինձ, Աստված: Նրանք կանգնած են Ջոզեֆի կողքին և ներկայացնում են Եկեղեցու Առաջին Նախագահությունը» (*History of the Church*, 7:233):

Բազմաթիվ Սրբեր ակնարկել են, որ Բրիգամ Յանզի կերպարանքը և ձայնը նման էր Ջոզեֆ Սմիթին, մինչև նա խոսում էր այդ կեսօրին: Ի լրացում այս հրաշքի, Սրբերից շատերը նաև

զգացին Սուրբ Հոգու վկայությունը, որ Բրիգամ Յանգը և Տասներկուսի Քվորումը կանչված էին Աստծո կողմից՝ առաջնորդելու Եկեղեցին: Այս ժողովի ավարտին Սրբերը Նավուում միաձայն քվեարկեցին՝ հաստատելով, որ Բրիգամ Յանգի գլխավորությամբ Տասներկու Առաքյալների Քվորումը առաջնորդեր Եկեղեցին: Այնուամենայնիվ, ի վերջո Եկեղեցու ոչ բոլոր անդամներն ընտրեցին հետևել Առաքյալներին: Որոշ մարդիկ ընտրեցին դրա փոխարեն հետևել Սիդնի Ռիզդոնի և Ջեյմս Սթրենջի նման անհատների, ովքեր կազմավորեցին իրենց սեփական եկեղեցիները:

Նավուից հեռանալը և գաղթը դեպի արևմուտք

Նախաբան

Բրիգամ Յանգի ոգեշնչված ղեկավարությամբ Սրբերն ավարտին հասցրին Նավուի Տաճարի շինարարական աշխատանքները, որտեղ նրանք սուրբ ուխտեր կապեցին՝ նախքան դժվարին ճամփորդությունը սկսելը դեպի իրենց նոր տունը՝ Ռոքի լեռներում: Տաճարային այս ուխտերը Սրբերին ուժ և ոգեշնչում տվեցին, երբ նրանք

դժվարությունների հանդիպեցին իրենց ճանապարհին: Որպես այս հավատարիմ Սրբերի ժառանգներ, մենք կարող ենք դասեր քաղել նրանց օրինակներից և ուղի նախապատրաստել ուրիշների համար՝ վայելելու ավետարանի օրհնությունները:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Gordon B. Hinckley, “True to the Faith,” *Ensign*, May 1997, 65–67.
- M. Russell Ballard, “You Have Nothing to Fear from the Journey,” *Ensign*, May 1997, 59–61.
- *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2003), 302–14, 329–36.

Ուսուցման առաջարկներ

Նավուի Տաճարի աշխատանքների ավարտը





Ցուցադրեք Նավուի Տաճարի նկարը կամ օգտագործեք վերակառուցված Նավու Իլինոյս Տաճարի նկարը (տես *Ավետարանի նկարների գիրք* [2009], հ. 118): Ասացեք ուսանողներին, որ երբ Վերջին Օրերի Սրբերը հեռացան Նավուից, նրանց կառուցած տաճարն ամբողջովին ավերվեց կրակից 1848 թվականին և ապա գրեթե լիովին քանդվեց 1850 թվականի պտտահողմի հետևանքով: Սուտ 150 տարի անց կառուցվեց նոր տաճար, որը շատ նման էր առաջինին և նվիրագործվեց 2002 թվականի հունիսին:

Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթի նախատակությունից հետո Սրբերն աշխատում էին Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարության ներքո, որպեսզի, որքան հնարավոր է, շուտ ավարտին հասցնեին Նավուի Տաճարի կառուցումը: Ցուցադրեք հետևյալ հայտարարությունները և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք: Հրավիրեք

դասարանին ուշադրություն դարձնել գոհաբերություններին, որոնք Սրբերը կատարել են Նավուի Տաճարը կառուցելու համար.

«Ավելի քան 1000 մարդ իրենց աշխատանքը նվիրաբերեցին յուրաքանչյուր տասներորդ օրը: Լուիզա Դեքերը՝ մի երիտասարդ աղջիկ, մեծապես ոգևորվել էր, որ իր մայրը վաճառել էր իրենց ճենապակյա սպասքը և անկողնու շքեղ ծածկոցը՝ որպես իր կողմից տաճարային նվիրատվություն: Մյուս Վերջին Օրերի Սրբերը տաճարի կառուցմանը նվիրում էին ձիեր, կառքեր, կով, խոզ և հացահատիկ : Նավուի կանանց խնդրել էին իրենց ցենսերն ու պենսիները նվիրաբերել տաճարային ֆոնդին» (*Մեր ժառանգությունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու համառոտ պատմությունը* [1996], 63):

Էլիզաբեթ Թերրի Քիրբի Հյուվարդը տվել էր իր ունեցած միակ հարստությունը՝ իր ամուսնու ժամացույցը, ով վերջերս էր մահացել: «Ես տվեցի այն Նավուի Տաճարին օգնելու համար, իսկ մնացածը, որ ես հնարավորություն էի ունեցել խնայելու, նույնիսկ վերջին երկու դոլարը, որ ունեի, միասին կազմում էին մոտավորապես 50 դոլար» (quoted in Carol Cornwall Madsen, *In Their Own Words: Women and the Story of Nauvoo* [1994], 180):

Բացատրեք, որ Սրբերի հանդեպ աճող հավածանքի և Եկեղեցու թղթամիներնի սպառնալիքների պատճառով Եկեղեցու ղեկավարները 1845 թվականի սեպտեմբերի 24-ին հայտարարեցին, որ Սրբերը զարնանը հեռանալու էին Նավուից: Հարցրեք ուսանողներին.

- Ձեր կարծիքով, Նավուից հեռանալու որոշումն ինչպե՞ս կարող էր ազդել տաճարի աշխատանքներն ավարտին հասցնելու Սրբերի ջանքերի վրա:

Բացատրեք ուսանողներին, որ չնայած Սրբերը գիտեին, որ իրենք պետք է հեռանային Իլլինոյսից, նախքան հեռանալը նրանք ավելի մեծ ջանքեր գործադրեցին տաճարի աշխատանքներն ավարտին հասցնելու համար: Աշխատանքների ավարտից անմիջապես հետո Տաճարի սենյակները նվիրագործվեցին, որպեսզի արարողությունները որքան հնարավոր է շուտ կատարվեն: Նախքան իր մահը՝ Մարգարե Ջոզեֆ Միլթը սպասավորել էր տաճարային օժտման արարողությունը տղամարդկանց ու կանանց փոքր խմբի համար: 1845 թվականի դեկտեմբերի 10-ին այդ տղամարդիկ ու կանայք սկսեցին սպասավորել տաճարային արարողությունները մյուս անդամների համար՝ տաճարի նվիրագործված սենյակներում: Մի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ հաջորդ երկու պարբերությունները, որոնք նկարագրում են Սրբերի և նրանց ղեկավարների ջանքերը, որպեսզի հնարավորինս շատ մարդիկ ստանային տաճարային արարողություններ՝ նախքան Նավուից հեռանալը.

1844–1846 թվականներին Նախագահ Բրիգամ Յանգը և Տասներկու Առաքյալները Նավուի Տաճարի կառուցման ավարտը դարձրել էին հրատապ առաջնահերթություն: Այնտեղ կատարվում էին օժտումներ և կնքումներ՝ նույնիսկ մինչև շինարարական աշխատանքների ավարտը: Բրիգամ Յանգն (1801–77) ասել է. «Այնքան մեծ էր սրբերի դրսևորած հուզմունքը տաճարային օրհնություններ ստանալու վերաբերյալ, և

այնքան շատ էր հուզմունքը մեր կողմից՝ նրանց ծառայելու համար, որ ես իմ անձը ամբողջովին նվիրաբերել էի գիշեր ու ցերեկ Տաճարում Տիրոջ գործին, քնելով օրական չորս ժամ և տուն էի գնում շաբաթը մեկ անգամ» (*History of the Church*, 7:567):

Ի լրումն տաճարում աշխատող տղամարդկանց՝ «երեսունվեց կանայք դարձան տաճարային աշխատողներ Նավուի Տաճարում, 1845-1846 թվականների ձմռանն աշխատելով ամբողջ օրը, որպեսզի նախքան հեռանալը հնարավորինս շատերի արարողությունները սպասավորելին: «Ես աշխատում էի Տաճարում ամեն օր առանց ընդմիջման՝ մինչև փակվելը», հիշում էր Էլիզաբեթ Էն Ուիթնին՝ երեսունվեցից մեկը: «Ես այդ առաքելությանն էի նվիրել իմ անձը, իմ ժամանակը և ուղադրությունը»: Բազմաթիվ այլ կանայք լվանում էին հագուստները և ուտելիք էին պատրաստում, որը ֆիզիկապես աջակցում էր այդ մեծ գործին» (*Carol Cornwall Madsen, "Faith and Community: Women of Nauvoo," in Joseph Smith: The Prophet, The Man*, ed. Susan Easton Black and Charles D. Tate Jr. [1993], 233-34):

Բացատրեք, որ 1845 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 1846 թվականի փետրվարի 7-ը՝ այն օրը, երբ Սրբերը սկսեցին իրենց գաղթը դեպի արևմուտք, մոտավորապես 5615 Սրբեր Նավուի Տաճարում ստացան օժտման արարողությունը և բազմաթիվ ընտանիքներ կնքվեցին այնտեղ:

- Մենք ի՞նչ կարող ենք սովորել տաճարի աշխատանքներն ավարտին հասցնելու Սրբերի զոհաբերություններից, որ նրանք կատարում էին նույնիսկ այն ժամանակ, երբ գիտեին, որ շուտով հեռանալու էին Նավուից: (Ուսանողները կարող են ներկայացնել տարբեր սկզբունքներ, ինչպես օրինակ հետևյալը. **Տաճարային արարողությունները ստանալու համար արժե գործադրել մեր բոլոր արդար ջանքերը և զոհաբերությունները:** Կարող եք հետևյալ սկզբունքը գրել գրատախտակին՝ դրան կարևորություն տալու համար:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող էր տաճարային արարողություններ ստանալը նախապատրաստել նրանց, ովքեր հեռանում էին Նավուից՝ ճամփորդելու հազարավոր մղոններ, որպեսզի ապաստան գտնեին Միացյալ Նահանգների արևմուտքում:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, ցուցադրեք Քույր Սառա Բիչի և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Եթե չլիներ այն հավատը և գիտելիքը, որը տրվել էր մեզ այդ տաճարում Տիրոջ Հոգու ազդեցության և օգնության շնորհիվ, մեր ճամփորդությունը նման կլիներ խավարի մեջ թռիչք կատարելուն» (Սառա Բիչ, *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* [2011], 30):



«Մեր ռահվիրա նախնիները կնքվեցին միմյանց հետ որպես ընտանիքներ Նավու քաղաքում: Նավուի Տաճարում Տիրոջ հետ կապած նրանց ուխտերը պաշտպանություն էին նրանց համար դեպի արևմուտք կատարած ճամփորդության ժամանակ, ինչպես որ մեզանից յուրաքանչյուրիս համար այսօր և մեր ողջ կյանքի ընթացքում: ...

Վաղ շրջանի այս Սրբերի համար տաճարային արարողություններին իրենց մասնակցությունը առանցքային նշանակություն ունեցավ նրանց վկայությունների համար, երբ նրանք հանդիպեցին դժվարությունների, զայրացած ամբոխին, քշվեցին Նավուի հարմարավետ տներից և սկսեցին երկար ու դժվարին ճամփորդությունը: Նրանք սուրբ տաճարում օժտվեցին զորությամբ: Ամուսինը և կինը կնքվեցին միմյանց հետ: Երեխաները կնքվեցին իրենց ծնողների հետ: Նրանցից շատերը ճանապարհին կորցրեցին իրենց ընտանիքի անդամներին, բայց նրանք գիտեին, որ դա իրենց համար վերջը չէր: Նրանք տաճարում կնքվել էին ողջ հավերժության համար» (Robert D. Hales, "Temple Blessings," *New Era*, Feb. 2014, 4):

Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ ազդեցություն էին ունեցել տաճարային արարողությունների ստանալը վաղ շրջանի Վերջին Օրերի Սրբերի վրա, ովքեր ստիպված էին եղել երկար ճանապարհի կտրել դեպի արևմուտք: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Տաճարային արարողությունները կարող են ապահովություն և ուժ տալ մեզ, երբ մենք հանդիպենք դժվար ժամանակների և հակառակության:**
- Ինչպե՞ս է տաճարային երկրպագությունը փորձության պահերին պաշտպանել և ամրացրել ձեզ կամ նրանց, ում դուք ճանաչում եք :

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են անել Տիրոջ տանը երկրպագելու միջոցով ավելի մեծ հոգևոր պաշտպանություն և ուժ գտնելու համար:

Վարդապետություն և Ուխտեր 136

Տիրոջ հրահանգները նրանց, ովքեր ճամփորդում էին դեպի արևմուտք



Հրավիրեք ուսանողներին բացել Եկեղեցու Պատմության Քարտեզները, հ. 6, «Եկեղեցու շարժումը դեպի արևմուտք», և խնդրեք նրանց գտնել Նավուն և Վինթեր Քուորթերսը: Բացատրեք, որ հորդառատ անձրևների և

բավարար պաշարներ չունենալու պատճառով 1846 թվականի փետրվարին Նավուից հեռացած Սրբերից պահանջվեց չորս ամիս, որպեսզի ճամփորդեին 300 մղոն՝ Այովա նահանգը հասնելու համար: Այդ ընթացքում ավելի քան 500 Վերջին Օրերի Սրբերի տղամարդիկ, ովքեր հայտնի դարձան որպես Մորմոնական գումարտակ, լսեցին Նախագահ Բրիգամ Յանգի կոչը, որպեսզի զինվորագրվեին Միացյալ Նահանգների բանակին և մասնակցեին Միացյալ Նահանգների և Մեքսիկայի միջև սկսված պատերազմին: Որոշ տղամարդկանց միացան նաև իրենց կանայք և երեխաները: Իրենց ծառայության արդյունքում նրանք գումար էին վաստակելու՝ օգնելու Եկեղեցու աղքատ անդամներին ճամփորդել դեպի արևմուտք, սակայն շատ ընտանիքներ դեպի արևմուտք ճամփորդելու ճանապարհի կեսն անցան առանց ամուսինների և հայրերի: Այդ պատճառով Եկեղեցու ղեկավարները որոշեցին չչարունակել ճանապարհի դեպի արևմուտք գտնվող Ռոքի լեռները մինչև 1847 թվականի գարունը: Սրբերը կանգ առան մի վայրում, որը կոչեցին Վինթեր Քուորթերս: Այդտեղ էր, որ Բրիգամ Յանգը ստացավ Վարդապետություն և Ուխտեր 136-ում տրված հայտնությունը:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդան Վարդապետություն և Ուխտեր 136.1-5 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել՝ փնտրելով, թե Տերը ի՞նչ կարգադրեց Սրբերին անել, որպեսզի նախապատրաստվեին շարունակել իրենց ճամփորդությունը դեպի արևմուտք:

- Ինչպե՞ս պետք է կազմավորվեին խմբերը: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող էր այս կազմավորումը օգնել Սրբերին իրենց ճամփորդության ժամանակ:
- Ինչո՞վ է նման այս կազմավորումը Եկեղեցու ներկայիս կառուցվածքին: (Ուսանողների պատասխաններից հետո դուք կարող եք գրատախտակին գրել հետևյալ ճշմարտությունը. **Տերը Իր Սրբերին կազմավորեց խմբերով, որպեսզի յուրաքանչյուր անձնավորություն առաջնորդություն ստանա և նրա համար հոգ տարվի:**)
- Ի՞նչ է ուսուցանում հատված 4-ն այն մասին, թե ինչպես կարող են Սրբերը ուժ ստանալ Տիրոջ կամքը կատարելու իրենց ջանքերում:

Հանձնարարեք ուսանողներին լուռ ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 136.6-11 հատվածները՝ փնտրելով, թե ինչպես պետք է սրբերը կազմավորված լինեին, որպեսզի հոգային միմյանց կարիքները և աջակցեին աղքատներին ու կարիքավորներին՝ դեպի արևմուտք ճամփորդելու ընթացքում: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, խորհեք հետևյալ հարցերը տալու մասին, որպեսզի քննարկում կազմակերպեք.

- Ո՞ր բառերը կամ արտահայտություններն են 6-11 հատվածներում նշում, թե ինչպես պետք է Սրբերը հոգ տանեին միմյանց և նրանց համար, ովքեր կարիքի մեջ էին: (6,7 և 9 հատվածներում կարող եք ընդգծել «նախապատրաստվել» բառը: Սա կկենտրոնացնի ուշադրությունը սուրբ գրությունների ուսումնասիրության կրկնությունները նկատելու հմտության վրա:)

- Համաձայն հատված 11-ի՝ Տերն ի՞նչ խոստացավ նրանց, ովքեր ջանում են օգնել ուրիշներին և ուղի պատրաստել նրանց համար: (Մինչ ուսանողները պատասխանում են, հետևյալ սկզբունքը գրեթե գրատախտակին. **Տերը կօրհնի մեզ, երբ մենք օգնենք ուրիշներին և ուղի պատրաստենք նրանց համար:**)
- Ո՞վ է ուղի պատրաստել ձեզ համար, որպեսզի վայելեք ավետարանի օրհնությունները: Ի՞նչ են արել նրանք, որպեսզի ուղի պատրաստեն ձեզ համար:

Դուք կարող եք բացատրել, որ *ռահվիրա* բառը կարող է սահմանվել որպես մեկը, ով գնում է առջևից՝ ճանապարհի պատրաստելու կամ բացելու ուրիշների համար, ովքեր գալիս են իր հետևից, նկատի ունենալով, որ մենք բոլորս էլ կարող ենք որոշ առումով *ռահվիրա* լինել: Ուսանողներին ժամանակ տվեք, որպեսզի խորհեն, թե ինչ կարող են անել, որպեսզի օգնեն ուրիշներին և ուղի պատրաստեն նրանց համար՝ վայելելու ավետարանի օրհնությունները: Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվել իրենց մտքերով: Վկայեք, որ Տերը ցանկանում է, որ մենք մեր ողջ կյանքի ընթացքում ձգտենք օգնել ուղի պատրաստել, որ Իր զավակներից յուրաքանչյուրը ստանա ավետարանը և վերադառնա ապրելու Իր հետ:

Բացատրեք, որ Սրբերը հնազանդվել են Տիրոջ պատվիրաններին՝ օգնելով միմյանց և ուղի պատրաստելով նրանց համար, ովքեր գալու էին իրենցից հետո: Ռահվիրաների առաջին խումբը հեռացավ Վինթեր Քուորթերսից 1847 թվականի ապրիլի 5-ին: Նրանք ճամփորդեցին ավելի քան 1000 մղոն և 1847 թվականի հուլիսի վերջին հասան Սուլթ Լեյքի հովիտ: 1847 թվականի հուլիսի 24-ին Նախագահ Բրիգամ Յանգը մտավ հովիտ և հաստատ զգացողություն ունեցավ, որ Սրբերը գտել էին իրենց նոր տունը:

Ցուցադրեք Յոթանասունի նախկին անդամներից Երեց Վիլյամ Ռ. Վոքերի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Անկախ այն բանից, դուք հանդիսանում եք պիոներների հետևորդ, թե՛ ոչ, մորմոն պիոներների հավատքի և զոհաբերության ժառանգությունը ձեր ժառանգությունն է: Դա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ազնվագարն ժառանգությունն է» («Live True to the Faith,” *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 97):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամը հասկանա, որ «մորմոն պիոներների հավատքի և զոհաբերության ժառանգությունը» իրենց ժառանգությունն է՝ անկախ իրենց ծագումից:
- Ինչպե՞ս կարող է մորմոն *ռահվիրաների* ճամփորդության մասին սովորածը այսօր ոգեշնչել Եկեղեցու անդամներին՝ ուրիշներին ծառայելու ջանքերում և օգնել նրանց՝ Երկնային Հոր մոտ վերադառնալու իրենց ճամփորդության ժամանակ:

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–1995) հետևյալ միտքը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Այսօր [ռահվիրաների] մեծ փորձը փոխանցվել է մեզ: Հուսով եմ, որ մենք շնորհակալ ենք դրա համար: Հուսով եմ, որ մենք մեր սրտում խորը երախտագիտություն ենք զգում այն ամենի համար, որ նրանք արել են մեզ համար: ...

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան օրհնված ենք մենք: Ի՞նչ հրաշալի ժառանգություն մենք ունենք: Այն ներառել է զոհաբերություն, տառապանք, մահ, տեսլական, հավատ, գիտելիք և վկայություն առ Աստված՝ Հավերժական Հայրը և Նրա Որդին՝ հարություն առած Հիսուս Քրիստոսը: ...

Մենք առավելագույնս պատվում ենք նրանց, ովքեր անցել են մեզանից առաջ, երբ լավագույնս ծառայում ենք ճշմարտության գործին» ("True to the Faith," *Ensign*, May 1997, 66–67):

Հիշեցրեք ուսանողներին, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ օրհնված է ուրիշների կողմից, ովքեր ուղի են պատրաստել նրանց համար՝ վայելելու ավետարանի օրհնությունները: Ուսանողներին հորդորեք մտածել, թե իրենք ինչ կարող են անել՝ նախապատրաստելու ուրիշներին և իրենց սերունդներին, որպեսզի իրենց կյանքում առկա լինի հավատքը և հնազանդությունը առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 136:
- Gordon B. Hinckley, "True to the Faith," *Ensign*, May 1997, 65–67.

Յուտայի պատերազմը և Մաունթ Մեդոուսի ջարդերը

Նախաբան

1850-ականների ընթացքում Վերջին Օրերի Սրբերի և Միացյալ Նահանգների կառավարության պաշտոնատար անձանց միջև ստեղծված լարվածության և թյուրըմբռնման արդյունքում տեղի ունեցավ 1857-58 թվականների Յուտայի պատերազմը: 1857 թվականի սեպտեմբերին Յուտայի հարավային տարածքներում մի քանի Վերջին Օրերի Սրբերի և սայլերով դեպի

Կալիֆորնիա ճամփորդող գաղթականների միջև տարաձայնություններ առաջացան, և Վերջին Օրերի Սրբերը՝ գայրության և վախից դրդված, ծրագրեցին և իրականացրին 120 գաղթականների ջարդերը: Այս դաժանությունը հայտնի է որպես Մաունթ Մեդոուսի ջարդեր:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Richard E. Turley Jr., “The Mountain Meadows Massacre,” *Ensign*, Sept. 2007, 17–21.
- “Peace and Violence among 19th-Century Latter-day Saints,” *Gospel Topics*, [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- Henry B. Eyring, “150th Anniversary of Mountain Meadows Massacre,” Sept. 11, 2007, [mormonnewsroom.org/article/150th-anniversary-of-mountain-meadows-massacre](https://www.mormonnewsroom.org/article/150th-anniversary-of-mountain-meadows-massacre).

Ուսուցման առաջարկներ

Վաղ շրջանի Վերջին Օրերի Սրբերի և Միացյալ Նահանգների կառավարության միջև ստեղծված լարվածությունը




Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք թերթիկի մեկական օրինակ, որը գտնվում է այս դասի վերջում: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Աճող լարվածությունից սկիզբ է առնում Յուտայի պատերազմը» վերնագրով հատվածը:

- Եթե դուք լինեիք 1857 թվականի Վերջին Օրերի Սրբերի շարքում և լսեիք, որ մեծ բանակ է մոտենում ձեր քաղաքին, ի՞նչ մտահոգություններ կունենայիք դուք: (Ուսանողները կարող են նշել, որ Սրբերը բռնությամբ քշվել էին Օհայոյից՝ Միսսուրի և Իլլինոյսից, շատերը կորցրել էին մեծարժեք ունեցվածք և հող, իսկ ոմանք էլ սպանվել էին կամ մահացել այս հալածանքների ընթացքում: Մոտեցող բանակի մասին լուրերի պատճառով որոշ Սրբեր անհանգստացան, որ նման իրադարձություններ կարող էին տեղի ունենալ նաև Յուտայում:)

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Տարածքը պաշտպանելու նախապատրաստությունները» վերնագրով հատվածը:

Մի քանի Վերջին Օրերի Սրբերի և սայլերով ճամփորդող գաղթականների միջև ստեղծված լարվածությունը



Ցուցադրեք կամ գրատախտակին գծեք քարտեզ, որը նման է այստեղ տրվածին:

Հրավիրեք որևէ ուսանողի Բարձրաձայն կարդալ թերթիկի
«Տարաձայնություն սայլերով ճամփորդող գաղթականների հետ»
վերնագրով հատվածը:

Հրավիրեք ուսանողներին մտածել այնպիսի ժամանակների մասին, երբ նրանք տարածայնություններ են ունեցել մեկ այլ անձնավորության կամ մի խումբ մարդկանց հետ: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 3 Նեփի 12.25 հատվածը: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, փնտրելով սկզբունքը, որը Հիսուս Քրիստոսը սովորեցրել է և որը մեզ կարող է առաջնորդել, երբ մենք լարվածություն ենք ունենում ուրիշների հետ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «հաշտվիր քո հակառակորդի հետ արագ» արտահայտությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այդ արտահայտությունը, խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Յոթանասունի Քվորումից Երեզ Դեյվիդ Ի. Մորենսենի հետևյալ խոսքերը.



«Տերն ասել է. «Հաշտվիր քո հակառակորդի հետ արագ ...», այդպիսով պատվիրելով մեզ նախապես հարթել մեր տարաձայնությունները, որպեսզի պահի ազդեցության տակ մեզ համակամ կրքերը չվերաժվեն ֆիզիկական կամ էմոցիոնալ դաժանության և մենք դառնանք մեր բարկության գերին» (*"Forgiveness Will Change Bitterness to Love," Ensign or Liahona, May 2003, 11*):

- Ինչպե՞ս կամփոփելիք 3 Նեփի 12.25 հատվածի Փրկիչի ուսմունքը: (Մինչ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք մամանատիպ մի սկզբունք. **Եթե մենք ուրիշների հետ ունեցած տարաձայնություններին լուծում տանք Տիրոջ եղանակով, ապա մենք կարող ենք խուսափել հակառակության կործանարար ազդեցություններից:**)
- Ինչպե՞ս կարող էին այս սկզբունքը կիրառել նրանք, ովքեր դավ նյութեցին սայլերի ուղևորների դեմ:

Թող որևէ ուսանող բարձրաձայն կարդա թերթիկի «Սրվող հակամարտությունը» վերնագրով հատվածը:

- Ի՞նչ պետք է անեին Սիդար Սիթիի Եկեղեցու ղեկավարները, երբ Վիլյամ Դեյմը նրանց խորհուրդ տվեց չօգտագործել ոստիկաններին: Այս խորհրդի մերժումը ի՞նչ քայլերի հանգեցրեց: (Ուսանողների պատասխաններից հետո գրեք հետևյալ սկզբունքը գրատախտակին. **Եթե մենք անտեսում ենք ճիշտ քայլեր անելու խորհուրդը, ապա մենք ավելի հեշտությամբ ենք տրվում վատ և նույնիսկ մեղսալի ընտրություններ կատարելուն:** Դուք կարող եք նաև նշել, որ մեծ իմաստություն կա խորհուրդների համակարգի մեջ, որով ղեկավարվում է Եկեղեցին:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ թերթիկի «Հարձակում գաղթականների վրա» վերնագրով հատվածը և հրավիրեք ուսանողներին փնտրել, թե ինչպես Սիդար Սիթիի ղեկավարները շարունակեցին կատարել մեղսալի ընտրություններ այն բանից հետո, երբ մերժեցին իրենց տրված խորհուրդը:

- Ի՞նչ հետևանքներ ունեցավ Վիլյամ Դեյմի՝ ոստիկանության սպայի, խորհրդին չհետևելու Սիդար Սիթիի ղեկավարների որոշումը:
- Այդ պահին ընտրության ի՞նչ հնարավորություն ունեին նրանք, ովքեր պատասխանատու էին հարձակման գործում: (Նրանք կարող էին խոստովանել իրենց արածները և պատասխանատվություն կրել հետևանքների համար կամ կարող էին թաքցնել իրենց հանցանքներն ու մեղքերը:)

Հրավիրեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Դուք ի՞նչ եք անում, երբ որևէ սխալ եք գործում: Դուք խոստովանո՞ւմ եք ձեր կատարած սխալները և պատասխանատվություն կրում հետևանքների համար, թե՞ փորձում եք թաքցնել մեղքը ստի միջոցով:

Մի քանի Վերջին Օրերի Ցրբեր ծրագրեցին և իրականացրեցին Մաունթ Մեդոուսի ջարդերը

Բացատրեք, որ գաղթականների դեմ հարձակումներին ներգրավված Եկեղեցու անդամներն իրենց ընտրությամբ փորձեցին թաքցնել իրենց մեղքերը: Հրավիրեք դասարանին լսել, թե ինչ տեղի ունեցավ այդ որոշման արդյունքում, երբ ուսանողները հերթով բարձրաձայն կարդան թերթիկի «Մաունթ Մեդոուսի ջարդերը» և «Ողբերգական հետևանքներ» վերնագրերով բաժինները:

Բացատրեք, որ մի քանի Վերջին Օրերի Սրբերի ղեկավարների և Յուտայի հարավային տարածքների նորաբնակների ընտրությունները Մաունթ Մեդոուսի ողբերգական ջարդերի պատճառը դարձան: Իսկ Սուլթ Լեյք Սիթիի Եկեղեցու և տարածքային ղեկավարները 1858 թվականին Միացյալ Նահանգների կառավարության հետ ունեցած տարաձայնությունները լուծեցին խաղաղ բանակցությունների միջոցով: Այս տարաձայնության ընթացքում, որը հետագայում կոչվեց Յուտայի պատերազմ, Միացյալ Նահանգների զորքերը և Յուտայի ոստիկանները ներգրավվեցին կռիվ հրահրող գործողությունների մեջ, սակայն այն չվերածվեց մարտի:

- Ինչպե՞ս դուք կամփոփեիք ընտրությունները, որոնք Մաունթ Մեդոուսի ջարդերի պատճառը դարձան:
- Մենք ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել այս ողբերգությունից: (Ուսանողները կարող են ներկայացնել տարբեր սկզբունքներ, ինչպես օրինակ հետևյալը. **Երբ ընտրում ենք թաքցնել մեր մեղքերը, այն դրդում է մեզ հետագա մեղքեր գործելու: Երբ ընտրում ենք թաքցնել մեր մեղքերը, այն կարող է բերել վիշտ ու տառապանք:**)

Վստահեցրեք ուսանողներին, որ եթե նրանք բռնել են սխալների և մեղքի ուղին, նրանք կարող են կանխել հետագա վիշտն ու ցավը՝ դեպի Տերը դառնալով և իրենց մեղքերն ապաշխարելով:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ թերթիկի «Եկեղեցու ղեկավարները տեղեկանում են ջարդերի մասին» վերնագրով հատվածը:

Բացատրեք, որ քանի որ մի քանի տեղաբնակ Վերջին Օրերի Սրբեր պատասխանատու էին Մաունթ Մեդոուսի ջարդերը ծրագրելու և իրականացնելու գործում, որոշ մարդիկ թույլ տվեցին, որ այս իրադարձությունը բացասաբար ազդի իրենց կարծիքի վրա ողջ Եկեղեցու վերաբերյալ:

- Ինչո՞ւ է կարևոր գիտակցել, որ Եկեղեցու որոշ անդամների սխալ գործողություններով չի որոշվում ավետարանի ճշմարտացիությունը:

Մի ուսանողի հրավիրեք կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը, որոնք գտնվում են թերթիկի «Մաունթ Մեդոուսի ջարդերի 150-րդ տարելիցը» վերնագրով բաժնում:

- Մենք ինչպե՞ս պիտի արձագանքենք, երբ տեղեկանում ենք դեպքերի մասին, որ Եկեղեցու անդամները թերացել են ապրել Հիսուս Քրիստոսի ուսմունքների համաձայն:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Հելաման 5.12 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել՝ փնտրելով, թե մենք ինչ կարող ենք անել՝ վկայություններ ձեռք բերելու և պահպանելու համար, որպեսզի դժվար պահերին մեր հավատքը չսասանվի այն դեպքերում, երբ Եկեղեցու անդամները թերացել էին ապրելու Հիսուս Քրիստոսի ուսմունքների համաձայն:

- Համաձայն Հելաման 5.12-ի, մենք ի՞նչ կարող ենք անել վկայություններ ձեռք բերելու և պահպանելու համար: (Ուսանողների պատասխանները լսելուց հետո գրատախտակին կարող եք գրել հետևյալ սկզբունքը. **Մենք կարող ենք ձեռք բերել ամուր վկայություններ՝ կառուցելով մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:**)

Այս սկզբունքը լուսաբանելու համար ցուցադրեք հետևյալը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Ջեյմս Սանդերսը ... ջարդերի ժամանակ ողջ մնացած երեխաներից մեկի ծոռն է (և նաև Եկեղեցու անդամ է): ... Եղբայր Սանդերսը ... ասել է, որ այն բանի իմացությունը, որ իր նախնին սպանվել է ջարդերի ժամանակ, «չի ազդել իմ հավատքի վրա, քանի որ այն հիմնված է Հիսուս Քրիստոսի վրա, ոչ թե Եկեղեցու որևէ անձնավորության վրա» (Richard E. Turley Jr., "The Mountain Meadows Massacre," *Ensign*, Sept. 2007, 21):

- Ինչպե՞ս կարող է մեր հավատքն առ Հիսուս Քրիստոսը ուժեղացնել մեզ, երբ տեղեկանում ենք դեպքերի մասին, որ Եկեղեցու անդամները թերացել են ապրել Հիսուս Քրիստոսի ուսմունքների համաձայն:
- Ձեր գործողություններում ի՞նչն է օգնում է ձեզ՝ ձեր հավատքը կառուցել Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:

Վկայեք Փրկիչի ուսմունքներով ապրելու և մեր հավատքը Նրա և Նրա ավետարանի վրա հիմնելու կարևորության մասին: Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են ավելի լավ կառուցել իրենց հավատքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա և նպատակ դնել՝ անելու այդ:

Ուսանողի ընթերցարան

- "Peace and Violence among 19th-Century Latter-day Saints," Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).

Յուտայի պատերազմը և Մաունթ Մեդոուսի ջարդերը

Աճող լարվածությունից սկիզբ է առնում Յուտայի պատերազմը

Վերջին Օրերի Սրբերի ռաիվիրաների՝ Սոլթ Լեյքի հովիտ առաջին անգամ հասնելուց երեք տարի անց Միացյալ Նահանգների կառավարությունը կազմավորեց Յուտայի Տարածքը և Բրիգամ Յանգին նշանակեց որպես տարածաշրջանի առաջին նահանգապետ: 1857 թվականի կեսերին Վերջին Օրերի Սրբերի ղեկավարները լուրեր լսեցին, որ կառավարական իշխանությունները ցանկանում են Բրիգամ Յանգի փոխարեն նոր նահանգապետ նշանակել Յուտայի Տարածաշրջանում, ում հետևում կանգնած էր լինելու մեծաքանակ կառավարական զորքը: 1857 թվականի հուլիսի 24-ին Նախագահ Բրիգամ Յանգը մի խումբ Սրբերի հետ նշում էր Սոլթ Լեյքի հովիտ իրենց ժամանման 10-րդ տարեդարձը, երբ ստացավ ավելի վաղ լսած լուրերի հաստատումը, որ բանակը մոտենում էր Սոլթ Լեյք Սիթիին:

Նախորդ տարիների անհամաձայնության և թյուրըմբռնման արդյունքում Վերջին Օրերի Սրբերի և Միացյալ Նահանգների կառավարության պաշտոնատար անձանց միջև

լարվածությունը մեծացավ: Սրբերը ցանկանում էին ղեկավարվել իրենց իսկ ընտրած ղեկավարների կողմից և մերժեցին կառավարության կողմից նշանակված անձանց, ովքեր չէին կիսում իրենց արժեքները, ոմանք էլ անազնիվ էին, կաշառակեր և անբարո: Կառավարության որոշ պաշտոնյաներ կարծեցին, որ Սրբերի գործողությունները և վերաբերմունքը նշանակում էին, որ նրանք ապստամբում էին Միացյալ Նահանգների կառավարության դեմ:

Միացյալ Նահանգների Նախագահ Ջեյմս Բյուքանան Սուլթ Լեյք Սիթի ուղարկեց մոտավորապես 2500 զինվոր, որպեսզի ապահով ուղեկցեն նոր նահանգապետին դեպի Յուտա և ճնշեն, ըստ իր կարծիքի, Սրբերի մեջ բարձրացված ապստամբությունը: Այս որոշումը կայացվել էր առանց Յուտայի իրավիճակի մասին ճշգրիտ տեղեկության (տես *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. [Church Educational System manual, 2003], 368–71):

Տարածաշրջանը պաշտպանելու նախապատրաստություններ

Սրբերին ուղղված քարոզներում Նախագահ Յանգը և Եկեղեցու այլ ղեկավարներ մոտեցող գործերին նկարագրեցին որպես թշնամիներ: Նրանք վախենում էին, որ գործերը գուցե Սրբերին դուրս բշեն Յուտայից, ինչպես նրանք նախկինում քշվել էին Օհայո, Միսսուրի և Իլլինոյս Նահանգներից: Նախագահ Յանգը, ով տարիներ շարունակ խնդրել էր Սրբերին հացահատիկի պաշար հավաքել, կրկին տվեց նույն հրահանգները, որպեսզի նրանք ուտելիք ունենային, եթե ստիպված լինեին փախչել գործերից: Որպես Յուտայի տարածքի նահանգապետ, նա նաև հրահանգեց տարածաշրջանի ոստիկանությանը նախապատրաստվել տարածքի պաշտպանությանը:

Տարածայնություն սալլերով ճամփորդող գաղթականների հետ

Արկանզասից արևմուտք դեպի Կալիֆորնիա մեկնող գաղթականների սալլերը մտան Յուտա հենց այն ժամանակ, երբ Վերջին Օրերի Սրբերը նախապատրաստվում էին պաշտպանել տարածքը ժամանող Միացյալ Նահանգների զորքերից: Գնացքի որոշ ուղևորների մոտ դժգոհություն առաջ եկավ, քանի որ նրանք բարդությունների հանդիպեցին, երբ անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ ցանկացան զնել Սրբերից, որոնց հրահանգված էր պաշարել իրենց հացահատիկը: Գաղթականները Սրբերի հետ տարածայնություններ ունեցան նաև այն պատճառով, որ վերջիններս չէին ցանկանում, որ սալլերի մեծաքանակ ձիերը և անասունները սպառեն կերի ու ջրի պաշարները, որը Սրբերին անհրաժեշտ էր իրենց իսկ կենդանիների համար:

Լարված դրություն ստեղծվեց Սիդար Սիթիում՝ Կալիֆորնիայի ճանապարհին գտնվող Յուտայի վերջին քաղաքում: Հակամարտություններ տեղի ունեցան սալլերով ճամփորդող մի քանի մարդկանց և Վերջին Օրերի Սրբերից մի քանիսի միջև: Սալլականերով ճամփորդողներից ոմանք սպառնացին միանալ Սրբերի դեմ եկող կառավարության զորքերին: Չնայած սալլերի ղեկավարը հանդիմանեց իր ընկերներին նման սպառնալիքներ ներկայացնելու համար, Սիդար Սիթիի որոշ ղեկավարներ և նորաբնակներ գաղթականներին սկսեցին դիտել որպես թշնամիների: Սալլերի շարանը հեռացավ քաղաքից ժամանումից ընդամենը մեկ ժամ անց, սակայն Սիդար Սիթիի որոշ նորաբնակներ և ղեկավարներ ցանկացան հետապնդել և պատժել այն մարդկանց, ովքեր վիրավորել էին իրենց:

Սրվող հակամարտությունը

Քանի որ այդ Սրբերը գաղթականների հետ ունեցած իրենց խնդիրը չլուծեցին Տիրոջ եղանակով, իրավիճակը շատ ավելի լուրջացավ: Իսահակ Շեյթը՝ Սիդար Սիթիի քաղաքապետը, ոստիկանության մայորը և ցցի նախագահը թույլտվություն խնդրեցին ոստիկանության հրամանատարից, ով ապրում էր Փարովան կոչվող մոտակա բնակավայրում, ոստիկանություն կանչել և սալլականերից իջեցնել օրինազանցներին: Ոստիկանության հրամանատարը՝ Վիլյամ Դեյմը, ով Եկեղեցու անդամ էր, Իսահակ Շեյթին խորհուրդ տվեց ուշադրություն չդարձնել գաղթականների սպառնալիքներին: Այդ խորհրդին հետևելու փոխարեն Իսահակ Շեյթը և

Սիդար Սիթիի այլ ղեկավարներ որոշեցին համոզել մի քանի տեղացի բնիկ հնդկացիների՝ հարձակում գործել սայլերի վրա և գողանալ նրանց անասունները՝ որպես գաղթականներին պատժելու միջոց: Իսահակ Շեյթը խնդրեց Ջոն Դ. Լին, ով տեղի Եկեղեցու անդամ էր և ոստիկանության մայոր, առաջնորդել այս հարձակումը, և երկուսով ծրագրեցին այդ գործում մեղադրել հնդկացիներին:

Հարձակում գաղթականների վրա

Իսահակ Շեյթը սայլերի վրա հարձակվելու ծրագիրը ներկայացրեց Եկեղեցու, համայնքի և ոստիկանության տեղական ղեկավարների խորհրդին: Խորհրդի որոշ անդամներ կտրականապես մերժեցին այդ ծրագիրը և հարցրին Շեյթին, թե արդյո՞ք նա խորհրդակցել էր Նախագահ Բրիգամ Յանգի հետ այդ հարցի շուրջ: Ստելով, որ նա չի արել այդ, Շեյթը համաձայնվեց Սոլթ Լեյք Սիթիի սուրհանդակ ուղարկել Ջեյմս Հասկամին՝ մի նամակով, որտեղ կբացատրի իրավիճակը և կհարցնի, թե ինչ պետք է անել: Այնուամենայնիվ, քանի որ Սոլթ Լեյք Սիթին գտնվում է Սիդար Սիթիից մոտավորապես 250 մղոն հեռավորության վրա, սուրհանդակից կպահանջվեր գրեթե մեկ շաբաթ շարունակ ձիով առաջ պանալ՝ Սոլթ Լեյք Սիթի հասնելու համար և վերադառնալու Սիդար Սիթի՝ բերելով Նախագահ Յանգի հրահանգները:

Մինչ Իսահակ Շեյթը սուրհանդակի հետ ուղարկում էր իր նամակը, Ջոն Դ. Լին և մի խումբ հնդիկներ հարձակվեցին գաղթականների ճամբարի վրա Մաունթ Մեդոուս կոչվող վայրում: Լին առաջնորդում էր հարձակումը, սակայն քողարկում էր իր ինքնությունը, որպեսզի այնպիսի տպավորություն ստեղծվեր, որ միայն հնդիկներն էին ներգրավված: Գաղթականներից ոմանք սպանվեցին կամ վիրավորվեցին, իսկ մնացածը հարձակվողներին հետ մղեցին՝ ստիպելով Լին և հնդկացիներին նահանջել: Պաշտպանվելու համար գաղթականները արագ շրջան կամ պատնեշ կազմեցին իրենց սայլերով: Եվս երկու հարձակում հետևեց հաջորդ հինգ օրերի ընթացքում, որի ժամանակ սայլերը շուրջկալի մեջ հայտնվեցին:

Մի պահ Սիդար Սիթիի ոստիկանները նկատեցին երկու գաղթականներ, ովքեր գտնվում էին սայլակների պատնեշներից դուրս: Ոստիկանները կրակ բացեցին նրանց վրա՝ սպանելով մեկին: Մյուս մարդը փախուստի դիմեց և լուր բերեց սայլերի ճամբարին, որ սպիտակամորթներ էին ներգրավված իրենց դեմ մղված հարձակումներում: Նրանք, ովքեր ծրագրել էին հարձակումը, այժմ հայտնվել էին իրենց խաբեության ծուղակում: Եթե գաղթականներին թույլ տային գնալ Կալիֆորնիա, լուրեր կտարածվեին, որ Վերջին Օրերի Սրբերը պատասխանատու էին սայլերի վրա հարձակում գործելու համար: Դավադրության մասնակիցները վախենում էին, որ այդ լուրերը բացասական հետևանքներ կունենան իրենց և իրենց ժողովրդի համար:

Մաունթ Մեդոուսի ջարդերը

Փորձելով կանխել այդ նորությունների տարածումը, թե Վերջին Օրերի Սրբերը ներգրավված են եղել սայլերի վրա հարձակումներին, Իսահակ Շեյթը, Ջոն Դ. Լին Եկեղեցու և ոստիկանության այլ ղեկավարներ ծրագրի կազմեցին սպանել բոլոր մնացած գաղթականներին, բացառությամբ փոքր երեխաների: Որոշելով իրականացնել այս ծրագիրը՝ Ջոն Դ. Լին մոտեցավ գաղթականներին և ասաց, որ ոստիկանությունը կպաշտպանի նրանց հետագա հարձակումներից՝ նրանց ապահով հետ առաջնորդելով դեպի Սիդար Սիթի: Երբ գաղթականները քայլում էին դեպի Սիդար Սիթի, ոստիկանները շրջվեցին և կրակ բացեցին նրանց վրա: Մի քանի հնդիկներ, համալրելով նորաբնակների շարքերը, առաջ վազեցին թաքստոցներից, որ միանային հարձակմանը: Սայլակների շարանի մոտ 140 գաղթականներից միայն 17 փոքր երեխաների կյանքը խնայեցին:

Ջարդից երկու օր անց Ջեյմս Հասկամը հասավ Սիդար Սիթի՝ իր հետ բերելով Նախագահ Յանգի պատասխան ուղերձը, որում տեղական ղեկավարներին հրահանգվում էր թույլ տալ սայլերին խաղաղությամբ հեռանալ: «Երբ Շեյթը կարդաց Յանգի խոսքերը, նա մանկան նման հեկեկաց և կարողացավ ասել ընդամենը երկու բառ. «Շատ ուշ է, շատ ուշ» (Richard E. Turley Jr., "The Mountain Meadows Massacre," *Ensign*, Sept. 2007, 20):

Ողբերգական հետևանքները

Մաունթ Մեդոուսի ջարդերի արդյունքում ոչ միայն մոտավորապես 120 զոհեր եղան, այլև մեծ տառապանք պատճառվեց կենդանի մնացած երեխաներին և զոհ զննացածների հարազատներին: Մի քանի Վերջին Օրերի Սրբեր օթևան տվեցին և հոգ տարան գաղթականների երեխաներին, ովքեր ողջ էին մնացել ջարդի ժամանակ: 1859 թվականին կառավարական պաշտոնյաները իրենց վրա վերցրին այս երեխաների խնամակալությունը և վերադարձրին նրանց Արկանզասի իրենց ազգականներին: Հնդիկները նույնպես տառապեցին՝ հանցագործության մեջ անարդարացիորեն մեղադրվելու պատճառով:

Եկեղեցու ղեկավարներն իմանում են ջարդի մասին

«Չնայած Բրիգամ Յանգը և Եկեղեցու այլ ղեկավարները Սոլթ Լեյք Սիթիում ջարդի մասին իմացան դեպքերից անմիջապես հետո, նորաբնակների ներգրավվածության աստիճանի և հանցագործության սարսափելի մանրամասների մասին գիտակցումը տեղի ունեցավ աստիճանաբար՝ ժամանակի ընթացքում: 1859 թվականին նրանք իրենց կոչումներից հետ կանչեցին ցգի Նախագահ Իսահակ Շեյթին և Եկեղեցու այլ ղեկավարների Սիդար Սիթիում, ովքեր դեր խաղացին ջարդի ժամանակ: 1870 թվականին նրանք Իսահակ Շեյթին և Ջոն Դ. Լիին Եկեղեցուց վտարեցին:

«1874 թվականին տարածաշրջանի երդվյալ ատենակալների գլխավոր խումբը մեղադրանք ներկայացրեց ինը տղամարդկանց՝ ջարդը կազմակերպելու գործում նրանց դերի համար: Նրանցից շատերն ի վերջո ձերբակալվեցին, չնայած միայն Լին դատվեց, մեղավոր ճանաչվեց և մահապատժի ենթարկվեց հանցագործության համար: Մեկ այլ մեղադրյալ փաստեր հաղորդեց ստեղծված իրավիճակի մասին [ինքնակամ խոստովանելով և մյուս ամբաստանյալների դեմ ցուցմունք տալով], իսկ մյուսները տարիներ շարունակ փախչում էին օրենքից: Մյուս ոստիկանները, ովքեր իրագործեցին ջարդերը, իրենց կյանքի մնացած մասն անցկացրին սարսափելի մեղքի զգացումով և իրենց արածի ու տեսածի շուրջ կրկնվող մղձավանջի մեջ» (Richard E. Turley Jr., "The Mountain Meadows Massacre," *Ensign*, Sept. 2007, 20):

Մաունթ Մեդոուսի ջարդերի 150-րդ տարելիցը

Առաջին Նախագահությունից Նախագահ Շելբի Բ. Այրինգն ասել է.

«[Մաունթ Մեդոուսի ջարդերի] համար պատասխանատվություն են կրում Մաունթ Մեդոուսի տարածքի Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տեղի ղեկավարները, ովքեր ունեցել են նաև քաղաքացիական և ոստիկանական պաշտոններ և Եկեղեցու անդամները, ովքեր գործել են նրանց ղեկավարությամբ: ...

... Հիսուս Զրիստոսի ավետարանը, որը մենք ընդունում ենք, նողկալի է համարում սառնասիրտ արյունահեղությունը՝ երբ սպանվում են տղամարդիկ, կանայք և երեխաներ: Իրականում այն քարոզում է խաղաղություն և ներողամտություն: Այն, ինչ արեցին մեր Եկեղեցու անդամները [Մաունթ Մեդոուսում] երկար տարիներ առաջ, քրտոնեության ուսմունքների և վարքի շեղում էր: ... Աստվածային արդարադատությունն անկասկած պատշաճ պատիժ կսահմանի նրանց համար, ովքեր պատասխանատու էին ջարդերի համար: ...

... Թող որ երկնքի Աստվածը, ում որդիներն ու դուստրերն ենք մենք բոլորս, օրհնի մեզ պատվելու նրանց, ովքեր մահացան այստեղ, միմյանց հանդեպ տարածելով անկեղծ սեր և ներողամտության ոգի, որը մարմնավորում էր Նրա Միաժին Որդին» ("150th Anniversary of Mountain Meadows Massacre," Sept. 11, 2007, mormonnewsroom.org/article/150th-anniversary-of-mountain-meadows-massacre):

Հայտնություն քահանայության վերաբերյալ

Նախաբան

20-րդ դարում, երբ միսիոներական աշխատանքը տարածվեց ողջ երկրագնդում, Եկեղեցու ղեկավարները աղոթում էին աֆրիկյան ծագում ունեցող Եկեղեցու անդամների քահանայության կարգման և տաճարային արարողությունների սահմանափակումների վերաբերյալ առաջնորդություն ստանալու համար: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբլին, Առաջին Նախագահությունում նրա խորհրդականներին և Տասներկու Առաքյալների

Քվորումի անդամներին վերջնական հայտնություն տրվեց Սոլթ Լեյք Տաճարում 1978 թվականի հունիսի 1-ին: Այս դասին մասնակցելով ուսանողներն ավելի լավ կհասկանան, թե ինչպես ճշգրիտ մոտեցում ցուցաբերել ավետարանական հարցերին և կիմանան նաև այս վերջնական հայտնության հետ կապված հանգամանքներն ու ճշմարտությունները:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Gordon B. Hinckley, “Priesthood Restoration,” *Ensign*, Oct. 1988, 69–72.
- “Race and the Priesthood,” Gospel Topics, [lds.org/topics](https://www.lds.org/topics).
- Ahmad Corbitt, “A Personal Essay on Race and the Priesthood,” parts 1–4, Perspectives on Church History series, history.lds.org/section/perspectives-on-church-history.

Ուսուցման առաջարկներ

Պաշտոնական Հայտարարություն 2-ի նախաբանը

Առաջադրել ավետարանական հարցեր հավատարիմ մոտեցմամբ

Ձեր դասարանին ներկայացրեք հետևյալ հնարավոր դեպքը.

Մի օր դպրոցից հետո Եկեղեցու մեկ ուրիշ անդամ, ում մոտ վերջերս հարցեր էին առաջացել Եկեղեցու վարդապետության վերաբերյալ, դիմեց Մքոթին: Մքոթը զգաց, որ կարողացավ ինչ-որ չափով օգնել իր ընկերոջը, սակայն հետո նա սկսեց խորհել, թե ինչը կարող էր ուրիշ կերպ անել հաջորդ անգամ, եթե Եկեղեցու անդամը նմանատիպ իրավիճակում դիմեր իրեն:

Հարցրեք ուսանողներին, թե ի՞նչ են իրենք արել՝ օգնելու Եկեղեցու անդամներին, ովքեր դիմել են իրենց՝ Եկեղեցուն կամ դրա վարդապետությանը վերաբերող անկեղծ հարցերով:

Ցուցադրեք և կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլսոնի հետևյալ խոսքերը.



«Վկայությունը ծնունդ է առնում հարցերից: Ոմանք կարող են ամաչել կամ իրենց անարժան համարել, քանի որ որոնողական հարցեր ունեն ավետարանի վերաբերյալ, սակայն նրանք չպիտի այդպես զգան: Հարցեր տալը թույլության նշան չէ. այն աճի ավետաբերն է:

Աստված պատվիրում է մեզ փնտրել մեր հարցերի պատասխանները և սակայն խնդրում է, որ մենք փնտրենք «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս» [Մորոնի 10.4]: Երբ մենք այդպես վարվենք, ամեն բաների վերաբերյալ ճշմարտությունը կարող է հայտնի դարձվել մեզ «Սուրբ Հոգու գործությամբ» [Մորոնի 10.5]:

Մի վախճանք, հարցեր տվեք: Եղեք հարցասեր, սակայն մի կասկածեք: Միշտ ամուր բռնեք հավատքից և լույսից, որն արդեն իսկ ստացել եք» ("The Reflection in the Water" [Church Educational System fireside for young adults, Nov. 1, 2009], 7, ldschurchnewsarchive.com):

- Ի՞նչ ուսուցանեց Նախագահ Ուիլյամսը, որը կարող է օգնել նրան, ով Եկեղեցու վերաբերյալ հարցեր ունի՝ կապված վարդապետական, պատմական կամ հասարակական խնդիրների հետ: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը, ապա անկեղծ հարցերը կարող են ի վերջո պատասխաններ բերել մեր Երկնային Հորից:**)

Բացատրեք, որ պատմական խնդիրներից մեկը, որի մասին Եկեղեցու որոշ անդամներ հարցեր ունեն, Եկեղեցու քաղաքականության հետևանքն է, որը գործել է 1800-ականների կեսից մինչև 1978 թվականը՝ սահմանափակելով աֆրիկյան ծագում ունեցող սևամորթ տղամարդկանց քահանայության կարգումը: Այն նաև արգելում էր սևամորթ կանանց և տղամարդկանց մասնակցել տաճարային օժտմանը կամ կնքման արարողություններին: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ հայտարարությունը, որը Պաշտոնական Հայտարարություն 2-ի նախաբանն է (գտնվում է Վարդապետություն և Ուխտերում): Խնդրեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչպես կարող է այդ տեղեկությունն օգնել նրանց, ովքեր մտահոգություններ ունեն այս պատմական հարցի շուրջ:

«Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ «բոլորը նույնն են Աստծո համար», լինեն «սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այր թե կին» (2 Նեփի 26.33): Եկեղեցու պատմության ընթացքում բազմաթիվ երկրներում ցանկացած ռասայի և ազգության մարդիկ մկրտվել և ապրել են որպես Եկեղեցու հավատարիմ անդամներ: Ջոզեֆ Սմիթի կենդանության օրոք Եկեղեցու մի քանի սևամորթ տղամարդ անդամներ կարգվել էին քահանաներ: Եկեղեցու պատմության վաղ շրջանում Եկեղեցու ղեկավարները դադարեցրին քահանայության շնորհումը աֆրիկյան ծագում ունեցող սևամորթներին: Եկեղեցու գրառումներում տրված չէ պարզ գաղափար այս կիրառության սկզբնաղբյուրների մասին» (Պաշտոնական Հայտարարություն 2-ի նախաբանը):

- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ է պարունակում այս հայտարարությունը նրանց համար, ովքեր մտահոգված են այս հարցով:

Շեշտեք այն տողը, որում նշվում է. «Եկեղեցու գրառումներում տրված չէ պարզ գաղափար այս կիրառության սկզբնաղբյուրների մասին»: Չնայած որոշ մարդիկ կարող են առաջադրել պատճառներ, թե ինչու աֆրիկյան ծագում ունեցող տղամարդիկ որոշ ժամանակ չէին կարգվում որպես քահանաներ, այդ պատճառները միգրացիոն ճշգրիտ չլինեն: Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Եթե դուք սուրբ գրությունները կարդաք՝ մտքում ունենալով այս հարցը. «Ինչո՞ւ է Տերը պատվիրել սա կամ ինչո՞ւ է նա պատվիրել դա», դուք կպարզեք, որ հարյուր պատվիրաններից գոնե մեկի համար որևէ պատճառ տրված չէ: Տիրոջ օրհնաչափությունը չի ներառում պատճառներ տալը: Մենք՝ [մահկանացուներս], կարող ենք պատճառներ գտնել հայտնությունների համար: Մենք կարող ենք պատճառներ գտնել պատվիրանների համար: Այդ պահերին մենք ինքնուրույն ենք գործում: Որոշ մարդիկ պատճառներ են գտել այն բանի համար, ինչի մասին մենք այժմ խոսում ենք [ռասա և քահանայություն], սակայն նրանք ի վերջո չարաչար սխալվել են: ...

... Եկեք այս և այլ հարցերի շուրջ չկրկնենք այն սխալը, որը թույլ է տրվել նախկինում՝ փորձելով պատճառներ գտնել հայտնության համար: Հիմնականում պատճառները մարդկային երևակայության արդյունք են լինում» (*Life's Lessons Learned* [2011], 68–69):

- Ինչո՞ւ իմաստուն կլինե՞ր խուսափել պատճառների մասին ենթադրություններ անելուց, թե ինչու մինչև 1978 թվականը աֆրիկյան ծագում ունեցող անհատները չէին կարգվում որպես քահանաներ կամ թույլտվություն չէին ստանում կատարելու տաճարային արարողություններ: (Մարդը խոսում է սահմանափակ հեռանկար ունենալով իր առջև, իսկ Աստված մեզ չի ասել պատճառները:)

Շեշտեք, որ այսօր Եկեղեցին ժխտում է այս հարցի շուրջ նախկինում առաջադրված տեսակետները՝ սև մաշկը Աստծո շնորհից զրկված լինելու կամ անեծքի նշան է, սև մաշկը վկայում է նախաերկրային կյանքի անարդար արարքների մասին, տարբեր ռասաների միջև ամուսնությունը մեղք է և սևամորթները կամ որևէ այլ ռասա կամ ազգություն ինչ-որ կերպ ավելի ցածր դիրք են գրավում, քան մեկ ուրիշը: Եկեղեցու ղեկավարներն այսօր միաձայն դատապարտում են ռասիզմի բոլոր դրսևորումները, որ եղել են նախկինում և կան այսօր: (Տես “Race and the Priesthood,” Gospel Topics, lds.org/topics:)

- Ինչպե՞ս կարող է մարդկանց հավատքն առ Հիսուս Քրիստոսն օգնել նրանց գտնելու իրենց հարցերի կամ մտահոգությունների պատասխանները՝ կապված քահանայության սահմանափակման հետ, որը գոյություն է ունեցել մինչև 1978 թվականը:

Պաշտոնական Հայտարարություն 2

Քահանայությունը և տաճարային օրհնությունները տարածվել են Եկեղեցու յուրաքանչյուր արժանի անդամի վրա

Բացատրեք, որ մինչև 1978 թվականը տարբեր ազգերի մեջ աֆրիկյան ծագում ունեցող հազարավոր մարդիկ իմացել են վերականգնված

ավետարանի ճշմարտացիության մասին: Եկեղեցու ղեկավարները Սուրբ Լեյք Սիթիում բազմաթիվ խնդրագիր նամակներ են ստացել Նիգերիայի և Գանայի չմկրտված նորադարձներից, որ միսիոներներ ուղարկվեն Աֆրիկա: Տարիներ շարունակ Եկեղեցու ղեկավարները աղոթքով խորհել են այդ հարցի շուրջ, սակայն զգացել են, որ դեպի Աֆրիկա միսիոներներ ուղարկելու ժամանակը դեռ չի եկել: Բրազիլիայում հավատարիմ սևամորթ անդամներն օգնել են կառուցելու Սան Պաուլո Տաճարը, որ հայտարարվել էր 1975 թվականին, չնայած նրանք գիտեին, որ չեն կարողանալու մտնել տաճար:

Ուսանողներին տեղեկացրեք, որ Պաշտոնական Հայտարարություն 2-ը պարունակում է պաշտոնական հայտարարություն հայտնության մասին, որը ստացել էին Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը, Առաջին Նախագահության նրա Խորհրդականները և Տասներկու Առաքյալների Քվորումի տասը անդամները: Հայտնությունը տրվել էր 1978 թվականի հունիսի 1-ին: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Թանկագին Եղբայրներ» արտահայտության ներքո գտնվող առաջին պարբերությունը: Դասարանին հրավիրեք հետևել՝ փնտրելով, թե Եկեղեցու ղեկավարներն ինչ են պատմում իրենց տեսածի մասին:

- Եկեղեցու ղեկավարներն ի՞նչ էին նկատում ողջ աշխարհում:
- Ի՞նչ ոգեշնչում ստացան Եկեղեցու ղեկավարները, երբ նրանք ականատես եղան Տիրոջ աշխատանքի տարածմանը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հաջորդ պարբերությունը, որը սկսվում է «Քաջատեղյակ այն խոստումներին» բառերով: Հրավիրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչպես Եկեղեցու ղեկավարները գործեցին համաձայն իրենց ոգեշնչված ցանկությունների: Հարցրեք.

- Ինչպե՞ս Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը և Եկեղեցու այլ ղեկավարներ գործեցին համաձայն իրենց ոգեշնչված ցանկությունների:
- Համաձայն այս պարբերության առաջին երեք տողերի, Եկեղեցու ղեկավարներն ի՞նչ գիտեին քահանայության սահմանափակման մասին: (Նրանք գիտեին, որ ինչ-որ ժամանակ բոլոր արժանի տղամարդիկ քահանայություն ստանալու հնարավորություն կունենան:)

Բացատրեք, որ 1978 թվականից շատ տարիներ առաջ, իմանալով, որ փոփոխության համար անհրաժեշտ էր հայտնություն ստանալ, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը քննարկել էին քահանայության սահմանափակման հետ կապված հարցերը և աղոթել դրա մասին: Ցուցադրեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895–1995) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.




«Օրեր շարունակ ես առանձնանում էի տաճարի վերնատանը մեծ հանդիսավորությամբ և լրջությամբ, և այնտեղ ես դուրս էի թափում իմ հոգին և առաջարկում իմ ջանքերը ծրագիրը առաջ տանելու համար: Ես ցանկանում էի անել այն, ինչ նա էր ցանկանում: Ես խոսեցի նրա հետ այդ մասին և ասացի. «Տեր, ես ցանկանում եմ միայն այն, ինչը ճիշտ է: Մենք ծրագրեր չենք կազմում տպավորություն գործելու համար: Մենք ցանկանում ենք միայն այն բաները, ինչը դու ես ցանկանում, և մենք ցանկանում ենք այն, երբ դու կցանկանաս և ոչ դրանից շուտ» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 238):

- Ի՞նչ են մեզ սովորեցնում Նախագահ Քիմբալի բառերն այն մասին, թե ինչպես են մարգարեները հայտնություն փնտրում: (Ուսանողների պատասխանները լսելուց հետո կարող եք գրատախտակին գրել հետևյալ ճշմարտությունը. **Եկեղեցին առաջնորդելիս մարգարեները փնտրում են Տիրոջ կամքը:**)

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Պաշտոնական Հայտարարություն 2-ի հաջորդ երկու պարբերություններ, որոնք սկսվում են «Նա լսեց մեր աղոթքները» բառերով: Դասարանին խնդրեք փնտրել Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի, Առաջին Նախագահության նրա Խորհրդականների և Տասներկու Առաքյալների Քվորումի տասը անդամների աղոթքներին տրված Տիրոջ պատասխանը:

- Ո՞րն էր Տիրոջ պատասխանը Իր մարգարեի աղոթքներին: (Շեշտեք այս հայտնության ժամանակ ստացած Տիրոջ ուղերձը. **Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները հասանելի են Երկնային Հոր բոլոր զավակներին:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես են ստացել Պաշտոնական Հայտարարություն 2-ում տրված հայտնությունը, կիսվեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ հայտարարությամբ, ով տաճարում ներկա է եղել այն օրը, երբ տրվել է հայտնությունը:



«Սենյակում տիրում էր սուրբ և սրբագործված մթնոլորտ: Ես այնպիսի զգացողություն ունեցա, ասես երկնային գահի և իր եղբայրների հետ միացած Աստծո ծնկաչոք, աղերսող մարգարեի միջև մի ուղի էր բացվել: Աստծո Հոգին այնտեղ էր: Եվ Սուրբ Հոգու զորությամբ այդ մարգարեն ստացավ հավաստիացում, որ բանը, որի համար նա աղոթում էր, ճիշտ էր, որ եկել էր ժամանակը, և որ քահանայության չքնաղ օրհնությունները պետք է տարածվեին արժանի տղամարդկանց վրա ամենուր՝ անկախ ազգատոհմից: ...

Մենք բոլորս էլ գիտեինք, որ եկել էր փոփոխության ժամանակը և որ որոշումը եկել էր երկինքներից: Պատասխանը հստակ էր: Կատարյալ միություն կար մեր մեջ՝ մեր փորձառության և մեր հասկացողության հետ կապված» (*"Priesthood Restoration," Ensign, Oct. 1988, 70*):

Բացատրեք, որ քահանայության սահմանափակմանը վերջ դնելու հայտնությունը ստանալուց անմիջապես հետո միսիոներներն ուղարկվեցին Աֆրիկա: Այդ պահից սկսած տաճարներ են կառուցվել այդ

աշխարհամասում, կազմավորվել են հարյուրից ավելի ցգեր և հարյուր հազարավոր սրբեր ստացել են ավետարանի արարողություններն իրենց և իրենց մահացած նախնիների համար: (Տես օրինակ “Mormons in Africa: A Bright Land of Hope,” mormonnewsroom.org; “Emerging with Faith in Africa,” parts 1–3, lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world;)

Յուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ այն.



«Յուրաքանչյուր մայրցամաքում և ծովի կղզիներում հավատարիմները հավաքվում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Մշակութային, լեզվական, սեռային և արտաքին առանձնահատկությունների տարբերություններն անկարևոր են դառնում, երբ անդամներն անձնուրաց ծառայում են իրենց սիրելի Փրկչին: Պողոսի հայտարարությունն իրականացել է. «Վասնզի ամենքդ՝ որ Քրիստոսումը մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք:

Այլ ես ոչ Հրեայ կայ եւ ոչ Հոյն, ոչ Ժառայ կայ եւ ոչ ազատ, ոչ արու կայ եւ ոչ էգ. որովհետեւ դուք ամենքդ մէկ էք Քրիստոս Յիսուսումը» [Գաղատացիս Գ.27-28]:

Միայն Աստծո ճշմարիտ Հայրության ըմբռնումը կարող է լիարժեք երախտագիտություն առաջացնել մարդկանց ճշմարիտ եղբայրության համար: Այդ հասկացողությունը ոգեշնչում է ցանկությամբ կառուցելու համագործակցության կամուրջներ խտրականության պատերի փոխարեն» (“Teach Us Tolerance and Love,” *Ensign*, May 1994, 70):

- Ինչպե՞ս է ավետարանը նախապատրաստում մեզ՝ միավորվելու տարբեր ծագում ունեցող մարդկանց հետ:
- Ի՞նչ օրինակ էք դուք տեսել, երբ տարբեր ծագում ունեցող Եկեղեցու անդամները միավորվել են և համագործակցել միմյանց հետ:

Վերջում հրավիրեք ուսանողներին խորհել, թե նրանք ինչ պատասխան կարող են տալ, երբ նրանց հարցնեն, թե ինչու Եկեղեցին որոշ ժամանակ աֆրիկյան ծագում ունեցող տղամարդկանց չէր կարգում որպես քահանա: Հաստատեք, որ պատշաճ կլինի ուրիշներին բացատրելը, որ մենք չգիտենք, թե ինչու սկսվեց քահանայության սահմանափակումը և որ մենք պետք է կիսվենք և վկայենք ճշմարտությունների մասին, որոնք մենք գիտենք:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 26.33, Պաշտոնական Հայտարարություն 2:
- “Race and the Priesthood,” *Gospel Topics*, lds.org/topics.

Նախապատրաստել աշխարհը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին

Նախաբան

Փրկիչը մի օր Երկիր կվերադառնա զորությամբ և մեծ փառքով Ի նախապատրաստություն այդ մեծ օրվան՝ Սրբերն ուսուցանվում են ուսումնասիրել Նրա գալուստի նշանները և նախապատրաստվել դրան՝ կանգնելով սուրբ վայրերում և վերցնելով «Սուրբ Հոգին որպես իրենց

ուղեկից» (Վնու 45.57): Տերը հայտարարել է, որ Եկեղեցին և դրա անդամները պատասխանատվություն են կրում՝ նախապատրաստելու աշխարհը Փրկիչի Երկրորդ Գալուստին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Նիլ Լ. Անդերսեն, «Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 49-52:
- Dallin H. Oaks, "Preparation for the Second Coming," *Ensign* or *Liahona*, May 2004, 7-10.
- «Նախապատրաստվել Քրիստոսի Երկրորդ Գալուստին», գլուխ 44, *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* (1998), 389-97:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 45.15-46, 56-57

Նշաններ, որոնք կնախորդեն Երկրորդ Գալուստին

Ուսանողներին ուղղեք հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս կարող եք իմանալ, երբ է անձրև տեղալու:

Բացատրեք, որ ճիշտ այնպես, ինչպես կան նշաններ, որոնք օգնում են մեզ իմանալ, թե երբ է անձրև տեղալու, կան նաև նշաններ, որոնք օգնում են մեզ իմանալ, թե երբ է տեղի ունենալու Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը: Ասեք ուսանողներին, որ ինչպես տրված է Մատթեոս ԻԴ գլխում, Փրկիչը հանդիպեց Իր աշակերտների հետ Ձիթենյաց սարում Իր մահից կարճ ժամանակ առաջ և նկարագրեց Իր Երկրորդ Գալուստի նշանները: Այս ուսմունքներից մի քանիսը Նա կրկնեց Ջոզեֆ Սմիթին մեր օրերում, ինչպես տրված է Վարդապետություն և Ուխտեր 45-ում: Շեշտեք, որ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին նախապատրաստվելը կարևոր թեմա է ամբողջ Վարդապետություն և Ուխտերում: Հրավիրեք ուսանողներին Վարդապետություն և Ուխտերն ուսումնասիրելիս

Ժամանակ հատկացնել և նշել Երկրորդ Գալուստի վերաբերյալ ուսմունքները և խորհել, թե ինչպես նրանք կարող են նախապատրաստվել դրան:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 45.15-17 հատվածները, փնտրելով, թե ինչ հարցրին Փրկիչի աշակերտները Նրան և, թե Նա ինչպես պատասխանեց:

- Ի՞նչ հարցրին աշակերտները Հիսուսին:
- Ո՞րն էր Նրա պատասխանը:

Որպեսզի օգնեք ուսանողներին ներկայացնել նշանները, որոնք նախորդելու են Երկրորդ Գալուստին, գրատախտակին գրեք հետևյալ հղումները.

ՎՍՈՒ 45.25-27

ՎՍՈՒ 45.28-31, 33

ՎՍՈՒ 45.40-43

Դասարանը բաժանեք զույգերի և յուրաքանչյուր զույգին հանձնարարեք գրատախտակին գրված հատվածներից մեկը: Խնդրեք նրանց միասին կարդալ հատվածները՝ փնտրելով այդ հատվածներում նշված նշանները: Շեշտեք, որ նշաններից մի քանիսն արդեն իսկ կատարվել են կամ գտնվում են կատարման ընթացքում: Դուք կարող եք կիսվել հատված 30-ի հետ կապված հետևյալ տեղեկությամբ. «Ժամանակաշրջանը, որում հիմնականում հեթանոսներն են ստացել ավետարանը, կոչվում է *հեթանոսական ժամանակներ*: Այդ ժամանակ ոչ հրեաները ... հնարավորություն են ունեցել ընդունելու ավետարանը և փրկություն ստանալու՝ նախքան զոնե հրեաների համար ինչ-որ չափով այդ իրավունքի ձեռք բերումը» (Bruce R. McConkie, *Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 721–22):

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք զույգերին իրենց գտածների մասին զեկուցել դասարանին: Կարող եք առաջարկել ուսանողներին ընդգծել նշաններն իրենց սուրբ գրություններում:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 45.34 հատվածը՝ մինչ դասարանը հետևում է նրան: Այնուհետև հարցրեք.

- Երբ դուք կարդում կամ լսում եք իրադարձությունների կամ նշանների մասին, որոնք նախորդելու են Երկրորդ Գալուստին, դուք երբեք անհանգստանո՞ւմ եք: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
- Ի՞նչ եղանակներով կարող է Փրկիչի Երկրորդ Գալուստի վերաբերյալ նշանների մասին սովորելն օգնել մեզ՝ հաղթահարել մեր կյանքում առկա վախը և տագնապը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 45.35-38 հատվածները, որպեսզի սովորեն, թե ինչու է Փրկիչը հայտնի դարձրել նշանները, որոնք պետք է նախորդեն Իր Երկրորդ Գալուստին:

- Ինչո՞ւ է կարևոր, Փրկիչի գալստյան նշանների կատարման ճանաչումը:

Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչպես կարելի է նախապատրաստվել Քրիստոսի Երկրորդ Գալուստին, երբ նրանք կարդան Վարդապետություն և Ուխտեր 45.32, 39, 56-57 հատվածները: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Այդ հատվածներից ի՞նչ էք սովորում Երկրորդ Գալուստին նախապատրաստվելու մասին: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, շեշտեք հետևյալ սկզբունքը. **Սուրբ վայրերում կանգնելը և Սուրբ Հոգին՝ որպես մեր ուղեկից վերցնելը կարևոր են, երբ մենք նախապատրաստվում ենք Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին:**)
- Մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի ունենանք Սուրբ Հոգին՝ որպես մեր ուղեկից:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսի հետևորդը «կանգնել սուրբ տեղերում»: (Սուրբ վայրերը ներառում են տաճարները, հավաքատները և տները: Տունը կարող է սուրբ դարձվել մշտական անձնական և ընտանեկան աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության, ծառայության և ընտանեկան երեկոյի միջոցով: Սուրբ տեղերում կանգնելը կապված է նաև այն բանի հետ, թե ինչպե՞ս ենք մենք ապրում: Եթե մենք արժանի ձևով ենք ապրում Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունը ունենալու համար, ապա կանգնած ենք սուրբ տեղում: Կարող եք առաջարկել ուսանողներին գրել այս գաղափարներից մի քանիսը իրենց սուրբ գրությունների լուսանցքում՝ Վարդապետություն և Ուխտեր 45.32 հատվածի կողքին:)
- Ինչպե՞ս եք դուք կարողացել կանգնել սուրբ տեղերում, չնայած ապրել եք ամբարիշտ աշխարհում:
- Որո՞նք են այն պատճառները, որոնց համար դուք սպասում եք Փրկիչի Երկրորդ Գալուստին: Ինչո՞ւ եք դուք երախտապարտ այն բանի համար, որ Փրկիչը կրկին գալու է:

Վարդապետություն և Ուխտեր 29.7-9, 34.5-7, 39.19-23:

Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին

Հիշեցրեք ուսանողներին, որ այս դասընթացի վերնագիրն է *Վերականգնման հիմքերը*: Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ կապ կամ առնչություն եք դուք տեսնում ավետարանի Վերականգնման և Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստի միջև:

Գրատախտակին գրեք հետևյալ հղումները: Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել դրանք՝ փնտրելով ընդհանուր թեման.

Վարդապետություն և Ուխտեր 29.7-9

Վարդապետություն և Ուխտեր 34.5-7

Վարդապետություն և Ուխտեր 39.19-23

Բավարար ժամանակից հետո խնդրեք ուսանողներին իրենց կողքին նստած ուսանողի հետ քննարկել, թե ինչ ընդհանրություն կա սուրբ գրությունների այս հատվածների միջև: Հարցրեք մի քանի ուսանողների, թե ինչպես նրանք կամփոփեին այս սուրբ գրությունների ուղերձը: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, օգնեք նրանց ներկայացնել և հասկանալ այս սկզբունքը. **Երբ մենք ուրիշներին քարոզում ենք ավետարանը, մենք օգնում ենք նախապատրաստել աշխարհը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին:**)

Ուսանողներին խնդրեք վերանայել Վարդապետություն և Ուխտերի 29, 34 և 39 բաժինները և ուշադրություն դարձնել հայտնությունների տրաման ամսաթվերին: Հարցրեք.

- Եկեղեցու կազմավորումից հետո ե՞րբ Տերը սկսեց ուսուցանել մոր ներկայացրած սկզբունքը:

Խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը.




«Վերականգնման վաղ շրջանից սկսած, Եղբայրները շատ լուրջ են վերաբերվել ավետարանի մասին հայտարարելու իրենց պարտականությանը: 1837թվականին՝ Եկեղեցու կազմավորումից ընդամենը յոթ տարի անց, ավետարանն ուսուցանելու համար միսիոներներ ուղարկվեցին Անգլիա: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում միսիոներները քարոզում էին զանազան երկրներում՝ Ավստրալիայում, Ֆրանսիական Պոլինեզիայում, Նիդերլանդներում, Բարբադոսում, Չիլիում և Չինաստանում:

Տերն օրինել է այս աշխատանքը և եկեղեցիներ է հիմնել աշխարհով մեկ: ... Արևը երբեք մայր չի մտնում արդարակյաց միսիոներների համար, ովքեր վկայում են Փրկչի մասին: Մտածեք 52000 միսիոներների հոգևոր ուժի մասին, ովքեր օժտված են Տիրոջ Հոգով և համարձակորեն հայտարարում են, որ «տրված չի լինի ոչ ուրիշ անուն, ոչ ուրիշ ճանապարհ, ոչ էլ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին ... միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով» [Մոսիա 3.17]: ... Աշխարհը նախապատրաստվում է Փրկչի Երկրորդ Գալուստին բացառապես Տիրոջ աշխատանքի շնորհիվ՝ Նրա միսիոներների միջոցով» («Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 51):

Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Եկեղեցու միսիոներների կողմից ուսուցանված ուղերձը նախապատրաստում մարդկանց Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին:
- Ինչո՞ւ էր անհրաժեշտ ավետարանի Վերականգնումը՝ նախքան Փրկչի կրկին երկիր գալը:

Ցուցադրեք Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի (1838–1918) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ավետարանը սովորեցնում է մարդկանց լինել խոնարհ, հավատարիմ, ազնիվ և արդարակյաց՝ Տիրոջ առաջ և միմյանց հանդեպ, և որքանով որ կկատարվեն ավետարանի սկզբունքները, այնքանով էլ խաղաղությունն ու արդարությունը կտարածվեն և կհաստատվեն երկրի վրա, և մեղքը, հակառակությունը, արյունահեղությունն ու ամեն տեսակի ապականությունը կդադարեն, երկիրը կմաքրվի և պիտանի կդառնա երկնային էակների բնակության և մեր Տեր Աստծո գալու և այնտեղ բնակվելու համար, ինչպես և կլինի Հազարամյակի ժամանակ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ [1998], 394–95):

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ... իր առաքելության մասն է համարում ճանապարհի պատրաստել Աստծո Որդու փառավոր գալուստի համար, որպեսզի թագավորի երկրի վրա և բնակվի Իր ժողովրդի հետ» (Ուսմունքներ. Ջոզեֆ Ֆ. Սմիթ, 395):

Հարցրեք հետևյալը.

- Այս դասի ընթացքում ի՞նչ մտքեր կամ հոգևոր տպավորություններ եք դուք ունեցել Եկեղեցու և անդամների պարտականությունների վերաբերյալ՝ օգնելու նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին:
- Ձեր կարծիքով, ինչպես կարող է Երկրորդ Գալուստին նախապատրաստվելու գործում ուրիշներին օգնելը նպաստել նաև ձեր նախապատրաստմանը:

Դասի վերջում հրավիրեք ուսանողներին կիսվել, թե իրենք ինչ են արել, որպեսզի կիսվեն Վերականգնման ուղերձով նրանց հետ, ովքեր մեր հավատքից չեն:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 29.7-9, 34.5-7, 39.19-23, 45.15-46, 56-57, 88.81-87:
- Նիլ Լ. Անդերսեն, «Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին», *Ensign* կամ *Liahona*, Մայիս 2011, 49-52:

Արագացնել փրկության աշխատանքը

Նախաբան

Վերջին տարիներին Եկեղեցու ղեկավարները շեշտում են Տիրոջ մարգարեությունը, որ Նա «կարագացնի Իր աշխատանքը» (Վևու 88.73): Փրկության աշխատանքը ներառում է անդամների միսիոներական աշխատանքը, նորադարձների պահպանումը, քիչ ակտիվ անդամների ակտիվացումը, տաճարային և ընտանեկան

պատմության աշխատանքները և ավետարանի ուսուցումը: Այս դասը կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ այս աշխատանքին մասնակցելու իրենց պարտականությունը՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուվսդորֆ, «Դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 58-62:
- «Արագացնել փրկության աշխատանքը», *Ensign*, հոկտեմբեր 2013, 36-39:

Ուսուցման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 138.53-56

Տերն արագացնում է Իր աշխատանքը

Ասացեք ուսանողներին, որ իր մահից կարճ ժամանակ առաջ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսիլք տեսավ հոգիների աշխարհի վերաբերյալ, որն այժմ գրված է Վարդապետություն և Ուխտեր 138-ում: Նա իմացավ, որ վերջին տնտեսության ղեկավարները և «ուրիշ շատերը» նախաերկրային աշխարհում նախապատրաստվել են այս աշխարհում իրենց տրվող պարտականություններին: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.53-56 հատվածները, մինչ դասարանը կհետևի նրան, փնտրելով պարտականությունները, որոնք տրվել էին այս ղեկավարներին նախաերկրային աշխարհում:

- Ի՞նչ պարտականություններ էին տրվել այս ղեկավարներին նախաերկրային աշխարհում: Նրանք ի՞նչ նախապատրաստություն ստացան այնտեղ:
- Ի՞նչ պարտականություններ կարող էին ձեռք տրված լինել նախաերկրային աշխարհում: Դուք ի՞նչ հնարավոր նախապատրաստություն եք ստացել: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, օգնեք նրանց ներկայացնել այս սկզբունքը:
Նախաերկրային կյանքում մենք նախապատրաստվել ենք գալու երկիր ժամանակների լրության տնտեսությունում՝ աշխատելու մարդկանց հոգիների փրկության համար:)

Ցուցադրեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Դուք պատկերացնո՞ւմ եք, որ վերականգնված Եկեղեցին 98 տարեկան էր, երբ ուներ 100 ցից: Բայց ավելի քան 30 տարի անց, Եկեղեցին կազմավորեց իր երկրորդ 100 ցցերը: Եվ դրանից ընդամենը ութ տարի անց Եկեղեցին ուներ ավելի քան 300 ցից: Այսօր [2014] մենք ունենք ավելի քան 3000 ամուր ցից:

Ինչո՞ւ է այս աճը տեղի ունենում արագացված տեմպերով: Արդյո՞ք այն պատճառով, որ մեզ ավելի լավ են ճանաչում: Այն պատճառով, որ մենք ունենք հրաշալի հավաքատներ:

Այս բաները կարևոր են, բայց պատճառը, որ Եկեղեցին այսօր գնալով աճում է, այն է, որ Տերը Նշել է այդ մասին: Վարդապետություն և Ուխտերում Նա ասել է. «Ահա, ես կարագացնեմ իմ աշխատանքն իր ժամանակին» [ՎնՈւ 88.73]:

Մենք՝ որպես մեր Երկնային Հոր հոգևոր զավակներ, ուղարկվել ենք երկիր այս ժամանակահատվածում, որպեսզի մասնակցենք այս հիանալի աշխատանքի արագացմանը» («Արագացնել աշխատանքը» *Ensign*, հունիս 2014, 4):

- Համաձայն Նախագահ Մոնսոնի խոսքերի, մենք ինչո՞ւ ենք երկիր ուղարկվել այս ժամանակներում: (Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, օգնեք նրանց հասկանալ այս սկզբունքը. **Մենք պարտավորություն ունենք մասնակցելու Երկնային Հոր աշխատանքի արագացմանը:**)
- Ի՞նչ եղանակներով եք դուք ականատես եղել Աստծո աշխատանքի «արագացմանը»: (Այս հարցն ունի շատ պատասխաններ, ներառյալ միսիոներական ծառայության տարիքի փոփոխությունը, միսիոներների թվի աճը, տաճարների թվի աճը և գործիքների զարգացումը, որոնք ավելի են հեշտացնում ընտանեկան պատմության աշխատանքները:)

Նշեք, որ այս պատասխանները փաստում են այն մասին, որ վարագույրի երկու կողմերում էլ Տերն արագացնում է Իր աշխատանքը: Բացատրեք, որ Եկեղեցու ղեկավարները փրկության աշխատանքի հետ կապված շեշտադրում են հիմն դրոշմներ և խնդրում են, որ մեզանից յուրաքանչյուրը մասնակցություն ցուցաբերի այս ոլորտներում, որպեսզի արագացնի Աստծո աշխատանքը այս վերջին օրերում: Ցուցադրեք Յոթանասունի Նախագահությունից Երեց Լ. Ուիթնի Զլեյթոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Թող դասարանը ներկայացնի հիմն դրոշմները, որոնք փրկության աշխատանքի մի մասն են կազմում:



«Ապրող մարգարեները և առաքյալներն ուսուցանում են մեզ, որ «Հիսուս Զրիստոսի Եկեղեցու անդամներն առաջ են ուղարկվում «աշխատելու նրա այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (ՎնՈւ 138.56): Փրկության այս աշխատանքը ներառում է անդամների միսիոներական աշխատանքը, նորադարձին պահպանելը, քիչ ակտիվ անդամների ակտիվացումը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները և ավետարանի ուսուցումը» [*Handbook 2: Administering the Church* (2010), 5.0] ("The Work of Salvation: Then and Now," *Ensign*, Sept. 2014, 63):

Երբ ուսանողները ներկայացնեն հինգ ոլորտները, գրատախտակին գրեք հետևյալը.

Անդամների միսիոներական աշխատանքը

Նորադարձների պահպանումը

Քիչ ակտիվ անդամների ակտիվացումը

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը

Ավետարանի ուսուցումը

Վարդապետություն և Ուխտեր 88.73

Մեզանից յուրաքանչյուրը կարող է աջակցել Տիրոջ աշխատանքի արագացմանը



Հանձնարարեք ուսանողներից մեկին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.73 հատվածը և խնդրեք դասարանին հետևել նրան: Ապա բացատրեք ուսանողներին, որ մեզանից յուրաքանչյուրը պիտի ձգտի մեծացնել Տիրոջ աշխատանքի արագացմանն ուղղված մեր աջակցությունը: Դասի վերջում ուսանողներին բաժանեք թերթիկներ և բացատրեք, որ այդ թերթիկը կօգնի նրանց մտածել այն մասին, թե ինչպես կարող են մեծացնել իրենց աջակցությունը: Հրավիրեք ուսանողներին ընտրել և մտքում կարդալ թերթիկում տրված նյութերից մեկը կամ մի քանիսը և պատրաստվել պատասխանելու թերթիկի վրա տրված հարցերին:

Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան կարդալու և նախապատրաստվելու համար, ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ առաջին հարցը: Ապա խնդրեք մի քանի ուսանողների պատասխանել թերթիկի երեք հարցերին՝ կենտրոնանալով անդամների միսիոներական աշխատանքի վրա: Այդ վարժությունը կրկնեք բոլոր հինգ հարցերի համար:

Օգնեք ուսանողներին զգալ ճշմարտությունը և փրկության աշխատանքին մասնակցելու կարևորությունը՝ տալով հետևյալ հարցերը.

- Դուք ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ մասնակցել եք փրկության աշխատանքի այս ոլորտներից մեկին կամ մի քանիսին: Ի՞նչ փորձառություն եք ունեցել այս ոլորտներից մեկին մասնակցելու ընթացքում, որը ձեզ համար հատուկ նշանակություն է ունեցել:

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆի հետևյալ միտքը և որևէ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ այն.



«Երբ ավարտվի մահկանացու կյանքի մեր ժամանակը, մենք ի՞նչ փորձառություններով կկարողանանք կիսվել մեր կյանքի այս կարևոր ժամանակահատվածում մեր իսկ կատարած աջակցության և Տիրոջ աշխատանքը առաջ տանելու մասին: Մենք կկարողանա՞նք ասել, որ ծալել ենք մեր թևերը և աշխատել մեր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով: Թե՛ մենք պետք է խոստովանենք, որ հիմնականում դիտողի դերում ենք եղել:

(«Դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 59):

Հրավիրեք ուսանողներին ծրագրել, թե ինչ են անելու, որպեսզի ավելի լիարժեք մասնակցեն փրկության աշխատանքին՝ հարցնելով.

- Ի՞նչ եղանակներ եք տեսել, որոնց միջոցով ուրիշներն օգնել են արագացնել Տիրոջ աշխատանքը:
- Դուք ի՞նչ եղանակներով եք ծրագրում աջակցել Տիրոջ աշխատանքի արագացմանը:
- Ինչպե՞ս է Վերականգնման վերաբերյալ մեր գիտելիքը և վկայությունը մղում մեզ ավելի լիարժեք մասնակցել փրկության աշխատանքին:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել և վկայել մի բանի մասին, ինչը նրանք սովորել են ավետարանի Վերականգնման վերաբերյալ այս դասընթացի ուսումնասիրության միջոցով: Վերջում վկայեք Մարգարե Զոգենֆ Սմիթի միջոցով ավետարանի Վերականգնման ճշմարտացիության մասին:

Ուսանողի ընթերցարան

- Դիտեր Ֆ. Ուլստորֆ, «Դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 58-62:

Արագացնել փրկության աշխատանքը

Խորհեք հետևյալ հարցերի շուրջ՝ կապված հինգ ոլորտներից յուրաքանչյուրի հետ, որոնք փրկության աշխատանքի մի մասն են.

- Ինչպե՞ս կարող են Աստծո աշխատանքի այս ոլորտում ձեր ներդրած ջանքերը ուրիշներին մոտեցնել փրկության օրհնություններին:
- Դուք ի՞նչ փորձառություններ եք ունեցել և ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ մասնակցել եք Տիրոջ փրկության աշխատանքի այս ոլորտին:
- Դուք ի՞նչ կարող եք անել՝ անկախ եկեղեցու ձեր ներկայիս կոչումից, որպեսզի աջակցություն ցույց տաք փրկության աշխատանքի այս ոլորտին:

Անդամների միսիոներական աշխատանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենն ուսուցանել է.



«Եղբայրներ և քույրեր, անշուշտ Տերն ունի ավելի շատ ոգեշնչված միսիոներներ ծառայության համար, բայց Նա նաև արթնացնում է շատ ավելի բարի և ազնիվ մարդկանց մտքերը և սրտերը՝ Իր միսիոներներին ընդունելու համար: Դուք արդեն գիտեք նրանց կամ կծանոթանաք նրանց հետ: Նրանք ձեր ընտանիքներում և ձեր հարևանների մեջ են: Նրանք անցնում են ձեր կողքով փողոցում, նստում են ձեր կողքին դպրոցում և շփվում են ձեզ հետ համացանցում: Դուք շատ կարևոր մաս եք այս բացվող հրաշքում:

Եթե դուք լիաժամկետ միսիոներ չեք և ձեր բաճկոնին չեք կրում միսիոներական կրծքանշան, այժմ ժամանակն է, որ գրեք մեկը ձեր սրտին, գրեք, ինչպես Պողոսն է ասում, «ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստուծոյ Հոգովը» [Բ Կորնթացիս Գ.3]: ...Բոլորս պետք է ունենանք մեր ներդրումն այս հրաշքի մեջ» ("It's a Miracle," *Ensign* or *Liahona*, May 2013, 78):

Նորադարձների պահպանումը

Տասներկու Սոաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը հայտարարել է.



«Ես և դուք պետք է անենք ամենը, ինչ կարող ենք, որպեսզի տեսնենք, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ գտնում է լիարժեք ընկերակցություն և վայելում է բոլոր օրհնությունները, որ ավետարանը կարող է առաջարկել:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հիշեցրել է ձեզ և ինձ Տիրոջ գործընկերը լինելու մեր պարտականության մասին՝ իրականացնելու Եկեղեցու հետ կապված Նրա ծրագրերը: Արբանյակային հեռարձակման միջոցով Նախագահ Հինքլին ասել է.

«Տերը մեզ հանձնարարագիր է տվել ուսուցանելու ավետարանն ամեն արարածի: Սրա համար կպահանջվեն թե լիաժամկետ, թե ցցի յուրաքանչյուր միսիոների լավագույն ջանքերը: Այն կպահանջի յուրաքանչյուր եպիսկոպոսի, յուրաքանչյուր եպիսկոպոսի խորհրդականի, ծխի խորհրդի յուրաքանչյուր անդամի լավագույն ջանքերը» ('Find the Lambs, Feed the Sheep,' *Ensign*, May 1999, 107): Այն կպահանջի յուրաքանչյուր անդամի լավագույն ջանքերը» ("Members Are the Key," *Ensign*, Sept. 2000, 10):

Քիչ ակտիվ անդամների ակտիվացումը

«Մեր դերն է՝ ընկղմվել մեր շուրջը գտնվողներին սիրելու և ծառայելու մեջ՝ սփռվել կարիքի մեջ գտնվող մեր աշխատակցին, հրավիրել մեր ընկերներին մկրտության, օգնել տարեց հարևանին այգու գործերում, հրավիրել քիչ ակտիվ անդամին ճաշի կամ օգնել մերձավորին՝ կատարել իր ընտանեկան պատմության աշխատանքը: Սրանք բոլորը բնական, ուրախությամբ լի ճանապարհներ են, որոնցով կարելի է մեր կյանք հրավիրել քիչ ակտիվ անդամներին և նրանց, ովքեր մեր հավատքից չեն և, հետևաբար, դեպի ավետարանի լույսը: Նրանց հետ ուրախ ժամանակի և մեր կյանքի սուրբ պահերի անցկացումը իրականում կարող է լինել առավել արդյունավետ

եղանակը, որով բոլորս կարող ենք աշխատել Հիսուս Քրիստոսի «այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (Վևու 138.56)» («Արագացնել փրկության աշխատանքը», *Ensign*, հոկ. 2013, 36):

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Քվենթին L Քուլը ուսուցանել է.



Եկեղեցու ղեկավարությունը պարզ կերպով կոչ է արել աճող սերնդին ունենալ իրենց նախաձեռնությունը տեխնոլոգիայի կիրառման մեջ՝ Եղիայի ոգին զգալու, իրենց նախնիներին փնտրելու և նրանց համար տաճարային արարողություններ կատարելու համար: Ողջերի ու մահացածների փրկության աշխատանքն արագացնելու դժվար մասը կատարվելու է ձե՛ր միջոցով, երիտասարդնե՛ր» («Արմատներ և ճյուղեր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 46):

Ուսուցանել ավետարանը

«Ավետարանն ուսուցանելու պարտականությունը չի սահմանափակվում՝ տրվելով միայն նրանց, ովքեր ունեն պաշտոնական կոչում որպես ուսուցիչներ: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դուք պարտականություն ունեք ուսուցանելու ավետարանը: Որպես ծնող, որդի, դուստր, ամուսին, կին, եղբայր, քույր, Եկեղեցու ղեկավար, դասարանի ուսուցիչ, տնային ուսուցիչ, այցելող ուսուցիչ, աշխատակից, հարևան կամ ընկեր, դուք ունեք ուսուցանելու հնարավորություններ: Երբեմն դուք կարող եք բացահայտ կերպով ուսուցանել հենց ձեր ասածների և ձեր բերած վկայության միջոցով: Եվ դուք միշտ ուսուցանում եք օրինակով» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում. Ուսուրսային Ուղեցույց Ավետարանի ուսուցման համար* [1999], 3–4):

Թերթիկներ

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը



«Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարը»

«Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է, իսկ Նա այն ամենի պորտաքարն է, ինչ մենք անում ենք: Այն բերում է վկայություն Նրա իրական լինելու մասին: . . .

Վարդապետի վերաբերյալ գրքի վկայությունը «մաքուր է, չխեղաթյուրված և լի զորությամբ: . . .

Քրիստոնյա աշխարհի մեծ մասն այսօր հերքում է Փրկչի աստվածայնությունը: Նրանք հարցականի տակ են դնում Նրա զարմանահրաշ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառահեղ հարության իսկությունը: Մորմոնի Գիրքը պարզ և անսխալ ձևով է ուսուցանում այդ ամենի մասին: Այն նաև ներկայացնում է Քավության վարդապետության ամենալիարժեք բացատրությունը» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 5):

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը



«Մեր վարդապետության պորտաքարը»

«Մորմոնի Գրքում կարող ենք գտնել այն վարդապետությունների ամբողջականությունը, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են պարզ և հասարակ ձևով, որպեսզի անգամ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ուղիները: Մորմոնի Գիրքն այնքան շատ բան է առաջարկում, որ մեծացնում է փրկության վարդապետությունների վերաբերյալ մեր հասկացողությունը: Առանց Մորմոնի Գրքի՝ այլ սուրբ գրություններում ուսուցանվածի մեծ մասը չի լինի այդքան պարզ ու արժեքավոր» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 6):

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը



«Վկայության պորտաքարը»

«Մորմոնի Գիրքը վկայության պորտաքարն է: Ճիշտ այնպես, ինչպես կամարը փլվում է, եթե պորտաքարը հեռացվում է, այդպես էլ ամբողջ Եկեղեցին կանգուն է մնում կամ կործանվում է՝ ելնելով Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից: . . . Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է . . . ապա մարդը պետք է ընդունի Վերականգնման և դրա հետ կապված բոլոր պահանջները» (Ezra Taft Benson, "The Book of

Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 6):



Եկեղեցու պատմությունը ծանրութեթև անել

Յոթանասունից երեց Սթիվեն Ի. Սնոուն ասել է.



«Համացանցը մեր ձեռքի տակ է դրել ամեն տեսակի տեղեկություններ՝ լավ, վատ, ճշմարիտ, կեղծ, ներառյալ Եկեղեցու պատմությանը վերաբերող տեղեկություններ: Դուք շատ բան կարող եք կարդալ մեր պատմության մասին, սակայն կարևոր է կարդալ այդ մասին և հասկանալ այն համատեքստում: Առցանց տրված որոշ տեղեկությունների հետ կապված խնդիրը կայանում է նրանում, որ այն գտնվում է համատեքստից դուրս և դուք իրականում չեք տեսնում ողջ պատկերը:

Տեղեկությունները, որոնք փորձում են անհարմար վիճակի մեջ դնել Եկեղեցին, հիմնականում շատ սուբյեկտիվ են և անարդար: Մենք պետք է որոնենք աղբյուրներ, որոնք ավելի օբյեկտիվորեն են նկարագրում մեր համոզմունքները և մեր պատմությունը: Որոշ վեբ կայքեր շատ վատ են տրամադրված և կարող են տեղեկությունները սենսացիոն կերպով ներկայացնել: Փնտրեք ճանաչված և հարգված պատմաբանների ներկայացրած աղբյուրները, անկախ այն բանից, թե արդյոք նրանք Եկեղեցու անդամներ են, թե՛ ոչ:

Որոշ երիտասարդներ անակնկալի են գալիս և ապշում, երբ համացանցում հանդիպում են հակամոռմոնական նյութի, քանի որ նրանք պատրաստ չեն դիմակայելու այդ ամենին: Նրանք միգուցե բավականաչափ ժամանակ չեն տրամադրել հոգևոր բաներին, որպեսզի նախապատրաստվեն և ուժեղ մնան գալիք ցանկացած իրավիճակում: Երբ կյանքի փորձությունները գալիս են ծնկի բերելու նրանց, կարևոր է, որ նրանք անեն այն հիմնական բաները, որոնց մասին մենք միշտ խոսում ենք. շարունակել ուսումնասիրել սուրբ գրությունները և իմաստալից աղոթք ունենալ մեր Երկնային Հոր հետ: Այդ հիմնական բաները նախապատրաստում են մարդկանց ամեն տեսակ չարիքի դեմ, ներառյալ հակամոռմոնական հոդվածները, որոնց կհանդիպենք առցանց» (“Balancing Church History,” *New Era*, June 2013, 21–22):

Եկեղեցու պատմությունը ծանրութեթև անել

Յոթանասունից երեց Սթիվեն Ի. Սնոուն ասել է.



«Համացանցը մեր ձեռքի տակ է դրել ամեն տեսակի տեղեկություններ՝ լավ, վատ, ճշմարիտ, կեղծ, ներառյալ Եկեղեցու պատմությանը վերաբերող տեղեկություններ: Դուք շատ բան կարող եք կարդալ մեր պատմության մասին, սակայն կարևոր է կարդալ այդ մասին և հասկանալ այն համատեքստում: Առցանց տրված որոշ տեղեկությունների հետ կապված խնդիրը կայանում է նրանում, որ այն գտնվում է համատեքստից դուրս և դուք իրականում չեք տեսնում ողջ պատկերը:

Տեղեկությունները, որոնք փորձում են անհարմար վիճակի մեջ դնել Եկեղեցին, հիմնականում շատ սուբյեկտիվ են և անարդար: Մենք պետք է որոնենք աղբյուրներ, որոնք ավելի օբյեկտիվորեն են նկարագրում մեր համոզմունքները և մեր պատմությունը: Որոշ վեբ կայքեր շատ վատ են տրամադրված և կարող են տեղեկությունները սենսացիոն կերպով ներկայացնել: Փնտրեք ճանաչված և հարգված պատմաբանների ներկայացրած աղբյուրները, անկախ այն բանից, թե արդյոք նրանք Եկեղեցու անդամներ են, թե՛ ոչ:

Որոշ երիտասարդներ անակնկալի են գալիս և ապշում, երբ համացանցում հանդիպում են հակամոռմոնական նյութի, քանի որ նրանք պատրաստ չեն դիմակայելու այդ ամենին: Նրանք միգուցե բավականաչափ ժամանակ չեն տրամադրել հոգևոր բաներին, որպեսզի նախապատրաստվեն և ուժեղ մնան գալիք ցանկացած իրավիճակում: Երբ կյանքի փորձությունները գալիս են ծնկի բերելու նրանց, կարևոր է, որ նրանք անեն այն հիմնական բաները, որոնց մասին մենք միշտ խոսում ենք. շարունակել ուսումնասիրել սուրբ գրությունները և իմաստալից աղոթք ունենալ մեր Երկնային Հոր հետ: Այդ հիմնական բաները նախապատրաստում են մարդկանց ամեն տեսակ չարիքի դեմ, ներառյալ հակամոռմոնական հոդվածները, որոնց կհանդիպենք առցանց» (“Balancing Church History,” *New Era*, June 2013, 21–22):



Տարբերել ճշմարտությունը կեղծիքից

Ավետարանի բոլոր տնտեսություններում չար ուժերը հակադրվել են Աստծուն և Նրա աշխատանքին: Սակայն Աստծո աշխատանքը չի խափանվի: Այս վերջին օրերում սարից կտրվել է մի քար, և այն «կզլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը» (Վևու 65.2): Այնուամենայնիվ, քանի որ Եկեղեցու առանձին անդամներ կարող են մոլորվել, մեզանից յուրաքանչյուրը պետք է «արթուն կենա և միշտ աղոթի» (3 Նեփի 18.18):



«Այս լուսավորության դարաշրջանում, երբ ավետարանի ամբողջականությունը վերականգնվել է, դուք և ես կարիք չունենք ճամփորդելու անհայտ ծովերով և ճանապարհներով՝ ճշմարտության փնտրությունում: Սիրող Երկնային Հայրը գծել է մեր ուղին և տվել հուսալի ուղեցույց, այն է՝

հնազանդությունը: ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք հնազանդ ենք Աստծո պատվիրաններին» (Թոմաս Ս. Մոնսոն, «Հնազանդությունը օրհնություններ է բերում», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2013, 89):



«Իմ փրելի ընկերներ, խնդրում եմ առաջին հերթին ձեր կասկածները կասկածի տակ դրեք, հետո նոր ձեր հավատքը: Մենք երբեք չպիտի թույլ տանք, որ կասկածը մեզ գերի դարձնի և մեզ հետ պահի աստվածային սիրուն, խաղաղությունից և պարգևներից, որոնք ստանում ենք Տեր Հիսուս

Քրիստոսի հավատքով» (Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Եկեք, միացեք մեզ», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2013, 23):



«Սատանան մեծ մոլորեցնողն է, «եղբայրների չարախօսը» [Հայտնություն ԺԲ. 10], բոլոր ստերի հայրը [տես Հովհաննես Ը.44], ով մշտապես փորձում է խաբել, որ կարողանա մեզ տապալել [տես Վևու 50.3]: . . .

Նույնիսկ նրանց համար, ովքեր արդեն ընդունել են ճշմարտությունը, սատանայի հիմնական ռազմավարությունը կայանում է կասկածի սերմեր տարածելու մեջ: Օրինակ, նա դրդել է Եկեղեցու շատ անդամների սայթաքել, երբ նրանք բացահայտել են Եկեղեցու մասին տեղեկություն, որը կարծես հակասել է նախապես իրենց սովորածին:

Երբ ձեզ մոտ նման պահեր են լինում, հիշեք, որ տեղեկատվության այս ժամանակաշրջանում շատերը կան, ովքեր կասկածներ են ստեղծում ցանկացած բանի և ամեն բանի վերաբերյալ, ցանկացած պահի և ամեն վայրում: . . .

. . . Եվ լավ կլինի միշտ հիշել, որ լոկ այն փաստը, որ եթե մի բան տպագրված է թերթում, հայտնվում է համացանցում, հաճախակի կրկնվում է կամ ունի հետևորդների մեծ խումբ, չի դառնում ճշմարիտ:

Երբեմն կեղծ պնդումները կամ տեղեկություններն այնպես են ներկայացվում, որ բավականին հավաստի են թվում: . . .

. . . Այն, ինչ այժմ հակասական է թվում, կարող է լիովին հասկանալի դառնալ, երբ մենք փնտրենք և ստանանք

ավելի շատ վստահելի տեղեկություններ» (Dieter F. Uchtdorf, "What Is Truth?" [Church Educational System devotional, Jan. 13, 2013], lds.org/broadcasts).



«Երբ մենք սկսում ենք չափել ժամանակակից սովորությունները և առաջարկներն ըստ Աստծո ծրագրի վերաբերյալ մեր գիտելիքների և Աստծո խոսքում տրված նախադրյալների և Նրա ապրող մարգարեների ուսմունքների, . . . մենք գիտենք, որ սա ապահով հող է ստեղծում մեզ համար հավերժորեն» (Dallin H. Oaks, "As He Thinketh in His Heart" [evening with Elder Dallin H. Oaks, Feb. 8, 2013], lds.org/broadcasts):



«Վախի, կասկածի կամ մտահոգիչ ժամանակներում կանգնեք այն հիմքի վրա, որն արդեն ունեք, նույնիսկ, եթե այդ հիմքը սահմանափակ է: . . . Երբ այդ պահերը գան ու խնդիրներ ջրի երես ելնեն, որոնց լուծումն անմիջապես չի ստացվում, *ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիքներ կգան*» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաատում եմ, Տեր», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2013, 94):



«Մենք կարող ենք անկեղծ հետաքրքրվողին հիշեցնել, որ ինտերնետային տեղեկությունը չունի «ճշմարտության» ֆիլտր: Եկեղեցու մասին որևէ տեղեկություն, անկախ նրանից, թե որքան համոզիչ է, պարզապես ճշմարիտ չէ» (Նիլ Լ. Անդերսոն, «Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2014, 29):



«Հոգևոր հարցերի պատասխանները տրվում են այն անհատներին, ովքեր չեն կարծրացնում իրենց սրտերը, ովքեր հարցնում են հավատքով, հավատալով, որ իրենք կստանան, և ովքեր ջանասիրաբար պահում են պատվիրանները» (Paul V. Johnson, "A Pattern for Learning Spiritual

Things" [Church Educational System address to religious educators, Aug. 7, 2012], si.lds.org):



«Եկեղեցու ուսումնասիրումը . . . այն լքողների օգնությամբ նման է Հիսուսին հասկանալու համար Հուդայի հետ հարցազրույց անցկացնելուն» (Neal A. Maxwell, "All Hell Is Moved" [Brigham Young University devotional, Nov. 8, 1977], 3, speeches.byu.edu):



Ուժեղ մնալ հալածանքի մեջ

Ուրացությունը Կիրթենդում. Եկեղեցու ղեկավարներին հավատարմորեն հետևելու կարիքը

1837 թվականին Օհայո նահանգի Կիրթենդ քաղաքի Սրբերը ունեցան որոշ ֆինանսական խնդիրներ: Որպեսզի օգնեն Սրբերին ավելի ինքնուրույն լինել իրենց ֆինանսական հարցերում, Ջոզեֆ Սմիթը և Եկեղեցու այլ ղեկավարներ հիմնեցին բանկի նման մի ընկերություն և կոչեցին այն Կիրթենդի Ապահովագրական Միություն: Այս ժամանակահատվածում լայն տարածում գտած տնտեսական ճգնաժամի հետևանքով շատ բանկեր փակվեցին ողջ Միացյալ Նահանգներով մեկ: 1837 թվականի աշնանը Կիրթենդի Ապահովագրական Միությունը նույնպես փակվեց: Երկու հարյուր ավանդատուներ բանկում կորցրեցին գրեթե ամեն ինչ. Ջոզեֆ Սմիթը կրեց ամենամեծ վնասը: Չնայած Կիրթենդի Ապահովագրական Միությունը չէր ֆինանսավորվում Եկեղեցու կողմից, որոշ Սրբեր այն համարում էին Եկեղեցու բանկ կամ Մարգարեի բանկ և իրենց ֆինանսական խնդիրների համար մեղադրում էին Ջոզեֆ Սմիթին: Ոմանք նույնիսկ սկսեցին կոչել նրան ընկած մարգարե: Սակայն, չնայած բանկը փակվեց, շատերը, ովքեր գումար էին կորցրել, շարունակեցին հավատալ և հավատարիմ մնացին Մարգարեին:

Ուրացության և թերություններ գտնելու ոգին սկսեց տարածվել Սրբերից շատերի մեջ: Մինչև 1838 թվականի հունիսը մոտավորապես 200 - 300 ուրացյալներ հեռացան Եկեղեցուց՝ ներառյալ չորս Առաքյալներ, Մորմոնի Գրքի Երեք Վկաները և Առաջին Նախագահության անդամներից մեկը: Այնուամենայնիվ, Սրբերի մեծամասնությունը փորձության այս պահին արձագանքեցին հավատքով՝ ճիշտ ինչպես Բրիգամ Յանգն արեց: Տերն ամրացրեց նրանց, և նրանք հավատարիմ մնացին իրենց վկայություններին: Նրանցից մի քանիսը, ովքեր հեռացել էին Եկեղեցուց ուրացության այս ժամանակահատվածում, ավելի ուշ վերադարձան և պահանջեցին, որ իրենք կրկին միանային Տիրոջ Եկեղեցուն: Նրանց մեջ էին Օլիվեր Զաուդերին, Մարտին Հարրիսը, Լյուք Ջոնսոնը և Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը:

Կիրթենդի այս պայքարի ընթացքում մի քանի ուրացյալներ փորձեցին սպանել Ջոզեֆ Սմիթին: Նախագահությանը չհաջողվեց չոգու կողմից՝ նա և Սիդնի Ռիգդոնը հեռացան 1838 թվականի հունվարի 12-ի գիշերը: Օրեր շարունակ նրանք հետապնդվեցին իրենց թշնամիների կողմից, սակայն Տերը պաշտպանեց նրանց: Իրենց ընտանիքների հետ նրանք ժամանեցին Ֆար Վեստ՝ Միսսուրի, 1838 թվականի մարտի 14-ին:

Խմբով քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս իրադարձություններից այն մասին, թե ինչպես արձագանքել հալածանքին մեր կյանքում: Ի՞նչ սկզբունքներ կարող ենք մենք սովորել այս իրադարձություններից այն մասին, թե ինչպես արձագանքել Եկեղեցու դեմ ուղղված հալածանքին:
- Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի հավատարիմ մնանք Եկեղեցու ղեկավարներին, չնայած կարող ենք լսել, թե ինչպես են ուրիշները քննադատում նրանց:
- Ինչպե՞ս եք դուք օրհնվել մարգարեին հետևելու արդյունքում:

Հալածանք Հյուսիսային Միսսուրիում. սովորել պատվով դիմանալ հալածանքներին

1837 և 1838 թվականներին Եկեղեցու որոշ դժգոհ և հեռացված անդամներ, ովքեր ապրում էին Սրբերի մեջ Ֆար Վեստում, սկսեցին դատական գործ հարուցել Եկեղեցու և դրա ղեկավարների դեմ և մեղադրել Եկեղեցուն: 1838 թվականի հունիսին Սիդնի Ռիգդոնը բորբոքված ելույթ ունեցավ, որը հայտնի դարձավ որպես «Աղի Քարոզ»: Նա վկայակոչեց Մատթեոս Ե.13 հատվածը և ասաց, որ եթե աղը կորցնում է իր համը, այն պիտանի չէ ոչ մի բանի համար և պետք է դուրս նետվի, ակնարկելով, որ նրանք, ովքեր հեռացել էին Եկեղեցուց, պետք է վտարվեին Սրբերի միջից: Երկու շաբաթ անց՝ հուլիսի 4-ին, Սիդնի Ռիգդոնը ելույթ ունեցավ, որի ժամանակ նա խոստացավ, որ Սրբերը կպաշտպանեն իրենք իրենց, եթե նույնիսկ այն վերածվի «բնաջնջման պատերազմի»: Չնայած թվում էր, այս երկու ելույթներն էլ հակասում էին «խաղաղության կոչ» անելու Տիրոջ հրահանգին, (Վևու 105.38), երկու ելույթներն էլ տապաքվեցին և մեծ ահազանգ դարձան ոչ Վերջին Օրերի Սրբերի համար:

Այս ընթացքում Սամսոն Ավարդ անունով մի նորադարձ գաղտնի երդում տվեց նրանց, ովքեր կմիանային իրեն՝ կազմավորելու կողոպտիչների մի խումբ, որը կոչվելու էր Դանիթես: Ավարդը հրամայեց նրանց կողոպտել ու թալանել միսսուրիացիներին, ասելով, որ սա կօգնի կառուցելու Աստծո թագավորությունը: Ավարդը համոզել էր իրեն հետևողներին, որ իր հրահանգները գալիս էին Առաջին Նախագահությունից: Հետագայում ճշմարտությունը բացահայտվեց, և Ավարդը Եկեղեցուց հեռացվեց: Ավարդի գործողությունները մեծ վնաս հասցրին Եկեղեցու համբավին և նպաստեցին, որ Մարգարեին բանտարկեին Լիբերթի բանտում:

Հատվածներ Թինգ Ֆոլեթին նվիրված ճառից

Մարգարե Ջոզեֆ Սմիթն (1805–44) ուսուցանել է.



«Եթե մարդ չի սովորում ավելին, քան ուտելը, խմելը և քնելը և չի ըմբռնում Աստծո նպատակները, ապա գազանից չի տարբերվում: Նա նույնպես ուտում է, խմում, քնում և ոչինչ չգիտի Աստծո մասին. ուրեմն այն մեր չափ գիտելիք ունի, եթե մենք ըմբռնում ձեռք չբերենք Ամենազոր

Աստծո ոգեշնչմամբ: Եթե մարդիկ չեն ըմբռնում Աստծո բնույթը, նրանք չեն հասկանա, թե ովքեր են իրենք: . . .

Իմ առաջին նպատակն է հասկանալ միակ իմաստուն և ճշմարիտ Աստծո բնութագիրը, և թե ինչպիսի էակ է Նա: . . .

Աստված ժամանակին եղել է այնպիսին, ինչպիսին հիմա մենք ենք, և վեհացում ձեռք բերած մարդ է, և նստած է գահին այնտեղ՝ երկնքում: Սա է մեծ գաղտնիքը: Եթե վարագույրը պատռվեր այսօր, և փառահեղ Աստվածը, ով այս աշխարհը պահում է իր ուղեծրում, և ով իր զորությամբ պահում է բոլոր աշխարհները և

բոլոր բաները, իրեն տեսանելի դարձներ, ասում եմ ձեզ, եթե դուք տեսնեիք նրան այսօր, դուք կտեսնեիք նրան մարդու տեսքով, ինչպես որ դուք եթձ ձեր ողջ անձով, պատկերով և տեսքով՝ որպես մարդ. քանի որ Ադամը ստեղծվեց Աստծո անմիջական տեսքով, պատկերով և նմանությամբ, և հրահանգներ ստացավ և քայլեց և խոսեց ու զրուցեց Նրա հետ, ինչպես մի մարդ հաղորդակցվում է մեկ ուրիշի հետ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 43):

«Սրանում է, ուրեմն, հավերժական կյանքը՝ ճանաչել միակ իմաստուն և ճշմարիտ Աստծուն, և դուք պետք է սովորեք, թե ինչպես ինքներդ աստվածներ դառնաք, և թագավորներ ու քահանաներ Աստծո համար. . . . զնալով մի փոքր աստիճանից մյուսը և մի փոքր կարողությունից դեպի ավելի բարձրը, շնորհից շնորհ՝ վեհացումից վեհացում, մինչև որ հասնեք մեռելների հարությանը և կարողանաք բնակվել հավիտենական բոցերում և նստեք փառքի մեջ, ինչպես նրանք, ովքեր նստած են գահերի վրա հավիտենական զորությամբ» (Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 235):

Հատվածներ Թինգ Ֆոլեթին նվիրված ճառից

Մարգարե Ջոզեֆ Սմիթն (1805–44) ուսուցանել է.



«Եթե մարդ չի սովորում ավելին, քան ուտելը, խմելը և քնելը և չի ըմբռնում Աստծո նպատակները, ապա գազանից չի տարբերվում: Նա նույնպես ուտում է, խմում, քնում և ոչինչ չգիտի Աստծո մասին. ուրեմն այն մեր չափ գիտելիք ունի, եթե մենք ըմբռնում ձեռք չբերենք Ամենազոր

Աստծո ոգեշնչմամբ: Եթե մարդիկ չեն ըմբռնում Աստծո բնույթը, նրանք չեն հասկանա, թե ովքեր են իրենք: . . .

Իմ առաջին նպատակն է հասկանալ միակ իմաստուն և ճշմարիտ Աստծո բնութագիրը, և թե ինչպիսի էակ է Նա: . . .

Աստված ժամանակին եղել է այնպիսին, ինչպիսին հիմա մենք ենք, և վեհացում ձեռք բերած մարդ է, և նստած է գահին այնտեղ՝ երկնքում: Սա է մեծ գաղտնիքը: Եթե վարագույրը պատռվեր այսօր, և փառահեղ Աստվածը, ով այս աշխարհը պահում է իր ուղեծրում, և ով իր զորությամբ պահում է բոլոր աշխարհները և

բոլոր բաները, իրեն տեսանելի դարձներ, ասում եմ ձեզ, եթե դուք տեսնեիք նրան այսօր, դուք կտեսնեիք նրան մարդու տեսքով, ինչպես որ դուք եթձ ձեր ողջ անձով, պատկերով և տեսքով՝ որպես մարդ. քանի որ Ադամը ստեղծվեց Աստծո անմիջական տեսքով, պատկերով և նմանությամբ, և հրահանգներ ստացավ և քայլեց և խոսեց ու զրուցեց Նրա հետ, ինչպես մի մարդ հաղորդակցվում է մեկ ուրիշի հետ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 43):

«Սրանում է, ուրեմն, հավերժական կյանքը՝ ճանաչել միակ իմաստուն և ճշմարիտ Աստծուն, և դուք պետք է սովորեք, թե ինչպես ինքներդ աստվածներ դառնաք, և թագավորներ ու քահանաներ Աստծո համար. . . . զնալով մի փոքր աստիճանից մյուսը և մի փոքր կարողությունից դեպի ավելի բարձրը, շնորհից շնորհ՝ վեհացումից վեհացում, մինչև որ հասնեք մեռելների հարությանը և կարողանաք բնակվել հավիտենական բոցերում և նստեք փառքի մեջ, ինչպես նրանք, ովքեր նստած են գահերի վրա հավիտենական զորությամբ» (Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 235):



Կանայք և քահանայությունը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսն ասել է.



Սփոփող Միությանն ուղղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ էր, ասել է. «Չնայած որ քույրերին չի տրվել քահանայություն, այն չի շնորհվել նրանց, դա չի նշանակում, որ Տերը նրանց իշխանություն չի տվել: . . . Եկեղեցու անդամին

կամ քրոջը տրված է իշխանություն, որպեսզի Եկեղեցում որոշակի ծառայություններ կատարեն, որոնք պարտադիր և բացարձակապես անհրաժեշտ են մեր փրկության համար, ինչպես օրինակ այն աշխատանքը, որը քույրերն անում են Տիրոջ Տանը: Նրանց տրված է իշխանություն անելու մեծ և հոյակապ գործեր, որոնք սուրբ են Տիրոջ համար և նույնքան պարտադիր են, որքան Քահանայություն կրող տղամարդկանց տրված օրհնությունները» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ *Relief Society Magazine*, Jan. 1959, 4]:

Այդ նշանավոր ելույթի ժամանակ Նախագահ Սմիթը կրկին անգամ նշեց, որ կանանց տրվել է իշխանություն: Նա ասաց կանանց. «Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ավելացրեց, որ Սփոփող Միությանը «տրվել է գործություն և իշխանություն՝ շատ բաներ անելու: Այն աշխատանքը, որ նրանք կատարում են, արվում է աստվածային իշխանությամբ»: Եվ

անշուշտ Եկեղեցում կանանց կամ տղամարդկանց կողմից կատարված աշխատանքը, լինի տաճարներում, թե ծխերում կամ ճյուղերում, արվում է քահանայության բանալիներ կրողների առաջնորդության ներքո: Այսպիսով, խոսելով Սփոփող Միության մասին, Նախագահ Սմիթը բացատրել է. «[Տերը] նրանց է տվել այդ հիմնալի կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխերի եպիսկոպոսների ղեկավարության ներքո . . . , հոգ տանելով մեր մարդկանց հոգևոր և ֆիզիկական շահերի մասին» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ 4–5]: . . .

Մենք սովոր չենք կանանց մասին խոսել, որպես Եկեղեցու իրենց կոչումներում քահանայության իշխանություն ունեցողների, սակայն ուրիշ ի՞նչ իշխանություն կարող է լինել: Երբ կինը՝ երիտասարդ, թե ծեր, ձեռնադրվում է քարոզչու ավետարանը՝ որպես լիաժամկետ միսիոներ, նրան տրվում է քահանայության իշխանություն՝ կատարելու քահանայության գործառնություն: Նույնը կարել է ասել, երբ կինը քահանայության բանալիներ կրողի ղեկավարման ներքո ի սպաս է դրվում ծառայելու որպես պաշտոնյա կամ ուսուցիչ Եկեղեցու որևէ կազմակերպությունում: Ցանակացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս գործադրում է քահանայության իշխանությունը» («Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 50–51):

Կանայք և քահանայությունը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսն ասել է.



Սփոփող Միությանն ուղղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ էր, ասել է. «Չնայած որ քույրերին չի տրվել քահանայություն, այն չի շնորհվել նրանց, դա չի նշանակում, որ Տերը նրանց իշխանություն չի տվել: . . . Եկեղեցու անդամին

կամ քրոջը տրված է իշխանություն, որպեսզի Եկեղեցում որոշակի ծառայություններ կատարեն, որոնք պարտադիր և բացարձակապես անհրաժեշտ են մեր փրկության համար, ինչպես օրինակ այն աշխատանքը, որը քույրերն անում են Տիրոջ Տանը: Նրանց տրված է իշխանություն անելու մեծ և հոյակապ գործեր, որոնք սուրբ են Տիրոջ համար և նույնքան պարտադիր են, որքան Քահանայություն կրող տղամարդկանց տրված օրհնությունները» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ *Relief Society Magazine*, Jan. 1959, 4]:

Այդ նշանավոր ելույթի ժամանակ Նախագահ Սմիթը կրկին անգամ նշեց, որ կանանց տրվել է իշխանություն: Նա ասաց կանանց. «Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ավելացրեց, որ Սփոփող Միությանը «տրվել է գործություն և իշխանություն՝ շատ բաներ անելու: Այն աշխատանքը, որ նրանք կատարում են, արվում է աստվածային իշխանությամբ»: Եվ

անշուշտ Եկեղեցում կանանց կամ տղամարդկանց կողմից կատարված աշխատանքը, լինի տաճարներում, թե ծխերում կամ ճյուղերում, արվում է քահանայության բանալիներ կրողների առաջնորդության ներքո: Այսպիսով, խոսելով Սփոփող Միության մասին, Նախագահ Սմիթը բացատրել է. «[Տերը] նրանց է տվել այդ հիմնալի կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխերի եպիսկոպոսների ղեկավարության ներքո . . . , հոգ տանելով մեր մարդկանց հոգևոր և ֆիզիկական շահերի մասին» [‘Relief Society—An Aid to the Priesthood,’ 4–5]: . . .

Մենք սովոր չենք կանանց մասին խոսել, որպես Եկեղեցու իրենց կոչումներում քահանայության իշխանություն ունեցողների, սակայն ուրիշ ի՞նչ իշխանություն կարող է լինել: Երբ կինը՝ երիտասարդ, թե ծեր, ձեռնադրվում է քարոզչու ավետարանը՝ որպես լիաժամկետ միսիոներ, նրան տրվում է քահանայության իշխանություն՝ կատարելու քահանայության գործառնություն: Նույնը կարել է ասել, երբ կինը քահանայության բանալիներ կրողի ղեկավարման ներքո ի սպաս է դրվում ծառայելու որպես պաշտոնյա կամ ուսուցիչ Եկեղեցու որևէ կազմակերպությունում: Ցանակացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս գործադրում է քահանայության իշխանությունը» («Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 50–51):



Հասկանալ բազմակնությունը

Բազմակնություն

«Վերջին Օրերի Սրբերը հավատում են, որ մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև ամուսնությունը Տիրոջ մշտապես գործող օրենքն է ամուսնության վերաբերյալ: Աստվածաշնչյան ժամանակներում Տերը պատվիրել է ոմանց կիրառել բազմակնությունը՝ մեկ տղամարդու և մեկից ավելի կանանց ամուսնությունը: 1840-ականների սկզբին հայտնության միջոցով Տերը պատվիրեց Ջոզեֆ Սմիթին հաստատել բազմակնության կիրառությունը Եկեղեցու անդամների մեջ: Կես դարից ավել Եկեղեցու Նախագահի ղեկավարությամբ բազմակնությունը կիրառվեց Վերջին Օրերի որոշ Սրբերի կողմից» (*“Plural Marriage in The Church of Jesus Christ of Latter-day Saints,” Gospel Topics, lds.org/topics*):

Դժվար պատվիրան

Էլիզա Ռ. Սնոուն (1804–87)՝ Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահը, կնքվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ: Նա գրառել է հետևյալ փորձառությունը, որի ժամանակ Մարգարե Ջոզեֆն ուսուցանել է բազմակնության սկզբունքը նրա եղբայր Լորենզո Սնոունին:

«Մարգարե Ջոզեֆն իր սիրտը բացեց [Լորենզո Սնոունի առաջ] և նկարագրեց իր՝ բազմակնությունը ներկայացնելու հետ կապված անտանելի հոգեկան ծանր ապրումները, երբ փորձել էր հաղթահարել նողկանքի զգացումը, որը կրթության ուժի և հասարակական սովորույթի բնական արդյունքն էր: Նա ճանաչում էր Աստծո ձայնը. նա գիտեր, որ Ամենակարողը պատվիրում էր նրան առաջ շարժվել, օրինակ ծառայել և հաստատել Սելեստիալ բազմակնությունը: Նա գիտեր, որ նա ոչ միայն պետք է պայքարեր և հաղթահարեր իր անձնական նախապաշարումները և կանխակալ կարծիքը, այլ ողջ քրիստոնյա աշխարհն էր իր ուշադրությունը սևեռել նրա վրա: Սակայն Աստված, ով բոլորից բարձր է, տվել էր պատվիրան և Նրան պետք էր հնազանդվել: Մինչ Մարգարեն ժամանակ առ ժամանակ վարանում էր և հետաձգում իր քայլերը, Աստծո մի հրեշտակ կանգնեց նրա կողքին՝ սուրը ձեռքին և ասաց նրան, որ եթե նա առաջ չգնար և չհաստատեր բազմակնությունը, նրա Զահանայությունը կվերցվեր նրանից և նա կկործանվեր: Այս վկայությամբ նա կիսվեց ոչ միայն իմ եղբոր հետ, այլ նաև ուրիշների հետ, վկայություն, որին չի կարելի հակառակվել [հերքել]» (*Biography and Family Record of Lorenzo Snow* [1884], 69–70):

Հավատքի փորձություն

Շատերը, ովքեր պայքարում էին բազմակնության սկզբունքի դեմ, օրինվեցին սկզբունքի ճշմարտության վերաբերյալ հաստատող հոգևոր վկայությամբ:

«Համաձայն Հելեն Մար Քիմբալի՝ Ջոզեֆ Սմիթը հայտարարել է, որ «այս սկզբունքի կիրառումը լինելու է ամենադժվար փորձությունը, որով Սրբերը երբևէ ստիպված կլինեն փորձել իրենց հավատը»: Չնայած այն եղել է իր կյանքի «ամենադժվար» փորձությունը, նա վկայել է, որ այն դարձել է նաև «մեծագույն օրհնություններից մեկը»: . . .

Կյուսի Վոքերը հիշում էր իր հոգու շփոթմունքը, երբ Ջոզեֆ Սմիթը առաջարկեց նրան դառնալ իր կինը: «Իմ հոգու յուրաքանչյուր զգացում ապստամբեց դրա դեմ», գրել է նա: Սակայն մի քանի անհանգիստ գիշերների ծնկաչոք աղոթքից հետո նա հանգստություն գտավ, երբ նրա սենյակը «լցվեց սուրբ ներգործությամբ», որը նման էր «արևի փայլուն շողերին»: Նա ասել է. «Իմ հոգին լցվեց հանգիստ, քաղցր խաղաղությամբ, որը ես երբեք չէի զգացել» և «իմ ողջ էությանը տիրեց գերագույն երջանկությունը» (*“Plural Marriage in Kirtland and Nauvoo,” Gospel Topics, lds.org/topics*):

Ջոզեֆ Սմիթը և բազմակնությունը

Շատ կանայք կնքվեցին Ջոզեֆ Սմիթի հետ, սակայն ճշգրիտ թիվն անհայտ է:

Բազմակնության կիրառման դարաշրջանում Վերջին Օրերի Սրբերը տարբերակում էին ժամանակի և հավերժության համար կատարվող կնքումները և միայն հավերժության համար կատարվող կնքումները: Ժամանակի և հավերժության համար կնքումները ներառում էին պարտավորություններ և հարաբերություններ այս կյանքի ընթացքում՝ հիմնականում ներառելով սեռական հարաբերությունների հնարավորությունը: Միայն հավերժության համար կնքումներում նշվում էր հարաբերությունները միայն հաջորդ կյանքում:

. . . Որոշ կանայք, ովքեր կնքվել էին Ջոզեֆ Սմիթի հետ, հետագայում վկայում էին, որ իրենց ամուսնությունները ժամանակի և հավերժության համար էին, մինչդեռ մյուսները նշում էին, որ իրենց հարաբերությունները միայն հավերժության համար էին:

Ջոզեֆ Սմիթի հետ կնքվածների մեծ մասը նրա հետ կնքվելիս 20-40 տարեկան էին: Ամենամեծը՝ Ֆանի Յանգը 56 տարեկան էր: Ամենաերիտասարդը Հելեն Մար Քիմբալն էր, . . . ով կնքվել էր Ջոզեֆի հետ իր 15 տարեկանը բոլորելուց մի քանի ամիս առաջ: Ամուսնությունն այդ տարիքում, որն անպատշաճ է ըստ մեր օրերի չափանիշների, օրինական էր այդ ժամանակ, և որոշ կանայք ամուսնանում էին իրենց դեռահասության կես տարիքում: Հելեն Մակ Քիմբալը խոսել է Ջոզեֆի հետ իր կնքման մասին որպես «միայն հավերժության համար»,

Մարգարե Ջոզեֆ Սմիթի Նահատակությունը

Ընդդիմություն Մարգարեի և Եկեղեցու դեմ

1844 թվականի հունիսին Եկեղեցու հանդեպ թշնամությունը շատ էր ուժեղացել: Իլինոյսի որոշ քաղաքացիներ քննարկում էին Սրբերին Նահանգից վտարելու հարցը, մինչև ուրիշները ծրագրում էին սպանել Մարգարեին: Մարգարեի և Եկեղեցու դեմ դավադրություն կազմակերպողներից ոմանք Եկեղեցու Նախկին անդամներ էին, ովքեր ուրացության մեջ էին ընկել: 1844 թվականի հունիսի 7-ին Վիլյամ Լոն, ով ծառայել էր որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, և մյուս ուրացողները տպագրեցին *Nauvoo Expositor* կոչվող թերթի առաջին համարը: Հասարակությանը Մարգարեի և Եկեղեցու դեմ բորբոքելու փորձ կատարելով՝ այս մարդիկ օգտագործեցին այս լրագիրը Ջոզեֆ Սմիթին և Եկեղեցու մյուս ղեկավարներին զրպարտելու համար: Ջոզեֆ Սմիթը, գործելով որպես Նավուի քաղաքագլուխ, և Նավու քաղաքի խորհրդի անդամների մեծ մասը գիտակցում էին, որ բորբոքումներ տարածող լրագիրը կհանգեցնի ամբոխի բռնությանը քաղաքի դեմ: Նրանք հայտարարեցին, որ թերթը խախտում էր հասարակական կարգը և պատվիրեցին, որ *Nauvoo Expositor* լրագիրը փակվի:

Ջոզեֆ և Հայրում Սմիթների դեմ կեղծ մեղադրանք է առաջադրվում

«Ի հետևանք *[Nauvoo Expositor-ի փակման]* քաղաքագլխի և խորհրդի որոշման, Իլինոյսի իշխանությունները Մարգարեի, Նրա եղբայր Հայրումի և Նավու քաղաքի մյուս պաշտոնյաների դեմ խռովության անհիմն մեղադրանք հարուցեցին: Իլինոյսի Նահանգապետ Թոմաս Ֆորդը հրաման արձակեց, որ այդ տղամարդիկ դատվեն Իլինոյս Նահանգի Քարթեջ գավառի կենտրոնում, և նրանց պաշտպանություն խոստացավ: Ջոզեֆը գիտեր, որ եթե գնար Քարթեջ, իր կյանքը մեծ վտանգի տակ կդրվեր խաժամուժի կողմից, որը սպառնում էր նրան:

Հավատալով, որ խաժամուժը միայն իրենց էր ուզում, Ջոզեֆն ու Հայրումը որոշեցին մեկնել դեպի արևմուտք՝ իրենց կյանքը պահպանելու համար: Հունիսի 23-ին նրանք անցան Միսսիսիպի գետը, բայց նույն օրը՝ ավելի ուշ, Նավուից եղբայրները գտան Մարգարեին և ասացին նրան, որ զորքերը կներխուժեն քաղաք, եթե նրանք չհանձնվեն իշխանություններին Քարթեջում: Մարգարեն համաձայնեց անել այդ՝ հույս ունենալով խաղաղեցնել թե կառավարական պաշտոնյաներին, թե խաժամուժին: Հունիսի 24-ին Ջոզեֆ և Հայրում Սմիթները մնաս բարով ասացին իրենց ընտանիքներին, և Նավու քաղաքի մյուս պաշտոնյաների հետ հաջորդ օրը գնացին

Քարթեջ՝ կամավոր հանձնվելով գավառի պաշտոնյաներին Քարթեջում: Եղբայրներին սկզբնական մեղադրանքի համար երաշխավորությամբ ազատ արձակելուց հետո, նրանց դեմ կեղծ մեղադրանք հարուցվեց Իլինոյս Նահանգի դեմ դավաճանության մեջ, ապա նրանք ձերբակալվեցին և բանտարկվեցին Քարթեջի բանտում՝ լսման սպասելու համար: Երեցներ Ջոն Թեյլորը և Վիլլարդ Ռիչարդսը՝ Տասներկուսի միակ անդամները, ովքեր այդ ժամանակ միսիայում էին ծառայում, կամավոր միացան նրանց» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 561-62):

Նահատակությունը Քարթեջի բանտում

1844 թվականի հունիսի 27-ին մի այցելու Ջոզեֆին ատրճանակ էր տվել: Երբ ամբոխը փորձեց մտնել սենյակը, որտեղ պահվում էին Մարգարեն և մյուսները, Հայրումը մահացու գնդակ ստացավ՝ փորձելով պատշպանել սենյակում գտնվողներին: Ջոզեֆը ցատկեղ դեպի դուռը և հասավ դռան շրջանակին, որ փորձեր ատրճանակով կրակել դեպի նախասենյակը: Վեց գնդակներից արձակվեցին ընդամենը երեքը՝ վիրավորելով ամբոխի մի քանի անդամների: Այնուհետև ամբոխի միջից հրացաններն ուղղվեցին կիսաբաց դռան կողմը, և Ջոն Թեյլորը փորձեց ձեռնափայտով հարվածել հրացանների փողերին:

Երբ հակամարտությունը դռան մոտ մեծացավ, Ջոն Թեյլորը փորձեց դուրս գալ սենյակից պատուհանի միջով: Երբ նա փորձեց դուրս ցատկել պատուհանից, դռան մոտից կրակեցին նրա ազդրին և դրսից ևս ինչ-որ մեկը կրակեց նրա վրա: Նա ընկավ գետնին և մինչ փորձում էր մտնել պատուհանի մոտ գտնվող մահճակալի տակ, մի քանի տեղից վիրավորվեց ևս երեք կրակոցից: Այդ ընթացքում, երբ հրացանները հայտնվեցին դռան մոտ, Վիլլարդ Ռիչարդսը սկսեց հարվածել դռան ձեռնափայտով:

Ջոզեֆ Սմիթը այդ պահին որոշեց դուրս գալ նույն պատուհանից: Մինչ Վիլլարդ Ռիչարդսը շարունակում էր շեղել դռան մոտ գտնվող ամբոխին, Մարգարեն դուրս ցատկեց բաց պատուհանից: Երբ նա ցատկեց, փափուշտներ տեղացին նրա վրա բանտի ներսից և դրսից: Նա ցած ընկավ պատուհանից՝ բացակասելով «Ռ՝վ Տեր իմ Աստված»: Ամբոխը, որը գտնվում էր բանտի ներսում, դուրս վազեց, որ համոզվի, արդյո՞ք Ջոզեֆը մահացել էր: Չնայած Քարթեջի բանտին մոտեցող Եկեղեցու անդամներ չկային, ինչ-որ մեկը գոռաց. «Մորմունները գալիս են» և ողջ ամբոխը փախուստի դիմեց:

Հաջորդականությունը Եկեղեցու Նախագահությունում

**Տասներկու Առաքյալների ժողով, մարտ 1844
թվական**

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը (1807-98) հիշել է.



«Հիշում եմ վերջին խոսքը, որ [Ջոզեֆ Սմիթը] այդ առիթով տվեց մեզ իր մահվանից առաջ: . . . Նա ոտքի էր կանգնած մոտ երեք ժամ: Սենյակը կարծես լցված էր սպառնող կրակով, նրա դեմքը սաթի պես պայծառ էր և նա զինված էր Աստծո

գործությամբ: Նա մեզ բացատրեց մեր պարտականությունը: Նա բացատրեց մեզ Աստծո այս մեծ աշխատանքի լրիվությունը և մեզ արված դիտողություններում նա ասաց. «Ես կնքել եմ իմ գլխին յուրաքանչյուր բանալին, յուրաքանչյուր գործությունը, կյանքի և փրկության յուրաքանչյուր սկզբունքը, որն Աստված երբևէ տվել է որևէ մարդու, ով երբևէ ապրել է երկրի երեսին: Եվ այս սկզբունքներն ու այս քահանայությունը և գործությունը պատկանում են այս մեծ և վերջին տնտեսությանը, որին երկնքի Աստվածը մեկնել է Իր ձեռքը՝ երկրի վրա հաստատելու համար: Այժմ, - ասաց նա, դիմելով Տասներկուսին, - ես կնքել եմ ձեր գլխին յուրաքանչյուր բանալի, յուրաքանչյուր գործություն և յուրաքանչյուր սկզբունք, որոնք Տերը կնքել է իմ գլխի վրա»: . . .

Մեզ այս ձևով դիմելուց հետո նա ասաց. «Ես ասում եմ ձեզ, այս արքայության բեռն այժմ ձեր ուսերին է դրված, դուք պետք է կրեք այն ողջ աշխարհում» (մեջբերում. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 564):

Սիդնի Ռիզդոնի պահանջը

Սիդնի Ռիզդոնը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, 1844 թվականի օգոստոսի 3-ին Փիթսբուրգից՝ Պենսիլվանիա, Եկավ Նավու: Նա առաջարկեց, որ հատուկ ժողով հրավիրվեր օգոստոսի 6-ին՝ երեքշաբթի օրը, որպեսզի Եկեղեցու անդամները կարողանային վերակացու ընտրել Եկեղեցու համար: Կարծես Սիդնի Ռիզդոնը փորձում էր անցկացնել այս ժողովը, որպեսզի Եկեղեցու անդամները կարողանային հաստատել իր պաշտոնը որպես Եկեղեցու վերակացու՝ նախքան բոլոր Տասներկու Առաքյալները կվերադառնային Միացյալ Նահանգների արևելքում կատարած իրենց միսիաներից: Բարեբախտաբար, Երեք Վիլլարդ Ռիչարդսի և Երեք Փարլի Պ. Պրատի ջանքերի շնորհիվ ժողովը տեղափոխվեց հինգշաբթի օրը՝ 1844 թվականի օգոստոսի 8-ը: Մինչ այդ Առաքյալների մեծ մասը վերադարձան Նավու:

Սիդնի Ռիզդոնը հայտարարեց, որ քանի որ ինքը նախկինում կանչված և կարգված է եղել որպես Ջոզեֆ Սմիթի խոսնակ (տես Վեճ 100.9), ապա նրա պարտավորությունն էր «հսկելու, որ Եկեղեցին կառավարվեր պատշաճ կերպով» (*History of the Church*, 7:229):

Ջեյմս Սթրենջի պահանջը

Ջոզեֆ Սմիթի մահից հետո Ջեյմս Սթրենջը, ով մկրտվել էր 1844 թվականի փետրվարին, հայտարարեց, որ ինքը նամակ էր ստացել Ջոզեֆ Սմիթից, որում նշվում էր, որ Ջոզեֆը նշանակել էր Սթրենջին որպես իր հաջորդը: Նամակը կեղծ էր, սակայն այն ներառում էր Ջոզեֆ Սմիթի ստորագրությունը և մոլորության մեջ գցեց Եկեղեցու որոշ անդամների, երբ Սթրենջն այն ցույց տվեց նրանց: Սթրենջը նաև ասաց, որ իրեն այցելել էր մի հրեշտակ, ով տվել էր նրան բանալիներ:

7 օգոստոսի, 1844 թվական

Երեք Ջոն Թեյլորը, Վիլլարդ Ռիչարդսը, Փարլի Պ. Պրատը և Ջորջ Ա. Սմիթն արդեն Նավու քաղաքում էին, երբ Սիդնի Ռիզդոնը ժամանեց: Մնացած Առաքյալների մեծ մասը, ներառյալ Բրիգամ Յանգը, Նավու վերադարձան 1844 թվականի օգոստոսի 6-ին: Հաջորդ օրը՝ օգոստոսի 7-ին, Առաքյալները խորհրդի հանդիպում ունեցան Ջոն Թեյլորի տանը: Ավելու ուշ՝ այդ օրը կեսօրին, Տասներկու Առաքյալները, բարձրագույն խորհուրդը և քահանայապետները հավաքվեցին միասին: Նախագահ Յանգը խնդրեց Սիդնի Ռիզդոնին ներկայացնել իր ուղերձը Սթրենջին: Սիդնի Ռիզդոնը հանդուգն կերպով հայտարարեց, որ նա տեսիլք էր տեսել և, որ ոչ մի մարդ չէր կարող հաջորդել Ջոզեֆ Սմիթին որպես Եկեղեցու Նախագահ: Ապա նա պնդեց, որ ինքը նշանակվել էր որպես մարդկանց վերակացու:

Երբ Սիդնի Ռիզդոնն ավարտեց իր մեկնաբանությունները, Բրիգամ Յանգն (1801–77) ասաց.



«Ինձ չի մտահոգում, թե ով կառաջնորդի Եկեղեցին, . . . բայց մի բան ես պետք է իմանամ, և դա այն է, թե ինչ է Աստված ասում այդ մասին: Ես ունեմ բանալիները և միջոցները՝ իմանալու Աստծո կարծիքն այս հարցի շուրջ: . . .

Ջոզեֆը շնորհեց մեզ Առաքյալներին պատկանող բոլոր բանալիները և գործությունները, որն ինքն էլ կրում էր մինչև մահը, և ոչ մի մարդ կամ մի քանի մարդիկ չեն կարող կանգնել Ջոզեֆի և Տասներկուսի միջև այս աշխարհում կամ գալիք աշխարհում:

Յուտայի պատերազմը և Մաունթ Մեդոուսի ջարդերը

Աճող լարվածությունից սկիզբ է առնում Յուտայի պատերազմը

Վերջին Օրերի Սրբերի ռահվիրաների՝ Սոլթ Լեյքի հովիտ առաջին անգամ հասնելուց երեք տարի անց Միացյալ Նահանգների կառավարությունը կազմավորեց Յուտայի Տարածքը և Բրիգամ Յանգին նշանակեց որպես տարածաշրջանի առաջին նահանգապետ: 1857 թվականի կեսերին Վերջին Օրերի Սրբերի ղեկավարները լուրեր լսեցին, որ կառավարական իշխանությունները ցանկանում են Բրիգամ Յանգի փոխարեն նոր նահանգապետ նշանակել Յուտայի Տարածաշրջանում, ում հետևում կանգնած էր լինելու մեծաքանակ կառավարական զորքը: 1857 թվականի հուլիսի 24-ին Նախագահ Բրիգամ Յանգը մի խումբ Սրբերի հետ նշում էր Սոլթ Լեյքի հովիտ իրենց ժամանման 10-րդ տարեդարձը, երբ ստացավ ավելի վաղ լսած լուրերի հաստատումը, որ բանակը մոտենում էր Սոլթ Լեյք Սիթիին:

Նախորդ տարիների անհամաձայնության և թյուրըմբռնման արդյունքում Վերջին Օրերի Սրբերի և Միացյալ Նահանգների կառավարության պաշտոնատար անձանց միջև լարվածությունը մեծացավ: Սրբերը ցանկանում էին ղեկավարվել իրենց իսկ ընտրած ղեկավարների կողմից և մերժեցին կառավարության կողմից նշանակված անձանց, ովքեր չէին կիսում իրենց արժեքները, ոմանք էլ անագնիվ էին, կաշառակեր և անբարո: Կառավարության որոշ պաշտոնյաներ կարծեցին, որ Սրբերի գործողությունները և վերաբերմունքը նշանակում էին, որ նրանք ապստամբում էին Միացյալ Նահանգների կառավարության դեմ:

Միացյալ Նահանգների Նախագահ Ջեյմս Բյուքանան Սոլթ Լեյք Սիթի ուղարկեց մոտավորապես 2500 զինվոր, որպեսզի ապահով ուղեկցեին նոր նահանգապետին դեպի Յուտա և ճնշեին, ըստ իր կարծիքի, Սրբերի մեջ բարձրացված ապստամբությունը: Այս որոշումը կայացվել էր առանց Յուտայի իրավիճակի մասին ճշգրիտ տեղեկության (տես *Church History in the Fulness of Times Student Manual*, 2nd ed. [Church Educational System manual, 2003], 368–71):

Տարածաշրջանը պաշտպանելու նախապատրաստություններ

Սրբերին ուղղված քարոզներում Նախագահ Յանգը և Եկեղեցու այլ ղեկավարներ մոտեցող զորքերին նկարագրեցին որպես թշնամիներ: Նրանք վախենում էին, որ զորքերը գուցե Սրբերին դուրս քշեին Յուտայից, ինչպես նրանք նախկինում քշվել էին Օհայո, Միսսուրի և Իլլինոյս նահանգներից: Նախագահ Յանգը, ով տարիներ շարունակ խնդրել էր Սրբերին հացահատիկի պաշար հավաքել, կրկին տվեց նույն հրահանգները, որպեսզի նրանք ուտելիք ունենային, եթե ստիպված լինեին փախչել զորքերից: Որպես Յուտայի տարածքի նահանգապետ, նա

նաև հրահանգեց տարածաշրջանի ոստիկանությանը նախապատրաստվել տարածքի պաշտպանությանը:

Տարածայնություն սայլերով ճամփորդող գաղթականների հետ

Արկանզասից արևմուտք դեպի Կալիֆորնիա մեկնող գաղթականների սայլերը մտան Յուտա հենց այն ժամանակ, երբ Վերջին Օրերի Սրբերը նախապատրաստվում էին պաշտպանել տարածքը ժամանող Միացյալ Նահանգների զորքերից: Գնացքի որոշ ուղևորների մոտ դժգոհություն առաջ եկավ, քանի որ նրանք բարդությունների հանդիպեցին, երբ անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ ցանկացան գնել Սրբերից, որոնց հրահանգված էր պաշարել իրենց հացահատիկը: Գաղթականները Սրբերի հետ տարածայնություններ ունեցան նաև այն պատճառով, որ վերջիններս չէին ցանկանում, որ սայլերի մեծաքանակ ձիերը և անասունները սպառեին կերի ու ջրի պաշարները, որը Սրբերին անհրաժեշտ էր իրենց իսկ կենդանիների համար:

Լարված դրություն ստեղծվեց Սիդար Սիթիում՝ Կալիֆորնիայի ճանապարհին գտնվող Յուտայի վերջին քաղաքում: Հակամարտություններ տեղի ունեցան սայլերով ճամփորդող մի քանի մարդկանց և Վերջին Օրերի Սրբերից մի քանիսի միջև: Սայլակներով ճամփորդողներից ոմանք սպառնացին միանալ Սրբերի դեմ եկող կառավարության զորքերին: Չնայած սայլերի ղեկավարը հանդիմանեց իր ընկերներին նման սպառնալիքներ ներկայացնելու համար, Սիդար Սիթիի որոշ ղեկավարներ և նորաբնակներ գաղթականներին սկսեցին դիտել որպես թշնամիների: Սայլերի շարանը հեռացավ քաղաքից ժամանումից ընդամենը մեկ ժամ անց, սակայն Սիդար Սիթիի որոշ նորաբնակներ և ղեկավարներ ցանկացան հետապնդել և պատժել այն մարդկանց, ովքեր վիրավորել էին իրենց:

Սրվող հակամարտությունը

Քանի որ այդ Սրբերը գաղթականների հետ ունեցած իրենց խնդիրը չլուծեցին Տիրոջ եղանակով, իրավիճակը շատ ավելի լրջացավ: Իսահակ Շեյթը՝ Սիդար Սիթիի քաղաքապետը, ոստիկանության մայորը և ցցի նախագահը թույլտվություն խնդրեցին ոստիկանության հրամանատարից, ով ապրում էր Փարովան կոչվող մոտակա բնակավայրում, ոստիկանություն կանչել և սայլակներից իջեցնել օրինազանցներին: Ոստիկանության հրամանատարը՝ Վիլյամ Դեյմը, ով Եկեղեցու անդամ էր, Իսահակ Շեյթին խորհուրդ տվեց ուշադրություն չդարձնել գաղթականների սպառնալիքներին: Այդ խորհրդին հետևելու փոխարեն Իսահակ Շեյթը և Սիդար Սիթիի այլ ղեկավարներ որոշեցին համոզել մի քանի տեղացի բնիկ հնդկացիների՝ հարձակում գործել սայլերի վրա և գողանալ նրանց անասունները՝ որպես գաղթականների

Արագացնել փրկության աշխատանքը

Խորհեք հետևյալ հարցերի շուրջ՝ կապված հինգ ոլորտներից յուրաքանչյուրի հետ, որոնք փրկության աշխատանքի մի մասն են.

- Ինչպե՞ս կարող են Աստծո աշխատանքի այս ոլորտում ձեր ներդրած ջանքերը ուրիշներին մոտեցնել փրկության օրհնություններին:
- Դուք ի՞նչ փորձառություններ եք ունեցել և ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ մասնակցել եք Տիրոջ փրկության աշխատանքի այս ոլորտին:
- Դուք ի՞նչ կարող եք անել՝ անկախ Եկեղեցու ձեր ներկայիս կոչումից, որպեսզի աջակցություն ցույց տաք փրկության աշխատանքի այս ոլորտին:

Անդամների միսիոներական աշխատանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենն ուսուցանել է.



«Եղբայրներ և քույրեր, անշուշտ Տերն ունի ավելի շատ ոգեշնչված միսիոներներ ծառայության համար, քայց Նա Նաև արթնացնում է շատ ավելի բարի և ազնիվ մարդկանց մտքերը և սրտերը՝ Իր միսիոներներին ընդունելու համար: Դուք արդեն գիտեք Նրանց կամ կծանոթանաք Նրանց հետ: Նրանք ձեր ընտանիքներում և ձեր հարևանների մեջ են: Նրանք անցնում են ձեր կողքով փողոցում, Նստում են ձեր կողքին դպրոցում և շփվում են ձեզ հետ համացանցում: Դուք շատ կարևոր մաս եք այս բացվող հրաշքում:

Եթե դուք լիաժամկետ միսիոներ չեք և ձեր բաճկոնին չեք կրում միսիոներական կրծքանշան, այժմ ժամանակն է, որ գրեք մեկը ձեր սրտին, գրեք, ինչպես Պողոսն է ասում, «ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստուծոյ Հոգովը» [Բ Կորնթացիս Գ.3]: . . . Բոլորս պետք է ունենանք մեր ներդրումն այս հրաշքի մեջ» («It's a Miracle," *Ensign* or *Liahona*, May 2013, 78):

Նորադարձների պահպանումը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը հայտարարել է.



«Ես և դուք պետք է անենք ամենը, ինչ կարող ենք, որպեսզի տեսնենք, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ գտնում է լիարժեք ընկերակցություն և վայելում է բոլոր օրհնությունները, որ ավետարանը կարող է առաջարկել:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հիշեցրել է ձեզ և ինձ Տիրոջ գործընկերը լինելու մեր պարտականության մասին՝ իրականացնելու Եկեղեցու հետ կապված Նրա ծրագրերը: Արբանյակային հեռարձակման միջոցով Նախագահ Հինքլին ասել է.

«Տերը մեզ հանձնարարագիր է տվել ուսուցանելու ավետարանն ամեն արարածի: Սրա համար կապահանջվեն

թե լիաժամկետ, թե ցցի յուրաքանչյուր միսիոների լավագույն ջանքերը: Այն կապահանջի յուրաքանչյուր եպիսկոպոսի, յուրաքանչյուր եպիսկոպոսի խորհրդականի, ծխի խորհրդի յուրաքանչյուր անդամի լավագույն ջանքերը» («Find the Lambs, Feed the Sheep," *Ensign*, May 1999, 107): Այն կապահանջի յուրաքանչյուր անդամի լավագույն ջանքերը» («Members Are the Key," *Ensign*, Sept. 2000, 10):

Քիչ ակտիվ անդամների ակտիվացումը

«Մեր դերն է՝ ընկղմվել մեր շուրջը գտնվողներին սիրելու և ծառայելու մեջ՝ սփռվել կարիքի մեջ գտնվող մեր աշխատակցին, հրավիրել մեր ընկերներին մկրտության, օգնել տարեց հարևանին այգու գործերում, հրավիրել քիչ ակտիվ անդամին ճաշի կամ օգնել մերձավորին՝ կատարել իր ընտանեկան պատմության աշխատանքը: Սրանք բոլորը բնական, ուրախությամբ լի ճանապարհներ են, որոնցով կարելի է մեր կյանքը հրավիրել քիչ ակտիվ անդամներին և Նրանց, ովքեր մեր հավատքից չեն և, հետևաբար, դեպի ավետարանի լույսը: Նրանց հետ ուրախ ժամանակի և մեր կյանքի սուրբ պահերի անցկացումը իրականում կարող է լինել առավել արդյունավետ եղանակը, որով բոլորս կարող ենք աշխատել Հիսուս Քրիստոսի «այգում» մարդկանց հոգիների փրկության համար» (Վևու 138.56) («Արագացնել փրկության աշխատանքը», *Ensign*, հոկ. 2013, 36):

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքը ուսուցանել է.



Եկեղեցու ղեկավարությունը պարզ կերպով կոչ է արել աճող սերնդին ունենալ իրենց նախաձեռնությունը տեխնոլոգիայի կիրառման մեջ՝ Եղիայի ոգին զգալու, իրենց նախնիներին փնտրելու և Նրանց համար տաճարային արարողություններ կատարելու համար: Ողջերի ու մահացածների փրկության աշխատանքն արագացնելու դժվար մասը կատարվելու է ձեր միջոցով, երիտասարդներ՝ («Արմատներ և ճյուղեր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 46):



ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ և
ԿՐՈՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ԳՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՅԻ

